

Գ. ՄԱՐԾՅԱՆ

ՄԱՐԾՅԱՆ ԳԱՆՏՆԻՔՆԵՐ

Գ. ԳՈՒԼԱ 1900 թ



Ժ. ՄԱԹԷՅ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԿԱՐԱՊԵՏ Ս. ԻԻԹԻՒՃԵԱՆ

Արամբարեբ «ՄԱՍԻՍ»Ի

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

Տէր և Տնօրէն

Մարհանդակ և Ճերիբէյե Եւրոպայի Ըրազրաց

Բ. ՀԱՏՈՐ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Տ. ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

1900

ԱՆԱԿՆԿԱՍՎ ՎԵՐԱԳԱՐՁ

Արդարեւ նոյն ինքն Տը Ֆէրնիք
կոմսն էր ժիւլ Շամպէզի տեսածը,
երբ կառքին թեւը կոտրելով մէջէն
դուրս ցատկեր էր:

Նոյն ինքն էր որ Օրէնայի թատ-
րոնին մէջ կը դիտէր կնոջը շարժմուն-
քը, և որ հիմա ետևէն ինկեր էր
Փարիզի այն մութ փողոցներուն մէջ,
որ Սէն-Լուի կղզիէն բուսարանական
պարտէզին շրջակաները կը հասնին:

Կոմսը նոյն առաւօտուն ճանրայ ելեր
էր ստուգիւ. բայց հինգ ժամ ետքը
Լոնրոէ հասնելով իմացեր էր իւր կալ-
ուածներուն վերակացուէն թէ՛ դիւղա-
պետութեան հետ ունեցած դասն ա-
միս մը յետաձգուեր էր:

Հետեւապէս իւր հոն ներկայութիւնն
անօգուտ էր:

Ուստի փութացեր, Փարիզ վերա-
դարձող առաջին կառախումբը նստեր,
և իրիկուան ժամը եօթն ու կէսին
Փարիզ հասեր էր:

Այս յանկարծական վերադարձը,

տեսակ մը տարօրինակ տրամաբանութեամբ, մտքին մէջ վերածներ էր կընտըր ընթացքին վրայ զգացած կասկածները:

Տեսակ մը նախազգացում ունէր ահաւելի անակնկալի մը, սոսկալի յայտնութեան մը:

Ժամ ութին քառորդ մնացած Պոնաբառթ փողոցը հասնելով՝ իմացաւ որ կոմսուհին նոր մեկներ էր Օբէռայի թատրոնն երթալու համար:

— Մինա՞կ գնաց, հարցուց:

— Տիկինը բան մը չըսաւ, պատասխանեց սպասաւորը:

Կոմսը չուզեց աւելի երկար հարցաքըննել, և իւր բնակարանն ելաւ:

Սակայն տարօրինակ մտահոգութիւն մը կը յուզէր զինքը:

Ի՞նչ կար զարմանալի, եթէ կոմսուհին իւր Օբէռայի օթեակը գացած էր:

Ոչինչ:

Եւ սակայն չի կրցաւ համբերել:

Իսկոյն հանեց ուղեւորութեան ըզգետը, սեւ մեկնոցը հագաւ և ճեմակ փողկապը գրաւ:

Բակը մտնող կառքի մը շահնդէն յանկարծ ուշադրութիւնը գրաւելով:

— Ի՞նչ է այ՞, հարցուց սենեկապան ծառային որ կրկնոցը կը հագցնէր իրեն:

— Տիկինը տանող կառքն է, որ կը վերադառնայ, ըսաւ ծառան՝ պատահանէն վար ակնարկ մը նետելէ ետեւ:

— Գնացէք ըսէք կառապանին որ ձիերը չի քակէ:

Հինգ վայրկեան շանցած՝ կոմսը Օբէռային հրապարակը հասաւ:

— Ելքին սպասեցէք, ըսաւ կառապանին, և ինքը ներս մտնելով, փոխանակ օթեակն երթալու, գնաց դարանեցաւ թատերասրահին նախաթռներու մուտքին մէջ:

Հոն աչքէն չի վրիպեցուց իւր կինը՝ որուն գործածած վարպետութիւնը, աննշան կամ բնական օտարներու համար, կոմսին աչքին տարօրէն դիտում մը ծածկելու երեւոյթ ունէր:

— Ինչո՞ւ մինակ եկեր է, կ'ըսէր ինքնիրեն, առանց գոնէ փեսան կամ աղջիկը հետն առնելու:

«Ինչո՞ւ մերթ ցոյց կուտայ ինքզինքը, և մերթ կը ծածկէ:»

Եւ հասկցաւ նպատակը, երբ օթեակին մէջ փայլող լոյսէն գուշակեց թէ դուռը բանալով կը մեկնէր:

Իսկոյն ինքն ալ դուրս վազելով՝ ետե-
ւէն ինկաւ, առանց խորհրդածութեան,
միմիայն սիրտը կրծող անդուլ նախան-
ձէն յափշտակուած :

Շատ դիւրին էր իւր սեփական կառ-
քին մէջ ցատկել, որ հոն կը սպասէր
և որուն պատուական ճին մեծ դիւրու-
թեամբ կրնար հետեւիլ իւր կինը տա-
նող կառքին :

Բայց չէր ուզեր որ տանը մարդիկը
իմանան իւր կոսկածը, և իւր անունը
կրող լծակցին պատիւը վտանգի են-
թարկուի :

Նստած կառքին գլխուն եկածը ծա-
նօթ է ընթերցողներուն

Կառքէն դուրս ցատկելուն պէս, կա-
ռավարի վարձքը տալէ ետեւ, անե-
րեւոյթ եղեր էր՝ գրեթէ վազելով
հասնելու համար այն դեղին կառքին
ետեւէն, որուն մէջն էր իւր կինը :

Բայց, ինչպէս որ գիտեն ընթեր-
ցողք, կառքը փողոցի մ'անկիւնը դառ-
նալով աներեւոյթ եղեր էր :

Կոմսը Տէ Տէօ-Բօն փողոցէն կամուր-
ջը մտաւ, ուր քանի մը կառքեր կը
թաւալէին առջեւէն :

Ո՞րն էր Տիանի կառքը :

Նշմարեր էր որ կարմիր լոյսեր ունէր
երկու քովը :

Տեսաւ վերջապէս կարմիր լապտեր-
ներով կառք մը որ Ֆօսէ-Սէն-Պէռնար
փողոցը կը մտնէր :

Սկսաւ վազել ետեւէն հասնելու հա-
մար, առանց վարեւորութիւն տալու
հետաքրքիրներուն ուշադրութեանը,
որով կը դիտէին պատկառելի անձնա-
ւորութիւն մը, որ խենթի պէս կը
վազէր :

Բայց կառքն իրմէ արագ կ'երթար :

Երբ կոմսը գինիի վաճառանոցի փո-
ղոցին անկիւնը հասաւ, կարմիր լապտով
կառքը ժիւսիէօ փողոցը դառնալու
վրայ էր, և մինչեւ որ կոմսը հոն հա-
սաւ, կառքն աներեւոյթ եղած էր :

Կեցաւ հոն շնչասպառ, ուժաթափ,
և ոտքը գետնին վարկաւ բարկութեամբ :

— Անհնար է գիտնալ թէ ո՛ւր կ'եր-
թայ մըմռաց ինքնիրեն : Բայց այս ան-
գամ պէտք է որ բացատրէ, պէտք է
ըսէ ինձի թէ ի՛նչ ծածկախորհուրդ
ժամադրութեան մը կ'երթար, գիշեր-
ուան այս ժամուն այս անձանօթ թա-
ղին մէջ, ինքզինք ծածկելով մեղա-
պարտ կնկան մը պէս :

«Մեղապարտ, կրկնեց բոլոր մարմնովը դողալով: Սառագիւ այնպէ՞ն է...: Այո՛, այո՛ տարակոյս չի կայ...: Դուն ազէկ գիտես, դժբաղդ մարդ: Այո՛ գիտես, կամ մանաւանդ կ'ըզգաս երկար ժամանակէ ի վեր... և վատարար, տխմարարար չես ուզեր խոստովանիլ դուն քեզի, վախնալով այն սոսկալի վշտակրութենէն, զոր պիտի կրես, և այն ահռելի հետեւանքէն որ պիտի ունենայ այդ դառն համոզումը:»

Եւ հոն կեցեր էր տմոյն, քրանաթաթաւ, ճաշակելով այդ բարոյական հոգեվարքին բոլոր արհաւիրքը, որուն մէջ կ'ընկղմէ մեզ նախանձը, երբ անգամ մ'իւր ձիրանները խօթէ սիրահար մարդու մը սրտին մէջ:

Նոյն միջոցին, Բօլ տը Ռիչմօն, որ արտաքին դործոց պաշտօնատան մէջ եղած ընդունելութեան մը հրաւիրուած էր, կարճ ներկայութենէ մ'ետքը կծկելով, Բիւի-տը-լ'էրմիթ փողոցին անկիւնը հասաւ կառքով, և հոն վար իջաւ, որպէս զի պայմանեալ ժամէն քիչ մ'առաջ ինք հասնի որոշուած տեղը, ինչպէս որ պարտքն էր:

Եւ սկսաւ արագ քայլերով վեր ելնել Բիւի-տը-լ'էրմիթ փողոցէն:

Այս ամայի թաղին մէջ դերկոմուր վախ չունէր հանդիպումէ, ոչ ալ ճանչուելէ, հետեւաբար կատարելապէս անկասկած կ'երեւար:

Կանգ առաւ տխուր երեւոյթով տան մ'առջեւ, այն հին ձեւերով տուներէն մէկուն, որոնցմէ տակաւին կը գտնուին փարիզի այդ հեռաւոր թաղերուն մէջ, և զորս մեծ մասամբ կրօնական միաբանութիւնները գնած կամ վարձած են շարժումէ և հետաքրքիր կամ անանկողջ աչքերէ հեռու և գերձ ըլլալու համար:

45

ԲԻՒԻ-ՏԸ-Լ'ԷՐՄԻԹ ՓՈՂՈՅ

Այն տունը, որուն առջև Ֆէրնանտի ամուսինը կանգ առած էր, մեծ հաստատութեան մը, ազնուապետական հին ապարաի մը մաս պէտք էր ըլլար, վասն զի բաւական երկար և բարձր պատ մը երկնցած էր Բիւի-տը-լ'էրմիթ փողոցին վրայ, և պատիւ ետեւն ալ մեծ տան մը վերնայարկին ու պա-

տուհանները կը տեսնուէին ընդարձակ բակի մը մէջ:

Պատին գրեթէ մէջ տեղը կառագուռ մը կար, որ այն գլխաւոր բնակայարկը կը տանէր: Իսկ անկէ չորս հինգ մեթր հեռու փոքրիկ գուռ մ'ալ փողոցին վրայի տունը կը հանէր, որ ժամանակաւ մեծ շէնքին մասը պէտք էր ըլլար:

Դերկոմսը գրպանէն բանալի մը հանելով՝ փոքր գուռը բացաւ ու ներս մտնելով աներեւոյթ եղաւ:

Այս մտած տանը քով ուրիշ տուն մը կը շինուէր, որուն լաստակներն, ըստ սովորութեան, տախտակորմով մը շրջապատուած էին, բայց տախտակներն այնչափ գէշ և անկանոն կերպով կցուած, որ շատերը քակուած և մէկ քանին ալ անյայտ եղած էին, որով գիշերայած թափառոտներու մուտք կուտային:

Յոանկիւնի լամպար մը գերաններուն մէկէն կախուած, ազօտ յոյս մը կուտար անցորդներն զգուշացնելու համար:

Տախտակորմը փողոցին եզրէն դուրս ցցուած ըլլալով, ճախ կողմէն եկողը

չէր կրնար տեսնել աջ կողմէն եկողը:

Բոլ տը Ռիչմոն, դուռը ետեւէն գոցելէն ետեւ, խոր մութի մէջ մնաց:

Գրպանէն լուցկի-ճրագի տուփ մը հանելով մէկ հատը վառեց, և անոր լուսովը գնաց մտաւ նախասենեակ մը, որուն մէջ քանի մ'աթոռ և փոքրիկ սեղան մ' կային, և սեղանին վրայ ալ մտնով աշտանակ մը:

Բոլ տը Ռիչմոն վառեց մամը, և աշտանակն առնելով երկրորդ գուռ մը հրեց բացաւ, և աւելի մեծ ու ճոխապէս կահաւորուած սենեակ մը մտաւ:

Ննջասենեակ մ'էր, որուն մէջ երեսնասէ շքեղ մահճակալ մը կար կապոյտ բեհեզով զարդարուած:

Անկողնին դիմացը հայելազարդ մեծ պահարան մը կար եռանկիւնի, որ խիստ յարմար էր տիկնանց արդուզարդի:

Մեծ բազմոց մը գրաւած էր որմին ամբողջ մէկ կողմը, բազմաթիւ բարջիկներով, պահարանին և վառարանին մէջ տեղը, որուն վրայ ոսկեզօծ պղնձէ ճրագարաններ դրուած էին, և գեղեցիկ ժամացոյց մը, որուն ասեղները երկուքին քառորդ մնալով դադրած էին բանելէ:

Ճրագարաններուն ու ժամացոյցին մէջ տեղերը երկու խեցեղէն սքանչելի արձաններ կային Մօնչանէնի հռչակաւոր գործարանէն ելած :

Մին կը ներկայէր Հուտոնի Անահիտ որսորդուհին, որ ճշմարիտ գլուխ գործոց մ'էր : Միւսն ալ հին ժամանակի ըմբիշ մը, նմանապէս մերկ :

Անկողնին մօտ պատուհան մը կար բակին վրայ նայող, փեղկերը գոց :

Պատուհանին և անկողնին միջեւ փոքրիկ մատենադարան մը կար, պարկեշտօրէն գոցուած մետաքսէ վարագոյրով, որուն մէջ ճօխ հաւաքածոյ մը կար արգիլեալ լպիրշ գիրքերու, պատկերներու և լուսանկարներու որոնցմով սնանելու պէտք ունին կարգ մ'երեւակայութիւններ :

Բօլ աը Ռիչմօն հարուստ էր այդ զաւրութիւններով, որոց սիրահար էր, և զորս իւր Սէն-Տովինիք փողոցի տանը մէջ ունեցած ծածուկ գրատունէն հանած բերած էր. այնպիսի գիրքեր և պատկերներ, զորս պարկեշտ մարդիկ բնաւ չեն մտցըներ իրենց ամուսնական յարկին մէջ. բայց Բօլ աը Ռիչմօն զիտմամբ կը լցընէր զանոնք իւր

ննջասենեակին անկողնի խորշին մէջ իւր օրինաւոր կնոջը գործածութեանը համար, ինչպէս նաեւ այս մասնաւոր սենեակին մէջ, որ տիկին աը Ֆէրնիքի հետ ունեցած ապօրէն յարաբերութեան կը ծառայէր :

Բօլ վառեց վառարանին վրայի ճըրագները, որոց տասն մոմերը պայծառ լոյս մը ծաւալեցին սենեակին մէջ :

Իւր շուրջն ակնարկ մը նետելէ ետեւ տեսնելու համար թէ ամէն բան իւր տեղն էր, «երթամ բակին դուռը բանամ, ըսաւ : Անշուշտ հոնկէ պիտի գայ Անթօան Քօսատ :»

Եւ անկողնին դուռն էր թալով, որմնադարան մը բացաւ, որուն մէջ կնոջական նրբաճաշակ աւօտեայներ և անազգեստներ կախուած էին :

Զանոնք ձեռքովը մէկդի ընելով, երկրորդ գաղտնի դուռ մը երեւան ելաւ, երկու զօրեղ սողնակներով փակուած, զորս քաշեց բացաւ :

Յետոյ, սուտ որմնադարանին քով կախուած բանլիք մ'առնելով, փոքրիկ կղպանք մը բացաւ և գաղտնի դուռը հրելով, սեմէն դուրս նետուեցաւ մեծ քակի մը մէջ, ուր կնձնիներ անկուած

էին, և զոր փակած էր Բիւի-տը-լ'էր-միթ փողոցին վրայի պատը:

Աջ կողմը կը տեսնուէր կառանցիկ դուռը, ձախ կողմը գլխաւոր շէնքը: Դիմացն ալ դռնապանին օթեակը, որուն մէջ լոյս մը կը պլպլար:

Դերկոմսը մէկէն անցաւ բակին մէջէն և մտաւ օթեակը, ուր վաթսուն տարեկանի մօտ կին մը, քիթը զոյգ մ'աղնոցով զինուած, լրագիր կը կարդար:

— Ողջոյն, տիկին Լուի, ըսաւ կնկանը, որ զինքը տեսնելուն պէս՝ վերցատկեր էր զարմանքէն:

— Ա՛, դուք էք պարոն Ժէռմէն, գոչեց ճանչելով զ...ն...:

«Զիս վախցուցիք մէկէն ի մէկ...»: Վերջապէս վերադարձե՛ր էք: Կը կարծէի թէ ալ չպիտի վերադառնայիք:

— Արդարեւ տարիէն աւելի է, որ չէք տեսած զիս, Ամերիկայէն կուգամ:

— Այս անգամ պիտի մնա՞ք հոս:

— Թերեւս... գործը գիտէ:

— Տեսաք անշուշտ թէ ձեր փոքրիկ բնակարանին խնամ տարած եմ, դուք հոն եղածի պէս:

— Այո՛, տիկին Լուի, ամէն բան կատարելապէս կարգին է. ուստի կուգամ նոր տարեկան մը կանխիկ վճարել և ձեր լաւ խնամածութիւնն ալ վարձատրել:

Հաշիւները շուտ մը տեսնուեցան: Բոլ տը Ռիչմօն ժամանակ չուներ կորսնցնելու, ուստի առատօրէն վճարեց իբրեւ մարդ մը որ պէտք ունի և կ'ուզէ որ շատ հետաքրքիր չըլլան, կամ մանաւանդ խորհրդապահ ըլլան:

— Թերեւս հիմա կամ մէկ պահէն մէկը պիտի գայ ինձի կառանցիկ դռանէն: Թէ որ իմ բնակարանիս կողմը գայ ծածուկ դռնէն...:

— Բան մը չի հարցնեմ և թող տամ... այնպէս չէ՞, ըսաւ դռնապանուհին ժպտելով: Որոշուած է:

Երկու վայրկեան ետքը Բոլ տը Ռիչմօն իւր սենեակը վերադարձած էր, և որմադարանին մուտքն ալ ծածկուած:

Հոն առանձին մնալով և դէմքին արտայայտութիւնը կառավարելու պէտք չունենալով, սկսաւ մեծաքայլ ճեմել, մտահոգ ճակատով, սրտատանջ նայուածքով և կծկած բերնով:

—Մ'հ, ըսաւ յանկարծ կանգ առնելով, ո՞ւր տարաւ զիս այն անիծեալ մեքենայութիւնը: Ի՞նչ սոսկալի զառի՝ վայրի մը վրայ սահեցայ քիչ քիչ: Այս կինը, Տիան, զիս ճանկն անցուց, տիրեց վրաս, զիս բռներ, ետեւէն կը քաշէ՝ կը տանի հազար վտանգներու մէջէ... մինչեւ ոճրագործութիւն:

Եւ սարսափեցաւ:

—Միթէ ես չեղա՞յ սպանութեան պատգամաբերը: Ամուսնին նախանձովը գլխուս վրայ կախուած սպառնալիքէն ազատելու համար, այն վիճակին մէջ եմ հիմա որ կը դողամ դահիճին առջև:

«Անթօան Քօսատ սպաննած է խեղճ մանկաբարձուհին... այս մասին անտարակոյս եմ...: Այդ թշուառականը վարի գաղան մ'է... որ բանէ մը չի վախնար...: Եւ երբ Տիան հրամայէ կը հնազանդի:

«Ի՞նչ ծածկախորհուրդ կապով միացած է այդ կնոջ հետ, և անոր գերին եղած:

«Եւ այն ժիւսթին Պօնֆօան... ինձի ըսածէն զատ բան մը գիտէ՞ր:

—Կարելի չէ մէջէն ելնել:

«Եթէ խօսէր...: Այո՛, մահ կար ինձի ալ, Տիանի՛ ալ...: Կոմսը չէր ներեր:

«Եւ սակայն, եթէ Անթօան Քօսատ ձախորդ կերպով գործեց, եթէ ոճրին հեղինակը գանուի, եթէ խոստովանի, գործը մինչեւ մեզի, մինչեւ ինձի կը հասնի...:

«Եւ ամօթ, թիարան... կախազա՛ն կ'ըլլայ մեր բաժինը:»

«Եւ սարսափի խեղդուկ աւաչ մ'արձակելով ձեռքը կոկորդին տարաւ, որ կը չորնար:

—Խելքիս պիտի գայ, ըսաւ կակազելով: Թողո՞ւ Տիանը... չե՛մ կրնար: Երբ կեցած է, բրե՛նն եմ...: Ուրիշ ոչ մէկ կին չի կրնար անոր տեղն անցնիլ ինձի համար... մանաւանդ հիմա որ Ֆէրնանտ վունտե՛ց զիս իւր ննջարանէն:

Եւ կատաղի շարժում մ'ըրաւ:

—Մ'հ, ո՛րչափ սուղ կը վճարէ մարդը արձութեան կարճ և արագ վայրկեանները:

Նոյն վայրկեանին երկու խորհրդաւոր հարուած փողոցի դրանը զարնուելով՝

կորզեցին զինքը այս տխուր մտածումներէն :

Վազեց բացաւ :

Տիան տը Ֆէրնիք ներս մտաւ շտապով :



ԵՐԵՒ ՀԵՏԱՊԵՂՈՒՄ

Ընթերցողք չի մոռցան անշուշտ թէ այն վայրկենին որ ժիւլ Շամպէզի ճանչեր էր տը Ֆէրնիք կոմսն իբրեւ նոյն այն մարդը զոր տեսեր էր Սէն-Սիւլբիս եկեղեցւոյն մէջ Անթօան Բօսատի ետեւէն ինկած , այս վերջինն ալ երեւցեր էր փողոցին մէջ :

Շամպէզի փութացեր դուրս նեոուեր էր Բօսատի ետեւէն՝ միշտ այն յուսով որ թերեւս պիտի կրնար գրտնել իւր ձեռքն անցունել ուզած դազանիքին բանալին , որուն մէջ ապագայ բաղդ կամ հարստութիւն կ'ընդունարէր , աւելի մեծ և աւելի կարեւոր քան այն ամէն շահերը զորս քաղեր էր քանի մ'օրէ ի վեր , և որք անշուշտ կրնային գոհացընել աւելի

համեստ իղձեր ունեցող և հեռեւապէս աւելի խելօք մարդ մի :

Ժիւլ Շամպէզի , որ ոստիկանութեան ընտիր լրտես մը կրնար ըլլալ , իւր քալուածքը Բօսատի քալուածքին յարմարցուց , այնպէս որ թէ՛ զայն աչքէ չի վրիպեցընէր և թէ՛ անոր ուշադրութիւնը չարթնցընէր :

Տեսնելով որ իւր մարդը հեռզհետէ աւելի անմարդի փողոցներ կը մտնէր , ուր իւր ներկայութիւնը կրնար վերջապէս նշմարուիլ , մտածեց գինով մարդու մը ձեւ տալ իրեն :

Անթօան Բօսատ որ ճշդիւ կոմսուհին անցած ճանբէն կերթար , Ֆօսէ-Սէն-Պէոնար փողոցը հասաւ :

Շամպէզի անոր զիմացի մայթին վրայէն կերթար :

Յանկարծ դիմացի կողմէն եկող մարդ մ'ելաւ Անթօան Բօսատի դէմ , և զայն տեսնելուն պէս , դարմացական շարժումով մը կանգ առաւ , մինչ ոճրագործը կը շարունակէր ճանբան :

Շամպէզի , որ միշտ կը դիտէր , նըշմարեց այն մարդը , անոր յանկարծական շարժումը . . . և ինքն ալ ցնցուեցաւ ճանչելով պահ մ'առաջ վտանգ-

եալ կառքէն վար ցատկոզն ըլլալը, որ ճշդիւ տը Ծէրնիք կոմսն էր:

Անթօան Քօսատ որ արտօրնօք կ'երթար, քիթը կախած, ծանր մտահոգութեանց մէջ ընկղմած, չի կրցաւ նշմարել այս հանդիպումը:

— Կ'երեւի թէ ճանչեց թուղթերուն մարդը, ըսաւ ինքնիրեն ժիւլ Շամպէզի. նայինք պիտի երթա՞յ ետեւէն: Այն ժամանակ երկուք կ'ըլլան դիտելիքներս:

Եւ շարունակեց ճամբան վարանոտ և դեղեւկոտ քայլերով:

Տր Ծէրնիք կոմսը, որ կնոջը հետքը կորսնցընելուն վրայ յուսահատելով ետ դարձած էր, կանգ առեր էր, որպէս զի թող տար որ Անթօան Քօսատ բաւական յառաջանար:

Քանի որ նախախնամութիւնը զինքն անոր ճանբուն վրայ կը դնէր, պէտք էր օգուտ քաղէր:

Ասկէ զատ սարսափելի կասկած մ'ալ անցեր էր յանկարծ մտքին մէջէն:

— Կոմսուհիին ետեւէն կ'երթայ անշուշտ, ըսեր էր ինքնիրեն, զայն պիտի գտնէ, Ուստի առաջնորդ պիտի ըլլայ ինձի:

Եւ քիչ մը ետ մնալով, իւր քայլերն անոր քայուածքին յարմարցուց:

Այսպէս դիպուածն այս երեք մարդիկն իրարու մօտ բերելով՝ մէկ մէկու ետեւէ կը մղէր նմանօրինակ նպատակով:

Այս բարեբաղդ հանդիպման վրայ, ժիւլ Շամպէզիի սիրտը բաբախել սկսաւ ուրախութենէն:

— Ամէն բան պիտի իմանամ, կ'ըսէր:

Նոյն միջոցին Անթօան Քօսատ անկասկած կը շարունակէր ճանբան, առանց բնու մտքէն անցունելու թէ պիտի մատնէր կոմսուհին. Բօլ տը Ռիշմօնի հետ որոշած ժամադրութեանն երթալով. հետեւաբար, Փօսէ-Սէն-Վիքթոր փողոցը դառնալով՝ ժիւսիէօ փողոցը մտեր էր:

Շամպէզի միջուղիէն անցաւ սրճարանական երգ մը զեղգեղելով գինովի ձայնով մը, և տը Ծէրնիք կոմսն ալ առանց կարեւորութիւն տալու այդ գինովին, որ մէկ կողմէն միւսը կ'երբարկար իւր ետեւէն բաւական հեռու, դիմացի մայթին վրայ անցաւ, տուներուն քովէն երթալով, որպէս զի հնար եղածին չափ ինքզինք ծածկէր անոնց ստուերին տակ:

Անթօան, քանի մը փողոցներէ ալ անցնէ: Ես ալ վերջապէս Բիւի-տը-լէր-միթ փողոցը մտաւ:

Հոն յամրացոյց քալուածքը, և իւր մտահոգութենէն արթնցածի պէս սկըսաւ աւելի զգուշաւորութեամբ յառաջանալ, մերթ ընդ մերթ ետին նայելով որպէս զի տեսնէր թէ ետեւէն եկող կա՞ր:

Ժիւլ Շամպէզի, որ մայթը թողած չէր, փողոցին անկիւնը դարձածին պէս, ինքն ալ ճշդիւ այն լաստակին դիմացը գտնուեցաւ, զոր յիշած ենք արդէն, և որ վայրկեան մը ծածկեց իրմէ Քօսատը, որուն ոտնաձայնը կը լսէր մայթին քարերուն վրայ:

Ի՞նչ ընէր:

Վտանգաւոր էր յառաջանալ այն ամայի փողոցին մէջ, ուրկէ մարդ չէր անցներ:

Կը վախնար որ Քօսատ կը նշմարէր իւր հետապնդումը:

Բայց Շամպէզի արագամիտ մարդ էր: Իսկոյն սողոսկեցաւ տախտակորմին քաց ծակերէն մէկուն մէջ, և քանի մ'ոտոււով լաստակին միւսձայրը հասաւ, ուր մարդ չէր կրնար նշմարել զինքը, բայց

ինք կրնար փողոցին մէջ անցածը տեսնել տախտակորմին ճեղքերուն մէջէն:

Քօսատ կանգ առեր էր փոքրիկ դրան մ'առջև, որ աղօտ կերպով մը լուսաւորուած էր նորակերտ շինուածքին գերաններէն մէկուն գամուած լապտերով մը:

Բայց կարճ վարանումէ մ'ետև՝ Քօսատ հեռացաւ անկէ, միտքը փոխող մարդու մը պէս, քանի մը քայլ առաւ գէշ պաշտի կողմ, և արդէն յիշուած կառաւորուող բաղխեց, որ խիոյն բացուեցաւ և վրայէն գոցուեցաւ:

— Երկու մո՛ւտք կայ, ըսաւ Շամպէզի ինքնիրեն:

Նոյն վայրկենին, Տը Ֆէրնիք կոմսն ալ, որ քիչ մը ետ մնացած էր, և որուն տեսութեանն արդեւք եղած էր տախտակորմը, զայն դառնալով, տեսաւ որ փողոցին մէջ մարդ չի կար:

Քօսատ անհետ եղեր էր:

Կոմսը յուսալքէպ զայրոյթի շարժում մ'ըրաւ:

— Չախտը կ'երթայ գործս, միմուաց ինքնիրեն բաւական բարձր ձայնով, զոր լսեց Շամպէզի տախտակորմին ետեւէն, որուն մօտ կը գտնուէր կոմսն

առանց բնաւ կասկածելու.— Բայց անշուշտ սա տուներէն մէկը մտած է, աւելցուց . . . :

Եւ իւր ձախ կողմը գտնուած տուները ցոյց տուաւ :

— Հը՛, ըրաւ Շամպէզի ալ, մարդս կորսնցուց փնտռածը : Աստուած տայ խենթութիւն մը չընէ, որպէս զի երկուքիս ալ հաւասարապէս գտնել ու ճանչել փափաքած անձերը չարթննան և զգուշութեան միջոցներու չի դիմեն :

Կոմսը յուզուած կը քալէր մայթին վրայ՝ առանց հեռանալու այն դռն ն, ուսկից ֆոսատ անյայտ եղեր էր :

Մերթ կանգ առնելով՝ դրանը կը նայէր, մերթ ալ միջուղիէն անցնելով, տանը պատուհանները կը վննէր, որուն գետնայարկին մէջ կը գտնուէին Տիան և հոմանին, հիմա ալ անշուշտ Անթօան ֆոսատ :

Ժիւլ Շամպէզի, այս ամէն շարժումները դիտելով հանդերձ կը մտածէր :

— Կ'երգնում որ, կ'ըսէր ինքնիրեն, իմ Անթօան ֆոսատս եկաւ տեղեկութիւն տալու երէկ գիշեր Բիէոֆիթ երթալուն վրայ . . . : Ի՞նչ անցաւ հոն . . . անշուշտ սարսափելի բան մը . . . : Այն

ցաւագին ճիշդ . . . ֆոսատի հապշտապ փախուստը . . . : Բայց առ այժմ թողունք զայդ : Հոս պէտք է բնակի այն անձը, որուն երկու անգամ ֆոսատի տունը գալը տեսայ :

« Գալով ասոր, աւելցուց քովընտի նայուածք մը նետելով դէպի կոմսը, ֆոսատի ետեւէն ինկած է հիմա . . . : Բայց անկէ առաջ ո՞րու կը հետամտէր երբ կառքին ձին ինկաւ Տէօ-Բօն փողոցին մէջ . . . : Եւ հիմա այն հետապնդումէն կը վերադառնաբ, երբ իրեն պատահեցանք Փօսէ-Սէն-Պէռնար փողոցին մէջ . . . : »

Շամպէզի ձակտին զարկաւ :

« Անշուշտ այն մարդուն ետեւէն ինկած էր, որ ֆոսատը տեսնելու կուգար . . . : Նոյն այն մարդուն զոր ես ալ կ'ուզեմ ճանչել, որպէս զի թափանցեմ այն դաղանիքին, որուն ամէն տարերքն ունիմ՝ բացի գլխաւորէն : Եւ այս մարդն իմ բոլոր յոյսս պարապը պիտի հանէ . . . : Ինքզինքը ցոյց կուտայ . . . : պահակի պաշտօն կը կատարէ, այնպէս որ ինքզինքնին ծածկելու աշխատողները պիտի իմանան կամ տեսնեն իւր ներկայութիւնը :

«Սատանան տանի զինքը :

«Նախանձոտ ամուսին մը միայն կրնայ այսպիսի անխելքութիւն մ'ընել :»

Նոյն վայրկենին , կարծես թէ Շամպէզդիի վախերն արդարացընել ուզելով , կոմսը նորէն միջուղիէն անցաւ և փոքր դրան առջեւն եկաւ , ուր ֆուստ կանգ առեր էր նախ :

Քննեց դուռը , յետոյ յանկարծ ապանջը դրանը դնելով անշարժ կեցաւ :

Մտիկ կ'ընէր :

Այն կեցած տեղէն Պ . տը Ֆէրնիք հազիւ երեք քայլ հեռու էր ժիւլ Շամպէզդիէն :

— Կը խօսին ներսը . . . քանի մը հոգի են . . . կնոջ ձայն մը . . . այո' . . . :

Շամպէզդի ցնցուեցաւ այս խօսքերը լսելով :

Կոմսը , ապանջը դրան կղզանքին յեցած , մինչև իսկ շնչառութիւնը բռնելու երևոյթ ունէր :



ՈՒՐ ԱՆԹՕԱՆ ՔՕՍԱՏ ԻՒՐ ՊՈՇՏՆԻՆ
ՀԱՄԱՐԸ ԿՈՒՏՈՅ

Անթօան ֆուստ տանր մեծ բակը մտեր էր , որուն մէջինները կ'երևի թէ կատարելապէս կը ճանչէր . վասն զի առանց վարանելու , առանց դռնապանուհիին դիմելու , որ խօսք բնաւ չուղղեց անոր , ինչպէս որ հրտանագուած էր դերկոմսէն , հետևարար ֆուստ ուղղակի գնաց որմադարանով ծածկուած դրտնը քով :

Տիտն' իւր հոմանիին բնակարանը մտնելու համար՝ երկու ցանցառ հարուած զարկեր էր փողոցի փոքր դրան :

Անթօան ֆուստ ալ նոյնն ըրաւ բակին դրանը :

Կոմսուհին և դերկոմսը նոյն պահուն ամենաբուռն յուզման մէջ էին :

Ինչ և ալ ըլլար այդ կնոջ հոգւոյն կարծրութիւնը , ապականեալ սրտին սառնութիւնը , միշտ ձկտեալ՝ առանց բնաւ խղճմտութեան՝ իւր իղճերուն ու կիրքերուն գոհացման , որչափ և եղեռ-

նաւոր ըլլար, ինքզինք սպառնացեալ կ'զգար. որովհետեւ իւր մեղսակցին՝ Անթօանի՝ հրամայած գործը չափազանց սոսկալի էր. հետեւապէս վտանգին զգացումն և հնարաւոր հետեւանքներուն սարսափը բնականաբար դժնդակ տագնապի մէջ ձգած էին զինքը և երեսին գոյնը կտրած:

Գալով Բօլ տը Ռիչմոնի, ընթերցողք դիւրաւ կրնան գուչակել անոր ալ վիճակը, ի նկատ առնելով անոր մոլի բնաւորութիւնը որ կոմսուհիէն վար չէր մնար, բայց զուրկ էր մղիչ զօրութենէ, կորովէ և յանդգնութենէ, մինչև իսկ չարութեան համար:

Ուստի երկուքն ալ ցնցուեցան լսելով դրան բաղխումը, որ իրենց յանձնարարած սպանութեան գործիքին գալուստը կը ծանուցանէր:

—Քօսատի է, ըսաւ մէկէն դերկոմսը ցատկելով որպէս զի երթար բանար դուռը:

Տիան բռնեց զայն:

—Կեցի՛, ըսաւ, թող նորէն բաղխէ:

Հազիւ այս խօսքն արասաներ էր, նորէն երկու անգամ զարնուեցաւ դուռը, առաջինէն աւելի ուժով:

—Նոյն ինքն է, յարեց Տիան, բայց: Քանի մ'երվայրկեան ետքը Անթօան ֆօսատ երևցաւ. խոշոր աչերը, վայրադ գէմքը բուական կը յայտնէին անոր բերած լուրին բնութիւնը:

Տիան խկոյն գուչակեց, որովհետեւ քաջ կը ճանչէր զայն:

Փայլակ մ'անցաւ անզգած աչերուն մէջէն, և Անթօան ֆօսատի քովը վազելով իւր մերկ ձեռքն ու թևն անոր երկնցուց, որովհետեւ պարահանդէսի կերպարանքով էր, և վրայի կրկնօցը մէկ կողմ նետած էր սենեակին մէջ:

Տիանի ճերմակ թևերուն ու կլոր ու գեղեցիկ ուսերուն առջև ֆօսատ ցնցուելով, ծունգի վրայ եկաւ, և անոր աղնուապետական նուրբ ու քնքուչ ձեռքըն իւր բոցավառ շրթունքին տարաւ:

—Կատարեցի՞ր հրամանս, հարցուց կոմսուհին թովելով զայն իւր տարօրինակ նայուածքով, որ սպառնալիք և միանգամայն խոստում կ'արտայայտէր:

—Այո՛

—Ժիւսթին Պօնֆօա՞...

—Լաւ պիտի մնայ,

—Ի՞նչպէս:

— Յաւիտեան , որովհետեւ մեռաւ :

— Մեռա՞ւ , կրկնեց դերկոմմը դողալով և նորէն իւր կատակերգութիւնը շարունակել ուզելով ֆոսատի առջև .
ի՞նչպէս մեռաւ . . . :

Անթօան ֆոսատ , կոմսուհիին ձեռքը թող տալով , ծանրութեամբ ոտքի վըրայ ելաւ , և իւր երկու ահեղ բռունցքը երկնցնելով .

— Խեղդեցի՞ր զայն , ըսաւ խուլ ձայնով մը , և աչքը վայրագ երևոյթ մ'առաւ :

— Խեղդեցի՞ր , գոչեց Բօլ տը Ռիչմօն ալլալած :

— Ազատեցա՞յ , ըսաւ Տիան ինքնիրեն :

Անթօան ֆոսատ , դերկոմմին դառնալով , առաջին անգամ անոր երեսը նայեցաւ ուղղակի :

Այս նայուածքն այն աստիճան խորին արհամարհանք մը և վայրագ ատելութեամբ լեցուն էր , որ կոմսուհիին հոմանին երկու քայլ ետ գնաց :

Վայրկեան մը յռութիւն աիրեց :

— Բայց թուղթերը . . . նամուկները . . . զորս պիտի առնէիր այդ կնոջ քովէն և հոս բերէիր , ըսաւ Բօլ հեկեկելով ,

մղուած այն դաղափարէն թէ , ոճիրը գործուելէ ետեւ , պէտք էր գոնէ որ ամէն սպասուած արդիւնքն արտադրէր : Ո՞ւր են :

— Բան մը չի գտայ :

— Չի գտա՞ր :

— Ո՛չ , տունը բոլոր խուզարկեցի , կահերն ու պահարանները բացի , ամէն ծակուծուկ աչքէ անցուցի , ոչ նամակ գտայ ոչ ալ թուղթ կոմսուհիին վերարերող , ոչ ալ ժիւսթին Պօնֆօայի . . . :

« Կարծես թէ , գլխուն գալիքը նախատեսելով՝ ամէն դիր ու թուղթ անհետացուցեր էր :

— Գուշակեցիր , Անթօան , ընդմիջեց կոմսուհին այնպիսի ձայնով մը , որուն հանդարտութիւնը հակապատկեր մը կը ձեւացնէր երկու խօսակիցներուն . քիչ շատ ակներեւ յուզմանը հետ : Ժիւսթին , հարկաւ վախնալով իրեն համար , չէր կրնար կամ չէր ուզեր վտանգաւոր բան պահել իւր տանը մէջ . . . : Կարեւորը սա էր որ չի կարենար խօսիլ . . . և չի պիտի խօսի : Գալով թուղթերուն , զոր կ'ուզէի գտնել , անշուշտ չի պիտի կրնան գըտ-

նուիլ, ինչպէս որ չի գտնուեցան քու
ըրած խուզարկութեամբդ :

Այս մասին կոմսուհիին հանդարտու-
թիւնը կեղծ չէր, որովհետեւ ամենէն
աղէկ գիտէր թէ այն նամակները, ո-
րոց վրայ խօսեր էր դերկոմսին, իւր
գաղտնիքն ամբողջովին անոր չի յանձ-
նելու համար, գոյութիւն չունէին :

Պօնֆօայի մեռնելէն ետեւ, այլ ևս
պէտք չէր տեսներ Անթօան Քօսատի
տուած առաջին հրամանները կրկնե-
լու :

Մանկաբարձուհին և կոմսուհին եր-
կու միայնիկ անձերն ըլլալով անհե-
տացեալ յատակագծին առջևն ինչ
մէջ թաղուած գաղտնիքը գիտցող,
այս վերջինը այտուհետեւ ինքզինք ա-
պահով կը համարէր այն կողմէն :

— Անթօան, ըսաւ, ձեռքդ անգամ
մ'ալ ինձի տուր :

Քօսատ, անշարժ կեցեր էր, գլուխը
կախած, դէմքը տխուր և մտահոգ... :

Քիչ մ'արիւն ելեր էր այտերուն մէջ :

— Ի՞նչ ունիս, ըսաւ մօտենալով ա-
նոր, այնպէս որ իւր սնդուսէ անուշա-
քոյր շրջագգեստն անոր կը քսուէր :

— Բան մը չունիմ, ըսաւ յամրաբար,

աչերն անոր ուղղելով, որք երկչոտ
աղերսաւորի մը երեւոյթ ունէին. քեզ
ազատել պէտք էր, և կատարեցի, սի-
բելի՛ քոյրս :

Կոմսուհին աւելի մօտենալով՝ ական-
ջին ծռեցաւ :

— Ձի պիտի մոռնամ, Անթօան, ըսաւ,
կը հասկընա՞ս, չի պիտի մոռնամ :

Դերկոմսը կը դիտէր այս տեսարանը
իւր դժգոյն ու կեղծաւոր աչերով,
ինքզինք նկուն ու ստորին զգալով այս
երկու եղեռնաւորներուն առջև, առանց
պատճառը գիտնալու, և առանց իւր
դժգոհութիւնը զգացընել համարձա-
կելու :

— Դուն աղէկ գիտես, Տիան, թէ
ինչ հրաման որ ընես կը կատարեմ :
Դուն ազատեցար... կ'ըսես... այդ բա-
ւական է. և ես ուրախ եմ... բայց
զգուշացիր... մի՛շտ զգուշացիր :

— Որմէ՞ :

— Կոմսէ՞ն :

Կոմսուհին իւր վրայ վստահ կերպով
մը ժպտեցաւ :

— Կը կասկածիմ և կ'զգուշանամ,
պատասխանեց : Բայց դուն վախնալու
բան մ'ունի՞ս... հոն կատարած գոր-
ծիդ վրայ :

—Ամենեւին :

—Ապահո՞վ ես, ըսաւ անդիէն դերկոմսը, որ Քօսատի համար կը դողար իւր բազդն անոր բազդին հետ կասուած զգալով, թէև անոր ալ սատկիլը կ'ուզէր :

—Ես արդէն ըսի : Երբ Անթօան կ'ուզէ, օճիքը ձեռք չի տար :

—Եւ այն առաջին թուղթերը որ քեզի տուեր էի երբ կոմսը քեզի պատահեցաւ, անոնց վրայ լուր մը չունի՞ս, աւելցո՞ց կոմսուհին :

—Բնաւ :

—Այդ է քիչ մը կասկած պատճառողը հիմա : Բայց զանոնք դտնող կամ տանող մարդը չի կրնար բան մը հասկնալ անոնցմէ, հետեւապէս, ով որ ալ ըլլայ, ձեռքին մէջ բութ զէնք մը միայն պիտի ըլլայ :

Նորէն թեթեւ լուծիւն մը տիրեց :

—Հիմա բաժնուիլ պէտք պիտի ըլլայ, ըսաւ յանկարծ կոմսուհին : Ժամանակն ուշ է, և ես՝ տուն վերադառնալէ առաջ՝ նորէն Օրէնայի թատրոնը պիտի երթամ :

—Դուն ալ, Անթօան, աւելցո՞ց Տիան, քեզ նորէն պիտի տեսնեմ . . . : Եւ առաջուրնէ կ'իմացնեմ քեզի :

Անթօան կը լափէր զայն աչերովն՝ երբ կոմսուհին այս խօսքերը կ'ըսէր :

Տիան աննշմարելի ակնարկ մ'ըրաւ, որ չվրիպեցաւ Քօսատի աչքէն և ցընցեց զայն :

—Մինչեւ այն ժամանակ, շարունակեց Տիան, եթէ զիս տեսնելու պէտք ունենաս, Պ. տը Ռիչմօնին դիմէ, մինակ անոր, առանց սակայն տուն երթալու, գրէ միայն :

—Ո՛չ, ո՛չ ըսաւ մէկէն դերկոմսը, թող չի գրէ . . . : Ես ամէն երկու օրն անգամ մը հօս կը հանդիպիմ : Ես հիմա փողոցի գրան մէկ բանալին կուտամ իրեն : Պէտք ունեցած ժամանակ հօս կուգայ և թուղթի կտորի մը վրայ կը գրէ ինչ որ ունենայ մեզի ըսելիք : Ես կ'առնեմ գիրը . . . և գիտեմ ուր կը կենայ . . . : Այսպէս թէ՛ աւելի խոհեմութիւն ըրած, և թէ՛ աւելի աներկեւան կ'ըլլանք :

—Այդպէս կ'ընենք, ըսաւ Անթօան, իւր առջի անզգածութիւնը գտնելով :

Բոլ տը Ռիչմօն գնաց հայելաւոր պահարանը բացաւ, մէջէն բանալի մը հանեց և Քօսատի տուաւ :

Յանկարծ մեր երեք անձինքը սար-

սոեցան և ականջ դրին՝ իրարու նայե-
լով և երեքին ալ դէմքը մոխրի գոյն
առաւ :

Շ Փ Ո թ Ո Ւ թ Ի Ի Ն

Ի՞նչ կ'անցնէր փողոցին մէջ :
Մենք հոն թողուցինք տը Յէրնիք
կոմսը անշարժ , ականջը տանը դրանը
դրած :

Մտիկ ըրած ժամանակ բնականաբար
գլուխը դէպ առաջ հակեր էր , այնպէս
որ աչքը կը տեսնէր գետինը :

Յանկարծ ծռեցաւ և գետնէն բան
մը վերցուց :

Իսկոյն քանի մը քայլ անդին եր-
թալով , լատակին գերաններուն մէ-
ջէն կախուած կանթեղին մօտեցաւ
որպէս զի քննէր այն գտածը , որ իւր
ուշադրութիւնը վերջին ծայր գրգռած
կը թուէր :

Կնկան ձեռնոց մ'էր :

— Տարակոյս չի մնաց , ըսաւ ինքնի-
րեն ակռաները սեղմելով : Կին մը կայ
ներսը , և Տիանն է... անոր ձեռնոցն

է... ձեւէն և հոտէն յայտնի է... Այո՛ ,
ա՛ն է . ֆօսատ գայն գտնելու կու-
գար... :

«Ի՞նչ աղտոտ գործի համար է ար-
դեօք :

«Ի՞նչ ամօթալի անզգամ... թեան հա-
մար :

«Օ՛հ , պիտի գիտնամ զանոնք միա-
բանող գազանիքը... պիտի գիտնամ
թէ ստուգիւ իմ անունս կրողը՝ զայն
տղմի մէջ կը քաշքշէ :»

Ձեռնոցը կրկնօցին գրպանը խոթեց ,
ուսկից նոյն առթիւ վեցհարուածեան
մը հանելով քննեց , որպէս զի տեսնէր
թէ լաւ լցուած էր և գործածուելու
վիճակի մէջ :

— Պիտի մեռցընեմ , գոչեց զայրա-
գին , թէ՛ զինքը և թէ՛ իւր համախոհ
թշուառականը :

Նորէն դրանը մօտենալով՝ ականջ
դրաւ :

Նոյն միջոցին Շամպէզի ալ , որ
կամսին ամէն շարժումները տեսեր ու
խօսքերը լսեր էր կ'ըսէր ինքնիրեն թէ
յայտնի եղաւ ամուսին մ'ըլլալը . կը
վախնամ որ գործը պիտի աւրէ... :

«Մեռցնել , կինն ու համախոհը... Օ՛ ,

շատ դէշ կ'ըլլայ ինձի համար: Բոլոր յոյսերս կ'ոչնչանան:

«Ո՛հ, ո՛հ, պէտք է ազատել զանոնք, և հասկնալ թէ ո՞վ են:

«Ի՞նչպէս ընեմ:»

Եւ ձեռքը մէկէն ճակտին զարկաւ, մտքին մէջ յանկարծ լոյս մը ծագածի պէս:

— Փորձենք, ըսաւ:

Իսկոյն դուրս ելաւ պահուըտած տեղէն, և չի տեսնելու զարնելով կոմսը, որ չափազանց մտասոյզ ըլլալուն ուշադրութիւն չէր ըներ այս մինակուկ մարդուն երթեւեկին, գնաց խիստ բընական կերպով մը բազխեց կառադուռը, որ հինգ վեց քայլ անդին էր, և ուսկից Անթօան ֆօսատի ներս մտնելը տեսեր էր:

Կոմսը, ականջը փոքր դրան կղպանքի ծակին դրած, և ներսէն եկած տարտամ ձայները վերլուծելու զբաղած, չի նշմարեց Շամպէզիի ըրածը: Դուռը բացուեցաւ:

Շամպէզի մէկէն ներս մտնելով՝ դուռը կամացուկ մը դարձուց իւր ետեւէն, առանց բոլորովին գոցելու, սրպէս զի կարենայ դիւրաւ դուրս ելնել, եթէ հարկ ըլլար:

Սօֆիի տարփածուն, իւր նրբամըտութեամբ կրնար զինարուեստի պատուական սպայ մ'ըլլալ: Իւր ընելիքը գործադրելու ձեւերուն մէջ շատ ճարպիկ էր, ինչպէս որ տեսնուեցաւ արդէն:

Ուստի, առանց վարանման երեւոյթի, որ կրնար դռնապանուհիին ուշադրութիւնն արթնցընել, որ երեք քառորդ քուն էր, արագ քայլերով դիմեց ձախ կողմը, ուր պատուհանի մը գոց արտափեղկերուն տակէն վրայէն լոյսի բարակ նշոյլներ դուրս կը ցայտէին մութ բակին մէջ: Այդ պէտք է ըլլայ, ըսաւ դուրսի մարդուն փնտռած անձանց գտնուած սենեակը:

Բայց արտափեղկին մօտեցած ժամանակ, աջ կողմը գտաւ այն գաղտնի դռնակը, որ յաջորդաբար ծառայած էր գերկոմսին և Անթօան ֆօսատի:

Նմանելով այն հնարքին զոր կոմսը կը գործադրէր փողոցին մէջ, ինքն ալ ականջը դռնակին փակցուց:

Շփոթ մուտոց մը լսելով, հասկըցաւ որ հոն քանի մը հոգի ժողովուած էին, ուրք իւր ազատել ուզած մարդիկը միայն կրնային ըլլալ... զորս ճանչել

և իրենց գաղտնիքը իմանալով շահագործել ետքի գործ էր:

Վարանելու ժամանակ չէր:

Ցուցամատը ծռելով, չոր հարուած մը զարկաւ:

Այս հարուածին ձայնէն էր որ սարսուեր սարսափեր էին կոմսուհին և դերկոմսը:

— Դուռը զարկին, ըսաւ ֆոսատ ցած ձայնով՝ որմադարանը ցուցնելով և անմիջապէս գրպանը խոթեց դերկոմսին տուած բանալին:

Եւ երեքը մէկէն ականջ դրին՝ շունչերնին բռնելով:

Նորէն զարնուեցաւ դուռը:

— Աստուած իմ, թոթովեց դերկոմսը. ո՞վ կրնայ ըլլալ եկողը: Գէ՛շ է գործերնիս:

Ֆոսատ գրպանէն դաշոյն-զմելին մը հանեց բացաւ:

— Վա՛յ ներս մտնողին՝ եթէ թշնամի է, ըսաւ պաղուծեամբ՝ որմադարանին մօտը կենալով:

Տիան ալ ընազդաբար ֆոսատի քով գնաց կեցաւ, հասկնալով որ ներկայ գտնուող երկու մարդոցմէն՝ ա՛ն միայն կարող էր զինքը պաշտպանել անձնըւիրաբար:

— Բացէ՛ք, ըսաւ դուրսէն ձայն մը. ձեզ ազատելու եկած եմ:

Նոյն միջոցին բուռն հարուած մը դղրդեց փողոցին դուռը:

— Ա՛հ, կահազեց Տիան ձեռները գալարելով, երկու դռներն ալ բռնած են:

— Բացէ՛ք շուտով, ըսաւ Շամպէզիխուլ ձայնով մը, ազատութի՛ւն կը բերեմ ձեզի:

— Ի՛նչ պիտի ընենք, ի՞նչ պիտի ընենք, կը հեկեկէր դերկոմսը շուարած, և ահաբեկ աչերով ծակ մը կը փնտռէր ինքզինքը պահելու համար՝ առանց փոյթ ընելու կոմսուհին վտանգի մէջ թողուլը:

— Լռել և գործել, պատասխանեց ֆոսատ, ահռելի պաղարիւնութեամբ մ'և այն աստիճան վայրագ դէմքով, որ Բօլ տը Ռիշմօն, նոր արիւնհեղութիւն, նոր սպանութիւն մը նախատեսելով՝ իւր վատ սարսափն աւելի կը սաստկանար:

— Օ՛ն, կեցէ՛ք, աւելցուց ֆոսատ, բանամ դուռը:

— Ո՛չ, ո՛չ, մի՛ բանար, կ'ազաչեմ, գոչեց դերկոմսը:

Աւելի բուռն հարուած մը փողոցին

գրանը զարնուելով հնչեց բակին մէջէն :

— Իրաւունք ունի, ըսաւ Տիան գը-
լուխը անկելով: Բա՛ց, Անթօան, և...
եթէ... կոմսն է... ինձի թողուցէք
գործը:

Տիան վստահ դէմք մ'առնելու երե-
ւոյթ ունէր, իբրեւ կին մը որ բռնե-
լու ընթացք մը յղացած էր մաքին մէջ:

Անթօան Քօսատ կրկնել չի տուաւ:

Գանակն աջ ձեռքով բռնած, ներս
մտնողը զարնելու պատրաստ, եթէ
հարկ ըլլար, ձախ ձեռքովը բացաւ
դուռը:

Շամպէզի ուռմբի պէս ներս նետ-
ուեցաւ, մէկդի հրելով Քօսատը:

Այս անձանօթ դէմքը տեսնելուն
պէս, Տիան և Բօլ տը Ռիչմօն քայլ մը
ընկրկեցան:

— Ո՞վ էք դուք, ի՞նչ կ'ուզէք, հար-
ցուց Տիան:

— Ձեզ ազատել կ'ուզեմ, պատասխա-
նեց Շամպէզի:

Աւաջին ակնարկով ճանչեր էր դեր-
կոմսը, որ Անթօան Քօսատի այցելու-
թիւն տուող մարդն էր, և հիմա ալ կը
տեսնէր կոմսուհին տեսակ մ'սքանչա-
ցումով, որուն գեղեցիկ դէմքը կ'ուզէր
տպաւորել իր յիշողութեան մէջ:

— Մարդ մը կայ փողոցին մէջ որ ձեզ
կը դիտէ, յարեց, տիկինին ամուսինն
է անշուշտ...:

Եւ գլուխը խոնարհեցուց Տիանի առ-
ջեւ, բարեկիրթ մարդու մը վայելուչ
ձեւով:

— Ի՞նչէն գիտես, ընդմիջեց Քօսատ
սպառնալից:

— Հասկըցրնելն երկար կ'ըլլայ: Բայց
Ֆօսէ-Սէն-Պէռնար փողոցէն մինչև հոս
ձեր ետեւէն կուգայ, պարոն Անթօան
Քօսատ: Բարեբաղբար ձեզ կորսըն-
ցուց աչքին առջեւէն երբ Բիւի-տը-
լ'էրմիթ փողոցը հասաւ: Նախ տունե-
րը զննեց, յետոյ դուրսի դըրանը դըաւ
ակունջը: Մայթին վրայէն ալ կնկան
ձեռնոց մը գտաւ որ ինկած էր հոն
ձեր դրանը մօտ: Գրպանէն ալ ատր-
ճանակ մը հանեց լսելով:

«Պիտի մեռցընեմ զայն... և անոր
հետ այն թշուառականը...»

— Օ՛ն, վիճարանելու ժամանակ չէ:
Ես Նախախնամութեան ներկայացու-
ցիչն եմ այս վայրկենիս ձեր երեքին
համար: Ուրիչ և գայ, ինչ երեւոյթով
ներկայանայ, ձեր փրկութիւնն է:

«Իրանը դուրսը սպասող մարդը, որ

դուռը կը զարնէ անհամբեր, ծանր գէշութիւն մը պիտի ընէ, մա՛հ պիտի բերէ. իսկ ես կեանք կը բերեմ ձեզի:»

Եւ կարծես թէ այս խօսքերուն աւելի ուժ տալու համար՝ փողոցին դուռը աւելի ուժով և կրկին կրկին զարնուիլ սկսաւ:

— Կը լսէ՞ք, յարեց Շամպէզի, շուտով որոշում մը պէտք է ընէք. ուշացընելու չի դար. կը զղջաք ետքը:

— Ի՞նչ պիտի ընենք եթէ ձեր օգնութիւնն ընդունինք, հարցուց կոմսուհին վարանելով:

— Ինչ որ պիտի ըսեմ: Այս ծածուկ դռնէն դուրս ելնել, բախը անցնիլ, և սպասել կառադրանքով, զոր բաց թողած եմ: Երբ փողոցին փոքր դուռը զարնողը ներս մտցնեմ, այն ժամանակ դուք ալ կրնաք կառադրուէն դուրս փախչիլ՝ առանց անկէ տեսնուելու:

— Այո՛, այո՛, այդպէս ընենք, գոչեց Բօլ տը Ռիչմօն, փրկութեան այդ միջոցէն քաջալերուելով: Եկէք, Տիան, եկէք:

— Շատ աղէկ, այնպէս ընենք:

Շամպէզի արգիլեց դանտնք:

— Խօսք մ'ալ, միակ խօսք, ո՞ր անունան կը վերաբերի այս բնակարանը:

— Պ. Ժէրմէն անունն, պատասխանեց դերկոմսը:

— Կը բաւէ, քալեցէք:

Անթօան Քօսատ անոնց հետ չուելու զեց:

— Դուք կեցէ՛ք, ըսաւ Ժիւլ Շամպէզի:

— Ի՞նչու համար:

— Կը վախնա՞ք:

— Երբէ՛ք:

— Ուրեմն պիտի հասկնաք հիմա...: Դուք միայն կաք, որուն հոս գտնուիլն ապահովապէս գիտէ լրտեսող մարդը, որ հիմա ներս պիտի գայ...:

— Լաւ, ըսաւ Քօսատ, իրաւունք ունիք թերեւս...: Ըրէք ինչ որ պիտի ընէք...: Եթէ մատնութիւն կամ դաւաճանութիւն մ'ընէք, կ'սպաննեմ ձեզ:

Շամպէզի բակին վրայի դուռը գոցեր էր՝ բաց թողլով ներսէն որմադարանը՝ մէջը կախուած զգեստներով:

— Նստէք սա սեղանին առջև, ըսաւ նորէն Քօսատին:

Շամպէզի խօսքը կարճ էր և ազգեցիկ...:

Անթօան Քօսատ հնազանդեցաւ:

Ալ հիմա դուռը չէր զարնուեր, այլ մոլեգնաբար կը ցնցուէր:

— Պահեցէք ձեր դանակը, ըսաւ Շամպէզի, և հանդարտ նստեցէք: Բնաւ խօսք մի՛ ընէք. ինձի թողուցէք:

Եւ վազելով գնաց բացաւ փողոցին դուռը:

49

Փ Ա Խ Ո Ւ Ս Տ

— Ի՞նչ է այդ, ի՞նչ կը նշանակէ այդ ժխորը, գոչեց Շամպէզի գրգռեալ ձայնով մը՝ խօսքն այն անձին ուղղելով. որ այնպէս անսովոր աղմուկով մը դուռը կը զարնէր:

— Ճանբայ բացէք. գոչեց ար ֆէրնիք կոմսն ուժով մը հրելով Շամպէզին որ քայլ մը ետ գնաց:

— Օ՛, օ՛, բռնութիւն հիմա ալ, խեղճէք, պարոն: Պէտք է որ մարդ կանչեմ ու ձերբակալե՞լ տամ ձեզ. որպէս զի հասկցնեմ ձեզի թէ այդպէս չեն բռնաբարեր ուրիշի բնակարանը:

— Թողուցէք որ անցնիմ ըսաւ կոմսը՝ ահաաները սեղմած, չրթունքը դըժգոյն, աչերը բոցավառ, ապա թէ ոչ գէշ կ'ըլլայ ձեզի:

Ժիւլ Շամպէզի՛ վախնալ ձեւացնե-

լով մէկ կողմ քաշուեցաւ, և Տիանի ամուսինը իսկոյն վազեց առաջին սենեակը մտաւ, անկէց ալ մէկ ոստումով երկրորդ սենեակին մէջ գտաւ ինքզինք:

Շամպէզի օգուտ քաղելով այս շարժումէն՝ ուժով մը հրեր էր փողոցին դուռը, որ մեծ շփոթով գոցուեցաւ:

Տիան և Բօլ ար Ռիչմօն, որք դողալով կձկտած էին կիսաբաց կառադրան քով, հասկցան այն նշանը:

Երկուքն ալ լսեր ու ձանչեր էին կոմսին ձայնը:

Բօլ գլուխը դռնէն դուրս երկնցուց մեծ զգուշութեամբ, և ստուգելով որ փողոցն ազատ էր, Տիանի թեւէն քաշեց ու դուրս հանեց:

— Ո՞ւր պիտի երթանք հարցուց Տիան՝ սրտայուզութենէն խեղդուած ձայնով մը:

— Մինչեւ իմ կառքս, որ ինձի կ'ըսպասէ կռասիէօզ փողոցին անկիւնը:

Տիան իւր սեղեխին թեին յենլով, երկուքն ալ դրեթէ վազելով դերկոմսին նշանակած տեղը հասան:

Բօլ կառքը մտցուց զօքանչը և ինքն ալ քովը նստաւ:

—Օրեռայի թատրոնը, ըսաւ կոմսու-
հին:

Նիւթական վտանգն անցած, կամ
գոնէ հեռացած ըլլալով, Բօլ տը Ռիչ-
մօն կը գտնէր իւր պաղարիւնը:

—Ի՞նչ պիտի ընենք հիմա, հարցուց:

—Տեսնեմ, ըսաւ Տիան մտախուհի: Բօ-
սատ բան մը չի յայտներ... չեմ ալ
կարծեր որ կոմսը ձեր վրայ կասկածի,
ոչ ալ ձեր հոն ներկայութիւնը կռա-
հէ: Իմ ետեւէս ինկած էր... ուստի
առ այժմ ես եմ վտանգի մէջ:

Բօլ, ինքնասիրական սիրտիւնքի շունչ
մ'առնելով:

—Ո՞ր թշուառական արդեօք մատ-
նեց մեզ, ըսաւ գայրութով: Կոմսին
ուղեւորութիւնը կեղծիք մ'էր... Միտ-
քէս կ'անցնէր... Նախազգացումներս
կ'ըսէին ինձի...:

—Մեզ մասնողը մեք եղանք, ըսաւ
կոմսուհին: Կոմսը վերադառնալուն ի-
մացեր է իմ Օրէրայի թատրոն եր-
թալս... Հոն դացեր... իմ դուրս ել-
նելս տեսեր, փողոցի կառք մը նստեր
ետեւէս եկեր էր:

—Ուրեմն գէ՛շ է ձեր գործը... իմ
ալ:

—Ո՞վ գիտէ, ըսաւ Տիան, ես ար-
դէն քանի մ'անգամ զիս ազատած եմ
այդպիսի դժուարին կացութիւններէ...:

—Ի՞նչ կ'ընեն հիմա հոն, մրմնջեց
դերկոմսը, կէս մը քաջալերուելով իւր
տարփուհիին վստահութենէն: Ո՞վ է
այն մարդը, որ նախախմութեան պէս
օգնութեան հասաւ և ազատեց մեզ:
Ով և եղած ըլլայ, անշուշտ գիտէ մեր
գաղտնիքները, ամբողջ գաղտնի-
քը...:

Եւ թեթեւ սարսուռ մ'ունեցաւ:

—Ես ահռելի վախճան մը կը տես-
նեմ այս գործին մէջ:

—Չարիք պէտք չէ նախատեսենք,
ըսաւ կոմսուհին պաղութեամբ: Մեզ
սրտաթափ կ'ընէ, կորովիս կը կոտորէ
և մեր մտքին արթնութիւնը կը շփո-
թէ:

«Փոթորիկը կը պայթի...»

«Պէտք է կուրծք տալ:

«Յաղթել կամ մեռնիլ...: Գիտես,
Բօլ, թէ ուրիշ ընելիք չի կայ մեզի
համար...»

Արդարեւ պէտք եղածէն աւելի գի-
տէր թշուառականը, որ ոչ մոլութեան,

ոչ ալ ոճրագործութեան մէջ չունէր այն գերագոյն յանդգնութիւնը կամ վայրագ վեհութիւնը որով նշանաւոր էին Տիան տը Ֆէրնիք և Անթօան ֆօսատ :

— Գալով քիչ մ'առջի մարդուն , յարեց Տիան բարձրախոհ անձի մը ձայնով , յայտնի է որ մեզ կը լրտեսէր... Մակայն դիպուածն ըրաւ ամէն բան... Վերջապէս ո՛վ որ ալ եղած ըլլայ... ինչ կերպով ալ իմացած կամ ձեռք անցուցած ըլլայ մեր գաղտնիքը , առայժմ կարեւորութիւն չունի մեզի համար... ետքը կը տեսնենք... Մեզ ազատեց , այս է հիմա պէտք եղածը :

— Հարուածը ծանր է , մրմուռաց թօլ , եւ մեր այսպէս օձիքնիս ձեռք տալն աններելի է :

— Ի՛նչ , օձիքնիս ձեռք տուի՛նք :

— Կը տարակուսի՞ք : Եթէ կոմսը տեսաւ ձեր այն տունը մտնելը... :

— Այդ չէ ապացուցուած... մինչեւ իսկ հաւանական ալ չէ... մարդուն ըսածին նայելով... : Այս անգամ ալ կասկածներէ , հաւանականութիւններէ , երեւոյթներէ զատ բան մը չունի... :

ֆօսատ , որուն ետեւէն ինկեր էր , ինձմէ շատ ետքը եկաւ հոն... : Ի՞մ հետքս կորուսեր էր... և ճանրան ֆօսատին հանդիպեր էր :

— Եւ այն ձեռնոցը որ գտե՛ր էր :

— Ամէն կին կրնայ ձեռնոց մը կորսնցընել ճանրան գացած միջոցին : Ես չեմ միայն ձեռքի յատուկ ձեւ մ'ունեցող և տեսակ մ'անուշահոտութիւն գործածող կին :

— Հապա ֆօսատի ներկայութիւնը այն սենեակին մէջ :

— Ամէնէն ծանր կէտը ա՛յդ է : Բայց ֆօսատ և այն անձանօթը կրնան սուտ մը գտնել... : Քանի որ ես օձիքս ձեռք չի տուի... կ'ուրանամ... և չի կրնար զիս բռնել :

«Ուստի չեմ վախնար... : Հոն վախունէի... վասն զի կոմսը կրնար զիս տեսնել :

«Բայց չի տեսաւ... հոն է խնդիրը :

«Պայքարը ծանր , սարսափելի պիտի ըլլայ : Բայց ես պիտի յաղթող ելնեմ մէջէն... : Գալով քեզի , կասկած չունի քու վրադ , այս է կարեւորը :

— Կարելի է որ սպաննէ ֆօսատը , ըսաւ թօլ տը Ռիչմօն , որուն անհաճոյ

չէր թուեր վտանգաւոր մեղսակիցէ մ'ազատելու գաղափարը՝ ժիւսթին Պոնֆօայի սպանութենէն ի վեր :

— Դուն չես ճանչեր իմ ամուսինս , ըսաւ Տիան ուսերը ցնցելով : Սպաննել Բօսաաը . . . իւր նախանձոտութիւնն յայտնելու . . . արդարութեան ուշադրութիւնն հրաւիրելու . . . և իւր անուան վրայ ամօթ և գայթակղութիւն հրաւիրելու վտանգն յանձն առնելով . . . : Երբէ՛ք : Եթէ դիտնար ճշմարտութիւնը . . . զիս ալ քեզ կը ալ մեռցնէր . . . : Բայց չի գիտեր . . . ուստի կ'զգուշանայ վրտանգաւոր և ապարդիւն շուկ մը հանելէ :

Բօլ չէր քաջալերուեր իւր տարփուհիին այս պատասխաններէն :

— Պիտի տեսնէ որ տունը երկու դուռ ունի . . . և պիտի գուշակէ քու փախած ըլլալդ :

— Գուշակելը ապացուցանել չէ , պատասխանեց կոմսուհին :

— Տիան , ըսաւ դերկոմսը ճիղ մ'ընելով իւր վրայ , թերեւս աւելի խոհեմութիւն կ'ըլլայ դադրեցնել մեր յարաբերութիւնները . . . :

Տիան անթարթ աչքով մ'անոր նայելով :

— Վա՛տ , գոչեց :

— Քեզի համար , այո՛ :

— Սիրող մարդը , պատասխանեց Տիան իւր սուր հեղնութեամբ , վտանգի մէջ դտնուող կին մ'ազատելու համար լքանել չառաջարկեր , այլ անոր համար . . . կամ անոր հետ մեռնիլ կ'առաջարկէ . . . :

Բօլ տը Ռիչմօն լռեց :

— Ասկէ զատ , թէ որ ես հարկաւոր դատէի զայդ իմ փրկութեանս . . . արդէն կատարուած էր . . . : Չէի սպասեր քու առաջարկիդ և հաւանութիւնդ չէի խնդրեր :

— Ո՞ւր հասանք , հարցուց Տիան կարճ լռութենէ մ'եսու :

— Ռիչլիէօ փողոց :

— Կեցընել տուր ձեռնոցավաճառի մ'առջեւ :

Բօլ այս հրամանը կառավարին հաղորդեց :

Կառքը կենալուն պէս , կոմսուհին վար իջաւ , և զարդարուն խանութ մը մտնելով իւր քով մնացած ձեռնոցին ճշդիւ նման գոյգ մը ձեռնոց փորձեց :

Նմանութիւնը կատարեալ էր :

Իւր քովի ձեռնոցը հոն թողլով՝
դարձաւ նորէն կառքը մտաւ :

Քանի մը վայրեան ետքը նորէն իւր
օթեակին մէջն էր :

Փամը դեռ տասնեւմէկն էր, տակա-
ւին կունօի գլուխ գործոցին երկու
վերջին պատկերները մնացած էին
ներկայացնելու :

— Ես երթամ, ըսաւ դերկոմը, որ
կառավարին վարձքը վճարելէ ետեւ
հետը թատրոն մտեր էր .

— Ամենեւին, պատախիսանեց կոմ-
սուհին կտրուկ կերպով : Դուն ճաշդ
արտաքին գործոց պոչտօնատունն ը-
րած, հիմա ալ եկեր կը գտնես զիս Օ-
բէնայի թատրոնին մէջ, և կ'ընկերա-
նաս ինձի : Այս դերը պէտք է առնես :

Դերկոմսը մնաց :



ՅԱՂԹՈՒԱՅ ԲԱՅՅ ՈՉ ՀԱՄՈՉՈՒԱՅ

Տը Ֆէրնիք կոմսը սենեակէն դուրս
վազելով աչքէ անցուց մէկ նայուած-
քով :

Անթօան Քուատ՝ զայն տեսնելուն

պէս՝ ոտքի վրայ ելեր էր ակամայ,
իւր կամքէն աւելի հզօր ընազդական
զգացման մը տեղի տալով :

Այդ երկաթէ մարդը, այդ շիկերէն,
որուն անհաճոյ չէր արեան հոտը, որ
երբէք չէր ընկրկեր վտանգի առջեւ,
և չէր զարհուրեր ոճիրէ, ինչպէս որ
տեսնուեցաւ, տը Ֆէրնիք կոմսէն տե-
սակ մ'երկիւղի ակնածանք կ'զգար,
որմէ չէր կրնար ինքզինք ազատել,
ինչ և ալ ընէր :

Կ'ատէր զայն, ուրախութեամբ կ'ըս-
պաննէր . . . բայց կը վախնար մինչեւ
մէկ աստիճան :

Հազիւ տաշուած գեղջուկ մը, տը
Ֆէրնիք կոմսերուն տունը մեծցած,
անոնց հնազանդելու, զանոնք իրմէ
բարձր էակներ ճանչելու վարժուած,
Ռաուլ կոմսին առջեւ նոյն դիրքը
կ'առնէր, ինչ դիրք որ կ'առնէ շունն
իր տիրոջն առջեւ՝ զայն խածնելու իսկ
պատրաստ գտնուած միջոցին :

Ասկէ դատ, կոմսը վեհ սրտի, զօրեղ
կամքի, բարձր մտքի տէր մարդոցմէն
էր, որք միայն կ'նոջ քով կը տկարա-
նան, սիրուած կ'նոջ մանաւանդ, և որք
ակնածանք կ'ազդեն ուրիշ մարդոց,

այն գերազանց առաւելութիւններով որք սակաւաթիւ ընտրեալներու յատուկ են :

Միայն կոմսուհին չէր կրեր այդ ազգեցութիւնը, ոչ թէ անոր պէս բարձր խելք ունենալուն, «յլ վասն զի անոր ձիրքերը, վեհութիւնները, և բարոյական կարգի զօրութիւնները կատարելապէս կը վրիպէին իրմէ :

Իւր հոգին ստորին կարգէ, հասարակ կամ ռամիկ էութենէ ըլլալով և չկրնալով այդ բարձրութիւններուն հասնիլ, կ'անգիտանար և չէր բնաւ կրեր անոնց ազդեցութիւնը :

Մարդու մը վրայ իւր աչքին զարկածը մանր մունր, չնչին, հասարակ և առերեւոյթ բաներ էին, որք սովորաբար սալօնի սիգանաղներու վրայ կը ախնուին :

Իրեն մօտեցող մարդոցմէ պահանջած առաջին և միակ արժանիքն այն էր որ իրեն հաւնէր, աչքն իւր վրայ յառէր սալօնի մէջ ընդունուած լրբենի ձեւերով :

Մեր կամերիաասարդ, գեղեցիկ կամ ազեղ, հերիք էր որ իւր միջավայրէն ըլլար. Թիմար կամ ուշիմ, հոգ չէր :

Մեծարանքէ կը շողոքորթուէր : Բաւական խելացի էր իրեն համարով որ զինքը տեսնելու փափաքէր . . . և անկէց հաճոյք կը զգար, անձնասիրութիւնը կը շողոքորթուէր, խունկին անուշութիւնը միայն զգալով. առանց փոյթ ընելու ամանին թանձր պղինձէ կամ նուրբ ոսկիէ ըլլալը :

Ռատուի հետ ապրելով, անոր բարձր ձիրքերուն մէջ՝ ակար կողմերը միայն հասկըցեր էր :

Անոր զօրեղ բնաւորութիւնը, վեհանձնութիւնը, բարեսրտութիւնը, պատուոյ զգացումը, դիւրազգածութիւնը, փափկանկատութիւնը, եռանդը, գորովը, Թիւրութիւնները, որք աղնիւ և խորին զգայնութեան մը ծնունդ էին, ծաղրելի պակասութիւններ կը թուէին իրեն . . . և միայն գանգատելու, անոր բնաւորութեան թերի համարած կողմերը ցուցնելու համար կ'ընէր անոր խօսքը :

Բայց միւս կողմէ կը վախնար անկէ նիւթապէս, գիտնալով որ կարող էր սարսափելի գործեր ընելու. երբ իւր պատիւը վտանգի մէջ տեսնէր, առանց երբէք կրած ըլլալու այն բարոյական

իշխանութիւնը զոր ամէնուն վրայ կը գործածէր, բաց իրմէ, և առանց երբէք գնահատած ըլլալու այդ նշանաւոր բնութեան հիանալի կողմերը:

Իսկ Անթօան ֆօսատ, որչափ և բիրտ, առանց հասկնալու ոչ ալ գնահատելու անոր իւր վրայ ունեցած տիրական ազդեցութեան պատճառները, ենթարկուած էր անոր:

Կոմսը՝ զայն տեսնելուն պէս՝ զայրոյթի շարժումով մը վրան քալեց:

— Թշուառակա՛ն, ըսաւ խուլ ձայնով մը, ամէն ժամանակ քեզի՞ պիտի հանդիպիմ ճամբուս վրայ, կենացս մէջ, ետեւէդ անպատուութիւն և ամօթ քաշելով:

Եւ քայլ մ'ալ յառաջացաւ:
— Ո՞ւր է ան, ո՞ւր է կոմսուհին, հարցուց արիւնացայտ աչերով:

Անթօան ֆօսատ, բռունցքը կծկած, շրթունքը դժգոյն, աչերը խորու, պատասխանելու վրայ էր...

Շամպէզի առաջքն առաւ:

— Ա՛, ըսաւ, կը ճանչէ՞ք Անթօան ֆօսատը... շա՛տ աղէկ: Հիմա քիչ մը կը հասկընամ ձեր հոս ներկայութիւնն ու զայրոյթը... Անոր դէ՞մ է բարկութիւննիդ:

— Թէ՛ անոր և թէ՛ ձեզի, պարո՛ն...: Հոս մէկը կար...:

— Անշուշտ... ես և ֆօսատ...:

— Սո՛ւտ կ'ըսէք:

— Օ՛, պարո՛ն, ըսաւ Շամպէզի յօնքը պուտելով, կը թուի ինձի թէ չափը կ'անցունէք...: Դուք հոս իմ տանըս մէջն էք...: Ես թողուցի որ հոս մտնէք, վասն զի դժօխային ազմուկ մը կը հանէիք փողոցին մէջ, և մինչեւ իսկ դուռս պիտի կտորէիք: Բայց ես չեմ ճանչեր ձեզ, ոչ ալ դուք զիս կը ճանչէք...: Կը պահանջեմ որ մեկնէք ինձի այդ տարօրինակ և գայթակղական վարժունքը, որ անհասկընալի է ինձի: Կրկին կ'ըսեմ թէ չեմ գիտեր ձեր ո՛վ ըլլալը: Ես հոս գործի վրայ կը խօսակցէի Պ. ֆօսատի հետ երբ դուք դուռս զարկիք ու ժգնապէս...: Ես կարծեցի թէ ուշ մնացած գինով մ'էր որ իւր բնակարանը չէր գտներ, կամ խաղ մը կը խաղար...: Հիմա կը տեսնեմ որ դուք էք եղեր... ինքզինքնիդ կորուսած վիճակի մէջ...: Իմ տունս է այս... Ի՞նչ կ'ուզէք:

— Հոս մէկը կար...: ըսաւ նորէն կոմսը:

—Արդէն պատասխանեցի ձեզ: Ո՞վ է այդ մէկը: Ասկէ զատ՝ լմ՝ ընդունած կամ ընդունելիք մարդիկս ի՞նչ վերաբերութիւն ունին ձեզի:

—Կի՛ն մը, ըսաւ կոմսը, որ կ'սկսէր քիչ մը տէր ըլլալ իրեն և իւր ազնուապետական արժանապատուութեան զգացումը յիշել:

—Կի՛ն մը... կրկնեց Շամպէզի:

Եւ քրքիջ մը բացուց:

—Ներեցէք, պարոն, որ ձեզ լուրջ մէկու մը տեղ դրի... կ'երեւի թէ նախանձոտ մ'էք, այսինքն խե՛նթ մը:

—Պարոն, գոչեց Ռաուլ տը Ֆէրնիք, քիչ մը նեղուելով այն ձախող և յայտնապէս ծաղրելի դիրքէն որուն մէջ կը դտնուէր:

—Ներեցէք...: Ես չեմ ուզեր թըշնամանել ձեզ...: Ես ալ նախանձոտ եղած եմ... մէկ անգամ կենացս մէջ...: Ո՞վ եղած չէ կամ չի պիտի ըլլայ...: Ուստի ներողամիտ պէտք է ըլլալ որիչներու համար...:

«Բայց հաճեցէք գտնել ձեր պաղարիւնը:

«Շուրջերնիդ նայեցէք... այս յարկը մէկ ելք մ'ունի... այն, որմէ դուք

մտաք...: Արդարեւ պատուհան մ'ալ կայ... բայց քննեցէք փեղկերը որպէս զի տեսնէք թէ երկար ժամանակէ ի վեր բացուած չեն:»

Արդարեւ, դերկոմսին բացակայութեան միջոցին քիչ մը փոշի դիզուեր էր պատուհանին փորուածներուն մէջ, և Շամպէզի աչքին զարնելով՝ անհերքելի ապացոյց մը կը մատակարարէր իրեն:

—Տեսէք, ըսաւ, դեանին վրայ կափարիչ դռնակ ալ չի կայ... Ամպիկիւ՝ Բոմիքի թատրոնին պէս... ուստի եթէ ձեր փնտռած և իրաւամբ կամ յանրաւի կասկածած անձը վառարանին ծակէն դուրս թռած չէ, կը կարծեմ որ սխալ ճամբու մէջ կը գտնուիք:

Այս ամէնը կեղծիք էին:

Կոմսը կ'զգար, հակառակ այն բարոյական ստուգութեան, զոր ունէր կոմսուհիին հոն ներկայ գտնուելուն վրայ:

—Ի՞նչ գործ ունի ուրեմն հոս այս մարդը, հարցուց կոմսն Անթօան Բոսատը ցուցնելով. որ գլուխը կախած մտիկ կ'ընէր:

—Պարոն, պատասխանեց Շամպէզի

կոմսին մօտենալով, հաւատացէք ին-
 ձի, մեր տեսալցութիւնը չափազանց
 երկար տեւեց... Դուք կը ճանչէք
 եղեր Պ. Քօստոր... Ինչպէս, այդ
 իմ գիտնալու բանս չէ, ինչպէս որ
 ձեր ալ գիտնալու բանը չէ իմ անոր
 հետ ունեցած յարաբերութեանս բնու-
 թիւնը:

«Ձեր ու անոր մէջ գաղտնիք մը,
 ատելութեան պատճառ մը կայ եղեր
 ...այդ ձեր գիտնալու բանն է և ոչ
 իմս... Թէ որ խօսելիք մ'ունիք ի-
 լեմն, անշուշտ գիտէք ո՛ւր բնակիլը:
 Գացէք հոն դտէք գինքը...»

«Դուք լաւագոյն ընկերութենէ մարդ
 մ'էք անշուշտ... բայց այն վայրկենիս
 նախանձը կը կուրցնէ ձեզ...»

Կոմսը շարժում մ'ըրաւ:

— Նախանձութիւնը, շարունակեց
 Շամպէզի, ամենէն զօրեղներուն կոր-
 սնցընել կողտայ ուժը, պաղարիւնը և
 ինքնահառաժարութիւնը: Հիւանդու-
 թիւններուն ամէնէն դժնդակն է ամե-
 նաբուռն և շատ անգամ ալ անարդար
 գործերու կը մղէ...»

«Պ. Քօստորին հոն մտնելը տեսնելով,
 ենթադրեցիք, կարծեմ, թէ իւր ներ-

կայութեան հետ շնութեան ապացոյց
 մը կը բերէր...»

«Մն, պարոն, խորհեցէք անգամ մը...»

«Ես չեմ ճանչեր ձեզ արդարեւ...
 բայց տեսայ և կրնամ այսուհետեւ ա-
 ւելի լաւ ճանչել:

«Դուք միամտաբար ձեր ամէնէն ներ-
 քին գաղտնիքը կը յանձնէք ինձի, յի-
 մար զայրոյթէ մը մղուած, որ արդա-
 րացած չըլլալով, կրնայ օրինաւոր ալ
 չըլլալ:

«Մեծ սխալ մ'է այդ, պարոն, գոր
 կրնաք օր մը դառնապէս գլջալ: Մարդ
 մը այդպէս առաջին եկողին չի յանձ-
 ներ իւր սրտին գաղտնիքը, չի ցուցը-
 ներ իւր պատիւը յերաւի կամ յանի-
 րաւի խոցող վէրքերը:»

Կոմսը մտիկ կ'ընէր դժգոյն: Այս
 վերջին խօսքերուն վրայ գլուխը կա-
 խեց:

Շամպէզի շարունակեց անշփոթ հա-
 մարձակութեամբ, ուրախ ըլլալով իւր
 ճարտարմտութեան և ակներեւ յաջո-
 ղութեան վրայ:

— Ուստի կը կարծեմ թէ որչափ չու-
 տով մեկնիք ասկից, այնչափ աւելի
 լաւ կ'ըլլայ ամենուս համար ալ...»

«Իմ ով ըլլալս ձեզնէ ծածկելու պատ-
 ճառ մը չունիմ, եթէ կրնայ վստահու-

Թիւն ազդել ձեզի: Անունս Ժէրմէն է, պարոն, առեւտրական ուղեւոր գրագիր եմ...: Քիչ անդամ կուգամ Փարիզ, և երկար չեմ կենար... ինձի յատուկ գործեր, շահու գործեր պարտաւորեցին զիս հոս կանչել Պ. Անթօան ֆօսատը, զոր շատ չեմ ձանչեր...:

«Կը յուսամ որ այսչափով կրնաք հասկընալ անոր հոս գտնուելուն պատճառը: Հիմա ես խօսք ունիմ անոր հետ...:»

Կոմսը, ամօթահար, նկուն, իրեն խաղ խաղցուելը զգալով, չէր ուզեր այլ ևս վիճաբանիլ:

Նորէն խաղը կորսնցուցեր էր:

Ուստի չուզեց այլ եւս խօսքը երկարել:

— Զեզնէ բան մը չեմ խնդրեր, պարոն, ըսաւ տխրագգամ գլուխը վեր առնելով: Դուք ամենամեծ յաջողութիւն կրնայիք ունենալ իբրև փաստաբան անյոյս դատերու...: Բայց ես խօսք մ'ունիմ ուղղելիք սա մարդուն:

Եւ ձեռքը ֆօսատին երկնցուց:

— Արդէն հասկցուցի ձեզ, պարոն, թէ գործ ունէի...:

— Միակ խօսք մը:

— Ըրէք ուրեմն:

Կեղծ Պ. Ժէրմէն կամացուկ մը սենեակին միւս ծայրը քաշուեցաւ:

Պ. տը Ֆէրնիք ֆօսատի մտեցաւ, որ ապշած մնացեր էր անծանօթ մարդուն տարօրինակ յանդգնութեանը վրայ, որ քաջածանօթ կը թուէր այն տուամին, որուն մէջ ինք գլխաւոր դերը ունեցած էր:

— Ըսէ ինձի, ըսաւ կոմսը խստութեամբ՝ սպառնալից աչերը թշուառահանին վրայ սեւեռելով, ինչ ընելու եկեր էի: Քանի մ'օր առաջ իմ ապարանս, ուսկից քեզ վրնտեր էի՝ մէկ մ'ալ հոն ոտք չի կսխելու պայմանաւ:

— Նօթի էի, պատասխանեց ֆօսատ, և կ'երթայի իմ կաթընկեր քրոջմէն օգնութիւն խնդրելու:

Կոմսը զայրոյթի ահեղ շարժում մ'ըլբաւ, բայց խօլոյն զսպեց:

— Գիտցիր որ, ըսաւ ձայնը ցածցընելով, անողք պիտի ըլլամ երբ իմանամ ճշմարտութիւնը:

Ետքը Շամպէզիի դառնալով աւելցուց.

— Ես ծանր սխալ մը գործեցի, պարոն, իմ անխորհուրդ բարկութեանս տեսարանը ներկայացընելով ձեզ:

«Կ'ուզեմ ընդունիլ թէ սխալում մը բերաւ զիս հոս...»

«Քայց եթէ երբէք իմոնամ... թէ դուք խաղ խաղացիք ինձի, պիտի առնեմ վրէժս... և սարսափելի պիտի ըլլայ...»

Կոմսը վերստին մեր ճանչած կատարեալ ազնուականը դառնալով, քաղաքավարութեամբ ուղջունեց ժիւլ Շամպէզիին և մեկնեցաւ:

Տ 1

ՇԱՄՊԵՆ ԲՍՆ ԿՐ ՀՈՆԴԱՐՏԻ

Շամպէզի և Քոսատ մինակ մնալով իրարու դէմ, վայրկեան մը լուռ կեցան:

Առաջինն ուշադրութեամբ կոմսուհւոյն անձնուէր խորհրդակցին կը նայէր, զննելով անոր վայրագ և դժբնեայ գլուխը, որ բնազդ միայն կ'արտայայտէր:

Երկրորդը կը կենար, ապշած, յուզուած, հարցնելով ինքնիրեն թէ ո՞վ էր այս մարդը, որուն յանդգնութիւնն ու հանճարեղ պաղարիւնը փրկեք էին առայժմ կոմսուհին, դերկոմսն և զինքը:

Ըսել թէ շնորհակալութիւն կ'զգար անոր նկատմամբ, սուտ խօսիլ կ'ըլլայ:

Երախտագիտութենէ աւելի կասկած և անվստահութիւն կ'զգար:

Իւր կաթ-քրոջ գաղանիքն ապահովելու համար ահռելի ոճիր մը գործեր էր:

Եւ հիմա այն գաղանիքն ուրիշի մը ձեռքը անցեր էր, գոնէ մասամբ:

Մեռած վկայի մը կենդանի վկայ մը կը յաջորդէր...:

Շամպէզի նախ խղեց լուռութիւնը:

— Ի՞նչ է այս դուրս ելնող մարդուն անունը, հարցուց:

Քոսատ, իւր չէկ աչերը մէկէն Շամպէզիի ուղղելով՝ կը վարանէր պատասխանել:

— Ինչո՞ւ չէք պատասխաներ:

Քոսատ կը շարունակէր անոր նայիլ՝ մտքին մէջ բուռն պայքարի մը բռնուած:

— Ի՞նչ կը նշանակէ ձեր այդ լուռութիւնը, ըսաւ ժիւլ Շամպէզի, ես եկայ աղատեցի ձեզ և դուք կը կասկածիք իմ վրայ, պարո՞ն Քոսատ:

— Բանի անգամ է որ իմ անունս կուտաք, ըսաւ Քոսատ կոշտութեամբ. ինչէ՞ն գիտէք:

— Այդ իմ գաղտնիքս է...: Միթէ
ես ձեր ամէն գաղտնիքը կը հարցնե՞մ:

Քօսատ դողաց:

Արդեօք այս մարդը ժիւսթին Պօն-
ֆօայի սպաննուիլն ալ գիտէ՞, կը հար-
ցընէր ինքն իրեն:

— Դուք սատանայ մ'էք, մրմուաց...:

— Կարելի է. բայց բարի սատանայ
մը անշուշտ... ինչպէս որ ապացոյց
տուի: Իբրեւ թշնամի՞ վարուեցայ ձե-
զի հետ: Ո՛չ: Իբրեւ բարեկամ՞ վար-
ուեցայ: Այո՛: Ուրեմն իբրեւ բարեկամ
վարուեցէք ինձի հետ...: Ո՞վ գիտէ
թէ օր մը, թերեւս մօտ օր մը, վե-
րստին ձեզ պաշտպանելու առիթ չի
պիտի ունենամ... այդ կինը չի պիտի
պաշտպանեմ հոսկէ դուրս ելնող մար-
դուն բարկութեանը դէմ: Պիտի սպան-
նէր զայն թէ որ հոս գտնէր...: Կը
տարակուսի՞ք:

— Այո՛, կ'սպաննէր, մրմուաց Քօսատ՝
յետահայեաց սարսափով մը, զոր ա-
ռաջին անգամ ցոյց կուտար հոն գա-
լէն ի վեր...:

«Բայց խնդիրը Տիանի վրայ էր:

— Ըսէք ուրեմն թէ ի՞նչ է այդ
մարդուն անունը, կրկնեց Շամպէզի:

— Տը Ֆէրնիք կոմս, պատասխանեց
Քօսատ հասկընալով վերջապէս թէ
անօգուտ տղայամտութիւն մ'էր ծած-
կել այդ անունը:

— Եւ կինը... անոր կինը չէ՞ր:

— Այո՛:

— Բայց այն միւս մարդը... որ
այնչափ կը վախնար... այն ո՞վ էր:

— Տը Ռիչմօն դերկոմս:

— Կոմսուհիին հոմանիւն, այնպէս չէ՞:

— Ո՛չ, ոչ... երբէ՛ք:

— Ուրիշներու... սիրելի Քօսատս,
Բայց կը հասկընամ ձեր խորհրդապա-
հութիւնն ու խղճմտութիւնը...: Դուք
հաւատարիմ ծառայ մ'էք:

«Մնաց որ, աւելցուց Շամպէզի՞ պա-
ղութեամբ, ինձի համար կարեւորու-
թիւն չունի այդ կէտը:

— Եւ սակայն մեր ետեւէն կուգայիք,
ըստ Քօսատ խոթող դէմքով մը: Եւ
գիտէիք մեր հոս ըլլալը:

— Կը սխալի՞ք...: Ես բան մը չէի
գիտեր, բնա՛ւ բան մը...: Միայն սա
կէտը ազէկ հասկըցէք: Ես հետաքրքիր
և ուշադիր դիտող մ'եմ: Բառ մը մի-
այն կը բաւէ ինձի ամբողջ խօսք մը
հասկընալու համար: Շարժում մը կը

բաւէ մտքի խորհուրդ մը հասկընալու համար :

«Բայց ի՞նչ պէտք կայ մեր մէջ այսպիսի վիճաբանութեան մը Յս ըրի ինչ որ կը վայլէր ինձի ընել :

«Ձեզնէ բան մը կը խնդրե՞մ իմ միջամտութեանս փոխարէն : Ծնորհակալութիւն անգամ չեմ ուզեր :

«Ես շատ գոհ եմ իմ այս երեկոյթէս, և բաւական կը համարիմ խղճիս գոհունակութիւնը :

«Կը տեսնէք որ ես փիլիսոփայ մարդ մ'եմ, սիրելի պարոն Բօսատ, այսինքն փիլիսոփայական ժամեր ունիմ :

«Ուրիշ խօսելիքնիս չի մնաց, այնպէս չէ՞ : Դուռներուն բանլիքները ձեր քովն են անշուշտ . . . փակեցէք . . . և մնաք բարով առ այժմ »

Չայս ըսելով և ձեռքովն ալ ողջունելով՝ մեկնեցաւ, և բակէն անցնելով՝ փողոցին դուռը բացաւ դուրս ելաւ հանդարտօրէն, թողլով Անթօան Բօսատն իւր ապշուածեան մէջ :

— Օն, գործս յաջող կ'երթայ, կ'ըսէր Շամպէզի հանդարտօրէն Տէօ-Բօն փողոցն երթալով, ուր անհամբեր կ'ըսպասուէր իրեն : Հիմա որ տոամին դե-

րակատարները կը ճանչեմ, մնացեալը տղու խաղ մ'է : Բիէռֆիթի տունն իւր ամբողջ գաղտնիքն ինձի պիտի յանձնէ :

Տը Ֆէրնիք կոմսը, կարծեցեալ Պ. Ժէոմէնի տունէն մեկնելէն ետեւ բուռն յուզման մէջ էր :

— Ինձի խաղ խաղացին, կ'ըսէր ինքնիրեն և ես սրտիս վէրքն անծանօթի մ'առջեւ բացի, որ գիտէ հիմա ի՞նչ աը Ֆէրնիք կոմսը կասկած ունի իւր կնոջ վրայ, նախանձօտ է, և փոքրիկ կարճամիտ քաղքենիի մը պէս կը լըրտեսուէ զայն :

«Անունիս պատիւը, կոմսուհիին պատիւն այդ մարդուն ձեռքին մէջն են . . . Եթէ խօսի, մէկ բառով կ'ընայ զիս ամօթահար և ծաղրելի ընել, յայտնել ամենուն ինչ որ ես կ'ուզէի սրտիս խորը թաղել, կամ այն աստիճան ահեղ վրէժխնդրութեամբ մը յայտնել, որ մէկու մը մտքէն չանցնէր գթալ կամ ծիծաղիլ իմ վրայ :

- «Ո՞վ է այդ մարդը :
- «Մեղսակից մը . . .
- «Տարփաւորը թերեւս :
- «Ա՛հ, ո՞վ պիտի փարատէ այս կաս-

կածս: Ո՞վ պիտի տայ ինձի ստուգութիւնը:

— Ստուգութիւնը, կրկնեց հեգնոտ ծիծաղով մը: Վա՛տ ես դուն, որ վախցար...: Փնտռելուդ չափ կը փախչիս անկէ... և ամէն պատրուակի մազերէն կը բռնես որպէս զի չի գիտնա՞ս...: Կը վախնաս դայթակողութենէ, բայց աւելի ևս այն դաշոյնի հարուածէն, որ սիրտդ պիտի ծակէ անցնի այն օրն, ուր աչքիդ առջև ունենաս այն ապացոյցը զոր միշտ կը փնտռես, և որ միշտ կը փախչի ձեռքէ՞դ:

«Ո՞չ, հազար անգամ ո՞չ:

«Եւ այդ ձեռնոցը զոր գտայ դրանն առջեւէ՞ն:

«Եւ Քօսատ այդ տանը մէջ...:

Եւ ձեռքը ճակտին տարաւ:

«Կոմսուհին հոն չէր... սակայն սենեակին ամէն խորշերն աչքէ անցուցի, կնկան հոտ կուգար, բայց հոն չէ՛ր:

«Փախչելու ճանրայ մը կամ դուռ մը չի կար... պատուհանէն զատ, բայց այն պատուհանն ալ բացուած չէր, տարակոյս չունիմ:

«Հարցաքննե՛լ Քօսատը, խօսեցընե՛լ տալ վախով կամ շահու համար... անօգուտ էր...:

«Թշուառականը չի պիտի պատասխանէր ինձի... կը ճանչեմ զինքը:

«Ա՛հ, պիտի ջախջախե՛մ օր մը այդ իժը:

«Գալով միւսին... հարկաւ պիտի լուսաւորուի գործը...: Ետքի մնացած խաղ մ'է, և ոչ կորսուած:

«Եթէ կոմսուհին յանցաւոր է, կարելի չէ որ ես երեւան չի հանեմ ճշմարտութիւնը...: Եւ այն ժամանակ վա՛յ անոնց որ զիս խաբեցին, տանջեցին, և ինձի խաղ խաղացին:»

Ռսուլ աը Ֆէրնիք այսպէս մտադրաւ գլուխը կախած կ'երթար:

Յանկարծ շտկուեցաւ:

— Պէտք է որ Օրէոայի թատրոնը վերադառնամ և տեսնեմ թէ հո՞ն է, կամ ստուգեմ բացակայութիւնը: Օ՛ն, հանդարտութիւն: Ֆէրնիք մը ծանր պէտք է ըլլայ, մինչեւ իսկ եթէ սրտին մէջ փոթորիկ կ'ունայ...: Եւ երբ զարնէ, իբրեւ արդարադատ պէտք է զարնէ, ինչպէս իւր նախնիքը կ'ընէին ժամանակաւ...: Մեք նախանձութեան տեսարաններ չենք ներկայացընել ստորին կարգի Սքանարէլներու պէս:

Կէս ժամ ետքը նորէն Օրէոայի թատրոնը մտնելով երաժշտարանին նստարաններուն վրայ գնաց նստաւ հանդարտ դէմքով:

Առաջին նայուածքը կոմսուհիին օթեակին ուղղեց :

Օթեակը սպարապ չէր :

Տիան հոն նստած էր փեսային հետ, և նուազածութիւն մտիկ կ'ընէր այն քիչ մ'արհամարհոտ հաճոյքով, որ կենաց ամէն վայելքներով յղփացած մեծ տիկիններուն յատուկ է :

Իւր կնոջ այնպէս հանդարտութեամբ դերկոմսին հետ նստած ըլլալուն տեսքը նախ մեծ սփոփանք պատճառեց իրեն :

— Ստուգիւ յարուած էի արդեօք, հարցուց ինքնիրեն :

Առանց վերջին արարուածին սպասելու, մեկնեցաւ երաժշտարանէն, ելաւ առաջին օթեակներուն նրբանցքը, և աչք ըրաւ օթեակապանուհիին որ բանայ իւր օթեակը :

— Շատո՞նց է որ տիկին կոմսուհին եկաւ, հարցուց անոր :

— Տեսարանին սկիզբէն ի վեր, ըսաւ կինը, որ ամէն բաժանորդները կը ճանչէր, և Տիանի բացակայութիւնը չէր նշմարած, վասն զի կրնար երեկոյթին մէկ մասն իրեն ծանօթ բարեկամուհիի մ'օթեակին մէջ անցունել :

կոմսը չի պնդեց :

Դուռը բացուած ըլլալով՝ ներս մտաւ Տիան և դերկոմսը մէկէն դարձան ետևնին նայեցան :

Կ'սպասէին անոր գալուն և ընդու ելու պատրաստուեր էին :

— Ի՞նչպէս, սիրելի՞ս, դուք հո՞ս, գոչեց կոմսուհին մէկէն ոտքի վրայ ելնելով և կատարեալ դարմանք կեղծելով, մինչ ես լոնրուէ կը կարծէի ձեզ . . . :

— Պարագայի մը պատճառաւ, որ ետքը կը հասկցընեմ ձեզի, պարտաւորեցայ վերագառնալ, պատասխանեց, աչքը չի զատելով անոր երեսէն :

— Հարկաւ շատ սիրելի է ձեզ գալ զիս հոս գտնելնիդ :

— Ես ժամը ութուկէսին եկայ հոս, և քանի մը վայրկեանէ ի վեր է որ ձեզ նշմարեցի :

— Ո՞ւր էիք :

— Երաժշտարանին մէջ :

— Եւ չի տեսա՞ք զիս :

— Ո՛չ :

— Յանցանքը ձե՞րն է. ինչո՞ւ չեկաք մեր օթեակը, զիս կը գտնէիք հոս :

« Այդ ըրածնիդ վայելուչ բան չէր . »

աւելցուց Տիան անուշ յանդիմանակտն դէմքով մ'անոր նայելով :

Երբ կոմսուհին այսպէս կը խօսէր, Բօլ տը Ռիչմօն կ'օքանչանար անոր այս ճարտարարուեստ կատակերգութեան վրայ : Կոմսն ալ կ'ըսէր ինքնիրեն :

— Կամ ես կը զրպարտեմ կանանց ամէնէն անմեղը, կամ նմանը չի տեսնուած դժոխային արարածի մը հետ է գործս :

— Մէկուն կ'սպասէի, ըսաւ կոմսը բարձր ձայնով մը, կարևոր գործի մը վրայ խօսելու համար... և չեկաւ... : Ասկէ վատ, քեզ ալ չի տեսնելով, չէի կարծեր թէ դուք հոս էիք :

— Ես զիս շատ չէի ցուցըներ, պատասխանեց կոմսուհին, վասն զի մինակ էի... : Աղջկանս կ'սպասէի չեկաւ. և դերկոմսն ալ շատ չընէր որ եկաւ... արտաքին գործոց պաշտօնատան մէջ ճաշելէ ետև : Օթեակին ներսը նստայ, որպէս զի ուշադրութիւն չի հրաւիրեմ առանձնութեանս վրայ... և քանի մը վայրկեան միայն դուրս ելայ տիկին... : ր ողջունելու հահար :

Տիան տեսեր էր այն տիկինին և անոր հետ գտնուող անձերուն չուելը :

— Ես ալ չի կրցի կանուխ ազատիլ, աւելցուց Բօլ տը Ռիչմօն ալ : Ուղեորութիւննիդ հանգի՞ստ էր :

— Անօգուտ ճանրորգութիւն մը մանաւանդ, պատասխանեց կոմսը :

Չայս ըսած միջոցին աչերը Տիանի աջ ձեռքէն չէին զատուեր, որ առանց ձեռնոցի էր :

Դժգունելով ձեռքը մէկէն գրպանը խոթեց, ստուգելու համար թէ հո՞ն էր Բիւի-տը-Լէրմիթ փողոցին մէջ գրտած ձեռնոցը :

Տիան որ անոր ամէն շարժումները կը դիտէր, տեսաւ անոր նայուածքն ու ըրած շարժումը :

Եւ ժպտեցաւ մտքէն :

— Ինչո՞ւ հաներ էք ձեր աջ ձեռնոցը հարցուց կոմսը յուզեալ ձայնով մը :

— Սառնոյշ մ'առնելու համար զոր դերկոմսը բերել տուաւ : Այս իրիկուան տաքն անտանելի կուգայ ինձի :

— Ինչո՞ւ չէք դներ, ըսաւ նորէն կոմսը, աւելի պատշաճ կ'ըլլայ :

Եւ կծկած ձեռքովը կը սեղմէր գրպանին մէջինը :

— Իրաւունք ունիք... մանաւանդ որ պիտի չուենք հիմա... եթէ կ'ուզէք... :

Ո՞ւր է, նայի՛մ ըսաւ փնտռելու ձևով մը :

Կոմսին ճակատին վրայ քրտինքի կայլակներ երևցան :

— Ա՛, հոս է եղեր, ըսաւ անհոգ կերպով մը օթեակին եզրին վրայէն առնելով, ուր կեցած էր իւր հովահարին և զուգարիտակին հետ :

Եւ սկսաւ ձեռքն անցունել այն շնորհալի ձևով զոր կարգ մը կիներ իրենց ամէն գործերուն մէջ կը ցուցընեն, և զոր Տիան իւր աղջկանն ալ աւանդած էր :

Կոմսը ուշադրութեամբ նայելով՝ տեսաւ որ իւր գտածին յար և նման էր, և շատ նոր ալ չէր, այլ արդէն գործածողած ձեռնոցի մը պէս ճմրթկած էր : Տիան՝ նախատեսութեամբ՝ քանի մ'անգամ ձեռքն անցուցեր ու հաներ էր նոր գնած ձեռնոցը :

— Այս հանդարտութի՛ւնը, կ'ըսէր կոմսը մտքէն, այս բնականը . . . :

«Արդեօք զգայախարութի՛ւն մ'ունեցայ :

«Արդեօք խելքի՞ս դպած է :

«Արդեօք այս իրիկուան եղածներն երա՞զ էին :

«Արդեօք ուրիշ կի՞ն մը կար ասոր նըմանող . կամ կրնա՞ր այս աստիճան նըմանիլ միւսնոյն կերպարանքն ունենալ :»

Տիան ոտքի վրայ ելեր էր :

— Երթանք ըսաւ, բազմութեան դուրս ելնելէն առաջ, կառքս պիտի ըսպասէր ինձի . . . :

— Ձեզի համար ալ տեղ կայ կառքին մէջ, ըսաւ կոմսը փեսային դառնալով : Մեզ ապարանը ձգելէ ետեւ ձեզ ալ ձեր տունը կը տանի :

— Մեծ հաճոյքով, պատասխանեց դերկոմսը, գրեթէ կատարելապէս քաջալերուած կոմսուհիին սքանչելի պաշարիւնէն և կոմսին ալ առերևոյթ հանդարտութենէն :

Թեւ զոքանչին տալով՝ երեքը մէկէն դուրս ելան թատրոնէն, կոմսուհին ժպտելով, փեսան փութկոտութեամբ, ամուսինը լուջ և հանդարտ դէմքով, այնպէս որ մարդ չէր կրնար բնաւ կասկածիլ այն ցեխի ու արիւնի սոսկալի ողբերգութեան վրայ, որ կը խաղցուէր այդ երեք սիրտերուն մէջ :

—>O<—

ԱՆՍԿՆԿԱԼԸ

Դանիէլ ար Քէօր, ինչպէս որ յայտնուեցաւ նախօրդ գլուխի մը մէջ, նախաքննիչ դատաւոր էր:

Պարագաներն և ոչ իւր կոչումը այդ ասպարէզին մէջ ձգեր էին զինքը:

Կանուխէն որբ մնացած ըլլալով, զինքը մեծցնող հօրեղբայրը, որ բաւական հարուստ էր և դատաւորական պաշտօն կը վարէր, ուզեր էր որ Դանիէլ՝ իրաւագիտութիւն սովորելով նոյն ասպարէզին մէջ մտնէր. ասպարէզ մը, որուն հակամիտութիւն բնաւ չունէր, եթէ իրեն մնար:

Դանիէլ երեւակայութեան ու զգացման մարդ մ'էր, գեղարուեստականի փափուկ և տաք բնաւորութեամբ, և ոչ գործի մարդ:

Բայց ինքզինը երախտապարտ կ'ըզարայդ հօրեղբօր, որ զինքը որդեգրեր, և ունեցած մեծ հարստութիւնն իրեն կտակեր էր. ուստի, բարեսիրտ երիտասարդ, իւր երախտագիտական ձայնին ունկնդիր, թերևս չափազանց

հլութեամբ հետեւեր էր իւր բարերարին իղձերուն և իրագործեր էր անոր երազները:

Քիչ քիչ, ինչպէս ամէն ուշիմ և խղճամիտ մարդ, իւր պաշտօններուն մէջ ա'յնպիսի կարողութիւններ զարգացուցեր և ա'յնչափ եռանդ ցոյց տուեր էր, որ իւր մեծերուն յարգն ու համարումը գրաւեր էր:

Խելքը մէկ է, զանազան չէ, և խելացի մարդը, ուր որ ալ դնեն զինքը կենաց դիպուածները, իւր տաղանդը կը յայտնէ և իրեն արժանի դիրքը ձեռք կ'անցունէ:

Երբ կէս գիշերը կէս մամ անցած իւր տունը վերադարձաւ, սենեկապան ծառան ներկայացուց այն պաշտօնական նամակը, որ կը յանձնարարէր վրեն հետեւեալ առաւօտուն ընդհանուր դատախազին գրասենեակէ երթալ իւր պաշտօնին վերաբերեալ գործի մը համար:

Դանիէլ պատուիրեց սենեկապան ծառային որ զինքն արթնցունէ, և պառկեցաւ արանց նախատեսելու այն սարսափելի կնճիռները, զոր այս պարագան պիտի ձգէր իւր կենաց մէջ:

Առտուն ժամը վեցին, ապահովութեան պետր դատական պատուիրակութեանց տեսուչը և յատկապէս կոչուած բժիշկ մը՝ ընդհանուր դատախազին գրասենեակն երթալով՝ նախաքննիչ դատաւորին կ'սպասէին:

Բրէնպորն՝ իւր ընտրած երկու ոստիկաններուն հետ նմանապէս պատրաստ կ'սպասէր ժիւսթին Պօնֆօայի սպանութեան վերաբերեալ քննութիւններն ընելու պաշտօն ունեցող դատական պաշտօնեաներուն հետ երթալու:

Վերջապէս Դանիէլ տը Քէօր երեւցաւ քանի մը վայրկեան ուշանալէ ետեւ:

— Երթանք, ըսաւ իսկոյն ընդհանուր դատախազը, որպէս զի առաջին կառախումբին հասնինք:

— Փարիզէն դո՞ւրս պիտի երթանք հարցուց Դանիէլ:

— Այո՛, Բիէնֆիթ:

Դանիէլ թեթեւ շարժում մ'ըրաւ:

— Բիէնֆիթ, կրկնեց, ի՞նչ բանի համար:

— Ենթադրեալ սպանութեան մը համար, եթէ առաջին քննութիւնն ընող Սէն-Տընիի ոստիկանութեան տես-

չին պէտք է հաւատալ: Բայց երթանք պարոններ, ճանբան կը խօսինք:

Դանիէլ աւելի հարցում չըրաւ:

Նախորդ իրիկունը մեկնելու էր ժիւսթին Պօնֆօայի քովէն, որ ողջ առողջ էր, ուստի չէր կրնար ենթադրել թէ սպանուողն ան էր:

Ասկէ զատ, Բիէնֆիթ անունը հազար յիշատակ արթնցուցեր էր մտքին մէջ, մէկ քանին տխուր, միւսներն ալ քաղցր ու սիրուն:

Հոն Ֆէրնանտ զինքը հայր ըրեր էր,

Հոն դողացեր էր իւր պաշտած կնոջ կեանքին համար, անոր փրկութեանը, անոր պատուո՞յն համար:

Հոն առաջին անգամ լսեր էր իւր որդւոյն առաջին ճիշը. այն փոքրիկ էակին, որ իւր սիրուհւոյն ընդերքէն ելած էր, և որ ամէն պարագայի մէջ պիտի մնար իրեն իբրեւ վկայ իւր կենաց ամենամեծ սիրոյն:

Հոն Ֆէրնանտ, դժգոյն, տկար, աչերը տենդով և միանգամայն սիրով լի, ձեռքն իրեն երկնցուցեր, իրեն ժպտեր էր, հազիւ ցաւերէն ազատած, ըսելու համար իրեն.

«Նս քուկդ եմ բողբոլին, հիմա, ա-

մէն ժամանակէ աւելի և ընդ միշտ:»

Այս մտածութեանց մէջ գնաց Փարիզէն Բիէֆիթ, առանց խօսելու, առանց իսկ լսելու իւր շուրջն արձակուած աղաղակներն ու ձայները, մինչ ապահովութեան պետն ալ զբաղած էր Սէն-Տընիի ոստիկանութեան տեսուչին տուած տեղեկագրին ընթերցմամբ:

Այս վերջինը Սէն-Տընիի կայարանին մէջ իրենց կ'սպասէր:

Շոգեկառքն հոն հասնելուն պէս, եկաւ ողջունեց զիրենք:

Դանիէլ ար Քէօր իւր երազներէն արթննալով և ժամ մ'առաջ Փարիզ վերադառնալու փութով ըսաւ տեսուչին.

— Հաճեցէք, կ'աղաչեմ, ցուցնել մեզ ոճիր գործուած տունը, եթէ ստուգիլ ոճիր տեղի ունեցած է:

— Ինձի համար, ոճիր գործուած ըլլալն աներկբայելի է, ըսաւ տեսուչը: Դուք ալ անշուշտ պիտի ստուգէք հիմա, վասն զի տունը հեռու չէ... կը տեսնուի հոսկէ... Խաւսիկ, ճամբուն զարձած տեղի տունն է:

Եւ ձեռքովը ցոյց տուաւ:

Դանիէլի երեսին գոյնը նետեց:

— Սա կը մինտրով ծածկուած տո՞ւնն է, ըսաւ շմորելով:

— Այո, այն տունն է, սլարոն նախաքննիչ դատաւոր: Մանկաբարձ կին մը կը բնակէր հոն, որ Փարիզի մէջ պատահած դայթակղական գործի մը պատճառաւ իրեն եղած արգելքին հակառակ կ'երեւի թէ գաղտնաբար կը շարունակէր իւր արհեստը:

Դիւրաւ կը գուշակուի թէ Դանիէլ ինչ որտի տագնապով կը լսէր այս բացատրութիւնները:

Եթէ տղեկը տակաւին հոն ըլլար, իւր գաղտնիքն երեւան պիտի ելնէր. կը զգար զայն իւր յուզմունքէն, իւր յետահայեաց սարսափէն:

— Ո՞վ է զարնուողը, հարցուց այնպիսի ձայնով մը, որ կը դողար քիչ մը, հակառակ իւր ճիգերուն:

— Նոյն իսկ մանկաբարձուհին:

— Մեռա՞ւ:

— Ես երէկ իրիկուն ստուգեցի մեռած բլլալն և ոճրին ծածկախորհուրդ պարագաները:

Դանիէլ կանգ առաւ դողալով:

Կարծես թէ պիտի մարէր:

Բռէնպօն ոստիկանն որ ետեւ

կ'երթար, թեւերուն մէջ առաւ զայն:

— Ի՞նչ եղաք, ըսաւ ընդհանուր դատախազն զգածուելով:

— Բան մը չէ՛, կակազեց Դանիէլ՝ ինքզինք բռնելու ճիգ մ'ընելով: Գրոխու պտոյտ մը, որ երբեմն կը պատահի ինձի, մանաւանդ քանի մ'օրէ ի վեր:

Եւ ճակտին քրտինքը սրբեց:

— Այդպէս, սպաննուեցաւ այդ կինը, ըսաւ բնական ձայնով մը:

— Այո՛, այս է իմ կարծիքս:

— Ե՞րբ գործուեր է այդ ոճիրը:

— Նախընթաց գիշերն, անշուշտ:

— Կասկած ունի՞ք մէկու մը վրայ:

— Մինչեւ հիմա չունի՛ք:

— Դանակով կամ զաշոյնով զարնուած է:

— Ո՛չ... Իւր պատուհանին արտափեղկէն կախուած գտանք:

— Կախուած՞: Ուրեմն անձնասպան եղած է...:

— Դուք ալ անձամբ կրնաք դատել, պարո՛ն դատաւոր, պատասխանեց տեսուչը, վասն զի հասանք:

Արդարեւ կանգ առեր էին Ժիւսթին Պօնֆօայի տանն առջեւ:

Ոստիկան զինուոր մը կ'սպասէր դըրանն առջեւ, ուր, հակառակ առաջատեան ժամուն, հետաքրքիրներու խումբ մը գումարուած էր, ոճրին լուրը գիւղին մէջ և շրջակաները տարածուած ըլլալով:

Ոստիկան-զինուորը կանոնական ողջոյնը տալէ ետեւ դատական պաշտօնեաներուն.

— Տասնապետը ներսն է, ըսաւ, պատասխանելով տեսուչին հարցմանը:

Դատական պաշտօնեաները ներս մտան:

— Ինչ տարօրինակ պատահար, կ'ըսէր ինքնիրեն Դանիէլ, և ի՛նչ կոտորած թիւն ինձի համար...: Աստուած տայ որ բան մը չի գտնուի սա տանը մէջ, որ Ֆէրնանտն ու զիս միանգամայն մատնէ:

Եւ տագնապալից սրտով իբրեւ օրինաց ներկայացուցիչ՝ պաշտօնապէս ներս մտաւ այն սեմէն, ուսկէց յաճախանցեր էր յոյժ տարբեր պարագաներու մէջ:

ԱՌԱՋԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹԻՒՆԲ

Կառավարական և դատական պաշտօնատարներուն ներս մտներն իմանալուն պէս, ոստիկան-գինուորաց տասնապետը դիմաւորեց զանոնք՝ տանելու համար այն սենեակն ուր ժիւսթին Պօնֆօա կախուած մնացեր էր, և ուր ոստիկան-գինուորներէն մին գիշերն անցուցեր էր:

Դանիէլ տը ֆէօր սենդային սարսուռ մը զգաց, երբ մտաւ այն սենեակն որ քաջածանօթ էր իրեն:

Միակ մամ մը կը լուսաւորէր զայն աղօտարար, և կ'աւելցնէր այն տիուր հանդիսաւորութիւնը զոր մահը կը ծաւալէ իւր շուրջը:

Ներս մանողներուն զգացած տխրութեան տպաւորութիւնն ա'յնչափ խորին եղաւ, որ ընդհանուր դատախազը չի կրնալով ինքզինքը բռնել, գոչեց.

— Ինչո՞ւ ցերեկուան լոյսը չեն թողուր որ մտնէ այս սենեակին մէջ:

— Վասնզի միակ պատուհան մը կայ, պատասխանեց ոստիկանութեան տե-

սուչը, և մեք չուզեցինք դաշիւ սպանեալին մարմնոյն, որ ճշդիւ պատուհանին առջեւը կախուած է, մինչեւ որ դուք ալ պէտք եղած քննութիւնն ընէք:

— Իրաւունք ունիք, ըսաւ ապահովութեան պետը:

Եւ մոմը առնելով ծանր ծանր դիակին քովը գնաց:

Բրէնպորն ալ անոր ետեւէն կ'երթար լուի: Իւր երկու մանր աչերը յոյր այտերուն մէջ թաղուած՝ կայծերու պէս կը փայլէին:

Մեռեալն հիմա ահուելի երեւոյթ մը աւած էր:

Բայց տրդարութեան պաշտօնեաները վարժ ըլլալով այսպիսի տեսարաններու, ոչ մէկը չընկրկեցաւ, Դանիէլ տը ֆէօրէ գաա, որ ձեռքը ձակտին տարաւ տեսակ մը սոսկումով, և որուն դէմքին դժգունութիւնը կրնար ուշադրութիւն հրաւիրել, եթէ միտքերն զբաղած չըլլային դիակը դիտելով:

Բրէնպորն և ապահովութեան պետը, որ միւսներուն առջեւ կը գտնուէին, նախ մանկաբարձուհիին դէմքը քննեցին, առանց բառ մ'արտասանելու:

—Օ՛, օ՛, ըրաւ յանկարծ Բրէնպորն :
Ապահովութեան պետն անոր դար-
ձաւ :

—Ի՞նչ կայ, պարո՛ն, հարցուց . բա՞ն
մը նշմարեցիք :

—Այո՛, բայց կրնամ սխալած ըլլալ,
վասն զի բժիշկ չեմ :

—Եւ չէք սիրեր սխալիլ, գիտենք .
բայց ըսէք : Այսպիսի պարագայի մը
մէջ ամէն ոք պէտք է յայտնէ կար-
ծիքը . . . :

—Յայանեմ, ըսաւ Բրէնպորն, և եթէ
սխալիմ, Պ. Տոքթէօր Ռօպէն Հոս է,
կրնայ ուղղել իմ կարծիքս :

—Անշուշտ, ըսաւ տոքթէօրն ինքն
ալ յտուջանալով : Խօսեցէք :

—Ես կ'ըսեմ թէ այս կինը մեռնելէն
ետե կախուեր է :

Տոքթէօրը, որ ծռելով դիակը կը
զննէր, շտկուեցաւ :

—Ճիշդ է, ըսաւ : Այս խեղճ կինը
նախ խեղդեր են . . . :

—Խեղդե՞ր են, կրկնեց Դանիէլ աը
Քէօր, որ նախաքննիչ դատաւորի պաշ-
տօնը յիշելով կը մոռնար իր մտահո-
գութիւնը :

—Ճիտը նայեցէք, ըսաւ բժիշկը,
մատներուն հետքը կը տեսնուի :

—Շատ ուժով սրիկայ մ'է եղեր խեղ-
դողը . յարեց Բրէնպորն ճարտար գործ
մը գննող արուեստասէրի մը ձայնով :
Աւելի ուժեղ, քան խորամանկ . . . վասն
զի այնպիսի դրոշմ մը թողած է, որ
իւր ձեռքը պիտի ճանչցնէ ինձի, եթէ
երբէք տեսնեմ գինքը :

—Հիմա որ դիակին դիրքը ճշգիւ
հասկրցանք, աւելցուց տոքթէօր Ռօ-
պէն . մեծ լոյսի պէտք ունինք . ուստի
դիակը կախուած տեղէն իջեցնելով
պատուհանը թող բանան :

—Վայրկեան մը, վայրկեան մը,
գոչեց մէկէն Բրէնպորն արդիւրեւով ոս-
տիկան-զինուորն որ բժիշկին հրամանը
կատարելու կը ձեռնարկէր : Ես ինքս
կ'ուզեմ կատարել այդ գործը : Պէտք
է տեսնել թէ ինչպէս հանգուցուեր է
չուանը : Չի կան երկու հանգոյց կամ
կապ որ իրարու նմանին :

Եւ մոմը ապահովութեան պե-
տին ձեռքէն առնելով, աչքէ ան-
ցուց չուանին ինչ կերպով մեռեա-
լին ճիտն անցած ըլլալը, յետոյ վեր
եղնելով՝ հրեց բացաւ արտափեղկը, և

չուանին դուրս ձգուած մասը քաշեց ,
այնպէս որ դիակն այլ ևս չի բռնուե-
լով՝ գետինը ինկաւ փռուեցաւ փայտ
կտրածի պէս :

—Օ՛, օ՛, ըրաւ նորէն Բրէնպորն ,
չուանին ծայրի հանգոյցը ցուցնելով .
տեսէ՞ք , պարօննե՛ր , ի՛նչ խնամով շին-
ուած է : կանխամտածութիւնն յայտնի
է , և շինող մարդուն պաղարիւնն ակ-
ներեւ կը տեսնուի . . . : Այս միայն կը
բաւէ սպացուցանելու որ շէնք շնորհք
սպանութիւն մ'է : ինքզինք մեռցընել
ուզող կին մը չի կրնար այսպէս կանո-
նաւոր և ամուր կերպով հանգուցել այս
չուանը . . . :

—«Այս հանգոյցը շինողը վարժ կ'երե-
ւայ այս գործին , և տարակոյս չունիմ
որ առաջին փորձը չէ :

«Տեսէ՞ք , երեք հանգոյց կայ իրարու
վրայ , ամուր մը սեղմուած :

«Ոճրագործը , երբ դժբաղդ կինը
վերջին շունչը փչեր էր կամ դեռ կը
հռնչէր , չուանը ճիտն անցունելով քա-
շեր է մարմինը : Վասն զի , տեսէ՞ք ,
չուանը հեռզհեռէ սեղմուեր է , և ոչ
մէկէն ի մէկ , ինչպէս որ կ'ըլլայ ինք-
զինք կախողի մը , որ իւր մարմինը

յանկարծ դատարկին մէջ կը ձգէ :»

Պ . Ռօպէն ուշադրութեամբ դիտելով
չուանին նշանը զոր զգուշութեամբ կը
քակէր .

—Շատ ճշմարիտ է , ըսաւ Բրէնպոր-
նի նայելով տեսակ մ'սքանչացմամբ :
Արդեօք բժշկութեան ուսանող եղած
էք :

—Բնաւ . . . բայց գիտեմ . . . ինչ որ
իմ արհեստիս կը պատկանի . . . : Եւ ես
շատ տեսած ըլլալով . . . և ճշմարիտ
կախուածներ , քանի մը գործնական
դիտողութիւններ պահած եմ մտքիս մէջ :

—Ուրեմն , ըսաւ ընդհանուր դատա-
խաղը , Սէն-Տընիի ոստիկանութեան
պարօն տեսուչը չէր սխալած . . . :
Ստուգիւ սպանութեան մ'առջեւ կը
գտնուինք :

—Այդ մասին բնաւ տարակոյս չի
կրնար ըլլալ , պատասխանեց բժիշկը :
Եւ ճշդիւ Պ . Բրէնպորնի ցոյց տուած
պայմաններուն մէջ կատարուած է :
Ոճրագործը կամ ոճրագործները նախ
խեղդեր են այս կինը , յետոյ չուանը
ճիտն անցունելով մարմինը քաշեր են
պատուհանին առջեւ , և գետնէն վեր
հանելով՝ չուանին ծայրը արտափեղ-
կին վրայէն անցունելով գոցեր են :

Այս բացատրութեան միջոցին, զոր ներկաները մտիկ կ'ընէին, Ֆրէնպորն ոչ ևս կը նայէր դիակին:

— Ապուշը, ըսաւ յանկարծ ինքնիրեն խօսելու պէս:

— Ի՞նչ կայ, ըսաւ ապահովութեան պետը, որ իրաւամբ կարեւորութիւն կուտար իր այդ ստորագասի:

— Սա կայ թէ ոճրագործը ապուշ մ'է, պատասխանեց Ֆրէնպորն:

— Ինչէ՞ն:

— Սպաննելու գործին մէջ ինքզինքին բացարձակապէս տէր էր...: Բայց անկէ ետեւ... տրամախոհութիւնը կորսնցուցեր է, ինչպէս ամէն կարճամիտ մարդիկ, Ասկէց աւելի աւանակութիւն չի կրնար ըլլալ:

— Բացատրեցէք նայինք:

— Քանի որ անձնասպանութիւն կ'ուզէր կարծեցընել, ի՞նչ պէտք կար սենեակը տակն ի վրայ ընելու, բոլոր գզրոցները բանալու և ետքը կէս գոցելու այնպէս որ աչքի գարնեն:

Ֆրէնպորն իրաւունք ունէր:

Յայտնի մը տեսնուէր որ կռիւնը բոլոր խուզարկուէր էին:

— Ուրեմն ոճրին շարժառիթը գողութիւն էր, ըսաւ այն ատեն Դանիէլ

տը ֆէօր: Իւ այնպէս պէտք էր ըլլալ: Այդ ժիւսթին Պօնֆօան մինակ կ'ապրէր և զինքը հարուստ կը կարծէին անշուշտ:

Ֆրէնպորն ցնցուեցաւ նախաքննիչ դատաւորին այս խօսքերէն, և իւր փոքրիկ կլոր աչքը, Ֆէրնանտի տարփաւորին վրայ սեւեռեցան:

— Զարմանք, ըսաւ ինքնիրեն. զոհին անունը դեռ մարդ չի տուաւ... ևս ալ չէի գիտեր... և Պ. Դանիէլ տը ֆէօր գիտէ... տարօրինակ բան:

Բայց իր այս խորհրդածութիւնն իրեն պահեց:

— Հասարակ ոճրի մ'առջև կը գրտնուինք, ըսաւ վերջապէս ընդհանուր դատախազը:

— Կանոնաւորապէս գործ տեսնենք, ըսաւ Դանիէլ տը ֆէօր, զգալով իւր լռութիւնն ու սնգործութիւնը խզելու հարկը, որք երկար շարունակելով կրնային վարմանք և թերևս իսկ կասկածներ ծնանիլ. ուստի կ'ըսէր ինքնիրեն թէ աւելի լաւ էր իրեն համար ալ, Ֆէրնանտի համար ալ, նախաքննութեան տնօրէնութիւնը զօրեղապէս ձեռքն առնել:

— Մէկը կրնա՞յ զոհին վրայ ճիշդ տեղեկութիւններ տալ մեզի:

—Ես, պարոն նախաքննիչ դատաւոր, ըսաւ ոստիկան զինուորներուն տասնապետը, ես այս տեղացի եմ:

—Լաւ: Այս կի՛նը շատո՞նց ի վեր հոս կը բնակէր:

—Այս տեղացի էր:

—Ազգակոններ ունի՞:

—Ո՛չ, պարոն:

—Կ'երեւի թէ մանկաբարձ էր:

—Այո՛, պարոն:

—Կ'ընէ՞ր մանկաբարձութիւն:

—Կ'ըսէին թէ կ'ընէր, բայց գաղտնաբար անշուշտ:

—Արգիլուած էր ընելը, ընդմիջեց ոստիկանութեան տեսուչը, ինչպէս որ պատմուած է տեղեկագրին մէջ:

—Ո՞ւր կ'ընէր, գո՞ւրջը թէ տանը մէջ:

—Չենք գիտեր: Հաւանաբար դուրսն ալ տանը մէջն ալ:

—Ուրեմն գիշերօթիկներ կ'ընդունէր հոս ծածկաբար, ըսաւ ընդհանուր դատախազը:

Դանիէլ սրտատանջութեան թեթեւ շարժում մը զսպեց:

—Կ'ենթադրուէր, պատասխանեց տասնապետը, բայց ապացոյց չի կար:

—Սակայն երեւոյթները կը հաստատեն:

—Ո՞ր երեւոյթները, հարցուց մէկէն նախաքննիչ դատաւորը:

—Տանն ընդհանուր վիճակը, որ կահաւոր սենեակներէ կը բաղկանայ, ամէնն ալ անկողիներով...: Երէկ ըստուգեցի:

—Հարկաւ մեք ալ աչքէ պիտի անցունենք...:

—Սակայն, յարեց նախաքննիչ դատաւորն աննշմարելի վարանումով մը, վերջին ժամանակներս թռչակաւորի ներկայութիւն ծանուցուած չէր օրիորդ Պօնֆօայի տան մէջ:

—Օ՛, օրիորդ ըլլալն ալ գիտէ՛, ըսաւ մաքէն Բրէնպորն, որ ուշադրութեամբ կը զննէր տեղւոյն վիճակը, առանց խօսուածներէն բառ մը կորսընցունելու:

—Չեմ գիտեր, պատասխանեց տասնապետը:

Դանիէլ տը Բէօր սիրտիանաց չունց մ'առաւ:

—Խիտ քաշուած կ'ապրէր:

—Սպասուհի չունէ՞ր:

—Ո՛չ:

—Ըսել է թէ բացարձակապէս անձին էր:

—Քացարձակապէս:

— Ի՞նչպէս նշմարուեցաւ մեռած ըլլալը :

Տասնապետը պատմեց առջի օրուան անցածը :

— Կաթնավաճառը տեսե՞ր է զայն նախընթաց օրը :

— Այո՛, առաւօտուն, կաթ տուած ժամանակը, ինչպէս նաեւ հացագործին աշակերտը :

— Ըսել է թէ գիշերն սպաննուեր էր, եզրակացուց Գանիէլ տը Քէօր: Գալով սպանման ճիշդ ժամուն... դիակատու թիւնը պիտի յայտնէ մեզի: Առ այժմ տուէք ինձի կաթնավաճառին և հացագործին անուններն ու հասցէները, որ նախ անոնք հարցաքննեմ:

Եւ վայրկեան մը վարանելէ ետեւ.

— Այս վերջին օրերս բնաւ չի տեսնուեցա՞ւ կամ չի նշմարուեցա՞ւ որ և է օտար կամ կասկածելի մարդ մը,

— Ո՛չ. պարո՛ն նախաքննիչ դատաւոր: Գանիէլ տը Քէօր նորէն սփոփական շունչ մ'առաւ:

— Հիմա, ըսաւ, աչքէ անցունենք տունը:

— Կարծես թէ այս այցելութիւնն ու կատարուելիք խուզարկութիւնն անհանգիստ կ'ընեն պարոն նախաքննիչ:

դատաւորը, ըսաւ ինքնիրեն Բրէնպորն: Կը սխալի՞մ արդեօք: Ողջամիտ կարծիք մը չի թուիր... և սակայն...: Օ՛ն, դեղձանի՛կ մ'եմ: Ամէն բան նըշմարելով և եզրակացութիւններ հանելով... վերջապէս չի կեցած բաներ տեսած կ'ըլլամ: Գուն հոտառութիւն ունիս Բրէնպորն, բարեկա'մա... բայց և միանգամայն երեւակայութիւն ունիս... Մի՛ վստահիր դուն քեզի, մի՛ վստահիր:

Եւ այս անձնական ու մտովի յանդիմանութենէն ետեւ՝ գուրս ելաւ սենեակէն միւս անձանց ետեւէն, ոտտիկան զինուոր մը միայն թողլով դիակին քով:



ՈՒՐ ԲՐԷՆՊՈՐՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԵԿԷ
ԻՒՐ ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թողուած սենեակը մէկ պահարան մ'եւ փոքրիկ սեղան մ'ունէր, երկուք ալ աթոռ. քննութիւնը շուտ լմնցաւ:

Յայտնի էր որ այս կահերը խուզարկուած էին, բայց որ և է բան մ'ա-

նոնց մէջէն առնուած չէր թուեր, վասն զի ինչ որ կար անոնց մէջ, ամբողջ կեցած կ'երեւային, միայն թէ խառնուած, ճմրթկած, թոթվուած, դողդողուն ձեռքերով մէջը դուրս դարձած էին, բայց ոչ պակասած:

—Շատ տարօրինակ է այս, կ'ըսէր մտքէն Դոնիէլ տը Քէօր: Գողութի՞ւն էր այս ոճրին շարժառիթը. վրէժխընդութի՞ւն էր. սոսկալի գաղտնիք մը գերեզմանի մէջ թաղելու դիտում մ'էր: Այս կ'ինը ինձի և Ֆէրնանտի մատուցած ծառայութիւնն ուրիշներու ալ մատուցած էր, ինչպէս որ պարծեցաւ ինձի:

«Ի՞նչ կայ ուրեմն այս գաղտնախորհուրդ ոճիրին տակը: Ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը, եթէ մեր զաւակը հոս ըլլար:

«Վերջապէս ինձի յանձնուած է այս գործին նախաքննութիւնը: Սարսափելի կերպով փափուկ և դժուարին գործ, բայց ասով հանդերձ թոյլ պիտի տայ ինձի, քիչ մը վարպետութեամբ հսկել Ֆէրնանտի փրկութեանը վրայ... հեռացընել կասկածները, խոտորեցընել քննութիւնը, եթէ մեզի համար վտանգաւոր դիրք մ'առնէ:

—Դուռները գո՞ց էին, հարցուց յանկարծ տասնապետին, երբ փոքրիկ նըրբանցէն կ'անցնէին տակի միւս սենեակներն աչքէ անցունելու համար:

—Առջեւինները միայն, պատասխանեց տասնապետը:

—Կղպուած

—Ո՛չ, մղլակով... իսկ նա միւս դուռը, որ պարտէզին վրայ կը բացուի, բոլորովին բաց էր:

—Կղպանքները բռնաբարուած չէի՞ն:

—Բնաւ:

—Այդ կ'ապացուցանէ թէ ոճրագործը ծանօթ էր գոհին, որ ինք ձեռքովը դուռը բացեր է առանց կասկածելու:

—Եւ հարուածն ընելէ ետեւ պարտէզին դռնէն դուրս ելեր է, աւելցուց Քրէնպորն. քայլերուն հետքը կրնանք գտնել կակուզ հողին վրայ:

—Ի հարկէ, ըսաւ ընդհ. դատախազը, մեր կատարելիք մանրակրկիտ խուզարկութեան մէջ, պիտի գտնենք թէ՛ թուղթեր և թէ՛ ուրիշ որ և իցէ նշաններ, որք զօրեղապէս պիտի օժանդակեն մեզ մեր ապագայ քննութեանց մէջ:

Նշաններ:

Թուղթե՛ր :

Ճշգիւ ասոնք էին Ֆէրնանտի տարփածուին վախցածները :

Եթէ այն թուղթերը, այն նշանները իւր սիրելոյն, իրեն և իրենց զաւկին վերարեբեալ ըլլայի՞ն :

Սակայն չէր կրնար ցուցրնել ոչ իւր վախերը, ոչ ալ հնհնուքը, ուստի համարձակապէս օրինաց ներկայացուցիչներուն գլուխն անցաւ :

Սուգարկութիւնը երկայն և մանրազնին եղաւ, ինչպէս որ ըսեր էր ընդհ. դատախազը :

Եւ սակայն յուսացուածէն ոչ մէկ բան երեւան ելաւ, ի մեծ գոհութիւն Դանիէլ տը Քէօրի :

Բոլոր սենեակները, բոլոր կահերն ու պահարանները խուզարկուեր էին ոճրագործէն, ուստի թէ՛ անոնց մէջ գտնուածն առած, թէ՛ իրօք անոնց մէջ բան մը չի գտնուելով, օրինաց պաշտօնեաները ձեռնունայն ելան :

Երկու ժամ ետքը գետնայարկը իջան տեղեկագիրը պատրաստելու :

Դանիէլ տը Քէօր, սրտին վրայէն ծանր բեռ մը վերցած, խիստ բնական կերպով կը խօսէր ու կը գործէր, ա-

մէն բանի հսկելով, ամէն բան տնօրինելով, ինչպէս որ պարտքն էր :

— Ստուգիւ, գոչեց տեսակ մը զապեալ ուրախութեամբ, հասարակ ոճիրի մ'առջեւ ենք, որուն շարժառիթը պարզապէս գողութիւն է... Եւ ես ասարակոյս չունիմ որ այս պայմաններուն մէջ չուտով պիտի կրնանք գտնել յանցապարտը :

— Պարոն նախաքննիչ դատաւորը կը ներէ՞ ինձի դիտողութիւն մը, ըսաւ յանկարծ Բրէնպորն, որ խուզարկութեան միջոցին բառ մը չէր արտասանած, բաւական համարելով միայն նայիլ և հետազօտել, գրեթէ անտարբեր դէմքով, իրրեւ կատարելապէս համոզուած մարդ թէ բան մը չի պիտի գտնուէր :

— Անչուշտ, պարոն, խօսեցէք :

— Իմ կարծիքս բոլորովին հակառակն է առ այժմ :

Բրէնպորնի նրբամտութիւնը, արտակարգ հոտառութիւնը ծանօթ ըլլալով դատական պաշտօնեայններուն, կարեւորութիւն կ'ընծայէին անոր դիտողութիւններուն :

— Ի՞նչ պատճառաւ, հարցուց Դա-

նիէլ տը Քէօր մէկէն յուզուելով, ինչո՞ւ սպաննած են այս խեղճ կիներ, եթէ ոչ կողոպտելու համար:

— Լռեցնելու համար, պատասխանեց Բրէնպորն անոր աչքին մէջը նայելով: Ժիւսթին Պօնֆօա. ինչպէս նաեւ անոր արհեստը կատարող ամէն կին, անշուշտ վտանգաւոր զաղտնիքներ գիտէր: Անոր տան մէջ կուգային կը լուծուէին բազում գաղտնախորհուրդ դաւեր, բազում տուամներ, որոնցմէ կախում ունէր մէկէն աւելի ընտանիքներու պատիւը: Այսպիսի տուն մը կատարեալ խոտովանարան մ'է:

«Ո՞րչափ ամուսնացեալ կիներ հոն կուգան կը ծածկեն իրենց շնութեան հետեւանքը:

«Ո՞րչափ աղջիկներ, որք ետքը կ'ամուսնանան... առանց բան մը կասկածելու, հոն կ'երթան կը թողուն իրենց յուրի վարուց կամ տկարութեան ապացոյցը:

«Հետեւապէս ո՞րչափ մարդիկ կըրնային շահ ունենալ անոր լուսութեանը վրայ վստահ կամ ապահով ըլլալու մէջ:

— Այդ ամէնն ալ հնարաւոր է, ը-

սաւ մէկէն ընդմիջելով Դանիէլ տը Քէօր. բայց պարզ ենթադրութիւն են...:

— Սա իրողութեամբ հաստատուած որ բնաւ թուղթ մը չի գտնուեցաւ: Արդ, այս զժբազդ կիներ թուղթեր ունենալու էր իր քով, հաշիւ մը պէտք էր բռնէր, առմարներ ունենալ, որոց մէջ կը նշանակէր անշուշտ իւր մուտքն ու ելքը...:

— Ճշմարիտ է, ըսաւ ապահովութեան պետը, մինչ ընդհանուր դատախազն ալ հաւանութիւն կուտար գլխովը:

— Անոնց ամէնն ալ անյայտ եղած են, շարունակեց Բրէնպորն: Ունեցած ստակն ալ անշուշտ, ի բաց առեալ դրամապանակին մէջ գտնուած չնչին գումարը, թէեւ ապացոյց մը չիկայ տանը մէջ ստակ պահած ըլլալուն, որ անխոհեմութիւն էր այսպիսի գեղ տեղ մը, առանձնաբնակ տան մը մէջ. կահերուն խուզարկման կերպը միայն ցոյց կուտայ թէ սպանութեան գլխաւոր շարժառիթը գողութիւն չէր:

— Օ՞, օ՞, ըրաւ Դանիէլ տը Քէօր քիչ մ'աւելի հեղնութեամբ. աւասիկ կարծիք մը, որ շատ տարօրէն կ'երե-

նայ ինձի... դարակ մը բանալու և մէջը խուզարկելու երկու ձեւ չըլլար:

—Ներեցէք, պարո՛ն նախաքննիչ դատաւոր, այդ երկու գործողութիւնները կատարելու շատ ձեւեր կան. բացուած և տակն ի վրայ խուզարկուած դարակի կամ պահարանի մը անքէն կրնայ գուշակուիլ թէ բացողն ի՞նչ կը փնտռէր անոր մէջ:

Դանիէլ տը ֆէօր դժուարաւ կը ծածկէր իւր անհամբերութիւնն ու դժգոհութիւնը:

Որչափ աւելի կորովամիտ և խորագէտ կ'երեւնար Բրէնպորն, որչափ աւելի բարոյական հետեւութիւններ հանելու փոյթ կը ցուցնէր, այնչափ Դանիէլի սրտատանջութիւնը կ'աւելնար, որովհետեւ ինքն ալ ըրած էր նոյն դիտողութիւնները:

Բայց ի՞նչ կրնար ըսել:

Բրէնպորն, իւր մեծին պատճառած դժգոհութիւնը չնշմարել ձեւացընելով կը շարունակէր իւր ապացուցանքը:

—Հարուածն ընողը, կ'ըսէր իւր հանդարտ և յամր ձայնովը, պէտք էր ճանչէր մանկաբարձուհին և ինքն ալ ծանօթ ըլլար անոր:

«Կը տեսնուի որ դժբաղդ կինը բնաւ կասկած չունենալով՝ ինքզինքը չէ պաշտպանած...»:

Ըսել է թէ իրեն հետ յարաբերութիւն ունեցող և իւր սովորոյթները գիտցող մարդ մ'էր:

—Օ՛, գոչեց Դանիէլ տը ֆէօր, մեք արդէն հաւաստեցինք զայդ:

—Անշուշտ...բայց ես աւելի հեռու կ'երթամ, իմ կարծիքս է թէ ոճրագործն իւր հաշուին չէր գործեր...»:

—Այդ չափազանց է, ըսաւ նախաքննիչ դատաւորը զարմանալով և միանգամայն յուզուելով Բրէնպորնի այս ասարօրինակ սրամտութենէն, որ նախաքննութեան հետեւանքին վրայ մտածելու շատ նիւթ կուտար իրեն:

—Բացատրեցէք ձեր այդ ըսածը, պարո՛ն, ըսաւ մէկէն ընդհանուր դատախազը, մինչ ապահովութեան պետը գոհութեամբ մտիկ կ'ընէր իւր ստորադաս պաշտօնէին խօսքերը:

—Իմ ենթադրութիւնս ոճրագործին յայտնի պաղարիւնութեան վրայ հիմնուած է, ըսաւ Բրէնպորն անտարբեր կերպով:

«Ընդունելով որ ոճրին նպատակը

գաղտնիքի մը վրայ լուսթիւն ապահովել էր, եթէ այդ գաղտնիքը ոճրագործին սեփական ըլլար, աւելի կիրքով, աւելի ուժգին բնութեամբ կը կատարէր այս ահուելի գործը:

«Արդ, որչափ որ ցոյց տուած է ի բնէ արամախոհութենէ զուրկ բիրտ վայրագ մ'ըլլալը, այնու հանդերձ զարմանալի պաղարիւնութեամբ կատարած է իւր ոճիրը...»

«Ուշիմ մարդ մը չէ, այլ զօրեղ և յանդուգն: Այս է վարձուած ոճրագործներուն կազմը, պարզապէս կոյր գործիքներ, որք այս տեսակ բաներու կը գործածուին:

«Ուստի ինձի համար ոճրագործը պարզապէս բազուկ մ'է...»

«Սորհուրդն ուրիշ կողմէ եկած է:

—Ուրեմն կը կարծէք թէ գտած է թուղթերը, փնտռած վտանգաւոր ապացոյցները, հարցուց Դանիէլ տը Քէօր:

Բրէնպորն վայրկեան մը լուռ կեցաւ՝ ծանր ծանր քիթը քերելով:

—Այդ կէտին վրայ կը վարանի՞, ըսաւ վերջը:

—Ի՞նչպէս:

—Այո՛... ապացոյց չի կայ բան մը գտած ըլլալուն:

—Ինչ բանի վրայ կը հիմնէք ձեր այս երկրորդ ենթադրութիւնը:

Բրէնպորն նորէն մտօեց:

—Հիմայ կրնամ պնդել այս մասին մինչև ցնոր տնօրէնութիւն:

«Բա՛ն մը հրա՞ծ չէ:

«Դիտեցէք թէ քանի՛ կը շարունակէր խուզարկութիւնը և ժամանակ կանցնէր, աւելի կը կատողէր:

«Նախ վարի սենեակներէն սկսած է, ուր խուզարկութիւնները մինչև աստիճան մը կանոնաւոր եղած են:

«Հոն բան մը չի գտնելով, վերի յարկը ելած է, ուր տակնիվըրայութիւնն ու փնտռողին կատաղութիւնը սենեակէ սենեակ կ'աւելնայ:

«Վերջապէս, մէկնամ ժամանակ, պարտէզին մէջէն անշուշտ, տանը դուռը կրնըկին վրայ բաց թողած է, որ մեծ վրդովման մը նշան է:

«Եթէ յաջողած ըլլար, մինչև վերջը կը պահէր իւր հանդարտութիւնն ու պաղարիւնը:

—Եզրակացութիւննի՞դ, հարցուց Դանիէլ տը Քէօր այս անդիմադրելի տըրամաբանութենէն ազդուած:

—Այս է թէ փնտռածները կը կե-

նան, և անոր չի գտածը մեք պիտի գտնենք:

Դանիէլ կը լուէր գաղտնի երկիւղէ մը ննչուած որ այնչափ աւելի ժնդակ էր ո՛րչափ աւելի տարտամ:

Վերջապէս Բրէնպորն իրաւունք պէտք էր ունենար:


Բայց այն ժամանակ ի՞նչ պիտի գըտնուէր, և որո՞ւ դէմ պիտի դառնար գտնուածը:

—Ստիպան, ըսաւ ապահովութեան պետը, մեք խուզարկեցինք տանն ամէն կողմը...:

—Այո՛, տո՛ւնը, կրկնեց Բրէնպորն:

—Ուրի՞շ:

—Կը մնայ պատէզը:



ՆԱԽԱՃԱՆԻ ՄԻՋՈՅԻՆ

—Պարտէզը, կրկնեց Դանիէլ տը Բէօր:

—Այո՛, պարոն նախաքննիչ դատաւար, պարտէզը. դոր աչքէ չանցուցիք տակաւին, և՛ ինչպէս կ'երեւի ոճրագործն հոնկէ փախած է:

—Ես կը կարծեմ թէ մէկ մարդ մ'է հարուածն ընողը... մինչեւ հիմա մէկ մարդու մը հետք կը տեսնուի:

—Թերեւս քայլերու նշաններ պիտի գտնենք պարտէզին մէջ, ըսաւ Գանիէլ տը Բէօր, եթէ օդը խոնաւ էր ոճրին գիշերը, և եթէ չեն աւրուած...: Սպանութեան ժամանակէն ի վեր քսան ուչորս ժամէն աւելի անցած է:

—Այո՛, բայց եթէ մարդ մտած չէ պարտէզին մէջ, կրնայ բաւական տեղեկութիւններ տալ մեզի:

—Օ՛, մարդ չի մտաւ պարտէզը, ես աղէ՛կ գիտեմ, գոչեց տասնապետը: Տանը մէջ մարդ մը դբուեցաւ պահպան, որ սկիզբէն մինչեւ վերջը հոն միայն սպասեց:

Ընդհանուր դատախազը ժամացոյցը նայելով.

—Պարոններ, ըսաւ մէկէն. այդ քննութիւնը, որ լուրջ և խորին պէտք է ըլլայ, բնականաբար երկար պիտի տեւէ...: Ժամը հիմա տասնումէկն է. առտուան ժամը վեցէն ի վեր ոտքի վրայ ենք...: Կարծեմ թէ խոհեմութիւն կ'ըլլայ քիչ մը բան ուտել...: Ուղեղը լաւ չի խորհիր և աչերն ալ

չփոփ կը տեսնեն երբ ստամոքսը բո-
ղոքէ... Գ. նախաքննիչ դատաւորն
այ կարծեմ անպատեհ չի համարիր
այս ըսածս :

— Ամենեւին, պատասխանեց Դանիէլ
տը ֆէօր, Ամէն բան ներկայ վիճակին
մէջ թող մնայ մեր կարճ բացակայու-
թեան միջոցին, և մենք ալ ուժ առ-
նենք. լաւ կ'ըլլայ կարծեմ :

Արդարեւ մանկաբարձուհիին տանը
մէջ մտնելէն ի վեր կրած սրտայուզու-
թիւններն ու մտատանջութիւններն,
ստիպողական հարկ մը կը դնէին իւր
վրայ ինքզինքը կազդուրելու, անդոր-
րելու, ինչպէս որ կը հասկցուէր երե-
սին դժգունութենէն և խոնջ ելե-
ւոյթէն :

Բրէնպորնի բերած երկու ոստիկան-
ներն ու երկու զինուորներն հոն թողու-
ցին, հսկելու տանն ու պարտէզին վը-
րայ :

Բրէնպորն և տասնապետն ի միասին
ճաշեցին փոքրիկ գինետան մը մէջ, և
ուտելիք ղրկեցին հսկողներուն :

Ճաշի միջոցին, Բրէնպորն քանի մը
բան հարցուց տասնապետին :

Նախ թէ ի՞նչ էր այդ սպաննուած
կնոջ տարիքը :

— Ճիշդ տարիքը Բիէնֆիթի թաղա-
պետութենէն կրնայ իմացուիլ, բայց
քստ իմ կարծեաց առ նուազն վաթ-
սուն տարեկան ըլլալու էր :

— Գեղեցի՞կ էր թէ տղեղ :

— Օ՛, նիհար, խորշումած, բայց աշ-
խոյժ և արթուն :

— Ուրեմն տարփաւոր մ'ունեցած ըլ-
լալու հաւանականութիւն չկայ : Բա-
քեկամներ ունէ՞ր այս գեղին մէջ :

— Չի կարծուիր : Քիչ դուրս կ'ելնէր
քանի մը մանր պէտքերու համար, մարդ
չէր ընդուներ, շատ չէր խօսեր, ան-
ժպիտ էր և գոց բերան :

— Թշնամիներ ունէ՞ր :

— Ո՛չ բարեկամ, ո՛չ ալ թշնամի. ոչ
ոք կ'զբաղէր անով :

— Պարտէզ մ'ունենալով, անշուշտ
մշակելու համար մէկը կը գործածէր :

— Այդ չեմ գիտեր :

— Պէտք է որ ստուգեմ զայդ :

Նոյն միջոցին երկու մարդ մտնելով
եջիւզ գաւաթ քոնեաք ուզեցին ոտքի
վրայ խմելու համար :

— Ահա այս երկու մարդիկն են որ
Քիւսթին Պօնֆօայի մեռած ըլլալուն

լուրը առին, ըսաւ տասնապետը Բը-
րէնպորնի ականջն ի վար:

— Կաթնաժաճառն ու հացագո՞րծը:

— Այո՛:

— Կանչեցէք ուրեմն, որպէս զի բան-
մը հարցնեմ:

— Է՛, Լամպլէն, Քառիէ՛, գոչեց տաս-
նապետն իւր հրամայական հաստ ձայ-
նովը, եկէք ձեր քոնեաքը մեզի հետ
խմեցէք...: Պարսնը խօսիլ կ'ուզէ ձե-
զի հետ:

Երկու մարդիկն իսկոյն մօտեցան և
զարմանքով մը Բրէնպորնի նայեցան
որ ականածելի երեւոյթ մը չունէր բնաւ:
— Ես ոստիկեան մ'եմ, ըսաւ անոնց
Բրէնպորն:

Երկու գեղացիներն իսկոյն երեւոյթ-
նին փոխելով՝ խոնարհութիւն ըրին
տեսակ մը սրտատանջութեամբ, զոր
այդ դասակարգի մարդիկը կ'զգան
ոստիկանութեան առջև:

— Պօնֆօայի համա՞ր է, հարցուց
Քառիէ կոչուածը, որ աւելի յանդուգն
էր:

— Այո՛, աեղեկութիւն մ'ստանալ
կ'ուզեմ:

— Պատրաստ ենք ձեր հրամանին,
պարոն ոստիկան:

— Կաթ առողը որերնի՞դ էիք:

— Ես:

— Ես ալ հաց կը տանէի ամէն առ-
տու, աւելցուց Լամպլէն յառաջանալով:

— Ուրեմն երկուքդ ալ կրնաք ըսել
ինձի թէ ձեր տուած կաթին և հացին
չափը միեւնո՞յնն էր կանոնաւորապէս,
թէ կ'աւելնար կամ կը պակսէր:

— Օ՛, անշուշտ, քիչ անգամ նոյն
չափով կուտայինք ութ օր շարունակ:
Հետեւաբար կը գիտնայինք մինակ ըլ-
լալն ու հիւրեր ունենալը:

— Հիւրեր՛ը, ընդմիջեց Քառիէ ուսե-
րը ցնցելով, յաճախու՞րէք այսինքն: Գի-
տէինք արհեստը, թէև ինքը կը պա-
հէր...:

— Շարունակեցէք:

— Երբ մինակ կամ մինակի պէս ըլ-
լաւ, երկու լիպրա հաց կուտայի. բայց
օր ալ կ'ըլլար որ չորս, հինգ վեց լիպ-
րա կուտայի, բայց ոչ երբէք աւելի:

— Ի՞նչ կ'ըսէր ինք աւելի առած ժա-
մանակ:

— Կ'ըսէր թէ Փարիզցի բարեկամներ
հիւր եկած էին իրեն՝ օգափոխութեան
համար:

— Զարմանալի՛ բարեկամներ, ըսաւ

նորէն կաթնավահառը. երեսներն տես-
նող չի կար երբէք: Չայն ալ չէին հա-
ներ բնաւ, ոչ ալ դուրս պտոյտի կ'ել-
նէին:

Բրէնպորն լուսթեամբ մտիկ ընելէ
ետեւ, հարցուց.

— Մեռնելուն առջի օրը հիւր ունէ՞ր:

— Ո՛չ, պարոն ոստիկան, երկու լիպ-
րա հաց միայն տուի:

— Ես ալ կէս լիտր կաթ տուի փո-
խանակ մէկ լիտրի, զոր նախընթաց
օրերը կուտայի, աւելցուց Քառիէ:

— Ուրեմն մինակ չէր նախընթաց օ-
րերը,

— Անչուշտ:

— Եւ ո՞րչափ ժամանակէ ի վեր:

— Վեց շաբաթ է ի վեր, այնպէս չէ՞,
Շամպլէն:

— Գրեթէ:

— Ըսել է թէ երէկուան առջի օրը
փոխուեցաւ, ըսաւ Բրէնպորն քիթը
քերելով:

— Դուք տունէն ներս չի մտա՞ք եր-
բէք, ոչ մէկդ:

— Ես, երբէ՞ք:

— Ե՛ս ալ:

— Ըսել է թէ դունէն ներս չէիք
մտներ բնաւ:

— Ինքը կուգար դունէն կ'առնէր:

— Մինչեւ իսկ դուռը կէս կը բանար:

— Տանը մէջ գտնուողները տեսած
կամ նշմարած չէ՞ք երբեմն:

— Ոչ մեք, ոչ ալ գիւղիս բնակիչնե-
րէն մէկը տեսած է երբէք: Շատ ծած-
կասէր էր ժիւսթին, սատանայի չափ
գաղտնապաշտ... որով օր մը, ուշ
կամ կանուխ, այս փորձանքը պիտի
դար գլխուն:

— Ինչէ՞ն:

— Հարկա՛ւ, կը հասկնաք, պարոն
ոստիկան, այն վիճակը հրապուրիչ էր
գողերու և մարդասպաններու, որով-
հետեւ կրնային ապահով ըլլալ թէ
զիրենք անհանգիստ ընող չի պիտի
դանուէր:

Բրէնպորն շնորհակալութիւն յայտ-
նելով այս երկու մարդոց, ոտքի վրայ
ելաւ:

Մեծ բան մ'իմացած ըլլալու երե-
ւոյթ ունէր, և սակայն երկու փոքրիկ
աչերը կը պճլտային:

Առած տեղեկութիւնները կը հաս-
տատէին իւր գուշակութիւնները:

Սա կարեւոր կէտն ստուգելու էր թէ՞
սպանութեան առջի օրը մէկը կը բը-
նակէր Պոնֆօայի տանը մէջ:

Հետեւաբար ոճրագործն սպասեր էր որ մինակ մնար խեղճ կինը :

Ուրեմն շատ լաւ կը ճանչէր զայն , և նիստ ու կացին քաջածանօթ էր :

Բայց ո՞վ էր Պօնֆօայի հիւրը , ա՞յր թէ կին :

Այր , անհաւանական կ'երեւի :

Կին մ էր ուրեմն :

Պօնֆօայի արհեստն այնպէս ենթադրել կուտայ :

Այդ կի՞նն էր արդեօք ոճրագործը զրկողը :

Կամ թէ րացորձակապէս անմա՞սն էր ոճիրէն :

Պէտք կ'ըլլայ գիտնալ թէ ո՞վ էր այդ անծանօթ և թաքուն անձը , որ մանկաբարձուհիին մահուրնէն քիչ առաջ չուեր էր :

— Պիտի իմանամ , ըսաւ , ապա թէ ոչ , անունս Բրէնպօրն պէտք չէ ըլլայ այսուհետեւ :

Տասնապետը տեսնելով անոր ոտքի վրայ ելնելը , ինքն ո՛ր ելաւ , և տանը դրանն առջև հասնելով , դատական պաշտօնեայներուն հանդիպեցան , որոնք նոյնպէս ճաշերնին աւարտելով հոն կը վերադառնային :

Նախաճաշի միջոցին , ընդհանուր դատախազը , ապահովութեան պետն և Դանիէլ աը ֆէօր լրջաբար խօսակցելէին զիրենք զբաղեցնող գործին վրայ :

Ապահովութեան պետը , իւր ստորադաս ոստիկան Բրէնպօրնի համակարծիք և համամիտ էր չէր կարծեր , հակառակ ինչ ինչ երեւոյթներու , թէ գողութիւն եղած ըլլար ոճրին շարժառիթը , հետեւապէս , խուզարկութիւններն ըստ այնմ յառաջ տանիլ կ'ուզէր :

Դանիէլ աը ֆէօր , լսելով այս ամէնը , կը վերածնէին իւր վախերը , որոնք պահ մը դադրած էին երբ տեսեր էր որ խուզարկութիւններն արդիւնք մը չէին տար :

Ամէնէն աւելի ինք պատճառներ ունէր հաւատալու թէ՛ վրիժառութեան շարժառիթ մը , կամ ընտանեկան գաղտնիք մը մշտնջենապէս թաղելու փափաք մը զինձ էր ոճրագործին բազուկը :

Ժիւսթի. Պօնֆօա շատ գաղտնիքներու տէր էր , այս մասին տարակոյս ներելի չէր :

Իւր գազանիքը միթէ կենդանի, անհերքելի ապացոյց մը չէ՞ր :

Այդ կիւն անուշտ կը գրէր տեղ մը, տուժարի մը մէջ, որ դեռ գտնուած չէր, բայց կանուխ կամ ուշ պիտի գտնուէին այն կեղծ անուաններն զորք իւր յաճախորդները կուտային անոր :

Այն տոմարը կամ ցանկը, ինչ որ ալ ըլլայ, եթէ Բրէնպորնի ձեռքն անցնէր կամ աչքին առջեւն իյնար, Դանիէլ տը Քէօր տարակոյս չունէր որ ոստիկանութեան այդ սատանորդի որսորդն իւր տարօրինակ հոտառութեամբ պիտի գուշակէր բուն անուանները . . . :

«Կը մնայ պարտէզը» ըսեր էր Բրէնպորն :

Ի՞նչ պիտի գտնէր պարտէզէն :

Ի՞նչ հետք թողած պիտի ըլլար հոն ոճրագործը :

Եւ անգամ մը որ այն սրիկային հետքը գտնուի, ուրիշ հետքեր ալ գըտնելու չի՞ պիտի առաջնորդէ :

Այս գազափարը կը դողացնէր զինքը, ոչ թէ իրեն, այլ Ֆէրնանտի և իրենց զաւկին համար :

Քաջ կ'զգտր միանգամայն թէ իւր անխուսափելի պարտականութիւնն էր

իրբեւ դատաւոր և իրբեւ պարկեշտ մարդ՝ մանրախուզիւ և անաչառաբար որոնել տալ թէ Ժիւսթին Պոնֆօա որո՞ց հետ յարարեցութիւն ունեցած էր :

Արդ ի՞նչպէս պիտի ընէր կամ ընել տար այդ խոյզը՝ առանց Ռիչմօնի դերկոմուսէին ձեռք տալու վտանգի :

Դատական պաշտօնեայները մանկաբարձուհիին տունը մտնելուն պէս՝ դէպի պարտէզն ուղղուեցան :

Իրարու ետեւէ կը յառաջանային, Բրէնպորն առջեւէն, որպէս զի իրենց քայլերուն հետքը գետնին վրայ արդէն գտնուած հետքերուն չի խառնուէր :

Այս կերպով հասան մինչեւ պարտէզին դուրսի փոքր դուռը, որ արդէն ծանօթ է մեզ, և ուշադրութեամբ քըննեցին :

Այն դուռը գոց էր, բանալին ներսէն, ասկէ զատ ամուր սողնակ մ'ալ քըուած էր :

Այս դռնէն ելած չէ ոճրագործը, ըսաւ անպահովութեան պետը, որովհետեւ ներսէն գոցուած է :

Բրէնպորն, որ առանց խօսելու չորս

կողմը կը նայէր, յանկարծ զատուեցաւ
խմբակէն, և քանի մը քայլ առաւ դէպ
այն բեկորներուն շեղջակոյտը, որուն
վրայ ելնելով պատէն անցեր էր ֆո-
սատ:

Շեղջակոյտը՝ ծառուղիներուն գետ-
նէն աւելի կակուղ ըլլալով, ոչ թէ ոճ-
րագործին ոտքերուն որոշ հետքը պա-
հած էր, այլ մէկ երկու թեթեւ խո-
ռոչ ունէր, որ Բրէնպորնի ուշադրու-
թիւնն արթնցուցին:

Չանոնք մօտէն քննելու համար ձը-
ռելով, քանի մը ճերմակ գածի թափ-
թըփուք նշմարեց, որ պատին գլխէն
նոր թափած էին: Եւ պատին կատարը
դիտելով ցնցուեցաւ:

Այս պատէն անցեր են, ըսաւ ըն-
կերներն հոն կանչելով. տեսէ՛ք: Եւ
գածի կտոր մ'երկնցուց անոնց:

— Ոտքի նշաններ ալ պիտի ըլլան
անշուշտ այս շեղջակոյտին շրջակա-
ները, աւելցուց Բրէնպորն: Ծառ-
ուղիին մէջ շի կան, գետնին հողն
ամուր ըլլալուն պատճառաւ, բայց ե-
թէ ծաղկոցի կամ ածուի մը մէջէն կամ
եզրէն անցած է, այն տեղերուն հողը
կակուղ ըլլալով, ոտքի նշանները կըը-
նան տեսնուիլ:

Եւ իրօք ալ այնպէս գտաւ:
Հետքերն ամենուն աչքին զարկին:
Բրէնպորն ծունգի վրայ գալով՝ սկը-
սաւ զննել զանոնք: Միւսները կը դի-
տէին անոր շարժումները:

Յանկարծ ոտքի վրայ ելաւ:

— Սխալեր եմ առաջին գուշակու-
թեանցս մէջ, ըսաւ ծանրութեամբ:

— Ինչէ՛ն:

— Երկու հոգի են եղեր:

Ամէնն ալ ծռելով դիտեցին ոտքի
նշանները, զորս Բրէնպորն մատովը կը
ցուցընէր:

— Աւասիկ երկու մարդոց ոտքի նշան-
ներ: Մէկը խոշոր կօշիկներ հագած է
եղեր, որոնց ներքաններն ու կրունկ-
ները հողին մէջ խրած են. իսկ միւսը
մոյկ կամ թերեւս տրեխ հագած է ե-
ղեր... տեսէք անոր ալ նշանները, որ
հարթ են և խորունկ չեն:

— Այդ նշանները պէտք է խնամով
վերցընել և ճիշդ չափերը առնել, ը-
սաւ ընդհ. դատախազը:

Պատին երկայնութեամբը նեղ գօտի
մը կամ ծաղկոցի եզր մը կար, որուն
վրայէն քալեր էր Շամպէզի Տիանի
տուած յտտակագծին մէջ նշանակուած

սեւ կէտը գտնելու համար, մոյկերուն նշաններն աւելի յստակ և աւելի ակներեւ էին:

— Որմանկիւնին հոգն աւելի կոխկուտուած էր:

Մառուղիներուն մէջ քայլափոխները կ'անհետանային:

Բրէնպորն խոկուն և մտահոգ կ'երեւար:

— Արդեօք այդ երկու մարդոց մին պարտէզին մէջ կը հսկէ՞ր միւսին ներսը գործ տեսած միջոցին:

«Բայց այն ժամանակ ինչո՞ւ դուռը չէ բացեր անոր: Շատ դիւրին էր քանի որ բանլիքը վրան էր:

«Վերջապէս անհասկընալի բան մը կայ»:

Բրէնպորն այս դիտողութիւններն իրեն պահեց և բնաւ առարկութիւն չըրաւ, երբ տպահովութեան պետն առաջարկեց դուրսն ալ աչքէ անցուներ, այսինքն պատին միւս կողմէն անցնող նրբուղին:

Դիւրաւ կը գուշակուի թէ ո՞րչափ ուշադրութիւն կ'ընծայէր Դանիէլ տը Քէօր այս քննութեան, խոր լուսթիւն պահելով, որ կրնար նշմարուիլ եթէ:

ընկերներուն ամէնն ալ իրենց յատուկ մտազբաղութիւնը չունենային:

— Ինչո՞ւ չէք շարունակեր պարտէզին քննութիւնը, հարցուց ընդհ. դատախազը:

— Օ՛, անոր ժամանակ պիտի ունենանք միշտ, ըսաւ Դանիէլ խզելով լուսթիւնը և տեղի տալով այն գաղտնի փափաքին որով կ'ուզէր ուշացընել խուզարկութիւններն, որոց վերջնական արդիւնքը վախ կը պատճառէր իրեն:

— Ես վրաս կ'աւանմ այն գործը, ըսաւ Բրէնպորն որ կ'ուզէր անձամբ կատարել այն խուզարկութիւնն առանց խառնուող վկայներու:

Դուռը բացուեցաւ և պատին տակի նրբուղին աչքէ անցաւ:

Բայց հոն քայլերու որոշ հետք չի կար, այլ անցարդներու քայլերուն հետ խառն ըլլալով ոչ ևս կրնային առաջնորդել:

— Ահաւասիկ համոզիչ ապացոյց մ'ալ, ըսաւ Բրէնպորն ծռելով և գետնի խորերուն մէջէն երկու հաստ կօշիներ վերցընելով,

ՌԻՐԵՃ ԳԻՒՏԵՐ

Ապահովութեան գործակալին գտած կօշիկներն անոնք էին, զորս Շամպլէզի հոն թողեր էր երբ Պօնֆօայի պահած արկղիկը վերցուցեր փախեր էր:

Կը յիշեն ընթերցողները թէ պատէն անցնելու ժամանակ, հաստ կօշիկներն հանելով բարակ մոյկերը հագեր էր:

— Աւասիկ ապացոյց մը, ըսաւ Բրէնպորն հանդարտութեամբ, թէ ոճրագործները կանխաւ տակն բան խորհեր պատրաստեր էին: Այս կօշիկները վերջին պահուն մոռցուեր էին մոյկերն հագնող անգգամէն:

«Ասոնք կրնան գտնել տալ մեզի հագնող ոտները... և երբ ոտները գտնուին, գլուխն ալ գտնելը կը դիւրանայ:

— Կ'ապացուցանեն նաեւ, առանց տարակոյս թողլու, թէ ոճրագործներն երկուք էին, աւելցուց ապահովութեան պետը կօշիկները ձեռքն առնելով ու զննելով: Այս կօշիկները չեն պատասխաներ պարտէզին մէջ տեսնուած կօ-

շիկի նշաններուն: Երբ պատին առջեւի կողմի նրբուղիին վրայ գումարուած մեր գլխաւոր անձերն իրենց տպաւորութիւնները կը փոխանակէին, Բրէնպորնի բերած միւս երկու ոտիկաններն ալ չըջականերն աչքէ անցունելով, ճամբուն միւս եզրը գտնուած գետնախնձորի արտին մէջ, ուր Շամպլէզի մանկարարձուհիին տանը պարտէզը մտնելէ առաջ պահուածներ էր, կոխկրտուած տեղ մը տեսնան, և քննելով ստուգեցին որ մարդ մը պառկեր էր, և ոտքին նշաններն ալ ճշդիւ կը պատասխանէին Բրէնպորնի գտած կօշիկներուն չափին:

Հասկցուեցաւ հիմա, ըսաւ ապահովութեան պետը, թէ ոճրագործներուն մէկը տանն առջեւի դուռը զսկին բանալ տալով ներս մտած միջոցին, միւսը դուրսը դարանելով և նշանի մը սպասելով պատին այս կողմէն ներս մտեր է իւր ընկերին օգնելու համար:

Բրէնպորն ձայն չէր հաներ: Գետնին վրայ ծռած, կը զննէր մանրամասնօրէն:

— Մարդը գործիքներ ալ ունէր, ըսաւ յանկարծ, և մատովը ծակ մը ցուցուց հողին մէջ:

— Ի՞նչ ծակ է, հարցուց Դանիէլ :

— Բահով մը փորուած է այս տեղը : Աւասիկ երկու ուրիշ փոքրիկ ծակեր ալ . . . որք բրիչի գործ են :

— Պարտիզպանի գործիքնե՞ր ըսենք, մրմուսց ինքնիրեն : Տեսնենք : Այս պարտէզը դեռ չըսաւ իւր վերջին խօսքը :

Երբ Բրէնպորն այս խորհրդածութիւնը կ'ընէր, քիչ մը հեռուն կեցող գեղացի մը գոչեց դատական պաշտօնեաներուն :

— Է՛, պարոններ, հոս եկէք :

Գեղացին գետնախնձորի արտէն քառասուն-յիսուն մէթր անդին ճակընդեպի արտի մը մէջ կեցած էր որ իրենն էր :

Մեր մարդիկն անոր մօտ վազեցին :

Գեղացին ոտքին տակս բահ մ'եւ բրիչ մը կեցած էին, երկուքն ալ նոր :

— Աւասիկ գործիքները, որոց հետքը տեսանք անդին, մրմուսց Բրէնպորն, սիւալած չէի :

— Ուրեմն, ըսաւ Դանիէլ աը Գէօր, տեսակ մը փութկոտութեամբ, գիւղացի մը կամ գործաւոր մ'է ոճրագործը :

Արդարեւ, եթէ ոճրագործն ընկերութեան ստորին դասակարգերէն մարդ մ'եղած ըլլար, գործին բնութիւնը կը փոխուէր : Այն ժամանակ քննութիւնն այն կողմը դառնալով չէր կրնար այնպիսի պարագաներ գտնել, որոցմով յայտնուէին Պօնփօայի յարտերութիւնները բարձր դասակարգէ կանանց հետ, որոց մէկն էր Ֆէրնանտ :

— Ես համամիտ չեմ կրնար ըլլալ ձեր այդ կարծիքին, ըսաւ Բրէնպորն, բահն ու բրիչը ձեռքին մէջ երերցընելով : Այս գործիքները նոր են, տեսէք կոթերը : Դիտմամբ գնուած են . բրիչը մանաւանդ բնաւ չէ գործածուած . . . երկաթը կը փայլի տակաւին և վրան գիծ մ'անգամ չունի :

«Դալով բահին, ուրիշ է : Կոթին վարի ծայրին մօտ հող և աղը կայ, և սայրը կարծր մարմինի մը հանդիպելով մէկ կողմը բթացած է, տեսէ՛ք :»

Բրէնպորնի ըսածն այնչափ յայտնի էր, որ մէկուն մտքէն չէր անցնէր հակառակիլ, վասն զի ապացոյցն իրենց աչքին առջեւն էր :

— Այդ գործիքները կրնային այս տեղի հողագործներէն մէկունն ըլլալ, ըսաւ Դանիէլ ար ֆէօր, որ անուշադրութեամբ հոգ թողած ըլլայ:

— Շատ դիւրին է ստուգել զայդ պատասխանեց ասպակովութեան պետը:

— Ձեր կարծիքն ի՞նչ է հարցուց Բրէնպորն երկու գործիքները գտնող գիւղացիին:

— Ոչ, պարո՞ն՝ ոստիկան, ըսաւ գիւղացին. այս բաձն ու բրէչը մեր գիւղացիներունը չէ. ես ամէնն ալ կը ճանչեմ. անոնցմէ ոչ ոք գործիք գնած է երկար ժամանակէ ի վեր...

«Ես կրնամ գիտնալ, կը հասկընաք... գինետան մէջ խօսած ժամանակնիս, ամէն բան կը զրուցուի... ասկէ զատ առաւօտներն ի միասին կ'երթանք մեք արտերը, իրիկուններն ալ ի միասին կը վերադառնանք:

«Եւ ոչ մէկ գիւղացի կամ պարտիգպան իւր գործիքները դրացիին արտին մէջ չի ձգեր, վասն զի գործ չունի հոն. այնպէս չէ՞»:

— Այդ մասին ալ քննութիւն մը կ'ըլլայ, ըսաւ ընդհանուր դատախազը:

— Ես կ'երդնում որ գիւղացիի կամ

հողագործի կուտ և ազտոտ ձեռքերը չեն դպած այս գործիքներուն, տեսէք կոթերը ո՞րչափ մաքուր են: Տարակոյս չի կայ որ դուրսէն մարդու ձեռքէ անցած են:

Դանիէլ պատեց յօնքերը.

Իւր վախու կէտն ալ այս չէ՞ր:

— Ձեր այդ կարծիքը քիչ մը մազերէն քաշուած է, պարո՞ն Բրէնպորն, ըսաւ Դանիէլ ար ֆէօր. ժպտելու փորձ մ'ընելով: Ձեր կորովամտութիւնը ոչ ոք կ'ուրանայ, ինչպէս ես ալ, որ ձեզ գործի մ'ջ տեսած եմ արդէն: Բայց այդ աստիճան վստահ մի ըլլաք ձեր կարծիքին վրայ: Վէպ յօրինելու պէս դիւրին բան չկայ... այսպիսի դէպքերու մէջ, և ամենէն սուր միտքերն իսկ կը մոլորին: Ան այժմ բաւ համարինք ստուգուած իրողութիւնները: Ետքը կը տեսնենք թէ վկայութիւնները և ապագայ քննութիւնները կը հաստատեն կամ կ'արդարացնեն ձեր ենթադրութիւնները:

Բրէնպորն արագ նայուածք մը նետեց Դանիէլի երեսին:

— Այդպէս թող ըլլայ պարո՞ն նախաքննիչ դատաւոր, պատասխանեց

աինածաբար. ըսյց ով և ըլլայ այս բահին տէրը, այս բահը գործածուած է...

—Ոչ ոք կ'ուրանայ զայդ:

—...Ժիւթին Պօնֆօայի պարտէզին մէջ:

—Ինչէ՞ն հասկցաք:

—Կոթին անցած տեղին մօտ մնացած աղբէն...: Մանկաբարձուհիին պարտէզին մէջ ազբի կոյտ մը կայ, որ փորուած է...: Մեք ալ փորենք:

—Բայց բան մը չի պիտի գտնենք, պատասխանեց Դանիէլ: Հարկաւ մէջէն բան մը գտնելու կամ առնելու համար պեղուած է. և եթէ առնելու մէջէն բան մը կար, ոճրագործներն աւած և այնպէս փախած են...:


—Կ'ստուգենք, ըսաւ ապահովութեան պետը, որպէս զի ձեր երկուքը համաձայնեցընենք:

—Ի՞նչ ունի արդեօք պարօն Դանիէլ աը ֆէօր, կը հարցունէր Բրէնպորն ինքնիրեն: Ես երբէք այսպէս տեսած չէի զինքը...: Կարծես թէ չուզեր գիտնալ ճշմարտութիւնը...:

—Եթէ պարօն նախաքննիչ դատաւորը հաճի, ըսաւ բարձրաձայն, այս կէտն ալ ստուգեմ: Պարտէզն ամբող-

ջապէս աչքէ չանցաւ, կրնայ թերեւս մէկէն աւելի շահագրգիռ իրողութիւն երեւան հանել:

—Ոչ ոք կը հակառակի ազոր, պատասխանեց ընդհ. դատախազը:



ԱՂԲԱՎՈՅՑ

—Ինչպէս որ կ'ուզէք, պարօններ, ըսաւ Դանիէլ տը ֆէօր: Իմ ալ ուզածս է: Միայն թէ կը փափաքիմ որ շատ ժամանակ չկորանցնելով հարցաքննուելիք առաջին վիայներուն ցանկը պատրաստենք:

Ձայս ըսելով դէպի պարտէզն ուղղուեցաւ, ուր ամէնն ալ մտան անոր ետեւէն:

Իւօք, առանց պատճառը կարենալ ըսելու, առանց ինքն ալ ճշդիւ գիտնալու, Բրէնպորնի յամառումը մեծապէս կը գրգռէր գինքը. մանաւանդ այս պատճառաւ որ իրեն այնպէս կուգար թէ այդ ոսարիանն իրեն դէմ կասկած կամ անվստահութիւն մը կը տածէր:

Արդարև, Դանիէլ տը Քէօր, նոյն օրն, առաւօտէն ի վեր տարտամ՝ վախ մը կ'զգար, որ՝ հակառակ իւր կամքին, իւր ամէն գործերուն ու խօսքերուն մէջէն դուրս կը շնչէր:

—Քննեցէք գետինը, պարոն Բրէնպորն, ըսաւ ընդհ. դատախազը, երբ պարտէզին գուռը գոցուեցաւ, մինչ պարոն նախաքննիչ դատաւորն ալ իւր գրասենեակը կանչելիք վկաներուն անունները առնէ:

Դանիէլ տը Քօէր առարկութիւն մը չունէր ընելիք:

Ուստի ոստիկան զինուորաց տասնապետը քովը կանչելով, անոր նոթատետրին վրայէն առաւ Բիէնֆիթի այն բնակիչներուն անունները, որոնցմէ կը յուսացուէր թէ կրնար կարևոր տեղեկութիւններ առնուիլ:

Բրէնպորն ալ, միւս կողմէ, իրեն տրուած հրամանին համեմատ, անմիջապէս պատին այն կողմը դիմեց, ուր առաջին ոտքի հետքերն ու նշանները գտեր էր:

Վերստին սկսաւ իւր քննութիւնն, և այն հետքերուն հետեւելով նշմարեց որ ծառուղիէն անդին, ոտքի նշանները

մինչև պարտէզին կեդրոնն ուղղուած էին:

Այս կերպով հասաւ աղբակոյտին քով, զոր Շամպէզի նախ բացած, ետքն ալ նորէն ծածկած էր:

—Միտքէս կ'անցնէր, մրմուաց Բրէնպորն լսին ժպիտով մը:

Աղբակոյտին նայեցաւ, զննեց. ետքն ալ ձեռքի բահին կոթին վարի ծայրը գտնուած ազբի քանի՞ մը շիւղերը գննելով:

—Ճշգիւ նոյնն է, ըսաւ:

Յանկարծ, ցնցուելով վազեց դէպի այն ծաղկոցի եզրը, ուր աղբակոյտին շրջակայ հողը քիչ ժամանակ առաջ խառնուած էր:

Շրջակայ գետինն ալ խորապէս կտրկուտուած էր մոյկեր հագնող մարդէն:

—Խուզարկուած է այս տեղն, ըսաւ: Մինչ հաստ կոշիկներով մարդը տանը մէջ սպանութեամբ կ'զբաղէր, մոյկով մարդն ալ պարտէզը կը խուզարկէր: Գործը բաժնէր էին մէջէրնն:

Եւ բահի զօրեղ հարուածով մը ազբը մէկ կողմ քշելով հողը պեղել սկսաւ:

Դանիէլ տը Քէօր, մէկ կողմէ տաս-

նապետէն տեղեկութիւններ առած մի-
ջողին՝ աչքին ծայրովն ալ Բրէնսլորնի-
ըրածը կը դիտէր :

Երբ տեսաւ որ դետինը կը պեղէր ,
իւր հարցումներն ընդմիջելով Բրէն-
սլորնի մօտեցաւ , ինչպէս որ ըրեր էին
ապահովութեան պետն ու ընդհ. դա-
տախազը :

— Է՛ , պարոն , բան մը գտնէ՞ք ,
հարցուց :

— Ո՛չ դեռ , պարոն նախաքննիչ դա-
տաւոր , բայց արդէն քիչ ժամա-
նակ առաջ խուզարկուէր է այս տեղը :

— Ուրեմն , եթէ պահուած բան մը
կար , առնուեր է . . . և թռչունը բու-
նէն փախեր է :

Հազիւ Դանիէլ այս խօսքն արտասա-
ներ էր , բահին երկաթը կարծր բանի
մը զարնուելով վեր ցատկեց :

— Թերևս , պատասխանեց Բրէնսլորն ,
բայց վանդակը մնացե՛ր է :

Այս խօսքը հեգնական ժպիտ մը
պատճառեց ներկայ գտնուողներուն :

— Ի՞նչ կրնայ ըլլալ հող , հարցուց
Դանիէլ յուզուելով :

— Մնուակ մը կայ . ըսաւ Բրէնսլորն ,
անոր գաղանի մտածութեանը պատաս-
խանելու պէս :

Եւ մատովը սնտուկին փայտը ցոյց
տուաւ :

— Վերջապէ՛ս , գոչեց ընդհ. դատա-
խազը , գործին թելը ձեռք պիտի ան-
ցունենք :

Բրէնսլորն կը շարունակէր աշխա-
տութիւնը՝ սնտուկին բոլորի հողերը
մէկ կողմ՝ քշելով :

Շատ չանցաւ սնտուկն ամբողջովին
երևան ելաւ :

Բրէնսլորն ծռելով դիւրութեամբ բա-
ցաւ կափարիչը , որ կը պուտած չէր բնաւ :

— Պարա՛պ , գոչեց յուսավրէ՛պ դէմ-
քով մը :

— Ես անտարակոյս էի , ըսաւ Դա-
նիէլ :

— Իրաւունք ունիք , պարոն նախա-
քննիչ դատաւոր , պատասխանեց Բը-
րէնսլորն ակնածու դէմքով մ'անոր
դառնալով . մեզնէ առաջ փնտառները
գտեր աւեր են :

— Վերցնենք սակայն այդ սնտուկը ,
ըսաւ Դանիէլ , ետքը աչքէ կ'անցունենք
երկարօրէն :

Եւ երկու ոտիկան վերցուցին սըն-
տուկը հողին մէջէն , ուր մեծ փոս մը
բաց մնաց կտտարելապէս դատարկ , և

տունէն ներս տարին, ինչպէս նաև բաճն ու բրիչն և պատին տակէն գտնուած կօշիկները, որք ժիւսթին Պօնֆօան կախող շուանին հետ ապացուցական նշաններ էին:

—Տարակոյս չի կայ, կ'ըսէր ապահովութեան պետը, թէ այս սնտուկը արժէքներ, թուղթեր և ուրիշ բաներ կը պարունակէր, զորս ոճրագործները ձեռք անցունելու դիտաւորութիւն ունէին:

Բրէնպորն հիմա խօսք չէր ըներ բընաւ:

Տունէն ներս վերադառնալով, ժիւսթին Պօնֆօայի դիակին քով գացեր՝ լռութեամբ կը դիտէր:

Յետոյ ծունկի վրայ գալով՝ պարանոցը զննել սկսաւ:

—Օ՛, ըսաւ ձեռքը տարաբախտ կնոջ կուրծքին տանելով, խզուած լարի մը ծա՛յր...:

Եւ քաշուելով տեսաւ որ փոքրիկ բանալի մը կախուած էր ծայրէն:

Դանիէլ տը Բէօր իսկոյն առաւ զայն Բրէնպորնի ձեռքէն:

—Արկղիկի մը բանալին է, ըսաւ:

—Բանալի մը, զոր ոճրագործն ան-

շուշտ պիտի ուզէր առնել, բայց իւր զոհը խեղդած միջոցին լարը խզեր էր, ըսաւ Բրէնպորն:

—Եւ մեր զննած կահերէն ոչ մէկուն կը պանքին կրնայ յարմարիլ, ըսաւ ապահովութեան պետն ալ:

—Արկղիկն անհետացած է...: Հաւանաբար պարտէզին մէջէն գտնուած մեծ սնտուկին մէջը դրուած էր:

—Գտնուածներուն ոչ մէկը մեր գիտնալ ուզածը չիմացըներ մեզի, ըսաւ ընդհ. դատախազը:

«Աւատիկ գործ մը, որ մեծ կորովամտութիւն կը պահանջէ, յարեց, և այս ալ ձեզի արժանի է, պարո՛ն արքէօր. արդարութիւնը ձեր հանճարին և անձնուիրութեան վրայ կը դնէ իւր յոյսը:

—Կրնաք վստահ ըլլալ, պարո՛ն ընդհ. դատախազ, թէ պիտի ընեմ ինչ որ մարդկօրէն հնար է, այս խեղճ կնոջ մահուան վրէժն առնելու համար, պատասխանեց Ֆէրնանտի տարփածուն, անկեղծ հաստատամտութեան շեշտով մը:

Վասն զի, հակառակ իւր անձնական երկիւզներուն, շատ պարկեշտ մարդ էր. հետեւաբար, առաջին սրտայու-

զումն անցնելուն պէս, այն երկիւղներուն ականջ չէր կտրեր և իւր սլաքաքը խղճ տութեամբ կը կատարէր:

Ժամանակն ուշ ըլլալով, դատական պաշտօնեաները որոշեցին մեկնիլ:


Գտնուած ապացուցական նշանները կառքի մը վրայ դրուելով հետ առնըւեցան դատական պաշտօնատունը տալուելու համար:

Գալով զօհին մարմնոյն, նոյն իրիկունը Մօրկը պիտի տարուէր օրինական դիակատուութիւնը կատարուելու համար:

Մինչեւ ցնոր տնօրէնութիւն ոստիկան-զինուորաց տասնապետին պատուէր տրուեցաւ իւր մարդոցմէն մին մանկաբարձուհիին տանը մէջ թողուլ:

Ժամ հինգին Դանիէլ տը Գէօր վերջապէս իւր տունը կը վերադառնար:

— Վերջին խօսքս չըսի ես, կ'ըսէր Բրէնպորն ինքնիրեն: Պարոն նախաքննիչ դատաւորը չուզէ իսկ, ես պիտի շարունակեմ իմ փոքրիկ խուզարկութիւնս, և այս անգամ առանձին:



ԱՄՈՒՍԻՆԸ

Տը Ֆէրնիք կոմսը, ինչպէս որ կը յիշեն ընթերցողք, իւր զգացումները չէր յայտնած, ինչպէս նաեւ այն խուլ ցաւը որ սիրտը կը գալարէր, երբ Տիանն Օբէռայի օթեակին մէջ գտեր էր Բօլ տը Ռիչմօնի հետ:

Իսկ Տիան, յաջողքեր էր մնալ իր սովորական ճարտար և նենգածէտ կատակերգուհիի դերին մէջ, և պահել այն կեղծելու արտասովոր կարողութիւնը, որ արդէն շատ անգամ փրկեր էր զինքը նմանօրինակ պարագաներու մէջ:

Եւ ինչո՞ւ գարմանալ ասոր վրայ: Ամէն էակ բնութենէն կը ժառանգէ իւր կենաց պայմաններուն յարմար զէնքեր կամ կարողութիւններ:

Վագրը որ իւր որսը ողջ ողջ բըզըքտելու համար ծնած է, իւր բնագդին յարմար ճիրաններ ունի:

Կատուն բաժին ունի համբերութիւնն ու դիւրաշարժութիւնը, որ մկնորութեան մէջ ուժին տեղը կը բռնէն:

Այսպէս ալ, տարփանքով, սուտով
և խաբէութեամբ ասպրող կիւնն անշը-
փոթ նայուածք մ'ունի, կեղծ ժը-
պիտ մը, հանդարտ ձայն մը, անյող-
դողդ պաղարիւն մը, խոհեմութիւն
մը, որ ոչ մէկ սրտայուզում չի կրնար
մոլորեցնել, արագ խորհրդածութիւն,
անխոնջ գործունէութիւն, առանց ո-
րոց, մոլութիւնը, մեքենայութիւնները
ստութիւնն ու գեղծ կեանքը չեն կըր-
նար հնարաւոր ըլլալ, վասն զի առա-
ջին յանցանքով օձիքը ձեռք կուտայ:

Ասոնց հետ քարէ սիրտ մը պէտք է
ունենայ, որուն ուրիշ բան չի դպչիր Ե-
բայց միայն իւր անձին պահպանու-
թեան և իւր հաճոյքին շահը, բազ-
մանքներուն, քմայքին կամ կիրքերուն
գոհացումը:

Ճշմարիտ զգայնութիւն, բարոյական
զգացում բնաւ չունէր:

Ամուսնանալէն ի վեր, շատ տարփա-
ւորներ ունեցեր, մէկ քանիէն թերեւս
մոլեգնաբար սիրուեր էր:

Բայց բնաւ չէր զգածուած անոնց
տրտմութենէն, ցաւէն նախանձտու-
թենէն որոցմէ հաճոյք կ'զգար և կա-
տարելապէս ծիծաղելի կը գտնէր

ինչպէս որ չէր զգածուեր իւր ամուս-
նին կրած ցաւերէն ու նախանձու-
թիւններէն:

Ինչ որ պէտք է իւր ամուսնին հաճոյ
ըլլալու, զայն խաբելու կամ կուրցնե-
լու համար, կ'ընէր. առանց խղճմաու-
թեան, առանց խորչման կամ դժկա-
մակութեան, իբրեւ թէ կանանց ամե-
նէն անբիծը, ամենէն հաւատարիմն ու
պարտաճանաչն եղած ըլլար:

Կեանքն այսպէս հաճելի էր իրեն:

Խաբելը կը սիրէր:

Արիւնին մէջը կար: Երբ աւելի զը-
ւարթութիւն տեսնուէր վրան, երբ իր
ժպիտն աւելի սիրագրգիւտ երեւոյթ
մ'ունենար, երբ աւելի ջերմ բոց մը
վաւէր բիրբուրուն մէջ, նշան էր թէ՛
կնճռոտ դաւ մը կը նիւթ էր, կամ կը
սքանչանար և ուրախ կ'ըլլար իւր ճար-
տարութեան վրայ, որով կրցեր էր յա-
ջողեցնել դժուարին և վտանգաւոր
մեքենայութիւն մը, որուն մէջ ուրիշ
մ'օձիքը ձեռք կուտար:

Երբէք չէր ուզեր գծալի Տը Ֆէրնիք
կոմսին հետ, որպէս զի իւր վատթա-
րութեանց հրապոյրը չի կորսնցնէր:

Ուստի սյն իրիկունը, երբ տեսաւ

տը Ծէրնիք կոմսը, շմորած, բայց իւր
անամօթ ճարտարամտութեան շնորհիւ
լուելու հարկադրուած, մոռնալով այն
ահուելի սարսափը զոր կրեր էր և սոս-
կայի վաանգն յորմէ հազիւ պրծեր էր,
ուրախութիւն և պարծանք կ'զգար:

Իւր առջեւ Ռաուլ կոմսն և Բօլ
դերկոմսն իրարմէ աւելի արժէք չու-
նէին: Որովհետեւ այն տեսակ կինե-
րէն էր, որ մէկ մարդէն միւսին, մէկ
սէրէն միւսին մէջ տարբերութիւն չեն
գնէր:

Թէ՛ մէկին և թէ՛ միւսին սիրոյ կիր-
քը հաւաստրապէս հաճելի, հաւաստ-
րապէս շողոքորիփիչ էին իրեն: Կ'ուզէր
որ երկուքն ալ սիրէին և ուզէին զի՛քը:

Սակայն, դժբախտաբար, Տիանի այս
բարի արամադրութեան հակառակ,
կոմսը, թէև լսելու հարկադրուած,
բայց սրտին մէջ դառն վիշտ մը, խո-
րին տազնապ մը զգալով, անձնատուր
չէր ըլլար կոմսուհիին փառաքուչ քրծ-
նութիւններուն:

Արիւնը կ'եռար երակներուն մէջ:

Խուլ գայրոյթ մը կը յուզէր գինքը,
բայց չէր համարձակեր ցոյց տալ: Կը
լուէր, բայց կասկածի մէջ էր միշտ:

Եւ սակայն իրողութիւններն իրեն
իրաւունք չէին տար:

Տիանը չէր գտեր այն սենեակին
մէջ, ուր գրեթէ բռնի մտեր էր:

Տիանի ճերմակ ձեռքերէն ձեռնոց
չէր պակսեր:

Իւր օթեակին մէջն էր իեսին հետ և
բնաւ յուզուած ըլլալու երեւոյթ չու-
նէր իբրև աշխարհի ամէնէն պարկեշտ
կինը, որուն խիղճը կատարելապէս
հանդարտ էր և կեանքն ալ ականա-
կիտ վտակի մը ջուրին պէս վճիտ:

Եւ սակայն Օբէրայէն դուրս ելնելն և
կառք մը նստելով հեռանալը տեսէր էր:

Հետեւեալ առտուն, Ռաուլ տը Ծէր-
նիք փողոցի կառք մը նստելով, Բիւի-
տը լ'էրմիթ փողոցը գնաց:

Հոն վար իջաւ, լոյս աչքով գննեց
առջի գիշերը կեցած տեղը:

Փոքր դուռը դիտեց ուշադրութեամբ,
որպէս թէ ներկակած գաղտնիքը պի-
տի կրնար յայտնել իրեն:

Պատին մէջի մօտակայ կառադուռը
բաց էր, և դռնապանուհին կ'աւլէր
առջեւի մայթը:

Կոմսն իսկոյն արկին Լուիի մօտեւա-

լով.

—Պարոն ժէռմէն, հարցուց:

—Հոս կը բնակի, պարոն, ըսաւ պառաւն խաչքին պոչովն խանոր նայելով:

—Ո՞ր յարկը:

—Գետնայարկը... բայց պէտք է որ փողոցին վրայի նա փոքր դռնէն մտնէ:

—Ա՛, ես կը կարծէի թէ բակէն ալ մուտք ունէր այդ յարկը, ըսաւ կոմսը դռնապանուհիին շրթունքէն կախուած:

Անոր պատասխանէն պիտի ծագէր իւր դժբաղդութեան հաւաստիքը կամ զինքը տանջող դժնդակ կասկածին շարունակութիւնը:

—Ո՛չ, պարոն, պատասխանեց տիկին Լուի, որ Ռիշմոն դերկոմսէն լաւ վճարուած էր՝ գերեզմանի պէս խորհրդապահ ըլլալու համար: Պարոն ժէրմէնի բնակարանը զատ է, մեծ շէնքին հետ յարաբերութիւն չունի: Մնաց որ եթէ խօսք ունիք իրեն, չէք կրնա՞ր գտնել:

—Ո՞ր ժամանակ կը գտնուի հոս, հարցուց կոմսը կէս մը սփոփուելով՝ այս բացորոշ պատասխանէն:

—Օ՛, ոչ, պարոն: Պ. ժէռմէն ամէն ատեն հոս չէ. Փարիզ գտնուած միջոցին կուգայ հոս... վաճառականի ուղեւոր պաշտօնեայ է, տարիին երեք քառորդը բացակայ: Երէկ առտու եկաւ, այս գիշեր մեկնեցաւ:

—Ո՞ր գնաց:

—Ա՛, չեմ գիտեր:

Տիկին Լուի անկեղծ կ'երեւէր, ըսածները կատարելապէս համաձայն էին անձանօթին ըսածներուն:

—Շնորհակալ եմ, տիկին, ըսաւ, բայց և այնպէս դուռը բողբոսեմ անգամ մը, թերեւս մէկը գտնուի ներսը:

—Չեմ կարծեր... բայց կրնաք ստուգել:

Կոմսը բաղխեց փոքր դուռը քանի մ'անգամ, բայց չի բացուեցաւ:

—Մարդ չի կայ ներսը, պարոն, դոչեց անդիէն դռնապանուհին:

Տարակոյս չի մնաց թէ ներսը մարդ չի կար:

Կոմսը վերադարձաւ իւր կառքը:

—Այս ամէնն ալ բնական և համոզիչ չեն, կ'ըսէր ինքնիրեն. և սակայն ի՞նչ կրնամ ընել: Սպասել և հսկել:

Մէկ ժամ ետքը ապարանը վերա-

գառնալով, նախաճաշի նստաւ կոմսու-
հիին հետ :

Տիանի միտքէն անցեր էր ամուսի-
նին ըրածը : Բայց դէմքէն հասկընա-
լով որ բան մ'իմացած չէր, և հակա-
ռակ այն մտահոգութիւններուն զոր
ետքը պիտի իմանանք, շարունակեց
իւր սովորական կատակերգութիւնը :

Այրը դժգոյժածի պէս էր առջի գի-
շերէն ի վեր, հետը չէր խօսեր, երե-
սը չէր նայեր, կամ աչքին պոչովը կը
նայէր :

Փոխանակ ըսելու ինքնիրեն ինչ որ
իր դիրքն ունեցող ամէն կին պիտի
ըսէր, այսինքն .

— Աւելի աղէկ . քանի որ ինձմով
զբաղիլ չուզէր հանգարտ թողունք
զինքը և օգուտ քողենք այս լուսթե-
նէն . . . :

Բայց Տիան՝ ընդհակառակն դժգո-
հեցաւ :

Արդեօք ամուսինն անտարբե՞ր պի-
տի կենայ իրեն հետ, իւր թովիչ հը-
րապոյրէն չի՞ պիտի բռնուի :

Հաճելի ըլլալու և սիրուելու անզուսպ
տենչը, որմէ՛ և ինչպէս, չէր կրնար
համաձայնիր այս վիճակին հետ :

Ինքը որ շառագնած չէր երբէք, պի-
տի շառագնէր և կորանք զգար այն
գաղափարէն թէ՛ տը Ֆէրնիք կոմսը,
իւր ամուսինը կրնար պաղ կամ դժգո-
մած մնալ իրեն հետ քառսուն և ութ
ժամ :

Գրեթէ մոռցաւ իւր հնչնուքն ու
սարսափները, և յանդգնեցաւ հարցը-
նել անոր այնպիսի թախանձով մը զոր
գիտէր հրապուրիչ ընել, և մինչև իսկ
զանգատով և յանդիմանութեամբ թէ՛
ի՛նչ ունէր և ի՛նչ պատճառով երեսը
կախեր էր իրեն դէմ :

Կոմսը նախ խիստ շարժում մը ունե-
ցաւ իբրև պոռթկալու պատրաստ, բայց
բռնեց ինքզինք, և բաւական սեպեց
պատասխանել թէ միտքը վերջին ծայր
զբաղած էր փափուկ խնդրով մը,
զոր . . . նախարարը յայտներ էր ի-
րեն . . . և որուն համար ժամադիր եղեր
էր իրեն հետ :

Չայս ըսելով ելաւ սեղանէն և մեկ-
նեցաւ :



ՈՒՐ ՔՕՍԱՏ ԱՆԿԵՂԾ Է

—Օ՛, օ՛, բաւ ինքնիրեն Տիան, տեսնելով ամուսնին մեկնիլը. պէտք է թողուք այդ թթու ձեւերը, պարօն կոմս: Նախանձոտ եղիք որչափ և ուղէք, բայց պիտի վերադառնաք իմ քովս, նորէն պիտի քծնիք ինչի, և պիտի ջանաք ապացուցանել թէ՛ կը պաշտէք զիս և ինձմէ զատ մէկը չէք սիրեր:

Նոյն վայրկենին. վերաւորուելով իւր այն վայրագ ինքնասիրութիւնը որ ինքզինքին սիրահարած գեղանի էգերուն յատուկ է, գրեթէ պատրաստ էր իւր տարփաւորը զոհելու. որպէս զի ամուսինը չահէր:

Սակայն, եթէ տը Ֆէրնիք կոմսուհին, վստահելով իւր կատարելագործեալ կեղծաւորութեան և իւր լպիրշ կատակերգակի արուեստին անամօթութեան վրայ, անկարող այն սրտի կամ անկեղծ կրքի շարժումներուն որք միայն կրնան վտանգի մէջ ձգել իւր գիրքն ունեցող կիները, վստահելով իւր գեղեցկու-

թեան վրայ և գիտնալով ո՛րչափ կըրնայ օգուտ քաղել անկէ կին մը, որուն ծանր չի դար անձնատուր ըլլալ որ և է պարագայի մէջ, եթէ տը Ֆէրնիք կոմսուհին չէր յուսահատեր, մեր ուրիշ անձնաւորութիւնները, որք կին ըլլալու առաւելութիւնը չունէին, կամ կին ըլլալով, ինչպէս Ֆէրնանտ, խղճմտութիւն, պատկառանք, գորովի ու անձնութեան զգացում ունին, զանազան արտայուղումներ և խորին տագնապներ կ'զգային:

Քօսատ անգամ, հանդերձ իւր գազանական պաղարիւնով, որ մասամբ կը մօտեցըներ կոմսուհին, որմէ զգալապէս կը տարբերէր իւր անձնութութեամբ և իւր հասկցած դիւցազնական զոհողութեամբ, չէր կրնար զսպել իւր սրտին յուզմունքը:

Սպանութենէն ի վեր ջղայնութիւն եկեր էր վրան: Առջի իրիկուան դէպքէն ի վեր ինքզինք տէր չէր զգար իրաց վիճակին, որովհետեւ ուրիշ մէկը, անձանօթ մը տիրացեր էր այն զաղտնիքին, որ ժիւսթին Պօնֆօայի մահուան պատճառ եղած էր:

Անթօան Քօսատ Ռիչմօն դերկոմսին

գալստեանը կը սպասէր՝ մտածելով որ այս վերջինն անպատճառ պիտի փափաքէր իմանալ թէ իւր չուելէն ետեւ ինչ եղեր էր Բիւր-ար-լէրմիթի տան մէջ: Կոմսուհին ալ նմանապէս կ'ուզէր իմանալ իւր տարփածուին միջոցով:

Չէր սխալեր:

Հետեւեալ օրն, առաջին ժամուն, դերկոմսն Անթօանի տունը դնաց:

— Է՛, պատմեցէք նայինք, ըսաւ մէկէն:

Քօսատ պատմեց ինչ որ գիտենք արդէն, առանց բռն մը մոռնալու:

Դերկոմսը՝ մտիկ ըրած միջոցին՝ իւր յաւիտենական սարսափներուն կրկնապատկուիլը կը զգար:

Ո՞վ կրնար ըլլալ այն անծանօթը որ դէմ կը դնէր իւր աներոջը, որուն առջեւ ամենքը կը դողային, որ վայրկենապէս կը փրկէր զինքն ու կոմսուհին, թէեւ երկուքն ալ մինչեւ ցարդ անոր գոյութիւնն իսկ չէին գիտեր:

— Եւ այդ մարդը չի հասկըցօ՞ւց իւր ո՞վ կամ ինչ ըլլալը, ինչ նպատակի ծառայելը, հարցուց վերջապէս Տիանի տարփաւորը:

— Ո՛չ, պատասխանեց Քօսատ:

— Դուք տեսե՞ր էիք այդ մարդը:

— Երբէք:

— Չի հարցուցի՞ք իրեն:

— Այո՛, բայց խուսափուկ և սուտումուտ պատասխաններ տուաւ:

— Ուրեմն կրնայ վախցուիլ այդ մարդէն, այնպէս չէ՞:

— Թերեւս: Հարկաւ միտք մ'ունի, թաքուն խորհուրդ մը... որ ինձի ալ վախ կը պատճառէ:

— Վա՛խ, քեզի՞:

— Այո՛, ինձի: Կը վախնամ այնպիսի բանէ մը որ չեմ հասկընար... անծանօթ սպառնալիքներէ ու վտանգներէ որք դէմ առ դէմ չեն տեսուիր:

— Կը կարծէ՞ք որ թշնամի մ'ըլլայ, և սակայն իբրեւ բարեկամ վարուեցաւ:

— Ով որ մեր գաղտնիքին ծանօթ ըլլայ, առանց իրենն ալ մեզի ծանօթ ըլլալու, թշնամի մ'է կամ կրնայ ըլլալ:

— Ըսել է թէ ամէն բան գիտէ, կա կազեց դերկոմսը ճակտին քրտինքը սրբելով:

— Գիտէ թէ դուք Բօլ տը Թիմօն կը կոչուիք, գիտէ նաեւ կոմսուհին անունը:

—Ա՛հ, դէ՛ է գործերնիս այս ան-
գամ, ընդմիջեց դերկոմսը: Այդ մարդն
հարիւրապատիկ աւելի վտանգաւոր է
քան այն թշուառ ժիւթին Պօնֆօան,
որ թերեւս բնաւ չի պիտի խօսէր:

—Այո՛, մրմուսաց ֆօսատ, անօգուտ
ոճի՛ր մը հիմա:

—Քայց վերջապէս, ըսաւ դերկոմ-
սը, որ կը ջանար քաջալերել և խա-
բել ինքզինքը, որովհետեւ մեզ ազա-
տեց... ուրեմն չար դիտաւորութիւն
չունէր մեզի դէմ... մանաւանդ որ
ինքզինք ծանր վտանգի կ'ենթարկէր
տը Ֆէրնիք կոմսին բարկութեանը
դէմ խիզախելով:

—Հաւատացէ՛ք ինչպէս որ կ'ուզէք,
ըսաւ ֆօսատ բրտաբար, բայց իմա-
ցուցէ՛ք Տիանին:

—Անշուշտ պիտի իմացընեմ...:

Յանկարծ ձեռքը ճակտին դարկաւ
դէմքը մոխիր կտրելով:

Սարսափելի մտածութիւն մ'անցեր
էր խելապատակէն:

—Եթէ այդ մարդը մեզ յայտնի մա-
հէ մ'ազատեր էր, որպէս զի ետքը
մեզ շահագործէ, իր խորհրդապահու-
թիւնն ու լռութիւնը մեզի վաճառէ.
վերջապէս ըսէ մեզի:

«Ձեռքիս մէջն էք, ձեր պատիւն ու
կեանքը իմ արամադրութեանս տակն
են:

«Վճարեցէք, հնազանդեցէք, կա-
տարեցէք ինչ որ ուզեմ, ապա թէ ոչ
կը մատնե՛մ ձեզ:»

—Արծաթաքաղութի՞ւն ըսել կ'ու-
զէք, շատ հաւանական է, ըսաւ ֆօ-
սատ:

Եւ չարութեամբ ու ատելութեամբ
լեցուն շիկերէի աչերը դերկոմսին վը-
րայ ուղղելով՝ աւելցուց հեգնարար.

—Այդ ձեր մտածելու բանն է, պա-
րոն դերկոմս: Այո՛, կը վճարէք, կը
հնազանդիք, ինչ որ ուզէ կ'ընէք: Ձեր
գործը կ'ըլլայ փրկել կոմսուհին, և
այս ալ ձեր պարտականութիւններուն
ամենէն փոքրն է:

—Քայց կրնայ զիս կործանել, խտտի
վրայ նստեցնել:

—Ի՞նչ փոյթ ինձի: Պաշտպանեցէ՛ք
դուք ձեր կեանքը, հարստութիւնը,
պատիւը, ապագան, անդորրութիւնը:

«Մեծ բա՞ն մ'է:

«Եւ անոր համար գլուխս վտանգի
մէջ դրի...: Այսուհետեւ դահիճիւնն
է, որ կրնայ վաղը առնուլ վրայէս:

«Ես ըրի, ինչ որ Տիան հրամայեց
ինձի, առանց վարանելու:

«Եթէ նորէն պէտք ըլլայ, նորէն կը
կատարեմ:

«Իմ միջոցովս Բիէոֆիթի կողմէն վախ
չունի այլեւս:

«Հիմա դայն պաշտպանելու կարգը
ձերնէ:

— Ուրեմն կը լքանէք մեզ, գոչեց
Բօլ տը Ռիչմօն այլայլած և գրեթէ
արտասուելով:

— Զայն, ոչ: Եթէ Տիանի նոր վտանգ
մ'սպառնայ, ես դարձեալ կը հասնիմ
և կը պաշտպանեմ: Բայց դուք ուրիշ:
Կարգադրեցէք ձեր գործը... լուծե-
ցէք կնձիւր... ձեր սէրը վտանգի մէջ
կը ձգէ դայն, և աղետարեր իսկ պի-
տի ըլլայ անոր: Նախազգացումս այս-
պէս կ'ըսէ ինձի...: Զգուշացէ՛ք: Ե-
թէ ձեր սխալովը փորձանք մը գայ
անոր գլխուն, այն ժամանակ գիտցէք
որ...:

Չաւարտեց խօսքը, բայց բուն ա-
տելութեան և զայրոյթի արտայայ-
տութիւն մը կը մեկնէր միտքը:

— Այո՛, այո՛, զգուշացէք որ ձեր
վախերը, ձեր անձնասիրութիւնը, ձեր

վատութիւնն օր մ'անոր դէմ չի դար-
ձունեն ամուսնին վրէժխնդրութիւն-
ները...:

«Երէկ, ըսաւ դերկոմսին մօտենալով,
գթութենէ աւելի զգուանք կը ներ-
շնչէիք ինձի:»

Դերկոմսը սասանած անոր կը նայէր:
Այդ մարդն երբէք այսպէս խօսած
չէր իրեն:

— Ենչ, կը նշանակէ այդ, կակաղեց
անպիտանը:

— Կը նշանակէ թէ երէկ վերջնակա-
նապէս դատեցի ձեզ, և կարմրեցայ ա-
նո՛ր համար որ ձեր տարփուհին եղած
էր...: Կը դողայիք ձեր վախէն...
միմիայն ձեզի համար: Մինչ կոմսը դը-
րանը կը զարնէր, դուք մի միայն ձեր
վտանգը կը մտածէիք փախուստի ճամ-
բայ մը փնտռելով, առանց հոգ ընե-
լու անոր վտանգը, և պատրաստ էիք
կոմսին կատաղութեանը մատնել դայն՝
ինքզինքնիդ ազատելու համար:

«Եթէ կոմսը ներս մտնէր, փոխանակ
դայն ձեր մարմնովը ծածկելու անոր
չըջազգեստին ետին պիտի պահուրտէիք:

«Ա՛հ, ցած և ամօթալի՛ վիճակ:

«Վատ էք դուք...»

«Ի՞նչպէս կրնայ Տիան սիրել վատ մը :

«Ի՞նչպէս չ'ամչնար ինքզինքը ձեզի յանձնելէ :

«Ի՞նչպէս չի հասկնար թէ այս բանը զինքը կը պղտիկցնէ, կը նուաստացնէ :

— Ուրեմն իմ թշնամիս էք հիմտ, կրկնեց դերկոմսը՝ առանց զգալու կըրած անարգանքը, նախատինքը, և միայն իւր տնձին պահպանութեան բընազդին ուշ դնելով :

— Ես երբէք բարեկամ եղած եմ ձեզի, ըսաւ ֆօսատ հեզնելով :

«Մառայեցի ձեզի, որովհետեւ կը հրամայէր Տիան :

«Անոր համար կը գործէի, միայն անոր համար :

«Ամէն բան ըրի, կ'ընեմ և պիտի ընեմ անոր համար :

«Դուք ալ օգուտ կը քաղէք, ձեզի համար աղէ՛կ :

«Ինձի համար գէ՛շ :

«Եւ սակայն դուք էք ամէն եղածին պատճառը :

«Կոմսին նախանձութիւնը դուք էք արթնցընողը... :

«Այն տղան, որ ձեր բացակայու-

թեան միջոցին ծնաւ, և որուն ծնունդն անդադար վտանգի կ'ենթարկէ զայն, ձեր գործն է... : Այն տղան եղաւ Բիէռֆիթի ոճիրին, մանկաբարձուհիին մահուան պատճառ... Դուք էք անոր և իմ քաջածներուն, մեր կրած տագնապներուն և մեզի սպառնացող վըտանգներուն պատճառը :»

Եւ կը ճտեց ակռաները :

— Կը սիրէ՞ ձեզ, յարեց աւելի խուլ ձայնով մը, և ես հնազանդելով անոր, կը պաշտպանէի ձեր սէրը... :

«Ո՛չ, ո՛չ, ո՛չ, մի յոյս դնէք այլևս իմ վրայ : Պաշտպանեցէք դուք ձեզ, պաշտպանեցէք զայն, Բայց եթէ ձեր սխալմամբ դժբաղդութիւն մը հասնի անոր... :»

Եւ աւելի մօտեցաւ՝ ձեռքերը դէպ անոր երկնցնելով :

— Կը խեղդեմ ձեզ ինչպէս որ խեղդեցի Ժիւսթի՛նը :


— Քօսատ ի՞նչ ըրի ես ձեզի, հարցուց կոմսուհիին տարփածուն աղերսական ձայնով մը : Չե՞ս զգար թէ զիս լքանելը, կոմսուհիին լքանել է, ինձի գէշութիւն ընելն անոր ընել է, երեքնիս մէկէն մասնել է :

Քօսատ վայրկեան մը լուռ կեցաւ,

յետոյ գլուխը ցնցեց գէշ երազէ մ'արթնցող մարդու պէս :

— Ո՞վ կ'ըսէ թէ՛ կ'ուզեմ լքանել զայն պատասխանեց ժպիտով մը . որուն տխրութիւնը զարմանալի էր այդ շիկէրէի դէմքին վրայ : Գիտցածնիդ հաղորդեցէք իրեն , և ըսէք թէ միշտ պատրտատ եմ իւր հրամաններուն մինչեւ ի մահ Մնացեալին , ձեզի վերաբերեալին գալով , յիշեցէք ըսածս : Ուրիշ խօսք չունիմ , գացէք հիմա :

Յօլ ար Ռիչմօն հասկըցաւ որ այլ ևս պատասխան չի կար տալու , և մեկնեցաւ դողալով , գլուխը կտխած :



61

ԼՐԱԳԻՒՆԵՐՈՒ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Քօսատի տանը դիմացը ուրիշ տեսարան կար : Շամպէզի , վերջին ծայր ուրախ իւր կրկին ձեռնարկներուն յաջողութեանը վրայ , և ձեռքին մէջ ունենալով այն մեքենայութեան թելերը , որմէ իւր բախտը կը յուսար շինել , պարարտ առաւօտ մը կ'անցունէր , մի առ մի յիշելով մտքէն առջի իրիկուան դէպքերը :

— Կարծառին ծայրը ձեռք անցուցի . . . ամբողջապէս մէջէն պիտի անցնի :

« Տը Ֆէրնիք կոմսը . . . կոմսուհին . . . Բօլ ար Ռիչմօն . . . աւասիկ երեք անուն , զորս չպիտի մոռնամ . . . : Երեքն ալ բարձր դասակարգէ և հարուստ միանգամայն : Ասկէց լաւագոյնը չէի կրնար երազել :

« Յայց ի՞նչ մարդ է եղեր այդ ամուսինը : Հեշտ մարդ չերեւնար . . . մեծ զգուշութեամբ պէտք է խաղալ հետը , և ճանկին մէջ չիյնալ : որ ահա ելի պէտք է ըլլայ :

« Յայտնի է թէ այդ ամուսինը կը խարուի իւր կնոջմէն , և որո՞ւ հետ . . . իւր փեսին , Բօլ ար Ռիչմօնի՞ հետ . . . :

« Պէտք է խոստովանիլ թէ կիներն երբեմն զարմանալի ճաշակներ կ'ունենան . . . վասն զի այդ Բօլ ար Ռիչմօնը , առանց ազեղ ըլլալու , հրապուրիչ ալ չէ . . . և քաջասրտութեամբ ալ չէր փայլեր երբ մտայ այն սենեակն ուր կը դռնուէր սիրուհիին և Անթօան Քօսատի հետ . . . :

« Թերեւս առաքինութիւններ ունի . . . ծածուկ . . . :

« Կիներ կան որոնք այդ ծածուկ առա-

քինութիւնները միայն կը գնահատեն :

«Կացութիւնը շատ ձկտեալ է... և վերջին ծայր եղբերական... : Ստուգիւ յաջող ձեռք ունիմ ժամանակէ մ'ի վեր : Եւ խորհեցաւ վայրկեան մը :

— Այս ամէն մարդիկ, յարեց, քիչ շատ կապ ունին Բիէնֆիթի տան հետ... » Նամակը, յատակագիծը, Կոր Բոսատ աղքատաց գանձանակին մէջը խոթեց, տը Ֆէրնիք կոմսուհիին գործն են, այս մասին տարակոյս չէ մնացած :

Եւ կանգ առաւ :

— Զիս շփոթեցընողը, գոչեց յանկարծ, անձանօթ կէտին մէջ, փնտռուածն ըստակը չէր... այլ այն գտած տուժարս, որմէ բան մը չի հասկըցայ... : Սակայն Անթօան Բոսատ, որ տանը մէջն էր երբ ես պարտէզին մէջն էի, չեկաւ հոն, ուր իրեն պատուիրուած էր երթալ... և փորձ չըրաւ առնելու այն արկղիկը զոր ես վերցուցի :

« Ի՞նչ կ'ընէր այն տանը մէջ, ուր կընող մը մտնելը տեսայ... որ անշուշտ հոն կը բնակէր : Հիմայ հոնկէ պարտիմ իմանալ պէտք եղածը... »

« Ո՞վ էր այն կինը, ի՞նչ կը նշանակէր այն խուլ ճիչը զոր լսեցի, այլ և այլ »

չուինդները որք մինչև իմ ականջս կը հասնէին :

« Այս ամէնուն մէջ բան մը կայ, որ տակաւին անձանօթ կը մնայ ինձի... բայց վերջապէս պիտի իմանամ :

— Տը Ֆէրնիք, կրկնեց յամրաբար : Այս անունն անձանօթ չէ ինձի... : Ո՞ւր տեսայ կամ լսեցի : Ռիչմօն անունն ալ... »

« Եւ սակայն չէի ճանչեր այդ մարդիկը, որք այնպիսի դասակարգի մը կը վերաբերին, ուր յաճախելէ, աւա՛ղ, շատոնց դադրած եմ : »

Ժիւլ Շամպէզի այս մտածութիւններով զբաղած էր, Սոֆի ներս մտաւ առաւօտեան լրագրիւնները բերելով իւր վարձակալին :

Գօտինները դեռ իրգուած չէին :

Անկողնին վրայ դրաւ զանոնք, և առաւօտեան համրոյբն ու քանի մը գորովական խօսքեր փոխանակելէ ետև իւր տարփաւորին հետ. Սօֆի Շամբլէն մեկնեցաւ՝ նախաձաշի պատրաստութիւններուն հսկելու համար. վասն զի կէս օրը կը մօտենար :

Ժիւլ Շամպէզի, մինակ մնալով, մեքենաբար խղեց ձեռքին հանդիպած առաջին լրագրին գօտին :

Բայց հազիւ աչքը վրան նետեր էր, ցնցուեցաւ:

Առաջին երեսին վրայ խոշոր գլխազրոյ վերնագիր մը կը տեսնուէր.

«ԲԻԷՒՅՈՒԹԻ ՈՃԻՐԸ»

— Օ՛, օ՛, գոչեց, ի՞նչ է այս:

Եւ լափեց լրագրին ըրած պատմութիւնը, ժիւսթին Պոնֆօայի մահուան և դատական խշխանութեան սկսած քննութեան արդիւնքին վրայ:

Կարդացած միջոցին պաղ քրտինք մ'զգաց կրնակն ի վար:

— Սպանութիւն է եղեր այդ սրիկայ Բօսատին ըրածը...:

«Պէտք էր գուշակէի... դէմքէն... ընթացքէն... երբ կը փախչէր: Մինչ ես արկղիկը հողին տակէն կը հանէի... անզգամը կը խեղդէ՛ր խեղճ կինը...:

Եւ սկսաւ դողալ:

— Բայց ես ալ հո՛ն էի... հետեւապէս մտանակից կամ ընկեր կրնամ կարծուիլ այնպիսի գործի մը, որ գլխատման կը տանի... եթէ երբէք իմացուի...: Արդէն կ'ենթագրուի թէ ոճրագործներն երկուք են եղեր:

«Ի՞նչպէս պիտի ազատեմ՝ զիս՝ եթէ իմ հոն ներկայութիւնս իմացուի:

«Որչափ և անմեղ ըլլամ սպանութեան ոճրին մէջ, օճիքս չեմ կրնար ազատել: Բայց ինչո՞ համար այդ գազանն սպաննեց մանկաբարձուհին:

«Անուշտ իւր հաշուին համար չէր... կոմսուհիին կամ անոր տարփածուին համար էր...: Երեք հազար ֆրանքները սակարկուած գինն էին...:

«Բայց այդ անձերն ի՞նչ շահ ունէին այդ կնոջ մահուան մէջ...:

Եւ վայրկեան մը մտածելէ ետեւ...:

— Ի՞նչ ապուշ եմ, գոչեց:

«Իսկաբարձուհի մը... գաղտնի տղարերք... շնութենէ ծնած տղայ մը...: Հի՛մա կը հասկընամ: Կը վախնային որ կրնար բերան տալ զիրենք...»

Եւ ճակատը քերեց:

— Ա՛հ, եթէ այդ անձերը գործեցին այս ոճիրը... ալ բնաւ խիղճ չեմ բներ...:

«Ինչ որ ընեմ այդ սրիկաներուն դէմ, օրհնած հացի տեղ կ'անցնի... և շատ թեթեաքաութիւն մ'եղած կ'ըլլայ իրենց գործած ոճրին:

Նորէն քերեց ճակատը:

— Շատ գեղեցիկ է այդ կոմսուհին: Եւ լուսաւորուեցաւ երեսը:

Յանկարծ վար ցատկեց անկողինէն
և գրասեղանին քով վազելով, ուր պահած էր գտած ստակն և տուժարը, իբրեւ մարդ մը որ ինքզինքը ճշմարտութեան հետքին վրայ կ'ըզայ, կամ երկարօրէն ուսումնասիրած խնդրոյ մը լուծումը գտած կը կարծէ:

Տուժարը սեղանին վրայ բանալով, նորէն աչքէ անցուց:

— Աստիկ թուահամարներ, ըսաւ ինքն իրեն, և անոնց դիմացն ալ անուններ: Միւս կողմն ա՛նչն թուահամարներն և ուրիշ անուններ: Շատ պարզ է:

«Թուահամարով անուններէն ոմանք իսկական կամ ճշմարիտ են... միւսներն ալ կեղծ կամ շինծու... Ժիւսթին Պօնֆօայի դիմող մէն մի կին երկու անունով նշանակուած է, ճշմարիտով և սուտով:

«Սուտը մանկաբարձուհիին կուտային, որ սակայն ճշմարիտն ալ կ'իմանար որ և է միջոցով, որպէսզի ստակ քաշէր, և այս պատճառաւ... սպաննեցին զինքը:»

Շամպէզի դողաց թեթեւ մը:

— Ոսք հասկըցողին շատ բարե՛ւ, մրմռաց ինքնիրեն: Բայց ես պառաւ կնիկ չեմ, կրնամ ինքզինքս պաշտպանել...

Երկու ցուցակներն աչքէ անցուցած միջոցին տը Ֆէրնիք անունին հանդիպեցաւ:

— Ա՛, հոս տեսած եմ եղեր արդէն այդ անունը:

«Ա.յո՛, պարզ է գործը... վերջնթեր անունն է. թիւ 103:

Բայց մէկէն կանգ առաւ ապշած:

Ֆէրնիքի անունին տակ կարդացեր էր «Ֆէրնանտ, դերկամուհի Ռիչմօնի»:

— Դերկամուհի Ռիչմօնի՛, մրմռաց, Տիան տը Ֆէրնիք կոմսուհոյն տարփաւորին կիներ՛:

«Ան ա՛լ:

«Բայց այս տուժարը հա՛նք մ'է:

«Մայր ու աղջիկ:

«Մայրը գիտէ՞ արդեօք աղջկանը գաղտնիքը:

«Աղջիկը գիտէ՞ մօրը գաղտնիքը:

— Ի՛նչ գարշելի ցելս, մրմռաց բարկանալով ուրիշներուն ամօթալի աղտեղութիւններուն դէմ, մոռնալով իւր կատարած կամ խորհած անգոսնելի գործերը:

Բայց շատ չի տեւեց իւր ցասումը:

— Բէ՛հ, ըսաւ, ինձի ի՞նչ փոյթ. հերիք է որ հարստութեան ազբիւր մը

պիտի ըլլայ ինձի... եթէ գիտեմ խա-
ղալ... : Բայց խոհեմութիւն ու հաս-
տատմանութիւն պէտք է, և ես ալ,
գիտաք Աստուծոյ ունիմ ատոնք :

«Օ՛ն, ամփոփենք գործը :

«Տիան տը Թէրնիք, Բօլ տը Ռիչմօնի
հետ ունեցած ապօրէն յարաբերու-
թեամբ յղի ինկած, դացեր ժիւսթին
Պօնֆօայի տունը գալտնաբար տղա-
բերքը կատարեր է՝ տիկին Բէնէն
(թիւ 103) կեղծ անուան տակ :

«Ամուսինը կասկածի երթալով, աս-
կէց առաջ եկեր է Բօսատը Բիէնֆիթ
ղրկելու որոշումը, որպէս զի երթայ
սեւ կէտին մէջ պահուած տուժարը
վերցունէ :

«Բայց կոմսուհին ինչէ՞ն գիտեր տու-
մարին հան ըլլալը :

«Ետքը պիտի տեսնենք... :

«Սակայն որոշումը ետքէն փոխուեր
է... որոշուեր է՝ գործը բոլորովին
ծածկելու համար՝ մեռցընել ժիւսթին
Պօնֆօան և այն ժամանակ պարտեղը
խուզարկելու և տուժար փնտռելու
պէտք չէր մնար :

«Քանի մը մանրամասն պարագանե-
րէ դատ՝ այս է գործին բովանդակու-

թիւնը, մնացած մութ կէտերն ալ քիչ
օրէն կը հասկընամ :

«Առ այժմ կոմսուհին, դերկոմսն ու
Քօսատը ձեռքս անցունելու համար
պէտք եղածը գիտեմ :

«Բայց Ռիչմօն դերկոմսուհին ալ կայ :

«Ան ի՞նչ դեր ունի :

«Ի՛նչպէս կրնամ դիտնալ :

«Արդեօք ա՞ն ալ շնութեան պտուղ
ունեցած է :

«Նայինք 104 թուահամարը... Օ-
րերը կա՞նի... :

«Տարակոյս չի կայ որ այս ալ գաղա-
նի ծննդաբերութիւն մ'ունեցած է... :
Բայց տարփաւորն ո՞վ է :

«Արդեօք այդ երջանիկ անզգամե-
բուն բուն անունները չէ՞ իմացեր կամ
իմանալու անփոյթ գանուեր է ման-
կաբարձուհին :

«Եւ սակայն շատ խնամով կը բըռ-
նէք այս հաշուետուժարը :»

Նորէն սկսաւ խնամով թղթատել
տուժարը երես առ երես :

Մէջտեղերը նշմարեց որ երկու ե-
րես իրարու փակեր էին, խոնաւու-
թենէ անշուշտ :

Իսկոյն գտեց իրարմէ :

Երրորդ ցանկ մը նոյն կարգահամարներով զարկաւ Շամպէզիի աչքին : Բայց անկատար էր :

104 Թիւը նայելով .

«Դանիէլ տը Բէօր» անունը կարդաց :

103 Թիւին վրայ Բօլ տը Ռիշմօնի անունը կար :

—Մ'ն, ըսաւ, բան մը պակաս չէ :

«Յիրաւի շատ կանոնաւոր կին մ'է եղեր այդ Ժիւսթինը :

«Տարփաւորներուն անուններէն մէկ քանին պակաս են . . . բայց ինձի պէտք եղածը կայ . «Դանիէլ տը Բէօր» . ո՞վ է, չեմ ճանչեր :

«Բայց պիտի ճանչե՞մ :

Ըսինք թէ յաճախորդաց կեղծ անուններէն ետքը սկզբնատառեր դըրուած էին :

Այս կէտն ալ Շամպէզիի ուշադրութիւնը գրաւեց :

«Ի՞նչ կը նշանակեն այս սկզբնատառերը . Մ . Մ .—Ա . Ո .—Ա . Մ .—Մ . Ո .— :

«Տեսնենք . . . մանկարարձուհիի մը տունն ենք . . . :

«Բնականաբար տղաք կը ծնին հոն, ճանչեր ու -ղփիչեր : Հասկըցայ :

«Մ .ը մանչ կը նշանակէ, Ա .ը աղջիկ . Ո .ն ողջ կը նշանակէ, Մ .ը մեռած :

«Ուրեմն, այս դրուածքամբ, օրիորդ կանոնիէ, այսինքն Ռիշմօն դերկոմսուհին Ո . Մ . մը ծներ է, այսինքն ողջ մանչ մը :

«Եւ տիկին Բէնէն, այսինքն կոմսուհին ալ Մ . Մ . մը, այսինքն մանչ մը ծներ է . . . որ մեռեր է :

«Մեռե՞ր է, այս գէշ . ղէնք մը պակաս է իրեն դէմ :

«Հիմա բանալին ձեռքս է . կը մնայ միայն իմ գործելու ծրագիրս պատրաստել . . . :»

Տետրակը նորէն դարակին մէջ դրաւ, գոցեց, և ճակատն երկու ձեռքին մէջ առնելով՝ մտածել սկսաւ :

63

ՈՒՐ ՄԷԿ ՈՒՐԻՇՆ ԱԼ ԼՐԱԳԻՐ ԿԸ ԿԱՐԳՈՅ

Բիէնֆիթի ոճրին վրայ գրող լրագրին յօդուածը, որ այնչափ սրտայուզում պատճառեր էր ժիւլ Շամպէզիի, կրնայ երեւակայուիլ թէ որչափ աւելի սաստկապէս յուզեց Ֆէրնանտի սիրտը, Կրք ան ալ կարդաց նոյն պատմութիւնը :

Ինչ որ Դանիէլ տը Քէօր զգացեր էր
ահուելի դէպքին առ և, նոյն սարսափն
և նոյն սրտայուզումն զգաց նաև Ֆէր-
նանտ :

Թողունք այն գթութեան խորին ըզ-
գացումը դժբախտ զոհին համար, ո-
րուն հետ սերտ յարաբերութիւն ու
կենակցութիւն ունեցեր էր երկու ամիս :

Ֆէրնանտ դիւրագորով սիրտ մ'ու-
նէր, որուն մէջէն անձնասիրական մը-
տահոգութիւնները չէին կրնար վանել
ուրիշ ամէն զգացումները :

Վերջին անձը, որուն վրայ կը մտա-
ծէր, իւր անձն էր միշտ : Քանի մը
վայրկենի չափ սիրտը գրաւողը ժիւս-
թիինի սոսկալի մահն եղաւ, այն խեղճ
կնոջ որ զինքը մօր պէս խնամեր էր,
թէեւ ոչ ձրի, և որուն կը պարտէր իւր
զաւակին կեանքն ու պահպանութիւնը :

Երբ մտածութիւնն այսպէս իւր Գէ-
որգին վրայ դարձաւ, իսկոյն նշմարեց
իրեն և Դանիէլի գլխուն վրայ կախ-
ուած սպառնալիքը, որ այդ գազանա-
խորհուրդ ոճիրին տրամաբանական հե-
տեւութիւնը պիտի ըլլար :

Ոճրագործը գտնելու համար, ար-
դարութիւնը մանրագննին խուզարկու-

թիւններ պիտի ընէր, ժիւսթիինի անց-
եալը պիտի քննէր, կեանքը պրպը-
տէր :

Եւ այն ժամանակ ո՞վ կրնար տպա-
ցուցանել թէ չպիտի երեւան ելնէր . . .
ինչ որ Ֆէրնանտ ոգւով չափ կը փա-
փաքէր և կը ջանար ծածուկ պահել :

Թերեւս իսկ մանկաբարձուհիին տանը
մէջ նշաններ կամ ապացոյցներ կային
իւր այլեւայլ յաճախորդներուն հետքը
յայտնող :

— Ո՛հ, ամէն բան կը կորսուի՛, գո-
չեց :

Ինչ որ մինչեւ ցարդ ըրած էր, ան-
օգուտ կ'ըլլային :

Այն զօրեղ ազդեցութիւնը որ ու-
նեցեր էր ամուսնին վրայ, և որ իւր
անկախութիւնը կ'ապահովէր կորզելով
զինքն այն պժգալի գգուանքէն, զոր
այսուհետեւ կրելու և փոխարինելու
անկարող կը զգար ինքզինքը, վասնզի
ամէն բանէ առաջ ինքզինքը յարգելու
պէտք կ'զգար, այն զօրեղ ազդեցու-
թիւնը կամ գերակշռութիւնը որ թոյլ
կուտար իրեն պարկեշտ, անկեղծ և
ուղղամիտ ըլլալ իւր տարփաւորին
հանդէպ, ինչպէս որ ան ալ պարկեշտ,

անկեղծ եւ ուղղամիտ էր իրեն հանդէպ, այն գերակշռութիւնը որ կնոջ մ'արժանապատուութիւնը, Դանիէլի երջանկութիւնն ու իրենց գաւկին փրկութիւնը կ'ապահովէր, և միանգամայն զինքը կը պաշտպանէր տը Ֆէրնիք կոմսին դէմ, այն դերակշիռ ազդեցութիւնը կամ իշխանութիւնը իւր ամուսնին ձեռքը պիտի անցնէր՝ եթէ ճշմարտութիւնն օր մ'անոր ականջը հասնէր:

Ի՞նչ կ'ըլլար այն ատեն իւր վիճակը: Թերեւս իսկ Դանիէլ տը Ֆէօրն ըսպաննել կը մտաբերէր:

Սպաննել, եթէ ոչ յոյժ վտանգաւոր, գոնէ սարսափելի կերպով դայթակղական կրնար ըլլալ:

Մենամարտի հրաւիրել ուրիշ պատրուակով մը, ասոր համար ալ քաջութիւն պէտք էր, և Ֆէրնանտ գիտէր որ իւր ամուսինն երբէք չէր կրնար այդ քաջութիւնն ունենալ:

Ուստի զինքը զատել իւր տարփաւորէն ու զաւկէն, նուազ վտանգաւոր, աւելի դիւրին, աւելի հեշտ, աւելի հաճոյական էր:

Բաւական ծանր և մանաւանդ աւելի դժնդակ վրէժ մ'առած չըլլա՞ր Դանիէլ տը Ֆէօրէն՝ խլելով անկէ սիրելի կինը, և դայն դժոխային նախանձի մը դառն տագնապներուն մատնելով:

«Դուք կը սիրէք դայն, բայց ես տէրն եմ անոր, և իմ ձեռքիս մէջն է» ըսել:

«Արդարեւ վեհ կամ ազնիւ բան մը չէր այս, ոչ ալ մաքուր...»

Եւ այս պատճառաւ Ֆէրնանտ կը դաշակէր թէ այսպէս կրնար ըլլալ իւր ամուսնին վարմունքը:

Այդ վարմունքին կը լծորդէր, օրինակի համար, զինքը նախատելու, անարգելու և ստորնացընելու, իւր յանցանքն անդադար երեսին զարնելու և ասեղի հարուածներով զինքը խենդեցընելու հաճոյքը:

— Կը մեռցընեմ ինքզինքս և չեմ ընդունիր այդպիսի կեանք մը, ըսաւ Ֆէրնանտ յուսահատաբար: Երբէք, բնաւ երբէք չեմ յանձն առներ անորն ըլլալ, երբեք չեմ ընդունիր այդ կըրկին նախատինքը, այդ կրկին ստորնութիւնը, ոչ ինձի, ոչ ալ Դանիէլի համար: Մեռնիլն հազար անգամ աւելի կ'ընտրեմ...»

Նոյն առտուն ելած լրագիրներուն ամէնն ալ առնել տուաւ, կարդաց,

մանրամասնութիւններ փնտոելով, որպէս զի կարենար անոնցմէ իմանալ ճշդիւ ինչ որ կրնար պախ կամ յոյս պատճառել իրեն:

Հրադիրներն իրարու ըսածը կը կրկնէին ըստ սովորութեան. պատիպատ խօսքերով մեր գիտցածը կը հասկընէին, առանց նոր կամ աւելի բան մ'ըսելու, մինչեւ իսկ դէպքին նախաքննութեան պաշտօնն ստանձնող դատաւորին ո՛վ ըլլալը յայտնելու:

— Դանիէլ միայն կրնայ տեղեկութիւն տալ ինձի, ըսաւ վերջապէս: Ան ալ նախաքննիչ դատաւոր է, հարկաւ իմացած է ոճիրը... և տեղեկութիւններ քաղած...: Ա՛հ, ս՛րչափ ուրախ եմ որ զաւակնիս առաւ այս կնիւնը քովէն, ապա թէ ոչ կը խենդենայի սարսափէս:

Իրիկուան դէմ պիտի տեսնէր զայն: Բայց տակաւին երկար ժամեր սպասել հարկ էր:

Դրիչ մ'առաւ նամակ մը գրելու և տեղեկութիւն ուղելու համար:

Բայց հազիւ երկու բառ գրեր էր, նետեց գրիչը:

— Պէտք է ես անձամբ տեսնեմ զինքը

հիմա, ըսաւ սենեկապանուհին կանչելով այն յանկարծակեան որոշողութեամբ որ իրեն յատուկ էր:

Քանի մը վայրկենի մէջ պատրաստուեցաւ:

— Տիկինը նախաճաշի պիտի գա՞յ, հարցուց սենեկապանուհին, որ հագուելուն կ'օգնէր:

— Այո՛, այո՛, անշուշտ, պատասխանեց Ֆէրնանա, որ չէր կրնար իւր յուզմունքը ծածկել:

Տունէն դուրս ելնելուն պէս Սէն-Սիւլբիսի հրապարակին կառարանէն կառք մը նստելով, Պուլվառ-Սէն-ժէռմէն գնաց Քլիւնիի հրապարակին մօտ, և հոն կառքէն իջնելով՝ մինչեւ Դանիէլ տը Քէօրի տունը գնաց որ մօտ էր:

Ֆէրնանա երբէք իւր տարփաւորին տունը գացած չէր:

Բայց տենդը կը լափէր զինքը, և մէն խոհեմութիւն կը մոռցրնէր:

Միակ նախազգուշութիւնը որ բրեր էր՝ աւելի բնազդով քան խորհելով, իւր քօղիկը որ բուական հաստ էր՝ երեսին վրայ քաշած ըլլալն էր:

— Պարոն տը Քէօր, հարցուց դռնապանին:

— Դատարանն է, պատասխանեց, առաւօտուն կանուխ հոն գնաց:

Ֆէրնանտ, առանց ուրիշ բան մը հարցընելու՝ երկրորդ կառք մը բռնեց և Դատական պաշտօնատունը գնաց:

Երբևմն հոն գացած և Դանիէլ տը ֆէօրի սպասած էր Բա-Բէրտիւ սրահին մէջ, ուր ամէն մարդ կրնայ երթալ գտնուիլ առանց կասկած արթնցընելու, և ոչ իսկ ուշադրութիւն հրաւիրելու՝ դատ ունեցող արանց և կանանց բազմութեան մէջ:

Ֆէրնանտ, առանց վարանելու, առանց մէկու մը հարցընելու, մեծ սանդուղէն վեր ելաւ, ատեաններուն սըրահէն անցաւ և պաշտօնատան գաւթին իջաւ:

Հոն կանգ առաւ՝ չգիտնալով թէ ո՞ր կողմ պէտք էր դիմէր Դանիէլ տը ֆէօրի սենեակը գտնելու համար:

Գաւթին ո՞ր կողմը կը գտնուէին նախաքննիչ դատաւորներուն գրասենեակները:

Պաշտօնեայ մ'երեւնալով կամարին տակ, Ֆէրնանտ վազեց քովը գնաց և հարցուց:

— Աս դիմացի սանդուղէն վեր երկրորդ յարկին մէջ, պատասխանեց պաշտօնեան:

Ֆէրնանտ գնաց սանդուղին դուռը

բացաւ և վեր ելնելով՝ երկայն սրահի մը մէջ գտնուեցաւ շնչասպառ:

Հոն մարդիկ կ'երթեւեկէին, ոմանք զբաղուն, ոմանք անտարբեր, ոմանք ախրադէմ և մտահոգ:

Մէկը կանգ առաւ Ֆէրնանտի մօտ՝ թուղթեր աչքէ անցունելով:

— Պարոն նախաքննիչ դատաւորներուն սենեակները, եթէ կը հաճիք, հարցուց դողդոջուն ձայնով մը:

— Սրահին ծայրը, պատասխանեց մարդն առանց երեսը նայելու:

Ֆէրնանտ՝ այն կողմն երթալով՝ մութ նրբանցք մը հասաւ, որուն երկու կողմը նստարաններ կային, բայց մարդ չի կար:

Մահուան լուսթիւն կը տիրէր:

Չախ կողմը թուանշաններով դուռներ կային վանական խցիկներու դուռներուն նման, որոց վրայ ՆԱԽԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՒՈՐ բառերը կը տեսնուէին խոշոր գիրերով:

Այն դուռներուն ո՞րը պէտք էր զարնել:

Բարեբաղդարար նրբանցքին ծայրը մարդ մը նշմարեց որ տեսակ մ'ապակեւոր վանդակի մը մէջ նստած լրագիր կը կարդար:

Մօտն երթալով .

— Պարոն, կահաղեց .

— Գրասենեակները դեռ բացուած չեն, պատասխանեց մարդը կոշտութեամբ, առանց աչքը լրագրին վրայէն զատելու :

— Բայց ըսին ինձի . . .

— Ո՞վ կը հարցնէք :

— Պ. Դանիէլ տը Քէօր :

— Դատի կոչնագիր ունիք :

— Ո՞չ, պարոն :

— Ի՞նչ կ'ուզէք ուրեմն :

— Սօսք ունիմ իրեն . . . : Ըսին ինձի թէ հոս է . . . :

— Այո՛ հոս է, բայց զբաղած է : Դատավարութեան ժամանակ չէ դեռ : Ասկէ զատ, եթէ կանչուած չէք իրմէ, չէք կրնար զինքը տեսնել :

— Ես աներկբայ եմ որ կ'ընդունի զիս : Հաճեցէք, կ'աղաչեմ, իմաց տալ իրեն թէ զինքը տեսնել կ'ուզեմ :

— Ի՞նչ բանի համար :

— Գիտէ ինքը :

Մարդը հաճեցաւ վերջապէս ֆէր-նանտի նայիլ :

Տեսաւ որ ազնուաշուք տիկնոջ մը դէմք ունէր և ոչ հասարակ աղերսարկուի մը, ուստի մեղմացաւ քիչ մը :

— Ի՞նչ է ձեր անունը :

Ֆէրնանտ ցնցուելով կարմրեցաւ :

Ի՞նչ ըսէր :

Սպասաւորը զարմացկոտ աչքով կը նայէր անոր և կասկածիլ կ'սկսէր :

— Օրիորդ կառնիէ, բաւ յանկարծ Ֆէրնանտ բուռն ճիգ մ'ընելով :

— Լաւ, սպասեցէք :

Եւ գնաց քիչ մ'անդին դուռ մը դարկաւ, որուն վրայ թիւ 7 կար, և իսկոյն ներս մտաւ :

Դանիէլ տը Քէօրի սենեակն էր, ուր առաւօտուն կանուխ եկեր էր Բիէնֆիթի գործին վերաբերեալ թուղթերը քննելու :

Կը հասկնան ընթերցողք թէ ո՛րչափ կարեւորութիւն ունէին այն թուղթերն իրեն համար :

Բայց իրեն չափ կանխած էր նաեւ Բրէնպարն ոստիկանը, որ եկած էր հարկ եզած հրահանգներն ու հրամաններն ստանալու :

Դանիէլի դէմքը զարկեր էր անոր խուզարկուի աչքին :

Յայտնի էր թէ այն գիշերը չէր քընացած, դժնդակ գիշեր, որուն մէջ գրեթէ շարունակ ֆէրնանտի վրայ

խորհեր էր, այն սարսափներուն վրայ
զոր պիտի զգար երբ լսէր ժիւթի
Պոնֆոայի եղերական մահը,

Ի՞նչպէս պիտի սրտապնդէր զայն,
երբ իւր սիրտը հանգիստ չէր:

Ի՞նչպէս իմացընէր անոր:

Նամա՞կ մը գրէր, մա՞րդ մը զրկէր:

Ամուսնին վերադարձէն ի վեր շատ
վտանգաւոր էր:

Վերջապէս որոշեր էր իրիկուան մօտ
տեսնել զայն:

Բայց մինչեւ այն ժամանակ ի՞նչ պի-
տի ըլլար սիրտը:

Սակայն հարկ էր Հնար եղածին չափ
իւր սրտատանջութիւնը ծածկել ոստի-
կանութեան մարդէն:

Ուստի տեսակ մ'սփոփանք զգաց երբ
գրասենեակի սպասաւորը ներս մտնե-
լով զինքը կորզեց այդ գլուխ գլխի
տեսակցութենէն, որ ծանր կուգար ի-
րեն:

— Ի՞նչ է, ի՞նչ կայ հարցուց մէկէն:

— Տիկին մ'եկած է, և կ'ըսէ թէ Պա-
րոն նախաքննիչ դատաւորն իրեն կը
սպասէ:

— Տիկի՛ն մը, ըսաւ Դանիէլ ցնցուե-
լով: Ի՞նչպէս տիկին, ըսա՞ւ անունը:

— Այո՛, պարոն նախաքննիչ դատա-
ւոր, Օրիորդ Կառնիէ:

Դանիէլ այս անունը լսելուն պէս,
դէմքը ծիրանիի գոյն առաւ, և արագ
նայուածք մը նետեց Բրէնսպորնի վրայ:

Այս վերջինն՝ ա՛ղգած՝ ձեռքի չուա-
նին հետ կը խաղար, որ մանկաբարձու-
հին կախելու ծառայած էր, և զոր ե-
կեր խնդրեր էր, որպէս զի զայն ծա-
խող խանութպանը փնտռէր գտնէր:

Բայց սակայն տեղեր էր Դանիէլի
յանկարծ կարմրիլն և լսեր էր սպասա-
ւորին տուած անունը:

— Թող սպասէ վայրկեան մը, ըսաւ
Դանիէլ զսպելով իւր ձայնին դողդո-
ջումը:

Յետոյ Բրէնսպորնի դռնալով յարեց.

— Կարծեմ թէ ալ ինձմէ խնդրելիք
բան մը չունիք, չուանր խնդրեցիք՝
տուի. միանգամայն հրաման տուի որ
Բիէնֆիթի տանը բանալիներն ալ ձե-
զի յանձնեն, որք տասնապետին քովը
մնացած էին մինչեւ ի նոր անօրէնու-
թիւն...:

Բրէնսպորն, միշտ հանդարտ և ան-
թափանցելի իւր բարեմիտ դէմքին
տակ, ողջունեց և մեկնեցաւ՝ բան մը
չի տեսածի ու չի լսածի պէս:

Սենեակէն դուրս ելած միջոցին, կին մը տեսաւ նրբանցին մէջ կռնակը լուսին դարձուցած, որուն դէմքն ալ աներեւոյթ եղած էր հասս քողիկի մը տակ:

—Ա՛, ըսաւ մտքէն, Օրիորդ կառնիքէն է անշուշտ:

Եւ ուշադրութեամբ մ'անոր նայեցաւ անցած միջոցին, առանց սակայն երեսին մէկ գիծը տեսնելու՝ հակառակ իւր սուր ու դիտող աչերուն:

Ֆէրնանտ իմանալով սպասաւորէն թէ Դանիէլ կը խորհրդակցէր մէկու մը հետ, նախատեսեր էր այն մէկուն դուրս ելնելիքը, և զգոյշ կեցեր էր:

—Այդ անունէն ուժգնապէս յուզուեցաւ Պ. նախաքննիչ դատաւորը, շարունակեց մտքէն Բրէնպորն հեռացած միջոցին... Այդ տիկինը կամ օրիորդը դեռաստի կ'երեւի: Թեթեւ տարփրանք մը թերեւս...:

Բրէնպորնի հեռանալէն ետեւ, սպասաւորը ներս մտցուց Ֆէրնանտը սրտատրոփ: Մինակ մնալուն պէս՝ Դանիէլ անոր քով վազեց:

—Ի՛նչ անխոհեմութիւն, ըսաւ ցած ձայնով: Հոս գա՛ւ:

—Ուրեմն չես գիտեր, պատասխանեց Ֆէրնանտ անոր երկու ձեռքը սեղմելով: Մանկաբարձուհին սպաննեք են:

—Ի՛նչ սիրունիկս, ըսաւ Դանիէլ, գիտեմ եւ քաջ գիտեմ, որովհետեւ ինձի յանձնուած է այդ գործին նախաքննութիւնը:

—Քեզի՛:

—Արդէն ես ըրի առաջին քննութիւնը, երէկ, իւր տանը մէջ, օրն իրուն:

—Դո՛ւն, դո՛ւն, ուրեմն վախնալու բան մը չունինք, այնպէս չէ՞:

—Կը յուսամ, մինչեւ հիմա չունինք:

—Իմ հոն երթալս կենալս յայտնող բան մը գտնուեցա՞ւ:

—Քնաւ:

—Օ՛հ, շունչ կ'առնեմ:

Եւ Դանիէլի ուսին վրայ ծռեցաւ, որ զայն սրտին վրայ սեղմեց:

—Բայց ինչո՞ւ եկաք, ըսաւ Դանիէլ:

—Կը վախնայի, դող ելեր, տակնի վրայ եղեր էի... հետեւաբար, գիտեա որ ամէն անգամ վիշտ մը, հոգ մը, վախ մը, վտանգի կասկած մ'ունենամ, քեզի կը դիմեմ:

— Եւ իրաւունք ունիս, անուշիկ Ֆէր-
նանտս, վասն զի ես քանի որ ողջ եմ,
մէկը չի կրնար քու պաշտելի մագերէդ
մէկ հատին դպչիլ: Այդ սոսկալի դէպ-
քէն ի վեր, քեզ մտածելէ դադրած
չեմ... բոլոր հնչնուքս քեզի համար
էր և է...:

— Գիտեմ: Մեռցընողները գիտե՞ս:

— Ո՛չ, և այդ է զիս անհանգիստ ը-
նողը:

— Ինչո՞ւ համար:

— Վասն զի չեմ գիտեր թէ ո՞վ պահ-
ուըտած է այդ ոճիրին ետեւը:

— Մեզի կրնա՞յ դպչիլ այդ բանը:

— Չեմ գիտեր: Քովս ստորադաս ոս-
տիկան մը դրած են, որ սարսափելի
կորովամտութիւն մ'ունի... ուստի կա-
րելի չէ նախատեսել թէ ճարտար կեր-
պով մղուած քննութիւն մը մինչև ո՛ւր
կրնայ հասնիլ:

— Այո՛, պիտի ուզուի գիտնալ թէ
ո՞վ կուգար ժիւսթինի տունը... և լաւ
փնտառելով կրնան մինչև ինձի հաս-
նիլ...:

— Օ՛, ամէն ճիգ պիտի թափեմ գոր-
ծը մինչև հող չի հասցնելու համար...
սակայն չեմ կրնար յայտնապէս արգելք

ըլլալ արդարութեան գործին...: Այն
ժամանակ անշուշտ մեք զմեզ կը մտա-
նենք:

— Այո՛, այո՛, կը հասկնամ, ըսաւ Ֆէր-
նանտ ցած ձայնով մը:

Եւ Դանիէլ կը նայէր քաղցրութեամբ,
բայց տենդ կը վառէր սև աչերուն մէջ:

— Ըսել է թէ ամէն բան կրնայ ե-
րևան ելնել... և իմ բազդս դիպուած է
մը կախում ունի...: Միտքէս կ'անցնէր
հոս եկած ատենս:

— Յուսահատելու բան մը չի կայ, ը-
սաւ մէկէն Դանիէլ: Քննութեան տնօ-
րէնն ես եմ:

— Ձիս սրտապնդել կ'ուզես... գի-
տեմ, ըսաւ Ֆէրնանտ փափկութեամբ:
Ձիս այնչափ վա՞տ կը կարծես:

— Քե՞զ, պաշտելի՛ս, ո՛չ, ոչ... ես
կը ճանչեմ քու դիւցազնական արիու-
թիւնդ...: Բայց դուն չես կրնար բան
մ'ընել քեզի համար: Ես միայն... և
տակաւի՛ն, աւելցուց ցած ձայնով:

«Առ այժմ, կ'երդնում քեզի թէ վախ-
նալու բան մը չիկայ քեզի համար...
և, եթէ անակնկալ բան մը պատահի,
ես կ'իմացընեմ քեզի...»

— Նախ մեր զաւա՛կը, ըսաւ Ֆէրնանտ

կարճ լուծեմէ մեռաւ : Ապահով ես
Տուէ փողոցի դռնապաններուն վրայ :

— Բացարձակապէս ապահով : Ասկէ
զատ, եթէ Պ. Վառօայի հետքը գտնեն
ալ, զոր չեմ յուսար, տղան Պարձն Պո-
նէինն է. այս բաւական է այդ կողմէն
ճշմարտութիւնը բնաւ չի յայտնուելու :

— Բայց եթէ Պ. Վառօայի հետքը
գտնուի, օրիորդ կառնիէն ալ կը յայտ-
նուի :

Դանիէլ առջևը նայեցաւ :

— Ո՛հ, Ծէրնանտ, մըմնջեց. եթէ
գիտնայիր թէ ո՛րչափ սիրտս կը տրորի
մտածելով այն վտանգները որոնց կեն-
թարկիս ինձի համար : Միայն թէ չա-
նիծես այն օրն ուր զիս ճանչեցիր :

— Լռէ՛, Դանիէլ, լռէ : Ես իմ ազատ
կամքովս եկայ քեզի : Այո՛, ազատ
կամքովս զիս քեզի տուի . . . :

— Բայց թէ որ ինքզինքդ վտանգի
մէջ զգաս . . . : Եթէ ամուսինդ իմանայ
ճշմարտութիւնը . . . Եթէ հայրդ . . .

— Ինչ որ ալ ըլլայ, Դանիէլ, չեմ
տկարանար : Ծէրնանտդ նորէն չի բռ-
նուիր : Ես մինչև ցմահ քուկդ եմ . . . :
Մինչև ցմահ խորտակեցի այն կապը որ
զիս կը միացընէր Պ. տը Ռիչմօնի հետ :

Չեմ գիտեր գալիքը . . . : Բան մը միայն
գիտեմ. այսինքն մահը միայն զիս պի-
տի բաժնէ քեզնէ և մեր զաւակէն . . . :
գիտեմ նաև թէ դուն անհնարն իսկ
պիտի ընես մեզ ազատելու համար :

« Այլ բան մը չունիմ քեզի ըսելիք,
բան մը չունիմ քեզի ապսպրելիք, բան
մը չունիմ քեզնէ իմանալիք . . . : Վըս-
տահ եղիր իմ վրայ, ինչպէս որ ես
վստահ եմ քու վրայդ » :

Եւ խանդով մը սեղմեց լայն թեւե-
րուն մէջ, երկուքին ալ չըթուենքն ի-
բարու փական, և վայրկեան մ'իրարու
փաթթուած մնացին, ամէն բան մոռ-
նալով, և զիրար տեսնելու և սիրելու
ուրախութիւնը միայն զգալով :

Նախ Ծէրնանտ գտաւ ինքզինքը :

— Ի՞նչ պիտի ընես հիմա, հարցուց :

— Պարտքս պիտի կատարեմ, ոճրա-
գործները փնտուելով . . . Գող չեն, տա-
րակոյս չունիմ . . . : Ուզած են՝ այդ ո-
ճիրը գործելով՝ սարսափելի զազտնիք
մը մարել : Ա՛հ, եթէ գտնամ յանցաւոր-
ները, անողոք, անգութ պիտի ըլ-
լամ :

— Անգո՛ւթ կրկնեց Ծէրնանտ գլուխը
կուրծքին վրայ ինալով : Թերևս ինձի

պէս դժբաղդ մ'է, որ իւր զաւակն
ազատելու համար այդ ոճրագործները
զինե՛ր է:

Դանիէլ ցնցնուեցաւ:

— Մի՛ ըսեր զայդ, միմիջեց, պարտ-
քըս կատարելու ուժս կ'առնես ձեռ-
քէս, ես դատաւոր եմ, ահեղ պաշտօն
մ'ունիմ և պիտի կատարեմ... որչափ
և ծանր ըլլայ ինձի համար:

— Ճշմարիտ է, իրաւունք ունիս: Օ՛ն,
ըբէ ինչ որ խիղճդ կը թելադրէ քեզ...
և Աստուած պաշտպանէ մեզ:

Քայլ մը դէպի դուռն առնելէ ետև,
եա դարձաւ, և ձեռքն անոր երկըն-
ցուց:

Դանիէլ բռնեց և տեսակ մը կրօնա-
կան ջերմեռանդութեամբ սեղմեց:

Հասկըցեր էին իրարու միտք...:

Երկուքն ալ, այդ գրկախառնումով
կ'երդնուին իրենց պարտքը կատարել,
և մեռնիլ մանաւանդ քան թէ բաժ-
նուիլ իրարմէ:

Ժամ մ'ետքը Ֆէրնանտ իր տունը կը
մտնէր:



ՏԻԱՆԻ ՀՆԱՐԻՄԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տը Ֆէրնիք կոմսուհին ալ կարդացեր
էր առաւօտեան լրագիրները, և այդ
ընթերցումը, որ մեր ծանօթ անձնա-
ւորութեանց մէկ քանիին սարսափ և
հնհնուք կը պատճառէին, զայն գրեթէ
քաջալերեր էին:

Բնաւ մանրամասնութիւն մը չի կար
ծանուցանող թէ արդարութիւնը բուն
ոճրագործին հետքը գտած էր:

Կը կարծուէր թէ երկու ոճրագործ
կային, հետևապէս արդարութիւնը կը
մոլորէր:

Քօսատ իւր սովորական անյողդողդ
կորովովը կատարեր էր գործը:

Ժիւսթին մեռնալով հետը տարեր
էր սր «Կէրին» մէջ ծածկուած գաղտ-
նսքը:

Այս կողմէն վախու բան չիկար:

Եթէ մարդասպանը գտնուէր, ինքը
դարձեալ չէր վախնար, ճանչելով Քօ-
սատն և իւր անոր վրայ ունեցած բա-
ցարձակ ազդեցութիւնը, որով այդ
վայրագ կենդանին յանձն կ'առնէր գը-

լուխը կառափնարանին յանձնել ի հարկին, քան զինքը բերան տալ: Վերջապէս աներկրայ էր որ ֆօսատ կատարեալ լուծիւն կը պահէր զինքը վրտանգի ենթարկող որ և է բանի վրայ:

Կը մնար իւր մեղապարտ ճակտին վրայ իբրև սպառնալիք կախուած ամուսինը... և մանաւանդ այն անծանօթ մարդը, որ առջի գիշերն ազատեր էր զինքը:

Ամուսնին առջև կէս մը միայն կը դողար:

Երկար ժամանակէ ի վեր յաջողութեամբ խաբած ըլլալով զայն, դարձեալ վստահ էր իւր ճարտարութեան վրայ:

Յաղթելու ունակութիւնը վստահութիւն կուտայ յաղթութեան վրայ:

Սակայն այս անգամ իրեն սպառնացող ծանր վտանգէն հասկընալով թէ կոմսը կը հսկէր իւր վրայ, և պատրաստ էր իրեն դէմ խաղցուած խաղն ստուգելու համար ամէն բան ընել, հարկ կ'ըլլար նոր միջոցներ ձեռք առնել:

Լաւ ազդարարուած մ'երկուք կ'արժէ, կ'ըսէ առածը:

Եւ հնարք մը խորհեր էր որ կրնար զինքը երկար ժամանակ գերծ պահել վտանգէ:

Գալով անծանօթ մարդուն, կարծիք մը յայտնելէ կամ որոշում մ'ընելէ առաջ պէտք էր գիտնալ թէ առջի գիշերն իւր չուելէն ետքն ինչ անցեր էր:

Սակայն ինչ որ ալ եղած ըլլար, վրտանգաւոր էր այն մարդը, որովհետև կը ճանչէր զինքը, կը ճանչէր դերկոմսին հետ նիւթած մեքենայութիւնը:

Իւր շիտթելովն հանդերձ, շուտով ուսումնասիրեր իր զայն:

Անհաճոյ մարդ չէր:

Կ'ըսէր ինքնիրեն թէ մարդու մը հետ, ով և ըլլար, աւելի դիւրաւ կրնար համաձայնիլ և անոր խորհրդապահութիւնը գնել, քան թէ ժիւթիւնի պէտ կնկան մը:

Երբ այս խորհրդածութիւններ կ'ընէր, և ծրագիրներ կը յօրինէր որոնց ընդլայնումը ետքը պիտի տեսնէր, փեսին գալուստն իմաց տրուեցաւ իրեն:

Վերջապէս պիտի իմանար:

Անշուշտ լուրեր կը բերէր իրեն:

Դերկոմսին դէմքը, տակաւին այլայլած ֆօսատի սպառնալիքներէն, բարիբա՛ն մը չէր յայտներ: Տիան ցնցուեցաւ բայց գիտնալով անոր կորովէ զուրկ ըլլալը, չափազանց չի վախցաւ:

—Տեսա՞ր Անթօանը, հարցուց անոր:

—Ա,յո՛ւ:

—Ի՞նչ իմացար նայիմ:

Բօլ տը Ռիչմօն պատմեց այն տեսարանը որ անցեր էր կոմսին, ժիւլ Շամպէզիի և ֆօսատի միջեւ, իրեն և կոմսուհիին մեկնելէն ետեւ:

Տիան խորին ուշադրութեամբ մտիկ կ'ընէր՝ առանց իւր կրած տպաւորութիւններն յայտնելու:

—Ուրեմն, ըսաւ, երբ դերկոմսը լըռեց, այդ մարդն ուղղամտութեամբ վարուեցաւ մինչեւ հիմա, և մեզ իսկապէս պաշտպանեց ամուսնիս վրէժխընդրութիւններուն դէմ:

—Անշուշտ: Բայց իւր գաղտնիքը պահեց և մեր գաղտնիքին տէր եղած է: Մենք չենք գիտեր իւր ով ըլլալը, բայց ան գիտէ մերը: Մանաւանդ չենք գիտեր թէ ինչ նպատակի կը ծառայէ:

«Տարակոյս չկայ թէ առանց մեծ շաչ

մ'ունենալու կարելի չէ ընել այդ մարդուն ըրածը, կարելի չէ ինքզինքը ենթարկել այն ծանր վտանգին, որով խիզախեց կոմսին դէմ:

—Ես ալ այդ կարծիքէն եմ, պատասխանեց Տիան:

—Կրնայ մեզ մատնել վաղը, ամէն բան յայտնել ամուսնիդ...:

—Եթէ ունենար այդ դիտաւորութիւնը, երէկ կը կատարէր...:

«Ինչո՞ւ պիտի ամբաստանէ կամ մատնէ մեզ՝ թող չի տալէ ետև որ մեր յարաբերութեանց ապացոյցն երեւան ելնէր:

—Ի՞նչ գիտնամ: Վրէժ առնելու համար թերեւս...:

—Ձենք գիտեր ո՛չ այդ, ոչ ալ միւսը: Իւր դէմքն, ինչպէս նաև աչերն ատելութիւն չէին արտայայտեր մեզի դէմ:

—Ստակի համար...:

—Եթէ այդ ըլլար նպատակը, մինչև հիմա կը յայտնէր:

—Այն ատեն մեզի պիտի դիմէ, ստակ պիտի ուզէ... որ և է ձեռով...: Տօն ֆիշօթի ժամանակն անցած է:

—Շատ կարելի է, ըսաւ կոմսուհին կէս ժպիտով: Թող գայ... կ'ընդունիմ:

զինքը... և կ'իմանամ ինչ սուգելը:

— Բայց թէ որ ինձի դիմէ՛...:

— Ո՛չ, ինձի կը դիմէ, պատասխանեց Տիան: Բայց եթէ քեզի դիմէ, ինձի ղրկեցէք...: Պէտք է տեսնեմ զինքը...:

Դերկոման սկսաւ մտածել թէ ինչո՞ւ համար Տիան տեսնել կ'ուզէր այդ մարդը: Ի՞նչ էր այդ վստահութեան պատճառը կամ շարժառիթը: Արդեօք գաղտնի միտք մը կամ նպատակ մ'ուներ:

Ուստի չհասկնալ կեղծելով չի պնդեց:

— Մնաց որ ոչ անուներ գիտենք, ոչ բնակավայրը, ոչ ալ ինչ ըլլալը:

— Կը գիտնանք օր մը: Այդ մարդն այնչափով չէ լմացուցած իւր գործը: Ինչ որ ալ ուզէ ընել, ինչ որ ալ յուսայ, մեզ չի տեսած չընէր...: Ուստի այդ կողմէն սպասել միայն կը մնայ մեզի...: Բան մը չենք կրնար նախատեսել, բան մը չենք կրնար արգիլել: Աւելի ստիպողականին նայինք: Ի՞նչ պէս գտար Գոսատը:

— Շատ գէշ տրամադրութեան մէջ:

— Ինձի՞ դէմ:

— Ո՛չ ճշդիւ... բայց յուզուած էր, ջիղերը գրգռուած ... և շատ գէշ վարուեցաւ ինձի հետ...:

— Միայն քեզի՞ հետ, ինձի համար ունեցած անձնուիրութիւնը տկարացած է:

— Օ՛, ոչ, պատասխանեց Բօլ զսպաւած կատաղութեամբ մը: Օրինակի համար ըսաւ ինձի որ, եթէ երբէք քեզի դժբաղդութիւն մը հասնի... զիս պիտի խեղդէ: Այդ մարդը կ'ատէ զիս... կարծես թէ չի քաշեր զիս... կը նախանձի:

Տիան ժպտեցաւ:

— Ես կը տեսնեմ զինքը և կը կարգադրեմ, ըսաւ: Հոգ մի ընէր: Վայրի գազան մ'է...: Ես միայն գիտեմ զըսպել զայն: Անհանգիստ կամ սրտատունջ չէ՞ր. յայտնուելու կամ բռնուելու վախ չունէ՞ր:

— Ոչ:

— Այդ է պէտք եղածը: Ես կը հասկընամ իւր տաղտկութիւնն և խուլ բարկութիւնը: Բայց դուն գիտցիր թէ քանի որ ես ողջ եմ, բան մը չընէր քեզի դէմ...:

Բօլ տը Ռէչմօն կէս մը միայն քաջալերուած կ'երեւէր:

— Հիմա ամուսինիս վրայ խօսինք, ըսաւ կոմսուհին:

— Ի՞նչ ըսաւ, ի՞նչ ըրաւ երէկուրնէ ի վեր, հարցուց Բօլ :

— Բան մը չըսաւ, բան մը չիմացաւ նոր, բայց երեսը կախած է ինձի դէմ, և ձեւերը փոխուած... Առ այժմ ասոր մէջ է իսկական վտանգը :

Բօլ ցնցուեցաւ :

— Կացութիւնը ծանր է այս կողմէն, շարունակեց Տիան : Եթէ հոս Փարիզ մնայ, ինձի մօտ... վտանգը մօտալուս է :

— Կը կարծե՞ս :

— Համոզուած եմ... Ապացոյցներ չունեցաւ... չունի... կրնամ տակաւին ժամանակ մը զինքը թմրեցընել, մոլորեցընել... Բայց իւր կասկածն և ուշադրութիւնը չափազանց արթընցած ըլլալով, ամենափոքր անակնկալ մ'ամեն բան կորսնցընել կ'սպառնայ... :

«Այս վիճակի մէջ, այս անդուլ լըրտեսութեան հետ կեանքն անհանդուրժելի կ'ըլլայ :

— Ի՞նչ ընելու է ուրեմն :

— Հեռացընել զինքը :

— Ի՞նչպէս :

— Երէկ չըսի՞ր ինձ թէ Ք...ի դեսպանութիւնը պարապ է կամ պիտի ըլլայ :

— Այո՛, Ք...ի կառավարութիւնը գոհ չէ մեր ներկայացուցիչէն : Զայն ետ կանչելու համար կ'ուզուի նախ տեղը զրկուելիք անձը որոշել :

— Տը Ֆէրնիք կո՞մար :

— Գէշ գաղափար չէ, ըսաւ Բօլ, բայց կ'ընդունի՞ իւր այդ մտաւորական տրամադրութեան մէջ :

— Զուգեր, բայց կ'ընդունի՞ Փառաւէր է, կը սիրէ Ֆրանսան : Թէ որ հասկըցընեն իրեն թէ հայրենասիրական մեծ պարտականութիւն մը կայ այդ պաշտօնին մէջ... կը համոզուի... մանաւանդ որ պատուական պաշտօն մ'է. զգալի յառաջդիմութիւն մը, իւր ասպարէզին պսակումը... :

— Բայց քեզ ալ հետ տանիլ պիտի ուղէ... :

— Տարակոյս չունիմ... ես ալ կը խոստանամ երթալ զինքը գտնել :

— Եւ... :

— Եւ այսպէս ժամանակ կ'ունենամ մտածելու... կրնամ անակնկալ կընձիւններ հանել... ի հարկին կ'երթամ ժամանակ մը իրեն քով կ'անցունեմ, և կը հիւանդանամ... Բժիշկները Փարիզի կամ գոնէ Ֆրանսայի օդը կը

հրամայեն ինձի...: Դուն ինձի թող...
հազար միջոց կայ ադոր համար...
կարեւորը կոմսին երթալն է:

«Անգամ մ'որ ինձմէ հեռանալով դի-
ւանագիտական կնճռոտ մեքենային մէջ
բռնուի, իւր պաշտօնին կուտայ խելքն
ու միտքը...: Իւր անձնական վախե-
րը կը խելդէ, որպէս զի իւր պաշտօ-
նին միայն զբաղի, և ցուցընէ ռամկա-
պետական նոր Ֆրանսայի թէ հին ազ-
նուպետական Ֆրանսան ընտիր մար-
դիկ ունէր, իրմէ գերազանց էր...:

—Դուն սքանչելապէս կը ճանչես
զինքը, ըսաւ Բօլ տեսակ մը զարման-
քով:

—Մարդ մը ճանչելը շատ դիւրին է,
պատասխանեց Տիան իւր այն սատա-
նայական ժպիտով, զոր մտերմութեան
մէջ միայն կը գործածէր:

—Բայց պէտք է որ անուանեն զին-
քը այդ դեսպանութեան:

—Կ'անուանեն եթէ վայրկեան մը չի
կորսնցընենք: Դուն հիմա գնա Բ...ի
դեսպանին և խօսէ տը Ֆէրնիք կոմ-
սին համար, ամէն ջանք ընելով որ
ստանաս հաւանութիւնը: Գնա տես
նաև արտաքին գործոց նախարարին
քարտուղարն, և յետոյ...:

Երկու երեք անձերու անուն տուաւ:

—Անգամ մը որ իւր թեկնածու-
թիւնն առաջ դրուի, շարունակեց Տի-
ան, մեր ձեռքն եղած ամէն ազդե-
ցութիւնները գործածելով՝ յաջողու-
թիւնն աներկբայելի է: Միայն թէ ես
չեմ կրնար երեւնալ այս գործին մէջ:
Դուն միայն պիտի աշխատիս:

Եւ տակաւին կէս ժամու չափ ման-
րամասն հրահանգներ տուաւ այն խո-
րամանկ հանդարմտութեամբ որ կարգ
մը կանանց վրայ կը փայլի գերազան-
ցապէս:

Մեքենայութեան խնդիրներու մէջ
գրեթէ ամէն կանայք զարմանալի սը-
րամտութիւն մ'ունին, որ միշտ կը
յաջողի:

—Պիտի հասկցընես, ըսաւ խօսքը
լմնցընելով, թէ տը Ֆէրնիք կռնը
ժանրէն պիտի քաշէ, չուզել պիտի
կեղծէ... բայց սրտէն կը բաղձայ այդ
պաշտօնին, և թէ երբ չի տրուի իրեն,
կրնայ հակառակութեան սկսիլ նախա-
րարութեան դէմ, ինքզինք ընտրելի
ներկայացնել ձերակոյտի ժողովին, ո-
րուն շատոնց ի վեր կրնար անդամակ-
ցիլ, եթէ ուզէր:

«Այս կէտերն եթէ յաջողիս լաւ հաս-

կցընել, Յրանսական կառավարութիւնն
ամէն ջանք կ'ընէ զայն իրեն յարե-
ցընելու համար, և կը տեսնես որ ըս-
տիպելով ընդունիլ կուտայ այդ պաշ-
տօնը »

Երբ Բօլ տը Ռիչմօն մեկնեցաւ կոմ-
սուհիին քովէն, մատին ծայրովը գի-
տէր, իւր բոլոր ըսելիքն ու ընելիքը,
և գէմքին վրայ յայտնի զուարթու-
թիւն մը կը տեսնուէր:

Տը Ֆէրնիք կոմսին հեռանալովն ա-
մենէն մեծ վտանգը կը վերնար:

Այս էր կոմսուհիին այ կարծիքը, որ
խորեւ խորամանկ կին՝ մտածեր գտեր
էր ամենէն մերձաւոր վտանգին առաջն
առնելու յարմարագոյն միջոցը:

Կը մնար ֆօսատ:

Իւր ձեռքին մէջն էր ան, գիտէր այդ
անկատար ուղեղն արբեցնելու և մին-
չեւ անձնուիրական խենդութեան մղե-
լու միջոցը, եթէ պարտասած կամ սըր-
տաբեկ ըլլար:

Գալով անծանօթ մարդուն, կ'սպասէր
անոր:

Աներկրայ էր որ մէկ օրէն միւսը պի-
տի գար:

Եւ այն ժամանակ... կը մտածէր ը-
նելիքը:

Տիան տը Ֆէրնիք՝ նոյն անդիմադ-
րելի թովչուհին չէ՞ր միթէ:



ԲՐԷՆՊՈՐՆ ԼԱԹ ԼՈՒԱՅՈՂ ԵՒ ՊԱՐՏԻՉՊԱՆ

Բրէնպօրն նախաքննիչ դատաւորին
քովէն ելլելուն պէս իւր տունը գնաց,
փոքրիկ յարկ մը Տօֆին փողօցին մէջ,
ուր ժողէֆին անունով պառաւ տնտե-
սուհիի մը հետ կ'ապրէր:

Իւր պաշտօնը ներած ժամանակ ճաշն
իւր տունը կ'ընէր, ի մեծ ուրախու-
թիւն ժողէֆինի, վասն զի շատ ան-
գամ իւր տէրը տունէն դուրս կը մը-
նար:

Իւր հաւանական վերադարձը Բրէն-
պօրն առաւօտուն ծանուցած ըլլալով,
ճաշը պատրաստ գտաւ:

Սկսաւ ուտել իւր սովորութեան հա-
մեմատ լոխն և արագ, անձնատուր այն
մտածութեանց զոր կը ներշնչէր իրեն
Բիէնֆիթի ոճրին քննութեան գործը:

Ամէնէն աւելի մտահոգութիւն պատ-
ճառող կէտը բուն գործը չէր, անկէ
աւելի կնճռոտները լուծած էր. այլ Դա-

ն'էլ տը Բէօրի վարանտ, շիտթ գիր-
քը, որ չէր վրիպած իւր սուր հոտա-
ռութենէն, ինչպէս որ արդէն տեսանք,
և այս էր իւր առանձին մտածութեան
նիւթը:

— Կարծես թէ այս գործը կը ձանձ-
րացընէ... կամ անհանգիստ կ'ընէ զին-
քը կ'ըսէր մաքէն Բրէնպորն՝ խոշոր պա-
տանները բերնին մէջ խոթած միջոցին:
Ի՞նչ է պատճառը: Պ. տը Բէօր երի-
տասարդ է: Թէև արդէն յարգ ու հա-
մարում վաստկած է իւր հանճարովն ու
նրբամտութեամբ, տակաւին պէտք ու-
նի զինք ցուցընելու: Գործ մը պէտք
էր հաճոյք պատճառէր իրեն... և Բի-
էռֆիթի դէպքն ալ Բեդեյի Գրծ մ'է
նախաքննիչ դատաւորի մը համար...:
Ի՞նչ է ուրեմն իւր զգուշաւորութիւն-
ներուն պատճառը:

Բաւական խորհելէ ետև Բրէնպորն
յանկարծ ձեռքը ձակտին զարկաւ: Գա-
ղափար մը ծներ էր մաքին մէջ:

— Ապո՞ւշ ես պարո՞ն Բրէնպորն, ը-
սաւ ինքնիրեն. կը ծերանա՞ս, կը ցըն-
դի՞ս, ի՞նչ ես եղեր վերջապէս, որ ա-
մէնէն պայծառ լոյսը չի զարնէր աչ-
քիդ:

«Ի՞ր գիտաւորութիւնները քեզ բուն
ճամբուն վրայ պէտք էին դնել:

«Ի՞նչ է խնդրոյն նիւթը:

«Մանկաբարձուհիի մը, մանաւանդ
ծածուկ տղաբերք կատարող մանկա-
բարձուհիի մ'սպանութիւն:

«Շատ մարդիկ, ընկերութեան ամէն
դասակարգերէ, գործ ունեցած են ա-
նոր հետ...:

«Հրապուրանք, շնութիւն, յղութիւն,
և անոնց հետեանք եղող ծննդաբերու-
թիւն ամէն տեղ կ'ը տեսնուին, մանա-
ւանդ բարձր դասակարգերու մէջ, ուր
կը պարտկուին այդ բաները... ան-
շափ աւելի խնամով, որչափ աւելի
պէտք կենայ ակնածաւոր զգուշու-
թեան աշխարհի առջև... մանաւանդ
երբ պաշտօնական դիրք ունեցող մար-
դիկ են... օրինակի համար դատաւոր
են, և ոճիրները պատժելու և առաքի-
նութիւնը յաղթապան փայլեցնելու
պաշտօնն ունին:

Բրէնպորն ժպտեցաւ, և իւր մանր
աչերը կայծեր պճլտացին:

«Շատ հաւանական էր որո՞ւնիէլ տը
Բէօր ալ այդ մանկաբարձուհիին դի-
մած ըլլայ իր մէկ երիտասարդական
խենթութիւնը պարտրկելու: Անձամբ

գեղեցիկ է... Աչերէն յայտնի է թէ
խանդավառ բնութիւն մ'ունի, բայց
սիրուհի ունենալը մարդ չէր գիտեր:

«Կ'երևի թէ ունի եղեր, և ապացոյցն
ալ այս է թէ շատ կանոնաւոր կեանք
վարելու երևոյթ ունի՝ հակառակ իւր
տարիքին և եռանդուն ու զգացիկ
բնաւորութեան... զոր յաճախ նշմա-
րած եմ...»

«Հետեւաբար յարարելութիւն ունե-
ցած է օրիորդ Պոնֆօայի հետ... և
կը վախնայ որ քննութիւնն երեւան կը
հանէ...»

«Այս է ահա գործը:

«Տարակոյս չի կայ:

«Մանկաբարձուհիին անունը գիտէր-
քանի մ'անխոհեմ բռտեր թռան բեր-
նէն... նոյն իսկ տանը մէջ... Լսողը
բնակոնաբար կը մակաբերէր թէ Պ.
տը Քէօր կը ճանչէր զայն: Ասկէ զատ
վախ ունէր խուզարկութիւններէն...
և գոհ ըլլալ կը թուէր երբ բան մը
չէր գտնուեր...»

«Այս առաւօտ իսկ, այն օրիորդ
կառնիէն... որ բարձր դասակարգէ
կ'երեւէր, թէեւ ես չի տեսայ երեսը,
որովհետեւ խնամով ծածկած էր, և
այնչափ կանուխ զինքը տեսնելու կու-
գար. որչա՞փ յուզեց զինքը՝ երբ ա-

նունը արուեցաւ իրեն...»

«Կը վախնայ որ իւր փոքրիկ մե-
քենայութիւնը կը յայտնուի:

«Կն՝ճակն. պարսնի՛ն միշտ: Կինը
փնտրեցէ: Ուրիշ բան չկայ:»

Բրէնպորն մտածեց վայրկեան մը:

— Արդ, քանի որ այսպէս է, ինչպէս
որ իրաւունք ունիմ կարծելու կամ մա-
նաւանդ հաւատալու, ինչո՞ւ վարպե-
տութիւն ծախել կ'ուզէ ինձի: Ուստի
պէտք է որ զօրեղապէս գործեմ, բայց
խոհեմութեամբ... պարագաները թող
որոշեն իմ ապագայ ընթացքս: Առ-
այժմ արհեստս ի գործ դնեմ...
Գործը կը շփոթի ու կը կնճռտի առ-
այժմ, բայց՝ շատ չանցած՝ յստակ
պիտի տեսնեմ:

Նախաճաշը լմացուցած ըլլալով.

— Օ՛ն, երթամ, ըսաւ ինքնիրեն,
ոտքի վրայ ելնելով:

«Չուանին գործը կայ, բայց հիմա
ժամանակը չէ: Անդիէն պէտք է սկը-
սիլ:»

Ժամ մը ետքը Բիէնֆիթ հասաւ և
ուղղաթի ոստիկանութեան պահականո-
ցը գնաց:

Տասնապետը՝ դրանը մէջ կանգնած՝

կը խօսէր իւր մարդոցմէ մէկուն հետ :
— Դուք հո՞ս, պարո՞ն Բրէնպորն, գոչեց, արդեօք նոր բա՞ն մը կայ երէկուրնէ ի վեր :

— Բնաւին, սիրելի՛ տասնապետս, ըսաւ Բրէնպորն սեղմելով անոր ձեռքը զոր իրեն երկնցուցած էր : Կուգամ ընդհակառակն՝ իմանալու թէ դուք կրցի՞ք քանի մը նշան կամ հետք գտնել, որք կարենան լոյս մը տալ ինձի :

— Մինչեւ հիմա ո՛չ, կատարեալ հանդարտութիւն : Այս առտու քանի մը դուռ զարկի, քանի մը տեղեկութիւն ձեռք անցունելու համար, որպէս զի գատարանին հազորդեմ, բայց չի կրցի բան մ իմանալ :

« Կը յիշէ՞ք, պարոն Բրէնպորն, երէկուան ձեզի ըսածս. աւասիկ գարշելի գործ մը որ մեզի բուրդ գզել պիտի տայ :

— Առանց հաշուելու անակնկալ յայտնութիւնները որ կը պահէ մեզի, մըրմուսց Բրէնպորն իրեն համար, հանդերձ իւր լուին ժպիտովը :

« Բայց բան մը հարցընեմ, ըսաւ քրածր ձայնով :

— Հարցուցէք :

— Փիւսթին Պօնֆօա լուացարարուհի մը պէտք էր ունենար հոս :

— Հաւանական է... բայց չեմ ճանչեր :

— Շատ լուացարարուհիներ կա՞ն Բիէսթիթի մէջ :

— Երեք կամ չորս :

— Պարեմն կրնանք հարցնել անոնց : Նախ սկսինք հոս մօտը գտնուողներէն :

— Ես ալ հետեւինիդ գամ՝ ձամբանցուցընելու համար :

Հարիւր քայլի չափ երթալէ ետեւ կանգ առին լուացարարուհիի մը խանութին առջև, որուն գործաւորուհիները՝ ձերմակ քոթանակներ հագած ու թեւերնին սոթտած կ'աշխատէին բարձրածայն կարկաչելով :

— Հոս է, ըսաւ տասնապետը :

Եւ ներս մտաւ. Բրէնպորն ալ ետեւէն : Գործաւորուհիները տեսնելով տասնապետը՝ քաղքենիի զգեստ հագած անձանօթ մարդու մը հետ, խկոյն լըռեցին և զարմացմամբ անոնց նայիլ սկսան :

Չարպետուհին որ ձերմակեղէն կը համբէր կռնակը դրանը դարձուցած,

այս յանկարծական լռութեան պատ-
ճառն հասկնալու համար ետին նայե-
ցաւ ուսին վրայէն :

—Օ՛, դուք էք, տասնապետ, գոչեց
խնդալով, որ այս շաղակրատներուն
կտուցը կը փակէք :

—Այնպէս կը թուի, տիկին Մար-
թօս, բայց անհանգիստ թող չըլլան
անոնք... մեր գործն անոնց հետ չէ :

—Ինձի հետ է ուրեմն :

—Այո՛, տիկին, ըսաւ Բրէնպորն
քաղցրութեամբ, պարզ տեղեկութեան
մը համար :

—Հաճութեամբ, պարոններ, ի՞նչ
բանի վրայ :

—Նախ ձեր խա՛նութին ներսի կողմը
գանք, ըսաւ տասնապետը :

Տիկին Մարթօս, որուն հետաքըլ-
քութիւնը կ'արթննար, ներս տարաւ
երկու մարդիկը փոքրիկ մութ սենեակ
մը, և ինքն ալ ներս մտնելով փակեց
ապակեւոր դուռը :

—Ի՞նչ է գործը, ըսաւ տասնապե-
տին առջեւը կենալով, բռունցքն ազ-
դրեցուն վրայ :

—Ժիւսթին Պոնֆօայի համար է :

—Ա՛, եւ ի՞նչ կ'ուզէք իմանալ այդ
տարաբաղդ կնոջ վրայ :

—Պարզապէս սա թէ, ըսաւ Բրէն-
պորն, իւր ճերմակեղէններն այս գե-
ղին մէջ լուալ կուտար, ո՞վ էր իւր
լուացարարուհին :

—Մինակ ա՛յդ է իմանալ ուզածնիդ :

—Այո՛ :

—Ուզդակի վրան կ'իյնաք, պարոն-
ներ, ես կը լուայի խեղճին ճերմակե-
ղէնները :

—Շատ լաւ, ըսաւ Բրէնպորն ձեռ-
քերը շփելով : Թերեւս կրնաք արդա-
րութիւնը լուսաւորելու նպաստել : Ես
ապահովութեան պաշտօնատար եմ :

Տիկին Մարթօս՝ աչերը խոշոր բա-
նալով Բրէնպորնի նայեցաւ :

—Եթէ կարենայի ո՞ճիրը գործող ա-
ւաղակները ձեռք ձգել տալու օգնել,
հաւանական էք, պարոն, երջանիկ կը
համարէի գիտ : Ա՛հ, թշուառականնե-
րը... կը յուսամ որ կը գլխատուին...
և ես պիտի երթամ տեսնելու : Այն օ-
րը պիտի գոցեմ խանութս, և արձա-
կուրդ տամ գործաւորուհիներուս :

Բրէնպորն մտիկ ըրաւ հանդարտու-
թեամբ, և յետոյ հարցուց :

—Կ'երթայի՞ք ժիւսթին Պոնֆօայի
տունը :

—Օ՛, ո՛չ: Անոր տունը չէին մտներ այսպէս...: Վերջին աստիճան ծածկասէր էր: Անգամ մը միայն մտայ իր տունը... երեք տարիի չափ կայ:

—Ճերմակեղէններն ո՞վ կը բերէր կը տանէր:

—Ինքը:

—Ձէ՞ք գիտեր ի՛նչպէս մարդիկ կ'ընդունէր իւր տունը:

—Այսինքն երբէք տեսած չեմ... բայց բարձր դասակարգէ մարդիկ պէտք էին ըլլալ. ճերմակեղէններէն յայտնի էր:

—Դուք խելացի կին մ'էք, տիկին Մարթօա. ի՞նչ մասնաւորութիւն ունէին այդ ճերմակեղէնները:

—Նախ նրբութիւն. յետոյ բանուած թուանշաններ...:

—Սկզբնասառեր անշուշտ: Ձէ՞ք յիշեր անոնց մէկ երկուքը:

—Իրաւ որ չեմ յիշեր: Կը հասկընաք հարկաւ որ աչքի չեն զարներ շատ:

—Իրաւ է: Բայց ժիւսթին Պօնֆօա տետրակ մը կամ տումար մը չունէ՞ր:

—Անշուշտ:

—Ձեր քօֆին էր:

—Այո՛...բայց կարծեմ թէ վերջին

անգամ գալուն, առաւ տարաւ...: Սակայն բան մը չէք կրնար իմանալ անկէ: Միայն բերուած սարուած ճերմակեղէններուն անուններն ու թիւերը կը գրուէին մէջը, այսչափ շտապիկ, այսչափ ծածկոյթ, այսչափ թաշկինակ, ևն...:

—Աղէկ գիտէ՞ք այդ տումարն իրեն տուած ըլլալնիդ:

—Կը կարծեմ, բայց ստուգեմ:

Եւ դուռը բանալով՝

—Ժիւլէ՛թ, կանչեց:

—Հրամայեցէք, տիկին, պատասխանեց ձայն մը:

—Պօնֆօայի տետրակը մեր քօֆին է:

—Այո՛ տիկին, հոս է: Մոռցաւ անունը...:

—Բերէք ինձի:

Վայրկեան մը շանցած, ժիւլիէթ բերաւ տետրակը:

Բրէնպորն արագ նայուածք մը նետեց անոր վրայ, յետոյ զրպանը խոթեց:

—Ձէ՞ք կրնար ուրիշ տեղեկութիւն մը տալ ինձի, հարցուց տիկին Մարթօայի:

Հուացարարուէին մտածել սկսաւ:

— Կեցի՛ք, գոչեց յանկարծ ճակարհն զարնելով :

— Ի՞նչ կայ :

— Ասկէ երկու ամիսի չափ առաջ՝ կնկան շապիկ մը լուացեր տուեր էի իրեն . . . բայց վրաս արատ մը մնացած ըլլալով՝ ժիւսթին նորէն ինձի բերաւ որ նորէն լուամ : Այն շապիկը ետքը մոռցուելով հոս մնացած է . . . կը յիշեմ : Կ'ուզէ՞ք տեսնել :

— Ի նչպէս չեմ ուզեր :

Բրէնպորնի մանր աչերէն փայլակ մը ցայտեցաւ :

Տիկին Մարթօա վազեց դարան մը բացաւ, և քանի մ'երկվայրկեան խուզարկելով, արդուկած շապիկ մը զըտաւ բերաւ :

Բրէնպորն մէկէն առաւ զայն կնկանը ձեռքէն :

Նուրբ պաղիսդէ շապիկ մ'էր, գրեթէ թափանցիկ, վիզն և ուսերը բաց և տանթեխներով պճնազարդ :

— Օ՛, ըսաւ Բրէնպորն քեքեւելով, ահաւասիկ մեծաշուք տիկինի մը ձերմակեղէն . . . կամ տարփական ժամադրութեան մը շապիկ . . . : Եթէ լեզուսնենար, զարմանալի բաներ պիտի պատմէր :

Այս խօսքին վրայ տասնապետը խոր քրքիջ մը բրցուց, մինչ լուացարարուհին ալ աչքը կը քթթէր իբրեւ հասկըցող կին :

— Ահաւասիկ Ֆ. մը, և կոմսի կամ դերկոմսի մ'ալ թա՛գ : Տակն ալ թիւ 4 . . . : Ե՞րբ յանձնուեցաւ ձեզի այս շապիկը :

— Վեց շաբաթի կամ երկու ամիսի չափ կայ :

— Հաճեցէք թուղթի մը մէջ փաթթել : Հետս պիտի տանիմ :

Երբ դուրս ելաւ տասնապետին հետ, Բրէնպորն Ֆիւլտի երգին եղանակը սուլել սկսաւ դեղնած ահաւներուն մէջէն :

— Պատուական գաղափար մ'ունեցաք, ըսաւ անոր տասնապետը :

— Արուեստին այբուբենն է այս, պատասխանեց Բրէնպորն համեստաբար : Բայց կրնայ օգտակար ըլլալ . . . թէև շատ անուններ Ֆ. ով կ'սկսին և առաջին ցոփուհին ալ կրնայ շապիկին վրայ ազնուականի զինանշան բանեցնել, իւր յաճախորդը շմորեցնելու համար :

« Հիմայ ժիւսթին Պօնֆօայի տանը բանլիքները պիտի առնեմ : Ահաւսիկ

նախաքննիչ դատաւորին հրամանա-
գրերը:»

Եւ Դանիէլ տը փէօրէն ստորագրու-
ած թուղթ մը տուաւ տասնապետին:

—Ուրեմն վերադառնանք պահակա-
նոցը, որպէս զի յանձնեմ ձեզի:

Պահականոցը հեռու չէր:

—Գործ ունի՞ք, հարցուց Բրէնպորն
տասնապետին, երբ բանլիքներն իրեն
տուաւ:

—Առ այժմ ազատ եմ, եթէ պէտք
ունիք ինձի:

—Ուրեմն հետս եկէք:

Եւ երկուքը մէկէն շտկուեցան դէպի
Ժիւսթին Պօնֆօայի տունը, և լռու-
թեամբ ներս մտան:

Բրէնպորն բացաւ արտափեղկերն և
նորէն կանոնաւորապէս աչքէ ան-
ցուց բոլոր կահերն ու պահարաննե-
րը, զննելով պատերը, տախտակամած-
ները, ձեղունները, գետինները, նոյն
համբերատար և մանրակրկիտ ուշադ-
րութեամբ, որով բժիշկ մը կը զննէ հա-
րուստ յաճախորդի մը հիւանդութիւնը:

Բայց առաջին անգամին պէս իւր բո-
լոր խուզարկութիւններն անպտուղ ե-
զան:

—Կը մնայ ձեզնամէջն և վարի նկու-
ղը, ըսաւ տասնապետը:

—Արդէն նայուեցան... բայց նորէն
նայինք, ըսաւ Բրէնպորն, բան մը պա-
կաս պէտք չէ ընել, ոչ ալ յուսահա-
տիլ:

Նկուղին մէջ ամէն բան քննուեցաւ,
քանի մը տակառներու յատակը խոր-
տակուեցաւ, և Բրէնպորն պատերուն և
կամարին քարերն անգամ զննեց:

Նոյն քննութիւնն եղաւ նաև ձեղնա-
յարկին մէջ: Բայց ի զուր:

—Սայլատունն ալ նայինք, ըսաւ
Բրէնպորն բակն ելած ժամանակին:

Եւ երկուքը մէկէն հոն գացին:

Սայլատունը գոցուած չէր:

Բայց քանի մը պարտիզպանական
գործիքներէ, ծաղկի թաղարներէ և
չոր խոտերէ գատ բան չի կար:

Անկէց ելան պարտէզը, և ամէն մէկ
ածունները քննեցին:

Այս կերպով հասան մինչև այն ծակին
քով, որ առջի օրը մէջի սնտուկը հա-
նելով բաց մնացած էր:

Առասիկ զարմանալի բան մը, ըսաւ
Բրէնպորն:

—Ի՞նչ կայ հարցուց տասնապետը
մօտենալով:

Բրէնպորն ձեռքը ծակին երկնցընելով .

—Նայեցէք, ըսաւ :

—Ճանճե՛ր, գոչեց տասնապետը :

—Անթիւ որդի ճանճեր, որ ծակին մէջ կը վիտան :

—Եւ հո՛ւաը :

—Վազեցէք սայլատունը, հոն բա՛հ մը տեսայ ես, բերէք :

Տասնապետը վազեց բերաւ բա՛հը :

Բրէնպորն առաւ զայն տասնապետին ձեռքէն :

—Կեցիք, ըսաւ այս վերջինը . նախ պէտք է հեռացնել ճանճերը, կրնան ամբուսի թոյն ունենալ :

—Իրաւունք ունիք : Քիչ մը յարգայրել բաւական է . . . : Սայլատունին մէջ շատ կայ :

Յարգը բերուելով, Բրէնպորն ծակին մէջ թափել տուաւ զայն, և լուցկի մը վառելով բռնկցուց :

Ճանճերը մէկէն վեր թռան՝ կատաղի բզզիւնով մը, առանց շատ հեռանալու, և նորէն վերադառնալու սպառնալիքով :

Բայց Բրէնպորն արդէն գործի ըսկըսեր էր՝ բա՛հը հողին մէջ վարսելով ու պեղելով :

Երբորից անգամուն զգաց որ բա՛հը կակուղ բանի մը մէջ կը մտնէր . . . :

ձիգ մ'ընելով՝ բա՛հին հետ բուրդէ կտաւի կտոր մը դուրս հանեց, որուն վրայ որդեր կը վիտային :

65

ԵՐԿՐՈՐԳ ԳԻՍՎԸ

Բրէնպորն առանց խօսք մ'արտասանելու, առանց զգածուելու այն սոսկալի գարշահոտութենէն որ կը բուրբրբաց փոսին մէջէն, բա՛հը մէկդի նետեց և ծունդի վրայ գալով՝ մէկ ձեռքովը բուրդէ կտաւին կտորը բռնեց, միւսովն ալ կակուղ չողը մէկդի ընելով, իրեն քաշեց փաթթած ծրար մը, որուն մէջէն փտած դիւակի մը հոտը կը ժայթթէր :

Տասնապետը խորին ուշադրութեամբ կը դիտէր այս անակնկալ գիւտը, բայց անհանդուրժելի գարշահոտութենէն զզուելով հեռու կը կենար :

Բրէնպորն ծրարը հողին մէջէն հանելէ ետեւ սկսաւ բռնալ :

Սոսկալի տեսարան մը պարզուեցաւ իւր և տասնապետին աչքին առջեւ :

Արդէն նեխած և հազիւ ճանաչելի տղու մը մարմին էր :

—Դիտ'ի մը, գոչեց տասնապետը :

—Անշո՛ւշտ, ըսաւ Բրէնպորն պան-
ժանօք: Միտքէս կ'անցնէր որ մանկա-
բարձուհիին պարտէզն ըսած չէր իւր
վերջին խօսքը:

—Այդ գիւտն աւելի կը կնճռոտէ
այս գաղտնախորհուրդ գործը:

—Կամ կը բացատրէ, մրմուսց Բրէն-
պորն իւր դեղնած ախտանբրուն մէջէն
լուիկ ժպիտով մը:

—Երկու ոճիր, կրկնեց տասնապետը:

—Որոնցմէ մին անշուշտ հետեւանքն
է միւսին:

—Ի՞նչ ըսել կ'ուղէք ատով:

—Ըսել կ'ուզեմ թէ, հաւանաբար
այս դիակին հոս գանուելուն համար
էր որ սպաննուեցաւ ժիւսթին Պօն-
ֆօս:

—Հաւանական է: Բայց ի՞նչ պիտի
ընենք հիմա:

—Դուք հոս պիտի կենաք այս գիւ-
տիս քով, ես ալ Փարիզ պիտի վազեմ
իմացնելու որու որ պէտք է:

«Բայց նախ այս մնացորդները տա-
նինք տանը մէջ դնենք, ես ալ շուտով
լուացուիմ և յառաջիկայ կառախու՛րին
հասնիմ:»

Երկու մարդիկն իսկոյն վերցուցին

իրենց չարաշուք բեռը, տարին տանը
գետնայարկի սենեակներէն մէկուն
մէջ դրին, և Բրէնպորն երթալու պատ-
րաստուեցաւ:

—Հիմա, ըսաւ տասնապետին, կա-
յարանը գնացած ժամանակս պիտի ի-
մացնեմ պահականոցին, որպէսզի շու-
տով մէկ կամ երկու մարդ զրկեն ձե-
զի, որպէս զի մէկը այս փոսին առջեւ
պահապան դնէք, իսկ դուք կամ անոր
ընկերն ալ այս դիակին վրայ հսկէք:
Քառորդ մ'ետքը Բրէնպորն Փարիզ
կ'երթար շոգեկառքով:

—Օ՛, կ'ըսէր ճանբան, կը կարծեմ
որ օրս ապարդիւն չի կորսնցուցի:

«Եթէ միայն լուացարարին ինձի
յանձնած շապիկը գտած ըլլայի, դարձ-
եալ կրնայի գոհ ըլլալ ժամանակիս
գործածումէն:»

Այս սկզբնատառն և բանուած թա-
գը, եթէ աւանակ չեմ, զիս պիտի ա-
ռաջնորդեն ժիւսթինի յաճախորդուհի-
ներէն գոնէ մին գտնելու... անոնց-
մէ մին, որուն ներկայութիւնը պէտք
է մօտէն զուգադիպի այդ սպաննուած
կամ մեռած տղեկին ծննդեան թուա-
կանին:

պահելով քննութեան այդ մասը շարունակել:

— Շատ կարեւոր լուր մ'է այդ, ըսաւ ապահովութեան պետը: Գնացէք անմիջապէս գտէք Պ. Դանիէլ տը ֆէօրը, դեռ իւր սենեակն է, և իմացուցէք իրեն: Ես ալ երթամ ընդհանուր դատախազը տեսնեմ, և ամէնս մէկէն հիմա Բիէռֆիթ երթանք: Ժամանակ չի կայ կորսնցընելու... նկատելով մանաւանդ դիակին փտած ըլլալը, զոր օդին հետ շփումն աւելի պիտի փութացընէ:

Չայս ըսելով ապահովութեան պետն և իւր պաշտօնեան անմիջապէս դուրս ելան, երթալ գտնելու համար իրենց տեսնելու մարդիկը:

Բրէնպորն, Պ. Դանիէլի տը ֆէօրի գրասենեակը մտնելէ առաջ, գնաց ոստիկաններու սրահին ծայրը դարանի մը մէջ դրաւ Փ. Նշանագիր կրող շապիկին ծրարը, և բանլիքը հանեց գրպանը դրաւ:

Չայս ընելէ ետեւ գնաց նախաքըննիչ դատաւորին ներկայացաւ:

Պ. Դանիէլ տը ֆէօր՝ Չայն տեսնելուն պէս՝ թեթեւ մը պոստեց յօնքերը:

Բրէնպորն վտանգ կը ներկայացընէր Ֆէրնանտի համար, և հակառակ իւր պարտքը կատարելու հաստատ որոշման, Դանիէլ չէր կրնար չի ցնցուիլ այդ ոստիկանին առջեւ, որուն եռանդէն և ահեղ կորովամտութենէն կը վախնար:

— Բա՞ն մ'ունիք ինձի իմացընելու, հարցուց անոր:

— Այո, պարոն, ապահովութեան պետին կողմէ կուգամ իմացընել ձեզ թէ՛ անմիջապէս Բիէռֆիթ երթալնիդ հարկ է:

— Բիէռֆիթ, կրկնեց Դանիէլ, նոր քա՞ն մը կայ:

— Այո՛, նորածին տղու մը դիակը գտայ:

— Բիէռֆիթի՞ մէջ: Ուրիշ գործ մ'է ուրեմն:

— Ոչ, պարոն նախաքըննիչ դատաւոր, Ֆիւսթին Պօնֆօայի պարտէզին մէջ հազին մէջէն հանեցի երկու ժամու ջագն առաջ:

— Ի՞նչ կ'ըսէք, պարտէզին ո՞ր կողմէն:

— Ոճրագործներուն զննած սնտուկին տակէն:

Դանիէլ ապշած երեւոյթ մ'առաւ
այս յայտնութենէն և սիրտը դող ե-
լաւ իւր զաւակը միտքը բերելով...
որ քանի շաբաթներ այդ ոճիրներու
առան մէջ կեցած էր :

— Սոսկալի՛ բան, գոչեց վերջապէս :
Ըսել է թէ այդ կինը գաղտնի ծննդա-
բերութիւնները բաւական չսեպելով,
մանկասպանութիւններ՝ ալ կ'ընէ ե-
ցեր... :

— Ինքը կամ յաճախորդուհիներէն մին,
պատասխանեց Բրէնպորն պաղուծեամբ :
Տարակոյս չի կայ որ այս առաջին ո-
ճիրը բաւական լաւ կը բացատրէ երկ-
րորդին ալ ինչ պատճառաւ գործուիլը :

«Կը յիշէք, պարոն նախաքննիչ
դատաւոր, մեր այն ենթադրութիւնը
թէ մանկաբարձուհին սպաննուեր էր
որպէս զի յաւիտեան լուռ մնար... :

— Այո՛, և ձեր այդ դիւտն իրաւունք
կուտայ այն ենթադրութեան... ես ալ
համամիտ եմ : Վերջապէս պէտք է եր-
թալ ստուգել զայդ առանց վայրկեան
մը կորսնցընելու :

Եւ Դանիէլ տը Բէօր ոտքի վրայ ե-
լաւ խիստ յուզուած :

Եւ իրաւունք ունէր :

Երբ գրեթէ տարակոյս չէր մնար թէ
մանկաբարձուհին սպանութեան շար-
ժառիթը գողութիւն չէր, երբ ման-
կասպանութեան գործ մ'ալ կը խառ-
նուէր հետոյ գաղտնի ծննդաբերութիւն
մը, ենթադրելով թէ տղան մեռած
ծնած ըլլար, պէտք կ'ըլլար քննութիւ-
նը իւր վախցած ձեւին տակ կատարել
որ կրնար գործը մինչեւ Ֆէրնանտի
հասցընել :

Քանի մը վայրկեան ետքը, Դանիէլ
տը Բէօր, ապահովութեան պետը,
ընդհ. դատախազը, բժիշկ մը, Բրէն-
պորն և քանի մ'ալ ուրիշ ստիկան
չոգեկառք նստան Բիէնֆիթ երթալու
համար, ուր արդէն մեք ալ անգամ
մը գացինք իրենց հետ :

Քանի առաջ կ'երթար այս գործին
մէջ, Ֆէրնանտի տարփածուին հնչնու-
քը կ'աւելնար :

«Ա՛հ, երանի թէ, կ'ըսէր, Ֆէրնանտ
երբէք ոտք կոխած չըլլար այդ անիծ-
եալ տան մէջ :

Եւ սակայն մինչեւ մէկ աստիճան
բարեբաղդութիւն չէ՞ր որ խնդրին
լուծումն յառաջ տանելու պաշտօնն ի-
րեն յանձնուած էր, հակառակ իւր

խղճին մէջ մղուած պայքարին, ուր դատաւորի պարտականութիւնն և մասնաւոր մարդու շահերն իրարու դէմ կ'ելնէին:

Բիէլֆիթի մէջ նոր քննութիւնները փութոյ պնդութեամբ կատարուեցան:

Օրէնսգէտ բժիշկը յայտարարեց թէ տղեկն արական սեռէ էր, և թէ ամիս ու կէսի շափ անցած էր մեռնելէն ի վեր: Տարիքն ալ հաւանաբար մէկ կամ երկու օր:

Ապրե՞ր էր, բռնի՞ սպանուեր էր: Կանոնաւոր, մանրամասն, կատարեալ դիագնոստիկն մը միայն կրնար ըսել, եթէ մարմինին քայքայման վիճակը ներէր:

Բայց այդ դիագնոստիկնն ալ դիւրանին մէջ միայն կրնար պէտք եղած կերպով կատարուիլ. ուստի հրաման տրուեցաւ որ անմիջապէս հոն փոխադրուի փոքրիկ դիակը:

Յետոյ գացին այն փոսին քով ուստից հանուած էր, և Փարիզէն եկող ոստիկանները նորէն փորեցին գայն և հողը տակն ի վրայ ըրին Բրէնպորնի հրամանին տակ, ստուգելու համար թէ ուրիշ դիակներ կամ պահուած բաներ

կայի՞ն, որք կարենային առաջնորդել արդարութեան ընելիք խուզարկութիւններուն:

Բայց բան մը չի գտնուեցաւ:

— Պէտք է այս պարտէզին ամբողջ հողը տակն ի վրայ դարձունել, ըսաւ այն ժամանակ ապահովութեան պետը:

— Ես ալ պիտի խնդրէի ձեզնէ, բնաւ Բրէնպորն, և այդ կարեւոր գործողութեան հսկելու հոգը ես վրաս կ'առնեմ: Խուսք մը հողակիր գտնեմ այս կողմերէն, և մաս մը հող չի թողում առանց խուզարկութեան, որպէս զի եթէ ուրիշ դիակներ ալ թաղուած կան, երեւան ելնեն:

Տեղեկագիր պատրաստուեցաւ, և Դանիէլ չկրցաւ առանց դողալու տեսնել թէ դիակը գտնուած մանկիկին ծնունդն ու մահը, քանի մ'օր տարբերութեամբ կը զուգադիպէին Ֆէրնանտի հոն գտնուած օրերուն:

Այս վերջին ձեւակերպութեան կատարուած միջոցին, Բրէնպորն, արմուկը վառարանին վրայի մարմարին յեցած կը մտածէր:

Մանկարարձուհիին ննջասենեակին մէջ գումարուած էին:

Մնօտը ձեռքերուն մէջ, աչերը դիմացի հայրին մէջ սեւեռած, իւր բռնելիք ընթացքին ծրագիրը կը պատրաստէր մտքին մէջ:

Քիչ քիչ աչերը հայելին վրայէն զատուելով շուրջը թափառիլ սկսան, ինչպէս որ կը պատահի մտազբազմարդոց:

Նախ բան մը չի տեսաւ:

Յետոյ յանկարծ վառարանին դիմացի պատին մէկ կողմը ածուխով գրուած բառ մը և երկու թուանշան հանդիգեցան աչքին, և ուշադրութիւն ընելով.

— ՏՈՒԷ, 29 կարգաց:

— Օ, օ, մրմռաց. ի՞նչ է այս: Ոչինչ կամ շատ...: Հասցէ մը անշուշտ:

Եւ առանց մէկու միմացընելու՝ դրպանէն յուշատետր մը հանեց, մատիտով Տ-է 29 գրեց վրան, և նորէն դրպանը դրաւ:

Արդարութեան պաշտօնեաներն աւարտեր էին իրենց գործը, և Փարիզ կը վերագառնային: Բրէնպորն ալ ընկերացաւ անոնց, որոշուած պեղումը կատարելու համար ժամանակը շատ

սուղ ըլլալով, հետեւեալ օրուան մնաց: Ճանրան Բրէնպորն կը մտածէր թէ գտած հասցէն պէ՞տք էր իմացընել որու էր անկէր:

Բաւական խորհելէ ետեւ՝ բացասական որոշում տուաւ:

Վստահութիւն չունէր Դանիէլ տը Քէօրի վրայ, որուն ընթացքը ևս քան զեւս զարմանալի կը թուէր իրեն:

— Բէ՛հ, ըսաւ ինքնիրեն. փնտռենք նախ: Խօսելու համար ժամանակ կայ միշտ: Ինչ որ ալ ըլլայ, քննութիւնն ինձի պիտի յանձնուի:

ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Ընթերցողք չի մոռցան անշուշտ թէ Տիան իւր կացութեան վտանգներուն առաջն առնելու համար, փեսին հետ մաքիավէլական հնար մը խորհեր էր, որով տը Ֆէրնիք կոմսը կը հեռանար Փարիզէն:

Մեքենայութիւնը մեծ ճարտարութեամբ յառաջ տարուելով տարփուհիէն ու տարփաւորէն, յաջողեր և յուսացուած պտուղը բերեր էր:

Նախարարը, յուզուելով այն գաղտնի փարէն թէ տը Ֆէրնիք կոմսը մտադիր էր հրաժարիլ դիւանագիտական սուպարէզէն՝ ինքզինք ծերակուտի անդամ ընտրել տալու և հին միապետական կուսակցութեան գլուխն անցնելու համար, փրկութեան ոստի մը պէտք փաթթուեր էր գաղտնաբար իրեն ներշնչուած գաղափարին, որպէս զի զայն Ք...ի արքունեաց քով դեսպան անուանէր :

Այդ դեսպանութիւնը փափաքող շտաբունէր : Այն օրէն որ իմացուեր էր թէ Ֆրանսական արդի դեսպանը չի կրնալով հաճոյ ըլլալ Ք...ի արքունեաց, հարկադրուած էր հրաժարիլ, բազմաթիւ հետամուտներ խոնուած էին արտաքին գործոց պաշտօնարանին մէջ :

Նախարարը, որուն հաւատացուցեր էին թէ կոմսը կը փափաքէր այդ պաշտօնին՝ առանց յայտնի ընելու, փութաց առաջարկել անոր և ստիպել որ ընդունի :

Կոմսը, սր կնոջը քովէն չհեռանալու համար չէր ուզեր մեկնիլ Փարիզէն, քի սկզբան չուզէր ընդունիլ :

Բայց նախարարը չի վհատեցաւ, նորէն առաջարկեց ստիպողաբար. Ֆրանսայի շահը դնելով անոր տուջեւ, որ վտանգի մէջ ինկած էր ներկայ դեսպանին անխորհուրդ սխալներովը, և վերջապէս յաջողեցաւ յաղթել կոմսին յամառութեանը, որ չի կրցաւ դիմանալ իրեն եղած ստիպման, շողորթութուելով ներքնապէս իր վրայ ցոյց տրուած անսահման վստահութենէն, և միանգամայն յորդորուելով այն գաղափարէն թէ հայրենասիրական պարտականութիւն մը պիտի կատարէր :

Բօլ տը Ռիչմօն անդադար տեղեկութիւն կուտար կոմսուհիին այս ամէն դարձուածներուն վրայ. ան ալ քանի մ'օրէ ի վեր հիւանդութիւն կը կեղծէր :

Ամուսնին ընդդիմութիւնը գինքն անհանգստ կ'ընէր ու կը արտօմեցընէր, բայց չէր վհատեր :

Առտու մը, Բօլ տը Ռիչմօն վաղեց կոմսին ապարանը և Տիանի ներկայացաւ :

— Ո՞ւր տեղուանք ենք, հարցուց մէկէն կոմսուհին :

— Կոմսը նախարարին քովէն ելաւ, և քառորդ մը չանցած հոս պիտի գայ:

«Թէեւ խօսք չի տուաւ, բայց ընդունելու տրամադիր է. վաղը պիտի տայ վերջնական պատասխանը:

«Աստուած տայ որ միտքը չի փոխէ:

— Պէտք է որ ընդունի, ըսաւ Տիան վճռողաբար:

— Միջոցը:

— Կը կարծեմ որ ձեռքիս մէջն է: Քաշուէ դուն և թող տուր որ ես ընեմ գիտցածս: Ինչ որ ընեմ, ինչ որ ըսեմ, դուն մի վախնար, նոյն բերանը գործածէ երբ քեզի ալ խօսուի:

Երբ Բօլ տը Ռիչմօն մեկնեցաւ, կոմսուհին իւր կատակերգակի խաղացուցակին մէջի ամենէն մեյամաղձոտ ու սրտագրաւ դէմքն առնելով ամուսնին սպասեց երկայն աթոռի մը վրայ տարածուած:

Արդարեւ շատ չանցաւ՝ կոմսը եկաւ, և կնոջը բնակարանն ելաւ նախաճաշէն առաջ:

Մտահոգ երեւոյթ մ'ունէր:

Առաջարկուած պաշտօնը կը հրապուրէր զինքը, և մտածեր էր խօսիլ

կնոջը հետ, և անկէ առնելիք պատասխանին համեմատ որոշել ընելիքը, վերջին փորձ իւր գրգռեալ նախանձոտութեան:

— Ի՞նչպէս էք, սիրելի՛ Տիանս, հարցուց կնոջը մօտենալով:

— Ոչ աղէկ, ոչ գէշ...: Նուազում, տկարութիւն...: Ծանր բան մը չէ. միայն թէ զգուշանամ յոգնելէ, և կը յուսամ որ կ'անցնի տկարութիւնս:

— Գէշ հանդիպեցաւ, ըսաւ կոմսը, հաւանաբար շատ պիտի ազդէ իմ պագայ բաղդիս վրայ:

— Ի՞նչպէս:
— Ստիպելով զիս որ չընդունիմ դեսպանական բարձր պաշտօն մը:

Տիան յուզուեցաւ:
— Դեսպանական պաշտօն... նորէ՞ն պիտի մեկնիք...:

— Հարկաւ...: Կը խնդրուի, գրեթէ կը պահանջուի ստիպողաբար... բայց ես չեմ ուզեր թողուլ ձեզ այդ տկար վիճակին մէջ... և միտքս դրեր եմ որ չի զատուիմ ձեզնէ...:

— Շնորհակալ եմ ձեր բարեսրտութենէն, ըսաւ Տիան ժպտելով: Բայց չէ՞ք կրնար զիս հետեւնիդ տանիլ:

Կոմսը զարմացմամբ անոր նայեցաւ:

—Յանձն կ'առնէ՞ք մեկնիլ Փարիզէն :

—Ինչո՞ւ չէ :

—Ես կը կարծէի թէ չէիք ուզեր բնաւ :

—Այո՛, ժամանակաւ... բայց հիմա, ո՛չ :

Եւ լուրջ ու հանդարտ դէմք մ'առաւ :

—Կեցի՛ք, ըսաւ, բաց սրտով խօսինք, Ռատ'ւլ, դուն նախանձո՛տ ես :

Կոմսը ցնցուեցաւ և յօնքը պռստեց :

—Օ՞, մի՛ ուրանար, յարեց Տիան : Միթէ ես չե՞մ տեսներ, չե՞մ զգար, չե՞մ ցաւիր. այս է ներկայ տկարութեանս ալ պատճառը, որ քանի մ'օրէ ի վեր գամած է զիս այս սենեակիս... Կը մտածեմ թէ ի՞նչպէս կրնամ քեզ անզորեւլ, ապահովցընել... : Ահաւասիկ դուն միջոցը կ'ընծայես ինձի... : Մէկտեղ երթանք, զիս հետդ տար... :

Կոմսը լուռ կը կենար շփոթած, գրեթէ քաջալերուած այս անակնկալ առաջարկէն :

—Օ՛, թէ որ հետս գաք, ըսաւ վերջապէս, իմ վերջին վարանումներս կը վերնան :

Եւ նախտրարին առաջարկը հասկըցուց :

—Ըսել է թէ այս անգամ հաստատուն պաշտօն մը կ'ունենաս, գոչեց Տիան ուրախութեամբ : Այն ժամանակ զիս բան մը չարգիլեր հետդ գալէ : Ի՞նչ բարեբաղդութիւն ինձի համար : Պիտի խնդրէի քեզնէ որ ի միասին երթանք ուր որ ալ ըլլայ... : Քանի մը շաբաթ կը բաւէ ինձի ինքզինքս գտնելու կատարելապէս, և պէտք եղած պատրաստութիւններն ընելու, ինչպէս որ կը վայլէ արքունեաց այցելութիւն տալու և ընդունելու կոչուած դեսպանուհիի մը, և կը մեկնինք Փարիզէն, ուր աչքս ետիս ըլլալու բան մը չպիտի ունենամ, ինչպէս որ կրցար կասկածիլ իմ վրաս :

Կոմսն ստուգիւ ուրախ էր նոյն վայրկենին :

—Պէտք կ'ըլլայ որ ես երեք չորս օրէն ճանբայ ելնեմ, եթէ ընդունիմ :

—Չե՞ս կրնար յետաձգում մ'ստանալ, ըսաւ Տիան :

—Ոչ, անուանումս վաղայաջորդ օրը կը հրատարակուի պաշտօնական լրագրին մէջ, եթէ ես չընդունիմ ք...ի դուքսը պիտի ընտրուի :

— Ուրեմն կը ջանամ հետդ գալ, և եթէ հոն հասած ժամանակինս հիւանդութիւնս ծանրացած ըլլայ, կը խնամեմ ինքզինքս և ոչ ոք կը մեղադրէ զիս:

— Ո՛չ, ո՛չ, գոչեց կոմսը, որուն ազնուականի նուրբ մարդավարութիւնը լաւ ճանչելով Տիան. գիտէր որ չէր ընդուներ իր այս առաջարկը:

— Չեմ կրնար հաւանիլ այդ ըսածիդ...: Ինչ և ալ ըլլայ քեզ հետս չեմ տանիր: Պէտք կ'ըլլայ նախ ինձի տեղաւորուիլ, սրպէս զի այն հոգէն ու յոգնութիւններէն զերծ մնաս դուն...: Երբ ամէն բան պատրաստ ըլլայ քեզ ընդունելու, այն ժամանակ կուգաս:

Խօսակցութիւնն այս ձեւին վրայ շարունակից ժամու մը չափ:

Երբ կոմսը մեկնեցաւ կնոջը քովէն, որոշուած էր որ կ'ընդունէր դեսպանութիւնը, բայց, հակառակ կնոջը պնդելուն, կ'ուզէր որ երկու երեք ամիսէն երթայ իւր քով, երբ օդերը տաքնային, որովհետեւ երթալիք տեղն հիւսիսային երկիր էր:

Կոմսուհիին քովէն մեկնելուն պէս,

վաղեց քնաց նախարարին, և ընդունիլն յայտնեց:

Բօլ տը Ռիչմօն, որ կը դիտէր, իսկոյն եկաւ:

— Կ'ընդունի, ըսաւ Տիան:

— Վերջապէս սքանչելի՛:

— Այո՛, պայմանաւ որ ես ալ երթամ:

— Եւ հաճեցա՞ր:

— Ես ինքս խնդրեցի:

— Ուրեմն կը թողո՞ւք զիս, ըսաւ դերկոմսն աղ ու պղպեղ ձայնով մը:

— Անմիտ, ապա թէ ոչ՝ չի պիտի ընդունէր:

— Գեղեցիկ առաջարկ, մեզ իրարմէ զատելու ուրիշ ձեւ մը:

— Պիտի մնա՞մ ես:

— Ա՛յ:

— Նախ չուզեր որ երեք ամսէ առաջ երթամ իւր քովը:

Եւ խնդաց:

— Մինչեւ այն ժամանակ ես շատ պատրուակներ ու պատճառներ կը գտնեմ չերթալու... կամ, եթէ բռնադատուիմ երթալու, այնպիսի ընթացք մը կը բռնեմ, որ ինք կը հարկադրէ զիս Փարիզ դարձունելու:

— Զարմանալի՛ ես, մրմնջեց դերկոման սքանչացած :

— Ուրիշ բան ալ կայ :

— Ի՞նչ :

— Պիտի առաջարկէ քեզի որ դուն ալ քարտուղարի պաշտօնով հետն երթաս, Ֆէրնանտն ալ ի միասին :

— Ի՞նչ կ'ըսէք, գոչեց Բօլ, որուն դէմքը չափազանց երկնցաւ : Նախ կը վախնամ որ Ֆէրնանտ յանձն չառնեիր... : Երկրորդ, եթէ դուն հոս մնաս... և ես երթամ... միեւնոյն բանն է միշտ :

— Թող որ լինցնեմ : Այս առաջարկը ծուղակ մը կլնայ ըլլալ :

— Ծուղակ, կրկնեց դերկոմանը : Արդեօք կասկած ունի իմ վրայ :

— Չեմ գիտեր, բայց պէտք է ամէն բան նախատեսել և ըստ այնմ վարուիլ :

— Ի՞նչ պատասխան տուիր :

— Շատ ուրախ ցուցուցի զիս :

— Ի՞նչ անխոհեմութիւն :

Տիան ցնցեց ուսերը :

— Դուն չես ընդունիր, և այդ կերպով մեզ համամիտ չի կարծեր, և կը հետեւցընէ թէ դուն ինձմէ չի դատուիլ չես ուզեր : Հասկըցա՞ր :

— Այո՛, սքանչելի ես, նորէն կ'ըսեմ,

քեզի պէտք էր յանձնել դիւանագիտական պաշտօնները, և ոչ ամուսինիդ :

— Այսպէս ամէն բան կարգադրուած է, և կոմսը երեք չորս օրէն կ'երթայ... եկու համբուրէ զիս :

ՓՈԹՈՐԻԿԷՆ ՍՌՍԶ

Առ այժմ մեր այլեւայլ անձնաւորութեանց ուղղապէս սպառնացող բան մը չէր տեսնուեր :

Տիան և Բօլ աը Ռիչմօն, առաջին ցնցումէ մ'ետեւ նորէն կը յուսային անդորրութիւն գտնել, և իրենց ապօրէն յարաբերութիւնն անպատիժ շարունակել :

Կոմսին մեկնիլը մանաւանդ վտանգին ամէնէն մեծէն կ'ապահովէր զիրենք :

Դանիէլ աը Քէօր աւարտեր էր նշանակուած առաջին վկաներուն հարցաքննութիւնները, և անոնց տուած վըկայութիւններէն Ֆէրնանտը բերան տալու կամ անոր Բիէնֆիթ գտնուած ըլլալը յայտնելու բան մը չէր ծնած :

Վկայները բան մը չէին գիտեր, մէկը չէին ցուցներ կամ նշանակեր :

Միակ հաւաստի երեւցածն այս էր թէ ոճրագործներն այն տեղացի չէին, դուրսէն եկած էին:

Ո՞ւսկից, Փարիզէն, յոյժ հաւանաբար:

Բրէնպորնի կը մնար հիմա իւր խուզարկութիւնը կատարել, որովհետեւ նախաքննիչ դատաւորը որ և է ծանօթութիւն մը չէր կրցած ձեռք բերել մեղապարտներուն վրայ:

Անթօան Գօսատ իր բնակարանին մէջ փակուած կը մնար, և միայն մէկ կամ երկու անգամ գիշերանց դուրս ելեր էր Բիւի-տը-լ'Էրմիթ փողոցն երթալու համար, որպէս զի կոմսուհիին կողմէ իրեն հրաման մը կամ տեղեկութիւն մը եթէ կար իմանար:

Բայց կոմսուհին ալ կենաց նշան մը ցոյց չէր տուած անոր:

Ըսել էր թէ այն կողմէն նոր բան մը չի կար:

Ժիւլ Շամպէզի սակայն ժամանակը պարապ չէր անցուներ:

Ոչ միայն ամէն լրագիրներն ուշադրութեամբ կը կարդար ամէն առտու, յուսալով որ իւր ապագայ գործողութեանց յաջողութիւնը դիւրացընող

տեղեկութիւն կամ յայտնութիւն մը կը գտնէր անոնց մէջ, այլ և ծածկարար ալ տեղեկութիւններ կը քաղէր այն անձանց վրայ, որոց անուններն յայտներ էր իրեն դիպուածը:

Լրագիրները գրեթէ բնաւ բան մը չէին ըսեր:

Մինչեւ հիմա, Բրէնպորնի յատուկ խնդրանքով աղեկին մարմնոյն գտնուելը չէր իմաց տրուած լրագիրներուն. վարպետորդի ոստիկանը մտածեր էր որ այս լուրս ենէն ոճրին թելագիրները քաջալերուելով խոհեմութեամբ վարուելու չէին հարկադրուեր:

Բայց Շամպէզի շատ բան իմացեր էր:

Գիտէր հիմա թէ ինչ էր տը Ծէր-նիք կոմսին ընկերական վիճակն ու դիրքը:

Գիտէր թէ Բօլ տը Ռիչմօն անոր փեսան էր, և միանգամայն զոքանչին տարփածուն:

Գիտէր նաև թէ մայր ու աղջիկ Ժիւսթին Պօնֆօայի դիմելու պարտաւորուած էին:

— Գործս կը պարարտանայ, կ'ըսէր ինքնիրեն ձեռները շփելով: Մէկ հարուածով երկուք զարկի առանց միաքէս անցընելու:

«Կոմսուհիին ձեռքիս մէջն է :

«Պէտք է որ աղջիկին ալ ձեռքս ան-
ցունեմ :

«Եւ այն ժամանակ պէտք եղածը կ'ը-
նեմ երկուքին ալ քով :»

Կոմսուհիին անմիջապէս չի մօտենա-
լուն պատճառն այն էր որ, տը Ֆէր-
նիք կոմսը, որուն դէմ խիզախեր էր
առաջին անգամ, ահաւոր մարդ մ'ե-
րեւցեր էր իրեն :

Անոր բարկութիւնը գրգռել կամ
ճամբուն վրայ տնկուիլ վտանգաւոր
կ'երեւար իրեն :

— Գիտցած գազանիքս թերեւս շատ
սուղ վճարուի անկէ, կ'ըսէր ինքնիրեն
Ժիւլ Շամպէզի : Բայց յայտնութիւնը
վտանգաւոր կ'ըլլայ, և ես աւելի ըս-
տակ կրնամ փրցնել Պ. տը Ռիշմօնէն
և տիկին տը Ֆէրնիքէն, նուազ վտան-
գի ենթարկուելով :

Ասկից զատ Շամպէզի Անթօան ֆօ-
սատէն ալ կը վախնար. և շատ լաւ
կը հասկընար որ կոմսուհիին սպառ-
նալիք ընելով այդ վայրագին ատե-
լութիւնը կը հրաւիրէր իւր վրայ, որ
կատարելապէս կարող էր զինքն ալ
սպաննելու, ինչպէս որ սպաններ էր
մանկաբարձուհին :

Այս ամէնը մտածութիւն կը պա-
հանջէր, և մեծապէս կը վարանեցնէր
զինքը, գործն յառաջ տանելու և բա-
նակցութեան նիւթ ընելու եղանակին
վրայ :

Ֆէրնանտ աւելի նուազ պաշտպան-
եալ, աւելի դիւրըմբռնելի կ'երեւար
իրեն : Բայց անոր հետ ալ խոհեմու-
թեամբ վարուիլ պէտք էր :

Այն Դանիէլ տը Բէօրը, որուն ա-
նունը դատական ծանօթատետրին վը-
րայ տեսէր էր և զոր Ֆէրնանտի սար-
փաւորն ենթադրեր էր, նախաքննիչ
դատաւոր էր, և Բիէռֆիթի գործին
քննութիւնն ալ անոր յանձնուած էր :

Արդ, Ժիւլ Շամպէզի, որ առանց
ճանչուելու կը փնտռուէր իբրև գոր-
ծակից մանկաբարձուհիին սպանման,
հազար պատճառ ունէր արդարութեան
ուշադրութիւնն իւր վրայ չի հրաւի-
րելու, և դատական ազդեցիկ պաշտօ-
նատար մը իրեն դէմ չի հանելու, ա-
ռանց իւր ձեռքին մէջ զօրեղ փաստ
մ'ունենալու անոր դէմ, և հետեւապէս
զինքն անոր ակնածելի ընելու :

Իրօք ալ, Ֆէրնանտի և անոր յա-
րարկութեանց վրայ Ժիւլի Պօն-

Յօայի և Դանիէլ տը Քէօրի հետ, ուրիշ ասպացոյց մը չունէր բայց միայն մանկաբարձուհիին յուշատետրը, զոր չէր կրնար երեւան հանել առանց օձիքը ձեռք տալու, այսինքն առանց յայտնելու իւր ներկայութիւնը ոճրին թատերափայրին վրայ, ըրած գողութեանը վրայ և այլն:

Այն պարագային մէջ Դանիէլը, Ֆէրնանտը, կոմսուհին և Բօլ տը Ռիչմօնը կորուստի մատնէր թէ ոչ, ինքն ալ ոչ նուազ կորուստի կը մատնուէր, և գործէն շահ մը չէր ելներ իրեն:

Ժիւլ Շամպէզի չարութեան համար ձրի չարիք գործող մարդ չէր, մանաւանդ իր բայն չարիքէն վտանգ կը ծագէր իրեն դէմ:

Ուստի որոշեց թողուլ կոմսուհին որ չունչ առնէր, և ասպացոյցներ հաւաքել Ֆէրնանտի և Դանիէլ տը Քէօրի դէմ, համբերութեամբ սպասելով գործելու պատեհ վայրկեանին... առանց մէկը վտանգի մէջ ձգելու:

Բրէնպորն սակայն բան մը չէր սպասեր և կը գործեր կանոնաւորապէս:

Պարտէզը ծայրէ ծայր տակնիվրայ եղեր, նոր գաղտնիք մը չէր երևան հաներ:

Ամէն բան կը մնար այն վիճակին մէջ ուր թողուցինք:

Բայց Բրէնպորն տարակոյս չունէր որ ճշմարտութիւնը վերջապէս պիտի կըրնար երևան հանել:

Յաջողութեան քանի մը տարրեր ունէր ձեռքին մէջ:

1. Պատին տակէն գտած կօշիկները, որք ժիւլ Շամպէզիին էին:

2. Չուանը որ ժիւլի Պօնֆօան կախելու ծառայած էր:

3. Ֆ. սիզբնատառ և դերկոմսի թագ կրող շապիկը:

4. Տուէ փողոց 29 հասցէն:
— Ասով կը գտնեմ, ըսեր էր:

Տուէ փողոցին կողմերը պտըտեր և 29 թիւ կրող տունը զններ էր:

Հարուստ և պարկեշտ երևոյթ մ'ունէր:

Հրաման ստանալով Փարիզ քաղաքին տնահարկերուն տուամբները թղթատելու, տանը մէջ բնակող վարձակայներուն անուններն առեր, և անոնց ունեցած վիճակն ու դիրքն ալ ծածկարար ստուգեր էր:

Ոչ մէկուն վրայ գէշ զրոյց չի կար: Գրեթէ ամէնն ալ պատուաւոր դիրք

ունէին, և մեծ մասն ալ իրենց եկամուտներով կ'ապրէին:

Քանի մը բնակարաններու վարձակալներն ամուրի էին:

Առանձին ապրող կին բնաւ չի կար, ի բաց առեալ այն հիւանդ տիկինը, որուն վարձած բնակարանը Դանիէլ տը Բէօր բռներ էր Պ. Պօնէ անունով:

Բրէնպորն չէր համարձակած առայժմ իւր հեաազօտութիւններն աւելի յառաջ տանիլ, ոչ ալ յայտնապէս գործել, վախնալով որ անծանօթ մեղսակից մը կամ ոճրին բուն հեղինակն արթննալով զգուշութեան միջոցներ ձեռք կ'առնէր:

Սակայն իւր խնամքով երկու վարպետ ստիկաններ ծածկաբար կը հըսկէին տանը վրայ, առանց զգացներու, և պիտի իմացընէին իրեն եթէ կակածելի բան մը նշմարէին, մինչև իսկ պարզ տեղափոխութիւն մը:

Արդէն ստուգած էր թէ տանը մէջ ապրող ամուսնացեալ կին կամ օրիորդ Բիէնֆիթի լուացարարին քովէն գտած շապիկին տէրը չէր:

Իւր գտած ու արձանագրած անուններուն ոչ մին Ծ սկզբնատառը չունէր:

կը մնային կօշիկներն ու չուանը:

Իւր ճարպիկ պաշտօնակիցներէն միոյն յանձնուեցաւ փնտռել գտնել, եթէ հնար էր, կօշիկներուն ո՛ւր կարուած կամ ուրկէ գնուած ըլլալը:

Իսկ չուանին վերաբերեալ հետախուզութիւնն իրեն պահեց: Եւ այս էր ամենէն կարեւորը:

Եթէ յաջողէր գտնել զայն վաճառող խանութպանը, թերեւս անկէ կ'իմանար նաև դնողին ինչ կերպարանքով և ինչ դիմագիծով մարդ ըլլալն և ուրիշ պարագաներ կամ տեղեկութիւններ, որք կրնային առաջնորդել իրեն:

Արտի մը մէջէ գտնուած բահն ու բրիչն ալ կային, զորս երկրորդ պաշտօնակցի մը յանձնած էր, որպէ՛ս զի երեք հետախուզութիւններն ալ միանգամայն կատարուէին:

Տասն երկու օրէ ի վեր բան մը չէր գտնուած, ոչ իւր ձեռքով, ոչ ալ իւր միւս երկու պաշտօնակիցներուն ձեռքով, որք առանց յաջողութեան աւարտեր էին իրենց յանձնուած հետախուզութիւնները:

— Ետքը կը տեսնեմ այս գործը Ը սեր էր:

Եւ ինքը կը շարունակէր իրեն վերապահած յատուկ պաշտօնը, որ էր հարցաքննել Բարիզի բոլոր չուան ծախողները :

Նուազ համբերող և նուազ հաստատամիտ մարդ մը կրնար վհատիլ, բայց Բրէնպորն իւր թշնամիին հետքը պըրպըտող Հնդկիի մը համբերութիւնն ունէր :

Փարիզի և Պոլսի յատակագիծին օգնութեամբ Փարիզ քաղաքը քանի մը զօտիներու բաժներ, ամէն մէկը մէկ մէկ օր աչքէ կ'անցունէր :

Ձախ եզրն ու շրջավայրն ընդունայն զննելէ ետեւ, Սէն գետն անցաւ և աջ եզրն սկտաւ աչքէ անցունել՝ Սէնթ-Անթօան թաղէն սկսեալ, բաղմամարդ և ժողովրդային թաղ, ուր կրնար մասնաւորապէս բնակիլ ոճրագործը, ենթադրելով որ սոորին աստիճանէ մարդ մ'եղած ըլլար, աւելի բարձր եղեռնաւորէ մը վարձուած, ինչպէս որ համոզուած էր Բրէնպորն :



ՓՈՐՐԻԿ ՊՍՏՃԱՌ, ՄԵՍ ԱՐԴԻԻՆԵՐ

Վերջապէս Բրէնպորն օրին մէկը հասաւ այն խանութն, ուսկից Անթօան Քօսատ իրիկուն մը, ինչպէս որ ընթերցողք կը յիշեն անշուշտ, գներ էր այն չուանն, որով կախեր էր ժիւսթին Պօնֆօան, կամ անոր դիակը :

Ապակեւոր տախտակորմով շրջապատուած փօքր դռնակով հաշուասեղանի մ'առջև նստած մարդ մը վաճառարներ կը պրպտէր :

Տեսնելով Բրէնպորնի ներս մտնելը, զոր յաճախորդ կարծեց, իսկոյն ձեռքի գործը թողուց և խանութին մէջ անցաւ :

— Ի՞նչ հրաման ունիք, հարցուց :

— Կուգամ աղաչել ձեզ, պարոն, որ տեղեկութիւն մը տաք ինձի :

Առ նուազն երկու հարիւրերորդ անգամն էր որ Բրէնպորն կը քչէր այս խօսքը, և իւր այցաքարտը հանելով կ'աւելցնէր :

— Ընդհ. դատախազին կողմէ կու-

գամ: Ապահովութեան գործակալ եմ ես:

Խանութպանն աչքն իրեն ներկայացած տոմսին վրայ ներեց և յետոց զարմացկոտ սրտատանջ նայուածքը Բրէնպորնի վրայ դարձուց:

— Պատրաստ էք ինձի պատասխանելու, հարցուց ոստիկանը:

— Անշուշտ, պարոն, բայց կը մտածեմ թէ ի՞նչ տեսակ տեղեկութիւն է ձեր ուղածը, և կրնա՞մ տալ:

— Սա է, ըսաւ Բրէնպորն:

Եւ գրպանէն փոքրիկ ծրար մը հանելով բացաւ, և չուանի կտոր մը պարզեց:

— Դո՞ւք վաճառեցիք այս չուանը, և որո՞ւ:

Մարդն առաւ չուանը և զննեց ուշադրութեամբ:

— Յիրաւի, պարոն, ըսաւ վերջապէս, ասոր ճիշդ նմանն ունիմ միւսնոյն թուահամարով, բայց չեմ յիշեր այս կտորը կարած ըլլալս: Այս չուանն ընդհանրապէս լաթ փռելու կը գործածուի, և սովորաբար պատատն ամբողջ կը գնուի:

— Ուրեմն նայեցէք, ըսաւ Բրէնպորն, թէ ասկէց տասն ու հինգ օրի չափ առաջ ծախեցի՞ք պատատ մը:

— Օ՛, դիւրին է: Տասն ու հինգ օր առաջ վեց պատատ ունէի ասոր նման: Համբեմ նայիմ, և եթէ պակաս չէ...

— Հաճեցէք ուրեմն ստուգել, պարոն, կը խնդրեմ:

Չուանավաճառը խանութին մէկ անկիւնը գնաց ստուգելու:

— Նոյն միջոցին խանութին դուռը բացուելով՝ ժիւլ Շամպէզի ներս մտաւ:

Բրէնպորն անհամբեր շարժում մ'ըրաւ, և խանութպանն ալ գլուխը նորեկին դարձուց:

— Հիմա կուգամ, պարոն, ըսաւ անոր:

— Գործերնիդ կատարեցէք, իմա ըստիպողական չէ, պատասխանեց Շամպէզի:

Եւ սկսաւ վուչէ գորգեր զննել, որք դրանը մօտ սեղանի մը վրայ դիզուած էին:

Շամպէզին հոն բերող դիպուածը շատ պարզ էր:

Քանի օրերէ ի վեր Սօֆի Շաթլէն կ'ուզէր այդ գորգերէն դնել իւր կահաւոր սենեակներուն համար:

Ժիւլ Շամպէզի այդ աշխատութենէն զերծ պահելու համար իւր սիրուհին, միանգամայն բնական հետաքրքրութենէ

կամ գաղտնի նախազգացումէ մը դըր-
դուած, այն խանութն ընտրեր էր,
ուր Բիէռֆիթի ոճիրէն քիչ ժամանակ
առաջ Անթօան Բօսատը տեսած ըլլալը
կը յիշէր:

Սակայն խանութպանն իւր չուանի
պատատներն համրեր էր:

—Վեց հատ ունիմ, պարոն, ըսաւ
յանկարծ. ըսել է թէ այդ ցուցուցած
կտորնիդ հոսկէ գնուած չէ:

Այս խօսքին վրայ ժիւլ Շամպէզի
մէկէն ահանջը տնկելով՝ արագ նայ-
ուածք մ'ուղղեց Բրէնպորնի վրայ, որ
ձեռքին մէջ բռնած էր չուանի կտորը:

—Աւասիկ զարմանալի դէմք մը, ը-
սաւ ինքնիրեն:

—Այդ պատատներէն ոչ մէկը չէ՞
բացուած, հարցուց Բրէնպորն:

—Կեցիք նայիմ, ըսաւ խանութպա-
նը: Իրաւունք ունիք, սա պատատն
ամբողջ չէ:

Բրէնպորն շունչ առաւ:

Գտեր էր վերջապէս փնտռածը:

—Որո՞ւ ծախեցիք պակասածը:

—Իրաւ որ պարոն, չի պիտի կրնամ
ըսել. վասն զի ես չեմ ծախած... կինս
ծախած ըլլալու է: Ան կրնայ ըսել
անշուշտ... եթէ յիշէ...

—Հարցուցէք իրեն, ըսաւ Բրէնպորն
հրամայական ձայնով մը:

Խանութպանը կանչեց իւր կինը, որ
մութ ներքնակրպակէ մը դուրս եկաւ:

—Դո՞ւք ծախեցիք այս չուանի կտո-
րը, տիկին, հարցուց Բրէնպորն:

—Այո՛, այո՛, ես ծախեցի, պա-
տասխանեց կինն առանց վարանելու:
Երկու մեթր երկայնութիւն պէտք է
ունենայ:

—Ճիշդ, ըսաւ Բրէնպորն իւր ամէ-
նէն շնորհալի ժպիտովը: Պատուական
յիշողութիւն մ'ունիք եղեր, տիկին:

—Լաւ յիշելուս պատճառն այն է որ
գնող մարդն այնպիսի դուրս մ'ը
այնպիսի խօսուածք մ'ունէր, որ աչ-
քիս զարկին:

—Օտարազգի՞ էր, գոչեց Բրէն-
պորն:

—Ո՛չ, այլ հարաւային մարդ մը, որ
Բրովանսցի կը թուէր:

—Տասն ու հինգ օրի չափ կայ, այն-
պէս չէ՞:

—Այո՛:

—Կը ճանչէի՞ք արդէն այդ մարդը:

—Երբէք տեսած չէի:

—Անկէ ետեւ չտեսա՞ք նորէն:

—Օ՛, ո՛չ:

—կրնա՞ք ըսել ինձի ի՛նչ երևոյթով
կամ կերպարանքով մարդ էր:

Կի՛նը Բրէնպորնի նայեցաւ վարանե-
լով:

—Ոստիկանութեան մարդ է, ըսաւ
այրը կնոջը ականջն իվար, պէտք է
պատասխանես:

—Շատ ազէկ, ըսաւ կի՛նը կամացուկ
մը:

Յետոյ ձայնը բարձրացընելով.

—Դէմքը, ինչպէս որ ըսի, աչքիս
զարկեր էր, և կատարելապէս կը
յիշեմ:

Բրէնպորն՝ խօսած միջոցին՝ իւր եր-
կու խօսակիցները խանութին դէպի
խորը քշեր էր, որպէս զի գորգերը
զննող օտարականէն հեռանար:

Բայց Շամպէզի, վերջին ծայր հե-
աաքրքրուած, և գուշակելով գործը,
ականջները սրեր էր:

Եւ թէպէտ ամէն խօսածները չէր
լսեր, սակայն մինչեւ իրեն հասած եր-
կու երեք խօսք բաւական եղան իւր
կասկածներն հաստատելու:

—Նախ, ըսաւ կի՛նը, մազերը կար-
միր էին:

—Գաւառացիի մը համար հազուա-

դէպ բան է, ըսաւ Բրէնպորն, որ կը-
նայն ըսածները կը նշանակէր յուշա-
տետրին վրայ:

—Ազէկ գիտէ՞ք որ ձայնը կամ խօ-
սակցութեան ձեւը չէր կեղծէր:

—Չեմ կարծեր:

—Քանի՞ տարեկան կ'երեւէր:

—Քառասուների չափ:

—Երկա՞յն, կա՞րճ, միջա՞կ:

—Աւելի կարճուկ, բայց հաստ:

—Եւ ձեռքերը խոշոր, երկայն և
ուռուտ մատներով:

—Այո՛, պարոն, պատասխանեց կի-
նը գարմանքով: Կը ճանչէք զայն ու-
րեմն:

—Բնաւ...բայց կը ճանչեմ ձեռքե-
քը:

Բրէնպորն ժպտեցաւ:

—Մօրո՞ւք:

—Ո՛չ, բայց քիթը որսական թըռ-
չունի կտուցին պէս կոր...աչերն ալ
խորատոյձ էին:

—Երեսին գո՞յնը:

—Չեմ յիշեր տղէկ...բայց դեղնած
կարծեմ...:

—Ահաւասիկ պատուական նկարագիր
մը, ըսաւ Բրէնպորն դոցելով իւր

յուշատետրը: Եթէ տեսնեմ մարդս,
հազարին մէջէն կրնամ ճանչել:

Բրէնպորն փաթթեց իւր չուանի-
կտորը, խանութպանին ու կնոջն ա-
նունն ու հասցէն առաւ, և ողջունե-
լով մեկնեցաւ՝ Շամպէզիի ետեւէն
անցնելով, որ իբր թէ իւր բոլոր ու-
շադրութիւնը գորգերուն նուիրած էր:

Եւ բարեբաղդութիւն եղաւ Շամ-
պէզիի համար, վասն զի ոստիկանին
աչքին պիտի դարնէր դէմքին տոգու-
նութիւնը:

—Տարակոյս չի մնաց, Անթօան Բօ-
րատի վրայ էր գործը... և այս մարդն
ալ ոստիկանութեան մարդ է: Օրհնեալ
ըլլայ իմ բաղդս, որ հոս առաջնորդեց
զիս այս աշտու:

—Քանիկա՞ն ֆրանք են ձեր այս
գորգերը, հարցուց մէկէն խանութ-
պանին:

—Հինգական ֆրանք:

—Եթէ տասներկու հատ մէկէն առ-
նուի:

—Այն ժամանակ 4 ֆրանք 75:

—Ուրեմն, ըսաւ ժիւլ Շամպէզի, որ
չուտով մեկնիլ կ'ուզէր, սա օրինակին
նման տասներկու հատ մէկ կողմ դը-

րէք: Մէկ պահէն մարդ կը շրկեմ,
կ'առնեմ...:

—Բերող մարդ ունինք, թող բե-
րէ...:

—Ո՛չ հարկ չի կայ. դուք վաճառա-
գիւր մը պատրաստեցէք: Աւասիկ
կանխավճար մը:

Եւ քսան ֆրանքնոց ոսկի մը ձգեց
հաշուեսեղանին վրայ և մեկնեցաւ:

—Արդարեւ նախասնամական դիպ-
ուած մ'էր այս, ըսաւ ինքնիրեն: Ան-
թօան Բօսատի նկարագիրը ճանչցուե-
ցաւ: Հրապարակին վրայ երեւնալուն
պէս պիտի բռնուի: Ո՛չ, գործիս չի
գար: Եթէ բռնուի. պիտի հարկադրի
խօսիլ, և այն ժամանակ տը Ծէրնիք
կոմսուհին և Բօլ տը Ռիչմօն իշխանու-
թեան ճանկը կ'իյնան, որովհետեւ
Բիէռֆիթի ոճիւրն անոնք գործել տը-
ուած են Անթօան Բօսատի, որ անձ-
նական շահ չունէր գործին մէջ...:
Ուստի եթէ բռնուին... իմ հարստա-
նալու երազներս մէջ կը խաղան...:
Չանոնք փետտելու համար՝ ազատել
պէտք է. ազատելու համար ալ թող
տալու չէ որ Անթօան Բօսատ բռնուի:

ՇԱՄՊԷՉԻ ՈՒՐԻՇ ՈՐՍ ՄԸ ՉԵՌՔ ԿՍՆՅՆԷ

Տուն հասնելուն պէս, ժիւլ Շամպէ-
զի, առանց բան մ'ըսելու Սօֆի Շամթ-
լէնի, նամակի թուղթ և գրիչ մ'ա-
ռաւ, և ճարտարապէս կեղծելով իւր
գիրը, հետեւեալ տոմսը գրեց.

«Չուանը ձեզի ծախող խանութպա-
նը գտան, և կինը ձեր ճիշդ նկարա-
«գիրը տուաւ:

«Չգուշացէք, ապա թէ ոչ՝ գէշ է
ձեր գործը: «ԲԱՐԵԿԱՄ ՄԸ»

Չայս գրելէ վերջը Շամպէզի ծալլեց
տոմսը, պատեանի մը մէջ դրաւ և ծը-
խախտ գնելու պատրուակով դուրս
ելնելով՝ նամակադրոջմ մը գնեց և
նամակը տուփին մէջ ձգեց, հետեոեալ
հասցէով.

Պ. Անթ. ֆոսատ

15 Տէ Տէօ-Բօն փողոց

ՓԱՐԻՉ

Այս իրիկուն ժամը երեք ու կէսէն
մինչեւ հինգ կը հասնի ձեռքը, ըսաւ:
Բիչ մ'երկար է արդարեւ, և աւելի
պարզ կ'ըլլար իւր ձեռքը յանձնել
տալ, քանի որ դիմացս կը բնակի, բայց
դարձեալ ժամանակին կրտսանայ գիրս:
Պէտք չէ գիտնայ ինձմէ գրուած ըլլա-
լը, և անխոհեմութիւն կ'ըլլայ յանձ-
նակատարի մը ձեռքով ղրկել, զոր
կրնան ետքը դտնել ու հարցաքննել:

Աղդարարութեան երթալէն ետքը
Շամպէզի մտահոգութիւնը քիչ մը
թեթեւցաւ, վասն զի եթէ Անթօան
ֆոսատ բռնուէր և հետեւապէս բուն
յանցաւորներն ալ ձեռք անցնէին, իւր
աշխատութեանց պտուղս կորսնցընելէն
զատ, Բիւր-տը-լէրմիթ փողոցին գործն
ալ, որուն մէջ մեծ բաժին մ'ունէր,
կրնար երեւան ելնել... և այն ժամա-
նակ իւր ապահովութիւնն ու ինքնա-
ծածկութիւնն ալ վտանգի մէջ կ'իյնար:

Հիմա կը մնար իրեն ամէն բանէ ա-
ռաջ Ֆէրնանտը ճանչել, որուն գոյու-
թիւնն ու անունը միայն գիտէր՝ առանց
երբէք տեսած ըլլալու, ինչպէս նաեւ
Դանիէլ տը Բէօրը: Այսչափ մը միայն
միտքէն կ'անցնէր թէ իրիկուն մը Սէն-
Սիւրբիսի եկեղեցիին մէջ ժամագիր ե-
ղողներն անոնք պէտք էին ըլլալ, երբ
ինք աղքատաց գանձանակին վրայ կը
հսկէր:

Կ'ենթադրէր թէ դերկոմսուհին ա-
պօրէն յարաբերութենէ զաւակ մ'ու-
նէր, զոր ժիւթին Պօնֆօայի տանը
մէջ ծնած էր, և ողջ պէտք էր ըլլար,
եթէ լաւ կրցեր էր գուշակել անոր
յուշատեորին մէջ նշանակուած համա-
ռօտագրութիւններէն:

«Ամէն պարագայի մէջ հաւաստի էր որ Ֆէրնն նա այդ գաւազին իւր տունը մտցուցած չէր, ոչ ալ իւր ամուսնին հաշուին անցուցած. իւր առաջին տեղեկութիւններէն իմացեր էր թէ Բօլ տը Ռիչմօն գաւազի չունէր:

Արգ, կ'ըսէր ինքնիրեն, եթէ աղեկը իր մօրը տունը չէր, հարկաւ մայրը կ'երթար գայն գաղտնաբար կը տեսնէր ուր որ կը գտնուէր, Փարիզի մէջ կամ շրջակայքերը: Եւ, եթէ Փարիզի մէջ կամ մօտը չէ, անշուշտ տարփաւորն իւր վրայ առած պէտք է ըլլայ անոր վրայ Ֆէրնանտի լուր տալու հոգր...

«Ուրեմն եթէ իւր գաւազի կամ տարփաւորը տեսնելու համար դուրս կ'ելնէ, պէտք է որ լրտեսեմ գինքը:

«Հարկաւ որոշեալ տեղ մը կը տեսնեն գիրար:

«Ծատ դիւրին է ետեւէն երթալ, բայց պէտք է նախ ճանչել:

«Ճշմարիտ և մինչեւ իսկ միակ միջոցն է Ռիչմօնի օթեւանին մօտը դարանիլ կռնէլ-Սէն-ժէռմէն փողոցին մէջ»:

Եւ այնպէս ընել որոշեց առանց վայրկեան մը կորսնցընելու:

Գնաց կռնէլ փողոցը մտաւ Բոսսոնի քառուղիէն. յանկարծ դեռատի կին մը դէմն ելաւ, որուն դէմքը դժբաւեց իւր ուշադրութիւնը:

—Օ՛, օ՛, ըսաւ ինքնիրեն, ես այս դէմքը տեսեր եմ տեղ մը: Բայց ո՞ւր:

Արդարեւ Ֆէրնանտն էր որ քայտով իւր տունը կը դառնար, հօրը՝ տը Ֆէրնիք կոմսին՝ ողջերթ մաղթելէ ետեւ, որ նոյն օրը կը մեկնէր Փարիզէն՝ երթալու վարելու գեսպանական նոր պաշտօնը, զոր ընդուներ էր Տիանի վարպետութեան շնորհիւ:

Ֆէրնանտ երկու երկար օրերէ ի վեր տեսած չէր ո՛չ Դանիէլը, ոչ ալ գաւազի, չկրնալով թողուլ հայրը որ պիտի հեռանար իրմէ թերեւս երկար ժամանակ:

Հիմա որ մեկներ էր, կը զգար որ իւր ամուսինն ու մայրը, աւելի ազատ մնալով իրենց վարուց ու գործոց մէջ, կրնային, եթէ ուզէին, մօտէն հսկել իւր վրայ և իւր գաղտնիքը ձեռք անցունելով՝ զէնք ընել իրեն դէմ:

Ուստի պէտք էր, հնար եղածին չափ պատրաստուիլ մաքառելու, իւր երջանկութիւնը պահպանելու, և ասոր համար օժանդակի մը պէտք ունէր:

Այն ժամանակ տիկին տը նէրիօք միտքը բերեր էր, դեռատի այրի մը իւր դասակարգի ծանօթներէն, որուն հետ սերտ յարաբերութիւն ունէր, որ զինքը շատ կը սիրէր, և որ, առանց իրմէ խոստովանութիւն մը պահանջելու, յօժարակամ յանձն կ'առնէր անձնուիրարար իսկ ծառայել իրեն:

Տիկին տը նէրիս, ձախողարար դեպ, պահանջկոտ և բռնասէր մարդու մը հետ ամուսնացած ըլլալով, հակակիր էր ամուսիններու:

— Ամենէն ազէկը դարձեալ տէր մ'է, կ'ըսէր ծիծաղելով: Եթէ կինը իւր արժէքին և անկախութեան զգացումն ունի, ամուսինն անտանելի կուգայ իրեն, և սէրն արագասլաց կը թռչի:

«Ի՞նչ է կնոջ մը ուրախութիւնը, երջանկութիւնն ու վայելքը ցանկալի ըլլալ, ինք իւր տէրն ըլլալ և ինքզինք ազատարար յանձնել:

«Տարտաւորի մը բաղձանքը շողոքորթութեանց ամէնէն անուշն է, վասն զի չունի իրաւունք:

«Իսկ ամուսինի մը բաղձանքները կը յոգնեցընեն, կը ձանձրացնեն, կամ շուտով կը նուատացնեն կինը. վասն զի անոր հպատակութիւնը միայն կը յիշեցնեն, որովհետեւ եթէ ուզէ իսկ, չի կրնար յանձնառու չըլլալ: Առանց

«ոչ» ըսելու ազատութեան, ի՞նչ հաճոյք կրնայ ունենալ «այս» ըսելը:

«Հարկ մ'է, պաշտօն մ'է, ինչպէս տնական գործերուն հսկելը, տղոց քիթը սրբելը, իւր տիրոջը բուսաջուր եփելը՝ երբ հարուստ ունենայ: Զի անոր սեփականութիւնն է, անոր այլ և այլ պէտքերը գոհացնելու սահմանաժամ:

«Առանց ազատութեան չիկայ արժանապատուութիւն, առանց ազատութեան և արժանապատուութեան ուրիշ բան չի մնար, բայց միայն անուանական կոշտ հաճոյք մը, որուն յաճախ կը յաջորդէ զզուանք, եթէ զզուանքը կանխաւ չի սպաննէ հաճոյքը:»

Բնականարար, տիկին տը նէրիս, ծաղկահասակ և սիրուն, այս տեսութիւնները չէր պարզեր դահլիճներու մէջ. այլ իւր այն մտերիմներուն միայն, զորս արժանի կը դատէր հասկնալու:

Արդ, երբ Ֆէրնանտ, տիկին տը նէրիսի աջակցութիւնս խնդրել կը մտածէր, Շամպէզի տեսաւ զինքը, և իւր տարտամ յիշողութեանէն հետաքրքրուելով ետեէն գնաց և տեսաւ որ Ռիչմոնի օթեանը մտաւ:

— Դերկոմսոնի պիտի ըլլայ, ըսաւ որովհետեւ համարձակ ներս մտաւ ա-

աանց դռնապանին հետ խօսելու, Ի՞նչ-
պէս հասկընամ:

Եւ սկսաւ օթեանին դրան առջև
հարցընելով ինքնիրեն թէ ո՞ւր տեսած
էր այն դէմքը:

Յանկարծ կեցաւ:

Գտեր էր:

— Սէն-Սիւլբիսի՛ մէջ, մրմռաց: Յած
աթուակի մը վրայ ծունկ դրած էր աղ-
քատաց գանձանակին մօտ, և դրամ
մ'ալ ձգած էր մէջը...: Նոյն միջոցին
երիտասարդ մարդ մ'ալ ներս մտնելով,
ակնարկ մ'ըրաւ անոր... տարփաւորն
էր անշուշտ: Եւ անշուշտ ար Ռիչմոն
դերկոմսուհին էր տեսածս: Արդարև
գեղեցիկ կին, շատ գեղեցիկ: Կը հասս-
կնամ որ որ մարդ մը մոլեգին սիրով
սիրէ զայն, և խենդութիւններ ի՞նչ ը-
նէ անոր համար: Աւելի լաւ, զայն ա-
զատելու համար ամէն հնարաւոր մի-
ջոց ի գործ պիտի դնէ... ինչպէս նաև
զինքն ալ, եթէ իրաւցընէ նախաքննիչ
դատաւոր է... ինչպէս որ իրաւունք
ունիմ ենթադրելու...:

Ասոնք ըսած միջոցին Շամպէզի աչ-
քը չէր զատեր օթեանին դռնէն՝ ըս-
պասելով որ դէպք մը, իրողութիւն մը

գայ և հաստատէ իւր նախատեսու-
թեանց ճշդութիւնը, կամ անակնկալ
պարագայ մը զինք կարող ընէստուգե-
լու:

Երկար չի սպասեց:

Սպասաւոր մը դուրս ելաւ օթեանէն,
ձեռքը նամակ մը բռնած:

Ի՞նչ ընէր Շամպէզի, կենա՞ր հոն
թէ սպասաւորին ետեւէն երթա՞ր:

— Նայիմ ուր կը տա՞ի այդ նամակը,
ըսաւ:

Եւ սկսաւ երթալ սպասաւորին ետե-
ւէն:

Այսպէս հասան վէրնէօյլ փողոցը:

Կառք մը կ'սպասէր թիւ 17 տան
առջև:

Սպասաւոր մը կը բանար կառքին
դռնակը դեռատի և գեղաշուք տիկնոջ
մը, որ կանգ առաւ ստանալու համար
նոյն միջոցին ներկայացող սպասաւո-
րին ձեռքի նամակը, որ իրեն ուղ-
ղուած էր անշուշտ:

Տիկինն առաւ նամակը, բացաւ,
կարդաց, ժպտեցաւ համամիտ դէմքով
մը, յետոյ երկու խօսք ըսաւ սպասա-
ւորին, որ ակնածաբար խոնարհելով
մեկնեցաւ:

Շամպէզի կեցաւ հոն յայտնապէս՝

կնոջ մը գեղեցկութիւնը նշմարող մարդում ը պէս, որ կ'ուզէ դիտել անոր կառքին աստիճանէն վեր ելնելն՝ յուսալով տեսնել ոտքին կօշիկն և թերեւս իսկ մետաքսէ գուլպային ծայրը:

Տիկին տը Ներիս, նշմարելով կամ ոչ իւր վրայուզողուած լրտեսութիւնը, շնորհալի կերպով մը վեր առաւ շրվազգեստին երկայն քղանցքը, և դէպ ի կառքը այուսջացաւ:

Բայց այս փոքրիկ շարժումն ըրած միջոցին, ձեռքին մէջ պահած նամակը գետինն ինկաւ:

Շամպէզի, փայլակի արագութեամբ վերցուց գետնէն նամակը, ինչպէս նաև պատեանը, և մինչեւ որ դեռատի կիւնը կառքը մտաւ, ինքը ժամանակ ունեցաւ կարգալու նամակին պարունակած հետեւեալ երկու կարճ տողերը.

«Սիրելի բարեկամուհիս.

«Վաղը, ժամը Յին, պիտի գամ ճաշեմ քեզի հետ:

Համբոյր յը.

«ՖէրնԱՆՏ»

Այն միջոցին որ տիկինը կառքին մէջ նստելով սպասաւորը դռնակը կը գոցէր, Շամպէզի տնկուեցաւ առջևը:

— Ներեցէք, տիկին, ըսաւ խորին յարգանք, կարծեմ թէ սա նամակն ու պատեանը դուք ձգեցիք:

Եւ անոր երկնցուց երկու թուղթերն ալ, բայց այն կերպով որ կրնար կարգաւ, վրայի հասցէն, որ էր.

Տիկին պարոնուհի ԱՏԷԼ ՏԸ ՆԷՐԻՍ

17 Վէրնէօյլ փողոց

— Ա՛, ճշմարիտ է, շնորհակալ իմ, պարոն, ըսաւ պարոնուհին:

Շամպէզի խոնարհութիւն ըրաւ, և կառքը ճամբայ ելաւ:

— Այս նամակը լահոնական է և վրտանգաւոր բան մը չունի, ըսաւ ինքնիրեն: Բայց ո՞վ գիտէ: Տիկին պարոնուհի Ատէլ տը Ներիս շատ արթուն դէմք մ'ունի...: Եւ ես չեմ հասկնար տիկին տը Ռիչմօնին այս ճաշ խնդրելը...:

«Արդեօք այս տիկնոջ տո՞ւնը կը գուժարուին երկու տարփաւորները ...: Չարմանալի ժպիտ մ'ունեցաւ նամակը կարդացած միջոցին:

«Տեսնենք:

«Վաղը, ժամը վեցին ես Վէրնէօյլ փողոցի թիւ 71ին առջևը պիտի կենամ... և պիտի հասկնամ գործը:



ՈՒՐ ԲՐԷՆՊՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ ՄԸ ԿՂՆԷ

Բրէնպորն, չուանը ծախողին խա-
նութէն դուրս ելլելէն ետե, ուր ոճ-
րագործին նկարագիրն ալ ստացեր էր,
իւր տունը գնաց, խանութպանէն ա-
ռած տեղեկութիւնները կարգի դնելու:

Հիմա ի՞նչ պիտի ընէր:

Ամէնէն պարզ և ամէնէն բնականն
էր նախ այդ նկարագիրը նախաքննիչ
դատաւորին տանիլ, լրագրաց մէջ հը-
րատարակել տալ, սահմանագլուխները
ղրկել, ևն. ևն.:

Այս տեսակ դէպքերու մէջ այսպէս
կ'ընեն սովորաբար:

Երկար խորհրդածելէ ետե՝ Բրէնպորն
բացարձակապէս հակառակ որոշում մ'ը-
րաւ:

Նախ, վասն զի մեծ կասկած կ'ըգար
Դանիէլ տը Քէօրի վրայ, գործին սկիզ-
բէն ի վեր:

Բրէնպորն՝ նուրբ դիտող՝ գուշակեր
էր թէ նախաքննիչ դատաւորը բան մը
կը պահէր իրմէ, և պէտք եղածին չափ
անկեղծութեամբ չէր գործեր:

«Երկրորդ, ըսաւ ինքնիրեն, ոճրին
գործուելէն ի վեր տասներկու օր ան-

ցած էր, այնպէս որ, ոճրագործն ըն-
դարձակ միջոց ունեցած էր Փարիզէն,
Փրանսայէն և մինչեւ իսկ Եւրոպայէն
մեկնելու, հետեւաբար ստիպողակա-
նութիւնն անցեր էր:

«Եթէ, ընդհակառակն Փարիզի մէջ
պահոււրած էր, աւելի լաւ էր քաջա-
լերել զայն՝ բան մը չգիտնալ ձեւանա-
լով, որպէս զի զգուշութիւնները թուր-
ցընէր:»

Վերջապէս Բրէնպորն համազուած ըլ-
լալով, մանաւանդ չուանը գնող մար-
դուն վրայ ստացած նկարագրութենէն
թէ՛ այն մարդը պարզապէս վարձեալ
գործիք մ'էր և իւր հաշուին գործած
փնտուել, և իւր կասկածներն ու գոր-
ծողութիւններն զգացընելէ առաջ ինչ
ինչ միջոցներ գործածել:

Գիտէր որ ծանր խաղ մ'էր խաղցա-
ծը, և իւր դիրքն իսկ վտանգի մէջ կը
ձգէր այսպէս վարուելով, բայց վստահ
իւր խղճին և դիտաւորութեանց ուղ-
ղութեանը վրայ, վտանգն աչքը կ'առ-
նէր, ըսելով ինքնիրեն որ, եթէ յաջո-
ղէր կնճիռը լուծել, պարզ գովեստ
կամ գոհութիւն մ'էր լսելիքը:

Այս որոշումն ընելէ ետեւ վերագար-
ձաւ Տուէ փողոցի 29 թիւ տանը գա-
ղափարին:

Այդ մասին ըրած առաջին խուկար-
կութիւնը շատ հարեւանցի և արագ ե-
ղած էր:

Որոշեց աւելի լուրջ կերպով կատարել:

Զոհին սենեակին մէջ պատին վրայ
ածուխով գծուած այդ հասցէն ան-
շուշտ նշանակութիւն մը պէտք էր ու-
նենար:

Խնդիրը կը մնար ճարտարութեամբ
գործելու, և իրաց ճիշդ վիճակն ան-
ձամբ ստուգելու, նոյն այն տանը մէջ
որ բոլորովին անմեղ երեւոյթ մ'ունէր:

Տնահարկերու գրասենեակէն առած
էր բոլոր վարձակալներուն անունները,
արհեստը, պաշտօնը, վճարած վարձուն
գումարը:

Տունը քսանուվեց յարկաբաժին կամ
բնակարան ունէր տուրք վճարող:

Ուշագրութեամբ աչքէ անցուց նախ
իւր ծանօթութիւնները, յետոյ պաշտօ-
նեայի կերպարանք և երեւոյթ առաւ.
շատ վարպետ էր ամէն տեսակ մարդ
ձեւանալու մասին. բայց պաշտօնեայ
ձեւանալն ամէնէն դիւրինն էր. բաւա-

կան էր լուրջ և միանգամայն խոնարհ
դէմք մ'առնել, թեւին տակ անձեռոց
մը կրել, և տարատին վարի ծայրը ե-
տեւէն վեր դարձունել, որպէս զի չի
ցեխոտէր: Այս կերպարանքին տակ
դէպի մեր ծանօթ տունն ուղղուեցաւ:

Հոն հասնելուն պէս դռնապանին օ-
թեակը մտաւ:

Տեսնելով որ պարապ էր, իսկոյն
դուրս ելաւ և ներսի բակը դնաց, ուր
մտած չէր:

Նոյն միջոցին տիկին Պընօա՝ դռնա-
պանուհին դուրս կ'ելնէր գետնայարկի
փոքր բնակարանէն, ուր Դանիէլ կ'ըն-
դունէր Ֆէրնանտը, և զոր տիկին Պը-
նօա յարդարելու և մաքուր պահելու
պաշտօն ունէր:

Թէեւ դռնապանուհին անմիջապէս
դուռը գոցեց, բայց և այնպէս Բրէն-
պոն կրցեր էր արագ նայուածք մը
նետել բնակարանին մէջ և ցնցուեր էր:

Առաջին սենեակին կահաւորումն ու
զարդարանքը ազդուապէս զարկեր էր
աչքին:

Իգական և միանգամայն տարփական
բան մ'ունէր:

Քաղաքենի ընտանիքի կամ մինակ ապրող ամուրի երիտասարդի սենեակ չէր...

—Օ՛, օ՛, ըրաւ ինքնիրեն:

Բայց զգուշացաւ ցուցնել իւր ստացած տպաւորութիւնը:

Միւս կողմէ դռնապանուհին ալ ժամանակ չի թողուց, հարցընելով իրեն թէ ի՞նչ կ'ուզէր:

—Եկեր եմ, ըսաւ, տուրքերուն հաշիւները նայելու. քանի մը տեղեկութիւններու պէտք ունիմ... եւ եթէ դուք էք դռնապանը...

—Այո՛, պարոն, ես եմ:

Եւ երկուքը մէկէն օթեակը մտան:

—Ամէն բանէ առաջ կ'ուզեմ գիտնալ թէ վերջին պայմանաժամէն ի վեր փոփոխութիւն եղած է ձեր վարձակալներու անուանց մէջ, որոց ցուցակն աւասիկ:

—Պատրաստ եմ ձեր հրամանին, պարոն, ըսաւ բարի կինը առանց բռնաւ կասկածելու:

—Կարգաւ քննենք, ըսաւ Բրէնպորն մատիտը ձեռքը:

—Ինչպէս որ կ'ուզէք, պարոն, բայց նստեցէք, որպէս զի աւելի զիւրաւ կատարէք:

Բրէնպորն աթոռ մ'առաւ, սեղանի մը քով գնաց եւ հոն նստաւ կրնակն օթեակին դրանը դարձընելով, որպէս զի անցնողները կամ ներս մտնողները չի տեսնեն իւր երեսը:

—Դուք ունիք նախ, ըսաւ ծանրութեամբ՝ աչքէ անցունելով պատրաստած և իւր առջև պարզած թուղթերը, երկու խարութ. մէկը նպարավաճառ Պ. Ֆրոմանին վարձու տրուած 3000 Ֆրանքի, միւսը նորաձեւավաճառ տիկին Ժանթիի 1800 Ֆր.ի:

Այսչափ լաւ տեղեկութիւն ունեցող մարդ մը, որ վարձակալներուն անունը և վճարած վարձերնուն ճիշդ գումարը գիտէր, կասկածելի չէր կրնար ըլլալ տիկին Պընօայի:

Ուստի առանց վարանելու պատաստասխանեց.

—Այո՛ այդպէս է, պարոն, բնաւ փոփոխութիւն չիկայ:

—Հիմա, երկու բնակարան կայ գետնայարկին մէջ:

—Այո՛, պարոն:

—Մէկը Պ. Թրիքոյի վարձուած է 750 Ֆրանքի:

—Ճշգիւ:

—Ի՞նչ է այդ Պ. Թրիքոյին գործը :
 —Կազմի ընկերութեան գրասենեակին
 Երկրորդ պետն է :
 —Ամուրի՞ է :
 —Այրի :
 —Միւս բնակարանը 800 Ֆր. ի վարձ-
 ուած է, Պ. Դանիէլ վառօայի :
 —Այո՛, պարոն, հոն ալ փոփոխու-
 թիւն եղած չէ և ըլլալիք ալ չունի
 առայժմ :
 —Ի՞նչ կ'ընէ այդ Պ. վառօան :
 —Ոչինչ :
 —Հասութեամբ՞ է :
 —Այո՛, պարոն :
 —Հոս ուղևոր գրագիր գրուած է, ը-
 սաւ Բրէնպորն ականջը տնկելով :
 Այս առաջին պատասխանն էր որ
 չէր համաձայներ իւր ստացած տեղե-
 կութիւններուն :
 —Ուղևոր գրագիր... չէ բոլորովին,
 պատասխանեց տիկին Պրնօա աննշմա-
 րելի վարանու մով մը, որ չի վրիպեցաւ
 ոտտիկանին աչքէն : Բայց վերջապէս
 շատ գործերով կ'ըբարդի և յաճախ ու-
 ղևորութիւն կ'ընէ :
 —Ի՞նչ գործերով :
 —Բայց... պորսայի գործերով, ը-
 սաւ տիկին Պրնօա պատահաբար :

—Այն ժամանակ ուղղել պէտք կ'ըլ-
 լայ, պատասխանեց Բրէնպորն : Ուրեմն
 այդ պարոնը կանոնաորապէս չի բնա-
 կիր հոս :
 —Ոչ, պարոն, տեսակ մը դադար
 ստնելու տեղ... հոս կուգայ, հոն
 կ'երթայ :
 —Բրէնպորնի մտքին մէջ լոյս մը ծա-
 փեցաւ յանկարծ :
 —Անոր բնակարանէն դուրս կ'ելնէիք
 երբ ես խօսք ուղղեցի ձեզ... :
 Տիկին Պրնօա կարմրեցաւ :
 —Ե՛ս... այո՛... պատասխանեց
 շփոթելով :
 —Լաւ, ըսաւ մտքէն Բրէնպորն, բան
 մը կայ անշուշտ :
 —Ելնենք առաջին յարկը, ըսաւ ա-
 ռանց բան մը նշմարած ըլլալու երևոյ-
 թի : Երկու բնակարան 2500 և 1000
 Ֆրանքի. մէկը Պ. Բէլբոուի և միւսը
 տիկին... :
 —Այդ վերջինին անունը փոխուած
 է, ընդմիջեց դռնապանուհին : Ասկէց
 երկու ամիս առաջ այդ տիկինը գիւղ
 գնաց, և բնակարանն ուրիշի ան-
 ցաւ :
 —Որու :

— Պ. Պօնէի :

— Ի՞նչ գործ կ'ընէ :

— Հասութատէր է :

— Ընտանիք ունի՞ :

— Այո՛, պարոն :

Այս անգամ տիկին Պրնօա խրատուելով Պ. Վառօայի նկատմամբ ցոյց տուած վարանումէն, բաւական համարձակ և կտրուկ կերպով պատասխաներ էր :

Բազմաթիւ է ընտանիքը :

— Ո՛չ, փոքրիկ մանչ գաւակ մը միայն ունի՝ քանի մ'ամսուան :

Բրէնպորն առանց բնաւ կասկած մ'ունենալու՝ շարունակեց իւր քննութիւնն երկրորդ յարկին մէջ, ուր չենք հետևիր իրեն :

Երբ աւարտեց, քաղաքավարութեամբ շնորհակալ էեցաւ տիկին Պրնօայի և մեկնեցաւ :

— Կարևոր բան մը չիկայ, կ'ըսէր իւր բնակարանը գացած միջոցին : Միակ կասկածելի կէտը, և այն ալ տակաւին... Պ. Վառօան կրնայ ըլլալ, ուղևոր գրագիր... հասութատէր... պորտայի գործեր ընող... իւր այդ տունը չի բնակող... դադար առ-

նելու տեղ... և՛ ինչպէս որ նշմարեցի, կիներ կ'ընդունի հոն... կամ ձեկ կին մը : Բնակարանը կին կը բուրէր կէս բացուած դռէն :

«Այո՛, տարփական ժամադրաՎայր, կամ կը սխալիմ չարաչար :

«Դռնապանուհիին վարանելէն կարմրելէն ալ կը հասկցուի թէ ամէն գիտցածը չուզեր ըսել... սակայն հարգաքննելն ալ խոհեմութիւն չէր... : Քառորդ մը չանցած լուր կը տրուէր այդ Վառօային, և ան ալ զգուշութեան միջոցներ ձեռք կառնէր, եթէ ծածկելու բան մ'ունի, կամ եթէ Բիէնֆիթի գործի հետ որ և է կապակցութիւն ունի... :

«Ուստի պէտք է որ սիրտս հանգիստ ըլլայ այդ կողմէն :

«Դռնապանուհին անմիջապէս դուռը գոցեց երբ օտարական մը տեսաւ :

«Աւելի պատճառ մ'է այս որպէս զի մտնեմ այդ ծածկախորհուրդ բնակարանին մէջ :

«Եւ պիտի մտնեմ»

Ժամ մը ետքը Բրէնպորն ապահովութեան պետին գրասենեակը կը ներկայանար, իւր բեզնաւոր ուզեզին մէջ

զետեղելով այն յանդուզն ծրագիրը, որուն գործադրութիւնը պիտի տեսնենք քիչ օրէն:

ԲԱՅԱՐՁԱԿ ԻՃԻՍՆՈՒԹԻՒՆ

— Է՛, պարոն Բրէնպօրն, ըսաւ ապահովութեան պետը, նշանացի հրաւիրելով որ նստի, ո՞ւր տեղուանք մնաց այդ ձախող գործը: Աւասիկ տասնուհինգ օրն անցաւ ոճիրին գործուելէն ի վեր, և մեք տակաւին կ'որորաբնանք: Եթէ կը կարգաք լրագիրները, կը տեսնէք հարկաւ թէ մեզ կը դնեն կը վերցընեն, ոստիկանութեան անփութութիւնն ու ապիկարութիւնը երկարօրէն կը քննադատեն, մի առ մի թուելով այն ամէն ոճիրներն որոց հեղինակները չի կրցինք գտնել...: Վերջապէս շատ կարևոր է այս անգամ արդիւնքի մը հասնել:

— Ա՛հ, լրագիրները, սենեակի մէջ նստած ոստիկանութիւն կ'ընեն...: Անկէ դիւրին հանգիստ գործ չի կայ, կ'ուզէի որ իրենք վարէին մեր պաշտօնը...: Այն ատեն կը հասկնային դը՛

ուարութիւնները, և մեր թափած ճիգերուն վրայ աւելի ճիշդ գաղափար կ'ունենային:

— Ըսել է ձեռնունայն կուգաք, ըսաւ ապահովութեան պետը դժգոհ դէմքով մը:

— Գոնէ տեղեկագիրս կ'ըսէ, պատասխանեց Բրէնպօրն:

— Ձեր տեղեկագիրը... կրկնեց պետը խկոյն երեսը նայելով:

«Այո՛, թերևս... բայց Գ...», պարոն Բրէնպօրն:

Այս վերջինը ժպտեցաւ իւր տոնյն ժպտովը:

— Ես կը ճանչեմ ձեզ, շարունակեց Պ. Բ... , գիտեմ թէ մինչև որ իրողութիւն մը երեք անգամ չապացուցուի, դուք կը վարանիք խօսքն ընելու...: Օ՛ն, տեսնենք: Խօսքը մէջերնիս, դուք անձնապէս կը հաւատա՞ք, կը յուսա՞ք թէ քայլ մ'առած էք այդ գործին մէջ:

— Ճշմարիտն ըսելով, այո՛, պատասխանեց Բրէնպօրն ոտքի վրայ ելնելով որպէսզի իւր պետին առջևի գրասեղանին մօտենայ, և ձայնն ալ ցածցընելով. բայց ա՛յնչափ տարտամ, ա՛յնչափ երկբայելի, և յաջողութիւնն ալ ա՛յնչափ

անստոյգ է, որ կը վարանիմ խօսքն ընելու մինչև իսկ ձեզի:

—Ես ձեզնէ մանրամասնութիւն չեմ ուզեր բնաւ, սիրելի՛ Բրէնպորնս: Գիտեմ ձեր սովորութիւնները, ձեր ձեւերը...: Գիտեմ որ առանց ընկերի, առանց աշխատակցի գործել կ'ուզէք...:

—Այդ վստահութիւնը թէ՛ կը քաջալերէ զիս և թէ՛ միանգամայն կը վախցնէ, ըսաւ Բրէնպորն ընդմիջելով: Ընդարիտը այս է որ կը կարծեմ թէ քանի մը թանկագին տարրեր ձեռք անցուցած եմ... և թէ լաւ ճամբու մէջ եմ, բայց կրնայ ըլլալ որ խաբուած, և սխալ ճամբու մէջ մտած ըլլամ...:

—Այն ատեն...

—Այն ատեն, խորհածս ա՛ն աստիճան անմիտ, ա՛ն աստիճան վտանգաւոր, ա՛ն աստիճան տարականոն երեւոյթ մ'ունի, որ չեմ ուզեր որ իմանայ նախաքննիչ դատաւորը...:

—Ա՛, ինչո՞ւ համար:

—Վասն զի նախաքննիչ դատաւորը, թէև արդարութեան պաշտօնեայ, աշխարհիկ մարդ մ'ըլլալով, փափկանկատումներ և նախապաշարումներ ունի հարկ... հետեւաբար իմ ընելիքներ-

րուս դէմ կը կենայ... իրաւամբ...:

—Դուք վտանգէ փախչող մարդ չէք...: Ես քսան անգամ վտանգի դէմ խիզախելիք տեսած եմ: Ի՞նչ է նայիմ ձեր խորհածը:

—Նպատակիս հասնելու համար գործածելիք միջոցներուս վրայ է, զորս չեմ կրնար խոստովանիլ... մանաւանդ եթէ չի յաջողիմ:

—Ի՞նչ են նայինք:

—Քանի մը տուն պիտի մտնեմ խուզարկութիւն մ'ընելու համար:

—Լաւ, հրաման խնդրեցէք Պ. Դանիէլ տը ֆէօրէն... Ատկէ դիւրին, ատկէ աւելի բնական բան չի կայ: Ինքըն ալ կուգայ ձեզի հետ:

—Ճշգիւ ատկէ պէտք է զգուշանամ... Օրինակէ պատճառ կամ պատրուակ մը չի կայ այդ խուզարկութիւնն ընելու...: Պ. Դանիէլ տը ֆէօր, խիստ խղճամիտ, խիստ օրինապահ մարդ, դէմ կը կենայ իրաւամբ...: Եւ կը հաճի... կը կենայ իրաւամբ...: Եւ կը հաճի... եթէ խուզարկութիւնն ապացուցանէ սխալած ըլլալս... տասնէն ինը հաւանական է որ սխալիմ...: Այն ժամանակ ի՞նչ աղուոր աղաղակներ լրագրաց մէջ. թողունք որ գործը հրապարակ հանելով զգուշութեան պիտի հարկադրեմ այն անձերը, զորս կ'ուզեմ կա-

տարելապէս անկասկած և անհոգ պահել:

—Կը հասկնամ: Ի՞նչպէս պիտի ձեռնարկէք գործի:

—Թերեւս աւելի լաւ կ'ըլլայ որ եթէ չի յաջողիմ և օձիքս ձեռք տամ, դուք կարենաք ստուգիլ ըսել թէ տեղեկութիւն չունիք... որպէս զի ձեր խղճին չի դպչի:

Ապահովութեան պետը մտածեց վայրկեան մը:

—Կ'ուզէք որ կատարեալ ազատութիւն, լիազօր իշխանութիւն տամ ձեզի ուղածնիդ ընելու:

—Այո՛, պարո՞ն:

—Ուրիշ ո՞վ ըլլար ձեր տեղը, բացարձակապէս մերժողական էր պատասխանըս:

—Գիտեմ:

—Բայց ձեզի այ՞ կ'ըսեմ: Գիտեմ որ դուք չարաչար չէք գործածեր...: Ասկէ զատ, երբ ոճրագործներ կամ ընկերութեան համար վտանգաւոր մարդիկներ գտնելու վրայ է գործը, նպասիւր և արդարացի խնայել: Առանց ասոր ոստիկանութիւնն անզօր և անզէն կը մնայ: Ուստի ըրէք ինչ որ ձեր ինչըն և հարկը թելադրեն ձեզի:

—Պ. Դանիէլ տը Բէօրի չէ՞ք խօսիր:

—Ի՞նչ բանի վրայ խօսիմ, պատասխանեց ապահովութեան պետը վարպետութեամբ: Բան մը չեմ գիտեր:

Բրէնպորն ժպտեցաւ աչերը կէս գոցելով:

—Ճշմարիտ է: Եւ եթէ ձերբակալուիմ:

—Կ'իմացընէք ինձի ծածկաբար և ձեզ ազատելու միջոցը կը գտնուի: Բայց աւելի լաւը...

—Օձիքս ձեռք չտալն է:

—Բնականաբար:

—Պիտի փորձեմ: Եթէ յաջողիմ, ինչ որ ալ պատահի, յաղթութիւն մը կ'ըլլայ ըրածս...: Իսկ եթէ չի յաջողիմ, ես աննշան գործիք մ'եմ, զոր դուք կրնաք յայտնապէս կշտամբել:

—Կը յուսամ որ կը յաջողիք:

Բրէնպորն հրաժեշտ առաւ իր մեծէն՝ առանց ուրիշ խօսք մ'ընելու, և փութով իւր բնակարանը գնաց հաստատ որոշմամբ որ անյապազ գործի ձեռնարկէ, ամէն վտանգ աչքն առնելով:

Եւ իրօք Բրէնպորն բարոյական մեծ հաւաստիք մը կ'զգար իւր ձեռնարկին

յաջողութեան համար, զոր չէր ուզած
յայտնել իւր մեծին:

Որչափ աւելի կը մտածէր այնչափ
աւելի կ'ըսէր ինքնիրեն թէ այն Տուէ
փողոց 29 հասցէն, զոր գտեր էր ման-
կաբարձուհիին տան մէջ, անշուշտ այն
կնոջ կեանքին կարևոր մէկ գտողանիքը
կը պարունակէր:

Արդ, ճշդիւ Տուէ փողոցի այն 29
թիւ տան մէջ կ'էր քաղաքի բնակարան մը
կար, ուր վարձակալը կանոնաւորապէս
չէր բնակեր... այլ Գարեգի մ'էր:

Քիչ մը մութ էր այս:

Բայց ո՛չ, յստակ էր:

Կնոջական պատմութիւն մ'անշուշտ
կապ ունէր Բիէնֆիլիի ոճի ին հետ, և
Պ. Վառօայի բնակարանն ալ սահման-
ուած էր կին մ'ընդունելու, որ նոյն-
պէս կը ծածկէր ինքզինքը... և որուն
խօսքն եղած չէր իրեն:

Հոն էր թերևս գործին հանգոյցը,
եթէ իւր նախատեսութիւններն ու խոր-
հրդածութիւններն ուղիղ էին:

— Պիտի մտնեմ Պ. Վառօայի տունը,
կ'ըսէր ինքնիրեն, և պիտի գիտնամ ինչ
կայ հոն:



ԱՆՍՏՈՐՍԳԻՐ ՆԱՄԱԿՐ

Ժիւլ Շամպէզի գրած և թղթատա-
րութեան յանձնած նամակը, զոր
Անթօան Քօսատի ուղղած էր, իրիկունն
հասաւ անոր ձեռքը. երբ իւր սովորա-
կան խեղճուկ ճաշարանին մէջ ընթրելէ
ետև իւր բնակարանը կը մտնէր:

Դռնապանուհին տուաւ իրեն ըսելով
թէ՝ բացակայ ըլլալուն պատճառաւ իւր
ւեներակը չէր տարած:

Անթօան Քօսատ շնորհակալ ըլլալով՝
իսկոյն վեր ելաւ տարտամ սրտատան-
ջութեամբ մը:

Ո՞վ կրնար գրած ըլլալ իրեն:

Տիանէն և Ռիչմոն դերկոմէն գատ
մարդ չէր իւր գիտեր անունը, ոչ ալ
ուր բնակիլը Փարիզի մէջ...

Եւ չէր կրնար ենթադրել թէ կոմ-
սուհին կամ տարփաւորը գրած ըլլային
ուղղակի իւր բնակարանը, որովհետեւ
որոշուած էր մէջերնին որ Բիւի տը-
լէրմիթ փողոցի տան մէջ պիտի հաղոր-
դակցէին իրարու հետ:

Իւր սենեակը մտնելուն պէս՝ փոք-
րիկ լամպար մը վառեց և պատեանին

վրայի գիրը նայեցաւ : Անծանօթ էր իրեն :

Սիրտը սեղմուեցաւ :

Ի՞նչ կը նշանակէր այս :

Գողգոթուն ձեռքով մը պատռեց պատեանը, բացաւ մէջի թուղթը, և վրան ակնարկ մը նետելով, խուլ գոչում մ'արձակեց :

Անպատում սարսափ մը կը կծկէր իւր կոշտ ու դժնեայ դէմքը . ջղային սօրսուռ մը կը յուզէր բոլոր մարմինը :

— Ո՞վ կրնայ ճանչել զիս . . . գիտնալ իմ ըրածս . . . կորսուած ենք, կազալեց :

Եւ աթոռի մը վրայ իյնալով՝ նորէն կարդաց ժիւլ Շամպէզիի գրած տողերը :

— Ծպտեալ գիր մ'է . ըսաւ . ո՞վ գտած է : Վերջապէս մէկը կայ որ ամէն բան գիտէ . . . ամէ՛ն բան :

«Բարեկամ մ'է, որովհետեւ վտանգըս կ'իմացընէ ինձի . . . : Ա՛հ, բարեկամներ կան, որք թշնամիներէ աւելի գէշ են . . . անոնք որ մեր գաղտնիքը գիտեն . . . և կրնան մեզ կառափնարան զրկել . . . : Ո՞վ կրնայ ըլլալ :

Եւ ձեռքը ճակտին զարկաւ . . .

— Թերեւս այն մարդն է, այն անծանօթը, որ ազատեց Տիանը . . . հո՛ն . . . որ երեցաւ մեզի իբրև մարմնաւոր նախախնամութիւն . . . : Այն պէտք է ըլլայ . . . եթէ ուրիշ մէկը չէ . . . : Վերջապէս ով որ ալ ըլլայ . . . ձեռքին մէջն ենք :

«Տեսնենք ինչ կ'ըսէ :

«— Չուանը ծախող խանութպանը գրասան, և անկէ առին իմ նկարագիրս . . .

«Տարակոյս չկայ որ այս տեղեկութիւնն ինձի տուողը գիտէ գործած ուճիրս, և ուրիշ մարդ չէ եթէ ոչ Բիւրտը Լէքմիթ փողոցի մարդը : Թշուառական ամէն տեղ է ուրեմն : Ամէն բան տեսեր է Սէնթ-Անթոան փողոցի չուանավաճառին խանութէն մինչև Բիէոֆիթեռեէս եկեր է . . . : Անունս, բնակաբանս . . . վերջապէս ամէն բան գիտէ . . . : Ի՞նչ շահ ունի այդ մարդակերպ սասանան այս ամէնուն մէջ :»

Անթոան Բոսատ՝ ինքզինքը գրեթէ էտրուած՝ ինկեր մնացեր էր աթոռին վրայ, շանթահարուածի պէս ակռաները կափկափելով :

Ուղեղը կը ճաթէր . . . աչքը գրեթէ չէր տեսներ . . . :

Վայրկեան մ'այնպէս եկաւ իրեն թէ
պիտի խենթենար:

Բայց թշուառականը կորովի մարդ
էր և ոչ ջղային:

Տագնապը շուտով հանդարտեցաւ.
դաղափարները վերադարձան աւելի
յստակ:

— Զիս ազատել ուզող մարդը, որ
Տիանն երէկ ազատելէ ետեւ այսօր ալ
գլխուս վրայ կախուած վտանգը կ'ի-
մացընէ ինձի, ճշդիւ Սէն Սիւլբիս ե-
կեղեցւոյն աղքատաց գանձանակին մէջ
խոթած թուղթերս դողցողն է, որով-
հետեւ ամէն բան գիտնալով, կոմսու-
հիին գրած նամակն և գծած յատա-
կագիծը ձեռքն ունենալով՝ մեզ չի
մասնեց դեռ, որովհետեւ մեզի գէշու-
թիւն ընելու կարող ըլլալով՝ կը ջանայ
մեզ վերկել. պարզապէս մեղսակից մ'է
առայժմ...: Ի՞նչ գին պիտի ուզէ այս
մեղսակցութիւնը վճարել տալու հա-
մար:

Եւ ոտքի վրայ ելնելով.

— Ա՛հ, եթէ հիմա դիմացս կեցած
ըլլար, ըսաւ տխուր ձայնով մ'և բար-
կայայտ աչերով... յաւիտեան չէր
կրնար գալ և բան մը պահանջել:

Բայց ո՛չ անունը գիտեմ... ո՛չ բը-
նակարանը... ո՛չ ինչ ըլլալը... ո՛չ ալ
ինչ ընելը:

«Օ՛ն, յարեց, հիմա ամէնէն աւելի ստի-
պողականը նայինք... և օգուտ քաղենք
ըրած ազդարարութենէն, որ ինձի շատ
օգտակար է, ինչ և ալ ըլլայ շարժա-
ռիթը: Նկակագիրս առնուած է... մէկ
ժամէն միւսը կրնամ ձերբակալուիլ...
և հետեւանքը կառափնարան է ինձի
համար: Իսկ Տիանի համա՞ր...: Օ՛, ո՛չ,
Անթուան Բօսատ է միայն յանցապարտ:
Բայց պէտք չէ որ բռնուիմ: Ուրեմն
փախչինք այս տունէն, ուր այլ ևս
ապահով չեմ: Բայց ո՞ւր պահուիմ:
Պէտք է իմացընել Տիանի:»

Նամակը ծալլեց, թղթապանակին մէջ
դրաւ, յետոյ՝ կանթեղը մարելով,
դուրս ելաւ, սենեակին դուռը կղպեց
և փողոց ելաւ:

Գիշեր ըլլալով, մութէն օգուտ քա-
ղել ուզեց և շտիուեցաւ դէպի Բիւի-տը
Լէրմիթ փողոցն ուր պէտք էր նախ և
անպատճառ երթար:

Այն տեղ միայն կրնար հաղորդակ-
ցիլ Տիանի հետ, նամակ գրելով ու հոն
թողլով, եթէ լուր մը կամ խօսք մ'ու-
նենար անոր տալիք:

Առիթն ստիպողական էր. ասկէ զատ երկու տարփաւորներու հաճելի բնակարանը կրնար առժամեայ ապաստանարան մ'ըլլալ իրենց, մինչև որ կոմսուհիին հետ խորհրդակցութեամբ որոշում մ'ընէր:

Ճամբան շատ երկայն երևցաւ Քոստտի, որ չէր համարձակեր կառք նստիլ, վախնալով որ կառապանը կրնար օր մը յիշել իւր նկարագիրն և տարած տեղը:

Ամէն վայրկեան ետին կը դառնար կամ կանգ կ'առնէր՝ տեսնելու համար թէ ետեւէն եկող կա՞ր:

Չի գիտնալով կոմսին մեկնիլը, որ նոյն օրը ճամբայ ելած էր, կը վախնար թէ ան ալ կը դիտէր գիրենք:

Վերջապէս ամէնէն սուր և ամայի փողոցներէն երթալով հասաւ մեզի ծանօթ տունը, որուն բանալիներէն մին իրեն յանձնած էր դերկոմսը:

Բայց ներս մտնելէն առաջ, Ժիւլ Շամպէզիի բանեցուցած վարպետութեանը հետեւելով՝ նոր շինուող տանը տախտակներուն մէջ սողոսկեցաւ, և քառորդի մը չափ հոն կեցաւ աչքն ու կանջները սրած, որպէս զի ստուգէ թէ ետեւէն եկող կամ դիտող կա՞յ: Յետոյ

օգուտ քաղելով վայրկեանէ մը, ուր մարդ չէր անցներ ամայի փողոցէն, պատին տակէն սահելով գնաց դրանը քով, կամացուկ մը բացաւ, ներս մտաւ և ետեւէն գոցեց:

Կատարեալ մթութիւն կը պատէր զինքը:

Ասկից քաջալերուելով շունչ առաւ, սփոփանքի հառաչ մ'արձակեց:

Սարխափելով անցաւ առաջին սենեակէն, և մտաւ ննջասենեակը, ուր գիտեր թէ լուցկիներ և մոմեր կային:

Լոյսը վառելուն պէս սկսաւ աչքէ անցունել սենեակը:

Ամէն բան իւր սովորական տեղն էր: Հեռակապէս յայտնի կը տեսնուէր թէ իւր հոնկէ մեկնելէն ի վեր մարդ ոտք դրած չէր հոն:

Յետոյ աչքէ անցուց փոքրիկ սեղանը, որուն վրայ կրնար նստակ մը կամ ազդ մը գտնուիլ Տիանի կամ դերկոմսին կողմէն, ինչպէս որ կանխաւ որոշած էին:

Բայց չի կար:

Բանլիքներուն ամէնն ալ դարակներուն ու պահարաններուն վրան էին:

Բացաւ զանոնք, խնամով աչքէ ան-

ցուց , վերջին ծայր զգուշաւորութեամբ , վասն զի ոտքն այդ աստատանին մէջ դնելէն ի վեր , ուր իւր կաթընկերքոյրը կուգար , Անթօան Գօսատ ինքզինք սրբավայրի մը մէջ տեսնող մարդու մը պէս կը վարուէր , կարծես վախնալով որ յարգանսց կամ ակնածութեան հակառակ շարժումով կամ վարմունքով մը սրբապղծութիւն մը գործած կ'ըլլար :

Նորածեւ կնոջ մեղի բոյրեր , փափուկ անուշահոտութիւններ կուգային իրեն , և անոր վրայ՝ Տիանի վրայ կը խօսէին , և իւր շփոթութեան , վախերուն , հըննընուքներուն մէջ այդ շրջասփիւռ հեշտութեան տարտամ զոյրչիները կը սարսուեցընէին զինքը , վայրագ դէմքին խտութիւնը կը մեղմացընէին , աչերուն մէջ գորովանքի բոց մը կը դնէի՞ , կ՛ծկած շուրթերը կը թուլցընէին , և բերնին բիրտ ձեղքը կը ծածկէին :

— Եւ սակայն խօսք տուեր էր ինձի՞ ըսաւ ակնածալից վհատութեան և գորովալից գանգատի ձայնով մը :

Եւ դժգունեցաւ :

— Թերեւս ազատ չէ , յարեց , և իւր

լռութիւնը կ'ապացուցանէ թէ սպառնալիք մ'եղած չէ իրեն... և թէ իւր կողմէն նոր վտանգ մը ծագած չէ :

« Բայց պէտք է որ իմացընեմ իրեն... : Գրո՞վ . ո՞չ , վտանգաւոր կ'ըլլայ... : Ասկէ դատ... կ'ուզեմ տեսնել զինքը :

« Ինչո՞ւ երթամ ասկից , յարեց կարճ լռութենէ մ'ետեւ :

« Այս տունը , այս առանձին թաղին մէջ , կրնայ զիս պատասպարել ժամանակ մը... »

« Կը մնամ հոս : Անհնար է որ չիգայ կամ մարդ չի զրկէ և տեղեկութիւն մը չուզէ : Ուստի կ'ապասեմ : »

Ինքզինք յոգնած , սրտայուզութենէն կոտրտած , և սենեակին օդէն թուլցած զգալով , ժպտուն՝ անկողնին մօտեցաւ , երկարօրէն անոր նայեցաւ և մէկէն ետ քաշուեցաւ :

Աչերը տեղ մը կը փնտռէին գիշերը անցունելու համար :

Պահ մը վարանելէ , ետեւ փոխանակ թիկնաթոռի կամ նստարանի մը վրայ տարածուելու , անկողնին քով վերադարձաւ , անոր առջեւի գորգն աչքէ անցուց և վրան պառկեցաւ առանց հանուելու , հաւատարիմ շան մը պէս , որ

իւր տիրոջ քունին վրայ կը հսկէ :
 Յանկարծ տնկուեցաւ :
 Դուրսի դրան կղպանքին մէջ բանս
 լիքի մը ճռինչը լսեր էր :



ԱՌԱՋԻՆ ՀԱՄԲՈՅՐԸ

Վայրկեան մ'ետքը Տիան ներս մտաւ
 —Ա՛, դո՛ւն ես, գոչեց Անթօան ֆօ-
 սաա զարմանքով և ուրախութեամբ :
 —Չէի՞ր սպասեր ինձի, պատասխա-
 նեց կոմսուհին ժպտելով : Կոմսը չունեց
 այսօր ժամը չորսին, և ես ալ հոս ե-
 կայ :
 —Չէի գիտեր չուելդ, պատասխա-
 նեց Անթօան :
 —Ես կը կարծէի թէ դերկոմսն իմա-
 ցուցեր էր քեզի :
 —Ո՛չ, բան մը չըսաւ ինձի, ոչ ալ ը-
 սել տուաւ :
 —Ի՞նչպէս ուրեմն դուն հոս կը գըտ-
 նուիս :
 —Վասն զի չէի համարձակեր այլ և՛
 մնալ իմ բնակարանիս մէջ... վասն զի
 կը յուսայի որ հոս լուր մը կը գտնէի՝

քեզնէ, և վասն զի խօսելիք ունէի
 քեզի... :
 —Նոր բա՞ն մը կայ, հարցուց Տիան՝
 տեսնելով իւր կաթեղբոր դժգունու-
 թիւնը : Վտանգի սպառնալի՞ք մը կայ
 քեզի դէմ,
 —Երկուքիս ալ դէմ :
 —Երկուքիս ա՛լ... հասկցու նայիմ :
 —Ես կը կարծէի թէ կասկած մը չի
 կար իմ վրայ... բայց տես :
 Եւ Շամպէզդիի նամակը ներկայացուց :
 Տիան յափշտակեց թուղթը ձեռքէն,
 և լոյսին քով ելթալով աչքէ անցուց :
 Յանկարծ դէմքը դժգունեցաւ և
 թուղթն ինկաւ ձեռքէն :
 —Աստուած իմ, գոչեց խեղդուկ
 ձայնով մը, գէշ է մեր գործը, Ամէն
 բան իմացուեր է : Այս գիրը գրողը
 կրնայ քեզ ամբաստանել, մատնել :
 —Այդպիսի բան մ'եթէ ըլլայ, պա-
 տասխանեց ֆօսաա այնպիսի ձայնով
 մը, որուն քաղցրութիւնը զարմանալի
 էր այդ վայրագ մարդուն վրայ, եթէ
 այդպիսի բան մ'ըլլայ, Տիան, մի՛ վախ-
 նար բնաւ. իմ անձնուիրութիւնս ան-
 սահման է քեզի համար :
 —Անշուշտ... բայց եթէ քեզ բռնեն,
 հարցաքննեն... քեզ սպառնացող մահ-

ուան առջև կրնա՞ս վստահ ըլլալ որ
անխոհեմ բառ մը խօսք մը չի փախչիլը
բերնէգ:

— Համբ կ'ըլլամ:

— Ամէնէն աղէկը հոս չի կենալդ է,
գոչեց կոմսուհին: Պէտք է փախչիլ:

— Փախչի՛լ, կակազեց Քոստա: Եւ
ո՞վ պիտի հսկէ քու վրադ: Ո՞վ պիտի
գտնուի հոս որ քեզ վտանգէ ազատէ,
երբ մինչև քեզի հասնի:

— Դուն ալ վտանգի մէջ ըլլալով,
հարկաւ անկարող վիճակի մէջ կը գըտ-
նուիս:

— Ես չեմ փախչիլ... ոչ: Կ'ուզեմ
մօտք մնալ, քեզ իմ մօտս դգալ...:

Կոմսուհին անհամբեր շարժում մ'ը-
րաւ:

— Տիա՛ն, կեանքս ուզէ ինձմէ...
պահանջէ ինձմէ որ քու երեսդ չի տես-
նեմ, ձայնդ չի լսեմ, ամիսներով, տա-
րիներով, բայց մի՛ պահանջեր որ հե-
ռանամ քեզնէ... կ'աղաչեմ... կը պա-
ղատիմ... այդ ցաւը, վշտի յաւել-
ուածը խնայէ ինձմէ...: Չե՞ս գիտեր
որ ես դժբաղդ եմ...:

Չայս ըսելով Քոստա կոմսուհին ծուն-
գերն ինկաւ, անոր սնդուսէ շրջադգես-
տին ծալքերը իւր խորդուբորդ ձեռ-

քերուն մէջ ճմրթկելով, և իւր բոցա-
վառ, չոր ու տենդոտ շրթունքն անոր
ձերմակ, նուրբ ու անուշաբոյր ձեռքին
վրայ դնելով:

— Օ՛ն. ըսաւ կոմսուհին՝ գրեթէ յուզ-
ուելով այդ աննշան սրտին մէջ փըթ-
թած ջերմ կրքին արտայայտումէն, ո՛ն,
հանդարտէ՛, զգօնացիր: Իմ ըսած բա-
ժանուճս առժամանակեայ պիտի ըլ-
լայ...: Ետքը նորէն կուգաս...:
Մտածէ թէ կրնաս ձերբակալուիլ... և
հետևանքը քեզի համար...:

— Կառափնարա՞ն է. գիտեմ:

Կոմսուհին սարսուեցաւ:

— Մահն ալ մեզ աւելի չի՞ դատեր
իրարմէ:

— Այո՛, բայց չեմ վշտակրիր:

— Տիան՝ յուզուելով գնաց թիկնաթո-
ռի մը վրայ ինկաւ սրտաբեկ: Անթօան
ծունգերուն վրայ քոկրտուելով քովը
գնաց, դժգոյն, շնչահատ. չէկ աչերն
արտասուքով լցուած, կարմիր մազերը
ցած ձակտին վրայ ցրցքնած:

— Մտիկ ըրէ, ըսաւ խուլ ձայնով մը:
Իմ նկարագիրս ծանօթ է հիմա... Մարդ
մը կայ դադունիքս գիտցող, կրնայ
մատնել զիս, և պիտի մատնէ մէկ օ-

րէն միւսը, մօտ ժամանակէն: Կ'զգամ
որ կեանքիս տէրն ես չեմ այլ ևս...
դահիճը կ'ընայ դէմս տնկուիլ, վաղը,
միւս օր կամ մէկ ժամէն: Թող տուր որ
խօսիմ քեզի... առաջին և վերջին ան-
գամ, ինչպէս որ պիտի խօսիմ զիս
խոստովանցնող քահանային...:

Ձեռքը ճակատին տանելով՝ գլուխը
ցնցեց յուսահատ շարժումով մը:

— Տիա՛ն, ըսաւ խօսքը շարունակե-
լով. քանի որ քուկդ եմ... այն օրէն
ի վեր ուր աչերս լոյսին բացուելով
քեզ տեսան, դուն իմ անձնուիրութե-
նէս ու հնազանդութենէս զատ ուրիշ
բան չի տեսար իմ վրաս... և չես գի-
տեր թէ այս անձնուիրութիւնն ի՛նչ
տանջանքներ տուած է ինձի, և այս
հնազանդութիւնն ալ ի՛նչ գարշելի հըն-
հնուքներէ կազմուած է...:

Վայրկեան մը կանգ առաւ աչերը
գոցելով, որպէս թէ իր ներսը տես-
նելու կամ հեռաւոր անցեալի մը յի-
շատակներ արթնցնելու համար:

— Կը յիշե՞ս, ըսաւ ծանր և դող-
դողուն ձայնով մը, այն օրն ուր
առաջին անգամ շրթունքդ իմ շրթուն-
քիս վրայ դրիր: Օգոստոս ամսուն գե-

զեցիլ իրիկուններէն մէկն էր... Հա-
սուն ցորենի որայներն և խոտի բար-
դերը դիզուած էին դաշտին մէջ, ուր
ծղրիթներն ու ճպուռներն իրենց միօ-
րինակ սուր ճիչերովը կը ճռուողէին:

«Ցերեկը սաստիկ տաք եղեր էր, և
իրիկունն ալ զովութիւնը չէր գար:

«Դուն տասնուչորս ասրու էիր... ես
տասնուհինգ: Դուն արդէն մեծ և գե-
ղեցիկ էիր, երկայնահասակ և ճապուկ.
Վրադ այնպիսի անվեհեր համարձակու-
թիւն մը կար, որ կը դիւթէր և մի-
անգամայն կը վախցընէր դէմինդ: Ես
թանձր և տգեղ էի, ինչպէս որ միշտ
եղած եմ և տակաւին եմ, և այն կոյր
հաւատարմութեան մէջ որ քեզի նուի-
րեր էի, պաշտումի պէս բան մը կար
զոր Աստուծոյ միայն կը պարտի մարդ:
Ձեր ծնողքը և ուրիշ ոչ ոք կը կաս-
կածէր մեր ընտանութեանը վրայ...:

«Դուն շատ բարձր էիր ու ես շատ
ցած, որպէս զի կարենայի երբէք մին-
չեւ քեզի հասնիլ...: Միտքէս չէր
անցներ...:

«Բայց դուն կրնայիր խոնարհիլ մին-
չեւ ինձի...: Եւ այնպէս ըրիր...:

«Ազատ էիր ինձի որ ընկերանամ
քեզի...: Պատիլ կ'ուզեմ կ'ըսէիր:

«Հեռացանք հօրդ ապարանէն... և զիս ու քեզ միեւնոյն կաթով սնուցանող մօրս ագարակէն»:

«Լուիկ մնջիկ կը քալէինք: Լուսինը կը բարձրանար... դիզուած ցորենի և խոտի շեղջերը լայն ստուերներ կը ձգէին գետնին վրայ»:

«Յանկարծ կանգ առիր»:

«Ես ալ քեզի նայեցայ»:

«Դէմքդ դժգունած էր... սեւ բիրերդ ադամանդի պէս կը փայլէին»:

— «Թեւդ ինձի տուր», ըսիր:

«Առաջին անգամն էր որ այդ առաջարկը կ'ընէիր ինձի»:

«Շատ անգամ ձեռք ձեռքի տուած վազվուտէր էինք փողոցի յակոտներուն պէս, բայց երբէք թե թեի տուած չէինք իբրև պարոն և տիկին, իբրև երկու նշանած, իբրև երկու ամուսին, իբրև երկու սիրահար»:

«Ցնցուեցայ...: Եւ երբ զգացի քու նուրբ ու թեթեւ ձեռքդ որ կը դողար այն իրիկունը թեւիս վրայ յեցած, շտկուեցայ»:

«Այնպէս եկաւ ինձի որ զիս ճարտար տեղ կը դնէիր, և քեզի հաստար կը բռնէիր»:

«Անխօսուկ քալելով կը սեղմուէինք իրարու հետ, կ'զգայի սրտիդ բարասումը, որ իմ սրտիս բարասմանը կը պատասխանէր»:

«Աչքս չփոթ կը տեսնէր, չէի գիտեր ինչ կ'զգայի... գինովի պէս էի... և բան մը չէի մտածեր, մանաւանդ բան մը չէի յուսար... մինչև իսկ բանի մը չէի բաղձար...»:

«Միթէ գորտը կրնա՞յ բաղձալ երկինքին երեսը փայլող լուսաւորին, որ հեռուէն կ'ողողէ զինքը լուսով, բայց չի տեսներ»:

«Կամաց կամաց թուլցուցիր մեր քալուածքը»:

«Ալ հիմայ միայն մարմինդ չէր որ կը սեղմուէր իմ մարմնոյս հետ»:

«Գլուխդ, ուր լուսնին աղօտ լոյսը կը ճառագայթէր ոսկեգեղ մազերուդ մէջ, ուսիս վրայ ծոեր էր»:

«Վարսերուդ գանգուրները կը գգուէին այտս, և տաք երկաթի մը պէս կ'այրէին»:

«Տաքուկ և անուշաբոյր շունչդ մինչև բերանս կուգար...: Այնպէս կը թուէր ինձի թէ պիտի իյնայի... սրունքս կը դողգողային»:

«Յոգնեցար, ըսիր ինձի մեղմ ձայն»:

նով մը, որուն հունչքը փոխուած էր
և ոչ ևս կը նմանէր քու ծիծաղկոտ
թարմ ձայնիդ, ոչ ալ լսած ձայներէս
մէկունս:— «Քիչ մը հանգիստ ընենք:»

«Եւ առանց ինձմէ զատուելու, միւս
ազատ ձեռքովդ խոռոչ մը ցոյց տուիր
ինձի, տեսակ մը բոյն, երկու բարդե-
րու մէջտեղ, ուր թանձր ստուեր մը
քաղցր ու միանգամայն խորհրդաւոր
բան մ'ունէր:»

«Զիս հոն տարիր:»

«Առանց բան մ'ըսելու տարածուեցար
խտին վրայ, գլուխդ բարդին յեցած,
ես ալ այնպէս ըրի:»

«Գոցեցիր աչերդ:»

«Կարծեցի թէ կը ննջէիր, և շունչս
բռնեցի անշարժ, որպէս զի չարթնցը-
նէի քեզ:»

«Ծղրիթները կը շարունակէին իրենց
ձոռնողումը:»

«Քառորդի մը չափ այնպէս անցնե-
լէ ետեւ, քու անշարժութենէդ քաջա-
լերուելով, արմուկիս վրայ տնկուեցայ
և գլուխս ծռեցի որ քնանալդ տես-
նեմ:»

«Երկայն կոպերդ գոցուած էին, և
սակայն կը թուէր ինձի թէ աղօտ բի-

բերէր ցայտող լոյսի նշոյլ մը կ'անցնէր
թարթիչներուդ տակէն:»

«Կէս բաց բերանդ կը ժպտէր, ճեր-
մակ ակռաներդ ցուցնելով:»

«Կարծեցի թէ շրթունքդ դէպի իմ
չուրթերուս երկնցած էին, և դէմքդ
ալ զիս կը կանչէր:»

«Ծռեցայ և մօտեցայ...»

«Յանկարծ թեւերդ վկայիս վրայ նե-
տելով զիս բերնիդ քով քաշեցիր, և
մեր առաջին համբոյրը փոխանակե-
ցինք...»

«Արդ, ըսաւ Անթօան Գօսատ Տիանի
մէջքէն բռնելով և մտերմին խանդով
մը կուրծքին վրայ սեղմելով, այն ա-
ռաջին համբոյրը կ'զգամ միշտ... կ'այ-
բէ՛ զիս նստաւին:»

— Ես բան մը խորհած չէի՝ առաջ-
աւրնէ, պատասխանեց Տիան ցած ձայ-
նով և աչքը հեռաւոր հորիզոնի մը
վրայ յառած, որ միայն իրեն տեսա-
նելի էր: Իմ յատուկ կողմիս առաջին
ցայտնութիւնն եղաւ այդ ինձի հա-
մար:»

— 0՞, գիտեմ, ըսաւ Անթօան համակերպած քաղցրութեամբ մը, որուն ետեւը խորին յուսահատութեան մը խուլ արձագանգը կը զգացուէր: Գիտեմ, ես չէի քու փնտռածդ այն իրիկունը... սէ՛րն էր: Քու կաթ-եղբայրդ հոն գտնուելով, զայն բռնեցիր... ապա թէ ոչ, չէիր ընտրեր զայն...: Եւ ետքը, երկար ժամանակ զղջացիր...: Կրնայ ըսուիլ որ ատելութիւն կը ներշնչէի քեզի...: Կը փախչէիր ինձմէ...: Եւ երբ չի կրնայիր փախչիլ, պարզ արհամարհանքով մը կը վարուէիր ինձի հետ, տեսակ մը զզուումով, որ սիրտս կը կեղեքէր: Ես, հլու և գետնասող, ինչպէս շուն մը որ ինքզինք յանցապարտ զգալով՝ իւր տիրոջը խարաղանով զինուած ձեռքը կը լիզէ, ես ալ ամէն բան կ'ընէի՝ մոռցնել տալու համար քեզի այդ սըխալման, այդ մոռացման վայրկեանը, խոնարհութեամբ և համբերատարութեամբ ներում կը խնդրէի այն երջանկութեան փշուրին համար, զոր առանց ուզելու՝ թողուցեր էիր որ ինկեր էր ոտք՝ դ տակը պառկողիս վերայ:

— Ճշմարիտ է, պատասխանեց կոմսուհին. այդ ազատեց քեզ... այդ է պատճառը, որ զիս բոլորովին չի կորսընցուցիր:

— Յետոյ ամուսնացար օր մը, ըսաւ Քօսատ կապարագոյն դէմքով և ակուաները սեղմած: Գեղեցիկ, հարուստ, և կրթեալ անձ մը, փայլուն այն ամէն ձիւքերով, որք կը պակսին իմ վրաս, ամուսին եղաւ քեզի: Ա՛հ, ո՞րչափ ատելութիւն ներշնչեց ինձի...:

— Նախանձո՞տ ես ուրեմն, ընդմիջեց կոմսուհին՝ հետաքրքրութեամբ մ'անոր նայելով:

— Կը հարցընէ՞ք, գոչեց Անթօան:

— Երբէք ըսած չէիք ինձի, ոչ ալ ցոյց տուած:

— Կը սիրեմ, կ'ըսեմ, և դուն կը հարցընես ինձի թէ նախանձո՞տ եմ... Այո՛, նախանձոտ եմ վագրի մը պէս...:

«Ա՛հ, հարսնիքիդ առաջին գիշերը... պատուհաններուդ տակն անցուցի, պարտէզին մէջ, վայրկեանները համբերելով, յիշելով այն անմոռանալի իրիկունը, այն համբոյրը... այն գգուածքը... այն հառաչները... եղունգնե-

բողոք կուրծքս կեղեքելով, խածնելով
գետինը, որուն վրայ կը թաւալէի ինչ-
դերու համար կատարութեան ազա-
ղակներս ու հեծութիւններս... ըսելով
ես ինձի:

— «Ան կը համբուրէ հիմայ անոր շք-
թունքը... Այո՛ ա՛ն:» Խենդեցեր էի...
կարծեցի թէ կը մեռնէի:

— Բայց ետքը... ըսաւ Տիան ժրպ-
տելով:

— Այո՛, ետքը, երբ ինձի պէտք ու-
նեցար... ամուսինդ խաբելու համար...
ինձի դիմեցիր...: Ես ալ վայրագ ու-
րախութեամբ մը ծառայեցի քեզի: Կը
թուէր ինձի թէ ասով վրէժս կ'առնէի
անկէ, որ ինձի պէս գժրագրէ էր.
սակայն ո՛չ, վասն զի չէր գիտեր, բան մը
չէ չէր:

«Այն ժամանակ սկսաւ ինձի համար
այս վատ և տագնապալից կեանքը,
զոր կը վարեմ քեզի համար, ներկայ
գտնուելով և օգնելով քու տարփանք-
ներուդ, ծառայելով համանիներուդ զորս
կ'ատեմ, դիւրացընելով քեզի քու հա-
ճոյքներդ որք գարշելի ցաւեր են ին-
ձի համար, քու ուրախութիւններդ որք
ինձի արտուք թափել կուտան, քու
յաղթանակներդ որք իմ վատթարումս
են:

— Ապերախտ, մոմնոյնց Տիան թեթև
համբոյր մը դպցրէնելով անոր երեսին:
Կը մոռնա՞ս առած վարձերդ:

Անթօան Բուսա Տիանի գգուանքին
առջև սուրբէն մինչեւ գլուխը գողաց:

— Ահ, ըսաւ հեւալով, այսպէս կա-
պեցիր զիս քու կամքիդ... գերի ըրիր
զիս քեզի, զիս աստիճանէ աստիճան
տարիք մինչեւ յոճրագործութիւն... և
պիտի ամնիս մինչև ի կառավարման...
— Լո՛ւ, յարսափ կուտաս ինձի:

— Արդ, հիմա որ գիտես սրտիս խո-
ւր, վիշտերուս գազանիքը, կու հասկը-
նա՞ս թէ պէտք չէ վախուստ առաջար-
կել ինձի: Կը հասկընա՞ս թէ մինչև որ
աստիճան քուկդ եմ, կը հասկընա՞ս թէ
կը մեռնիմ առանց քեզ մ'արտասանե-
լու, առանց շարժում մ'ընելու, որ
կարենայ մատնել քեզ: Մահը, քեզի
համար մեռնիլը, գրեթէ փրկութիւն
մը կ'ըլլայ ինձի համար, վասն զի մեռ-
նելով, այլեւս չեմ տեսներ, չեմ դիա-
նար, չեմ գգար:

— Բայց զիս ալ չես ունենար... և այս
գիշեր բոլորովին քուկդ եմ ես...
— Ժամու մը համար: Ասկէց մեկնե-
լուդ պէս պիտի երթաս այն Ռիչմոնդ

գտնես... զոր կ'առեմ նոյն իսկ իրեն համար, որչափ չեմ ատած քու ամուսինդ... և ուրիշները:

«Ասոնք հակառակ նախանձոտութեանըս, կը հասկընայի որ ինձմէ նախամեծար կը համարէիր...»

«Ես կը ճանչեմ գիտ. գիտեմ որ խեղճ գեղացի մ'եմ... անտաշ ուսմիկ մը... տգեղ կոչտ էակ մը... որուն համար սէրը կամ մանտանդ Տը Ֆէրնիք կոմսուհիին հաճոյակատարութիւնները պարզ ողորմութիւն մը կամ մատուցուած ծառայութեան մը վարձ միայն կրնան ըլլալ:

«Սակայն վերջիններուն երջանկութեանը վրայ կը նախանձէի, առանց անարժան համարելու... առանց զիս անարգուած կամ նուաստացած տեսնելու: Բայց այդ ցած, վատ, զեղճ էակը, որ ոչ գեղեցիկ է, ոչ ուշիմ... կը թուի ինձի թէ քեզի հոմանի ընտրելով ինքզինքդ կ'ստորնացընես, և թէ այն խեղճ գիւղացին, այն անտաշ և վայրագ, բայց հլու և անձնուէր մարդը, զոր դուն ոճրագործ ըրիր, որ Անթօան Գօսատ կը կոչուի, Հարիւր անգամ աւելի կ'արժէ քան այդ անպատիւ, ան-

սիրտ դերկոմսը, որ եթէ համարձակէր, կը մատնէր քեզ, որպէս զի իւր կեանքը, հարստութիւնը կամ համբաւը ազատէր:

— Ես գիտեմ ինչ է և ինչ կ'արժէ, պատասխանեց կոմսուհին անհամբերութեամբ. դուն պէտք չունիս անոր վրայ նախանձելու, դուն չե՞ս լուսագոյն բաժին ունեցողը, քանի որ կը խաբեմ զայն քեզի համար... իսկ քեզ գոնէ չեմ խաբեր ուրիշի համար: Ահ, հաւատա որ եթէ ես էրիկ մարդ ըլլայի, քու դիրքդ աւելի կը սիրէի, որչափ և փոքր է:

«Գիտե՞ս ուր է այս վայրկեանիս: Ասկէ քսան քայլ անդին: Ան բերաւ զիս հոս... և կ'սպասէ փոզոցի խեղճ կառքի մը մէջ, հարցընելով ինքնիրեն թէ ի՞նչ գործ կրնամ ունենալ քեզի հետ...: Ծաղրելի չէ՞ կատարելապէս, և պէտք չէ՞ որ ծիծաղիս անոր վրայ, փոխանակ լալու ոտքիս առջև մեծ աղու մը պէս, եթէ մեր ողբալի վիճակը ներէր ծիծաղիլ կամ գոնէ ժպտիլ:

Եւ ոտքի վրայ ելաւ տխրադէմ, մըտահոգ, սրտայոյզ:

— Ինձի տուր այդ նամակը որ նորէն կարդամ, ըսաւ մէկէն:

—Այս մարդը, այս անծանօթը, օք
կ'ազդարարէ քեզ, յարեց դժգոյն դէմ-
քով, չե՞ս կասկածեր ու վրաւը:

—Այո՛:

—Եւ կ'ապրի՞ տակաւին:

—Անունը չեմ գիտեր, ուր բնակիւք
չեմ գիտեր...

—Ո՞վ կը կարծես:

—Նոյն այն մարդը որ հոս երևցաւ
քեզ ազատելու համար կոմսին վրէժ-
խնդրութենէն, սր մեր վրայ կը հսկէ,
մեր ետեւէն կը պարտի, մեզ կը լրտե-
սէ, և մեր ամէն գաղտնիքին կը ծա-
նօթանայ...

—Այո՛, այո՛, ընդմիջեց Տիան դող-
դողուն ձայնով մը... իբրևունք ու-
նիս...

Յանկարծ դէմքը կապարի գոյ՛ առաւ
և ակռաները կափկափել սկսան:

Սոսկալի կասկած մը, շանթահարիչ
յայտնութիւն մ'անցեր էր մտքէն:

—Այդ մարդն է, ըսաւ կակաղելով,
որ աղքատաց գանձանակին մէջ խո-
թած թուղթերդ գողցած էր:

—Ես ալ այդպէս կը կարծեմ հիմայ:

—Տարակոյս չիկայ: Ո՛հ, կորսուած
եմ, կորսուած:

Եւ իւր ձերմակ ձեռքերը կը դալա-
րէր այնպիսի բուռն սրտայուզութեամբ
մ'եւ սարսափով, որուն նմանը երբէք
տեսած չէր Քոստա անոր վրայ:

—Բայց, այն թուղթերը, քու խոս-
քիդ նայելով, յայտնի բան մը չէին
պարունակեր, հետեւապէս անհասկնալի
էին դողցողին համար, բաւ Քոստա:

—Ես ալ այդպէս կը կարծէի, բայց
որովհետեւ գիտէ քու գործած ոճիրդ...
գիտէ Բիէնֆիթը, գիտէ Թիւսթին Պոն-
ֆօան... ըսել է թէ հասկոցեր է այդ
սարսափելի իրողութիւնները... Յայտ-
նի կ'երեւի թէ խնամով քններ, ու-
սումնասիրեր է յատակագիծը... Գա-
ցեր տեսեր է սե- կեռը: Ա՛հ, բռներ է
գիս, բռնե՛ր է, կեանքս, պատիւս...
ամէն բան ձեռքին մէջն է:

—Ի՛նչ կար յատակագիծին վրայ նը-
շանակուած սե- կեռին մէջ, զոր նշմա-
րեցի միայն... առանց հասկընալու:

—Ի՛նչ կար... Ի՛նչ կար...: Գործած
ոճիրիս ապացո՛յցը կար...:

Եւ շուտով, իւր կաթ- եղբորը բըր-
տացած կողտ ձեռուրները կը սեւմէր
իւր բարակ մատներովը, որ երկաթի
պէս կարծրցեր էին իւր ջղային ձրգ-
տումովը:

—Ա՛հ, չեմ գիտեր ի՛նչ կ'ըսեմ... շուտ... մի՛ հարցաքնններ զիս...:

—Տիա՛ն, քո՛յրս... պէտք է որ ամէն բան գիտնամ ես, որպէս զի կարեւորամ ամէն բանի պատասխանել, ամէն բան նախատեսել:

—Ո՛չ, ոչ:

—Տիա՛ն, ըրաւ մէկէն Անթօան Քօսատ, ո՞ւր է զաւակդ:

—Լուէ՛, լուէ՛:

—Մեռա՞ծ է:

—Թող տուր զիս... չի պիտի պատասխանեմ ալ ես:

—Դո՞ւն մեռցուցիր:

Երկար լռութիւն մը տիրեց:

Տիան, երեսը քրտինքով ողողուած, գլուխը ծռած, ձեռուրներն իրարու կցած, չէր համարձակեր իւր նուաճած բիրտ մարդուն նայիլ, որ իւր վայրագութեամբն հանդերձ իւր ձագը չէր մեռցընել, մինչեւ իսկ կոմսուհիին մէկ համբոյրին համար:

—Այո՛, կը հասկընամ հիմա, ըսաւ Քօսատ ցած ձայնով: Միտքէս կ'անցնէր, բայց չէի ուզեր հաւատալ: Սեկեփին մէջ դիակ մը կար... Ժիւսթին գիտէր...: Եւ ասոր համար էր որ

մեռնիլը պէտք էր. բերանը յաւիտեան գոցել պէտք էր, որպէս զի չի կարենար խօսիլ: Ո՛հ, դժբաղդ կին, դժբա՛ղդ:

Քօսատ սոսկումով երեսը ծածկեց ձեռուրներուն մէջ, և արտասուքի շիթեր ցայտեցին կիսափակ շէկ աչեքէն:

—Մտիկ ըրէ գոչեց Տիան հատկապէս ձայնով մը. ես քու կարծածիդ չափ յանցաւոր չեմ...: Միտքէս չէր անցնել... չէի ուզեր...: Ո՛չ, Աստուած ալ վկայ... չէի ուզեր...: Ծնելէն երեք օր ետքը... գիշերը... զիս տենդ բռնելով... կաթի տենդ... ցնորք եկեր էր վերաս... սոսկալի տեսիլներ... սպառնալից ուրուականներ... կը խռովէին այն անիծեալ քունը որուն մէջ կը թալթըլէի...: Կը տեսնէի զիս պառկած այն անիծեալ անկողնին մէջ... այդ կնոջ... այդ Ժիւսթինին տանը մէջ...: Ամուսինս, կոմսը... հոն էր... ահա ելի դէմքով մ'ինձի կը նայեր... ձեռքը դաշոյնով... կը հարցաքննէր զիս... ես ալ կը պատասխանէի... կ'ըսէի իրեն թէ հիւանդ էի... կը խնդրէի որ զիս հանգիստ թողուր...: Վերջապէս կը համոզէի զին-

քր...և մեկնելու վրայ էր... Մորդէն դուրս կ'ենէր սենեակին դռնէն...: Շունչ կ'առնէի, ազատած էի...: Յանկարծ աղեկս, որ մօտս օրոցի մէջ դըրուած էր...արթննալով կը պօռար, զիս կը կանչէր...«Մայրի՛կ, մայրի՛կ» ըսելով:

«Կոմսը կանգ առնելով ականջ կը դռնէր...:

«Ինչո՞ւնք կը փայլէր ձեռքին մէջ... կը զգայի պաղ երկաթը որ սիրտս կը փնտռէր կուրծքիս մէջէն...:

«Ի՞նչ ցատկեցի անկողինէս... վազեցի օրորոցին քով, երկու ձեռքս կոխեցի աղեկիս բերնին վրայ, որ զիս մեռնելու կը զրկէր...:

«Ո՛հ, սոսկալի՛ բան:

Յանկարծ ձայն մ'եկաւ ականջիս:

— «Թշուա՛ն կի՛ն, ի՞նչ ըրիք: Մեռցուցի՛ք ձեր գաւակը»:

«Նրբ ինքզինքս քիչ մը գտայ, տեսայ որ Ժիւսթին Պօնֆօս աղեր կը հոտուրտացընէր ինձի... և անկողնիս մէջ էի... ուր բերե՞ր պառկըցուցե՞ր էր զիս:

— Զաւա՛կս, գոչեցի»:

— «Խեղդեցի՛ր, պատասխանեց կիներ»:

Անթօան Բօստա լոռիքեամբ մտիկ կ'ընէր, առանց շարժելու:

— Կ'երդնում քեզի, Բօստա, յարեց Տիան, թէ այսպէս եղաւ... տեսակ մը քնաչըջումի մէջ, առանց ըրածիս գիտակցութիւնն ունենալու... ցնորման կամ մանաւանդ խենթութեա՛ն մէջ գործեր էի...:

Կոմսուհին կանգ առաւ վայրկեան մը, յետոյ շարունակեց աւելի ցած ձայնով.

— Պէտք էր ծածկել այդ մարմինը: Ժիւսթին վերցուց ասբաւ առանց ինձի ըսելու ինչ ընելիքը... Բայց ես, թէև շատ տկար, թէև ուժասպառ... ստքի վրայ ելայ, և բոպիկ ստքերով՝ ետեւէն գացի հեռուէն... պարտէզին մէջ... և տեսայ որ թաղեց... զաւկիս մարմինը... ծաղկոցի մը մէջ, որուն դիրքը միտքս պահեցի...:

— Այդ ամէնը կրնայ ճշմարիտ ըլլալ, ըսաւ Բօստա ընդմիջելով, բայց չէն հաւատար...:

— Գիտեմ, անոր համար կ'ըսեմ քեզի թէ՛ կորսուած եմ, եթէ այդ մարդը գտած է դիակը:

— Կորսուած: Ո՛չ քանի որ ես ողջ

եմ... քանի որ ես կրնամ սպաննել կամ սպաննուիլ քեզի համար :

—Ուրեմն կը սիրե՞ս զիս տակաւին, հարցուց Տիան, որ իւր մեղսակցին լըռութենէն և սոսկման առաջին շարժումէն զարհուրեր էր :

—Աւա՛ղ, հառաչեց թշուառականը :

Տիան, իւր սարսափին և սրտայուզութեան մէջ յաղթական վազանցիկ ժպիտ մ'ունենցաւ :

—Չկայ բնաւ ապացոյց մը, յարեց կոմսուհին կաթնեղբայրը, թէ այդ մարդը քեզ բերան տալ ուղէ... : Եթէ այնպիսի դիտում մ'ունենար, մինչեւ հիմա կ'ընէր... : Այս նամակը չէր գրեր ինձի և զիս զգուշացնէր... : Եթէ զըտնեմ ալ զինքը, դարձեալ չի պիտի խօսի... : Իսկ եթէ զիս ձերբակալեն, դատեն, դատապարտեն... քու անունդ չի պիտի ելնէ բերնէս :

—Շնորհակա՛լ եմ, շնորհակա՛լ եմ, գոչեց կոմսուհին թեւերն անոր վիզին փաթթելով, Դուն բարի՛ ես, վե՛հ ես, ազնի՛ւ ես : Բայց մեք քեզ այնպէս լաւ պիտի պահենք որ չի կրնան գտնել... :

Ժամ մ'ետքը կոմսուհին գնաց գտաւ դերկոմսը, որ վարձու կառքի մը մէջ պահուրտած՝ իրեն կը սպասէր :

—Շատ ուշացար, ըսաւ նեղացած կերպով մը .

—Պէտք էր : Գոսատ վախի մէջ էր... : Ուստի միջոց մը խորհեցանք զինքը ձերբակալութենէ ազատ պահելու համար, եթէ երբէք կասկած ծագի վրան : Առայժմ փակուած պիտի մնայ Բիւրտը-լ'էրմիթ փողոցին մէջ :

Տիան գիտնալով իւր տարփածուն երկչոտութիւնը, չի յայտնեց իրենց գլխուն վրայ կախուած նոր վտանգները :

Բօլ տը Ռիչմօն կրնար սարսափի թելադրութեամբ ձախող բան մ'ընել, ուստի կոմսուհին կը մտածէր թէ Ծէրնանտի ամուսինը հանդարտեցնելէ կամ մխիթարելէ առաջ՝ ուրիշ բաներ ունէր ընելիք :

ԱՆԳՈՒՑ ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Ժիւլ Շամպէզի չէր մոռցած այն ժամադրութիւնը զոր տը Ռիչմօն դերկոմսուհին տուած էր վէրնէօյլ փողոցն :

երթալու համար, տիկին տը ներխի
տունը:

Ժամը ճիշդ շորսին, Ծէրնանտի նը-
շանակած ժամէն առաջ Ծամպէզի կը
պարտէր պարոնուհիին տանն առջև:

Ժամը հինգին Ծէրնանտ երեցաւ փո-
ղոցին անկիւնէն, և Ծամպէզի, ինչպէս
որ կը սպասէր ճանշեց դիպուածով առ-
ջի օրը տեսած դեռատի գեղեցիկ կիներ:

— Ճշդիւ ան է, ըսաւ ինքնիրեն, տը
Ռիչմօն դերկոմսուհին է: Կուգայ պար-
զապէս ճաշել և երեկոյթն անցունել
բարեկամուհիի մը տունը...:

«Արդեօք այդ բարեկամուհին տիկին
տը Ռիչմօնի տարփանքին նպաստող
մ'է, և տարփաւորն ալ պիտի գա՞յ
հոս... կամ թէ տիկին տը Ռիչմօն
ասկէց ալ ուրիշ տե՞ղ պիտի երթայ,
իրեն սպասողին քով:

«Այս վերջին ենթադրութիւնը եթէ
իրագործի, շատ աղէկ կըլլայ ինձի
համար, որովհետեւ կարող կ'ըլլամ ան-
միջապէս սովորելու երկու տարփաւոր-
ներու բոյնը:»

Մինչ Ծամպէզի այս մենախօսութիւ-
նը կ'ընէր, Ծէրնանտ, պարոնուհիին
հետ գորովալից համբոյրներ փոխանա-

կելէ ետեւ, թոյտուութիւն ինքրեց
խօսք մը գրելու, որ սահպողական էր:

Դեռատի այրին, խորհրդազգաց
ժպիտով մը տարաւ զայն կնոջական
փոքրիկ սիրուն ու պշրագեղ գրասե-
ղանի մ'առջև, որուն վրայ սիրոյ նա-
մակներ միայն կրնային գրուիլ:

Ծէրնանտ նստաւ հոն, և ձեռնոցնե-
րը հանելով՝ հետեւեալ տողերը գրեց
արագապէս:

«Պաշտելիս»

«Այս իրիկուն, ժամ իննին միջոցնե-
րը Նէր... Պիտի հասկցնեմ քեզի
«թէ ինչ պատճառաւ երկու օր չկրցի
«համբուրել մեր զաւակն ու քեզ:

«Սիրեցեալդ

«Ֆէրնանտ»

Այս պիտակը պատեանի մը մէջ խո-
թեց և վրան Դանիէլ տը ֆէօրի անունն
ու հասցէն գրեց:

— Սիրելի՛ բարեկամուհիս, ըսաւ յե-
տոյ պարոնուհիին դառնալով, կը հա-
ճի՞ս կառք մը բերել տալ ինձի:

— Ի՞նչ, դուրս պիտի ելնես:

— Քսան վայրկեան միայն... սա
նամակս հասցէին տալու և անմիջապէս
վերադառնալու համար:

— Անձա՞մբ երթալու պէտք ունիս:

Եւ ժպտեցաւ :

— Հաւատա ինձի, անխոհեմութիւն է ըրածդ : Պէ՞տք է նորէն ըսեմ քեզի թէ Ատէլ տը նէրիս աշխարհի ամէնէն խորհրդապահ կիսն է :

— Այո՛, կը ճանչեմ քեզ... բայց ի՞նչ կ'ենթադրես :

— Կ'ենթադրեմ որ իմ տանս մէջ գրուած նամակ մը, զոր դուն անձամբ կ'ուզես տանիլ... շատ վստանգաւոր կրնայ ըլլալ ամուսնացեալ կնոջ մը համար, եթէ ձեռքը նշմարուի... դիպուած մը միայն բաւական է իւր հասցէին յանձնելու տեսնելու. նոյն այն տեղն ուր կը զրկես... աւելի լաւ է որ չի նշմարուի հոն քու գեղեցիկ վարդ դէմքդ, որ նոյն միջոցին ծիրանիի գոյն կ'առնէ, իսկ եթէ ես իմ դռնապանիս ձեռքով զրկեմ, կ'ենթադրուի թէ տը ներիս պարոնուհին գրած է, որ՝ այրի ըլլաչով՝ կնոջ մը վայրած միակ երջանիկ ու անկախ վիճակը կը վայելէ :

Փէրնանա կը վարանէր :

— Ասկէ դատ կ'երդնում մեր բարեկամութեան և... ինչպէս նաև ամուսին կոչուած անձնասէր բռնակալնե-

րուն դէմ ունեցած ատելութեանս վըրայ թէ, ինչ և ալ պատահի, երբէք չի պիտի յիշեմ այդ նամակին վրայի անունն ու հասցէն... զորս կ'ուզէիր ծածկել ինձմէ... :

— Ա՛ն, ըսաւ Փէրնանտ :

Հինգ վայրկեան չանցած, տանը դռնապանը՝ խոշորկէկ պարզեւ մ'առնելով՝ վաղեց տարաւ նամակը Դանիէլ տը Գէօրի տունը, ճամբան ժիւլ Շամպէզիի քսուելով, որ բնաւ ուշադրութիւն չըրաւ :

Այս վերջինը իր ծանօթ համբերութեամբ ժամերուն անցնիլը կը աեսնէր առանց յուսահատելու :

Վախնալով որ մայթին վրայ սպասելով ուշադրութիւն կը հրաւիրէր, Փէրնանտի ներս մտնելէն ետքը Ատէլ տը ներսի տանը դիմացը փոքրիկ սրճարանի մը դրանը մէջ գնաց նստաւ :

Ժամը ութ ու կէսին, իւր ութերորդ դաւաթը խմելու և չորրորդ դլանիկը ծխելու վրայ էր, կառք մ'եկաւ կեցաւ պարոնուհիին տանը կառադրանն առջեւ, և մէջէն սպասուհի մը վար իջաւ :

— Կառք բերել տուին, ըսաւ ինք-

նիրեն, և խմածին ստակը վճարելով, դիմացի կողմն անցաւ կառքին մօտ գտնուելու համար:

Չէր սխալած:

Երկու վայրկեան ետքը Ֆէրնանտ կառքը մտաւ՝ ըսելով կառավարին Տուէ ֆուչ 29:

— Այս անգամ կը յուսամ որ պարապ չելայ, ըսաւ ինքնիրեն Շամպէզի:

Եւ առանց փոյթ ընելու կառքին հեռանալը, որուն թուահամարը 11,807 էր, գետեզրը դիմեց ուր կառարան մը գտնուիլը գիտէր:

Ժամով, ըսաւ տեսած առաջին կառավարին. Տուէ փողոց:

— Ի՞նչ թիւ:

— 24 կամ 26: Ես կը կեցընեմ ձեզ, երբ պէտք ըլլայ:

Եւ իսկոյն կառքը ճամբայ ելնելով, Տուէ փողոց հասաւ Ֆէրնանտէն քանի մը վայրկեան ետքը, որուն կառքը, զոր կը ճանչար, 29 թիւ տան առջեւ կեցած էր:

Շամպէզիի կառքն ալ գնաց անոր դիմացի կողմը 26 թիւին առջև կեցաւ:

— Մի մեկնիր ասկէց, ըսաւ իւր կառավարին: Մէկուն պիտի սպասեմ:

— Ժամադրութիւն, ըսաւ ինքնիրեն կառավարնը, կարճ քուն մը կրնամ քաշել:

Եւ թիկնոցին մէջ փաթթուելով՝ քնացաւ:

Դանիէլ տը Բէօր՝ ժամ իննին քառորդ մնացած իւր օտուը վերադառնալով՝ գրեթէ էր Ֆէրնանտի նամակը:

Եթէ Ֆէրնանտի երկու օր բացակայութիւնը չըլլար, որով չէր կրցած տեսնել զայն, Դանիէլ շատ հոգ չէր ըներ:

Արդարև, Բիէնֆիթի ոճրագործները շրջապատող գաղտնիքը քիչ մը կը քաջաւերէր զինքը, և զգացած առաջին դժնդակ սրտատանջութիւնը մեծ մասամբ կը փարատէր:

Բրէնպորնի ջանքերուն յաջողութեանը տեղեակ չըլլալով, վասն զի բան մը չէր ըսած իրեն, ինչպէս որ գիտեն ընթերցողք, կը յուսար որ այդ ըննութիւնը չպիտի յաջողէր, և պիտի երթար թուահամարի կարգով իւր թղթակալի: մէջ կեցած ուրիշ շատ մը գործերու քով, ուր Արդարութիւնը հրդեհէ զատ ուրիշ բան չէր տեսեր:

Այսպէս, Ֆէրնանտի համար ուղղապէս վտանգի սպառնալիք չէր մնար երկուքին ալ երջանկութեանը համար:

Բայց Դանիէլ ա՛յն աստիճան զարնուած էր Ֆէրնանտի, որ զայն չտեսնելը ցաւերուն ամէնէն գէշն էր իրեն համար:

Ի՞նչ էր զայն արգելողը. ի՞նչ եղեր էր անոր:

Սիրահար մը միշտ վախի մէջ չըլլա՞ր երբ իւր սիրած կինն ամուսին ունենայ:

Ասկէ զատ, որչափ և անկասկած էր Ֆէրնանտի ուղղամտութեան, փափկանկատութեան և հաւատարմութեան վրայ, չէր կրնար միտքէն չանցունել թէ իրեն հետ չանցուցած ժամերը մասամբ մ'իւր ամուսնին քով կ'անցունէր հարկաւ:

Եւ սիրտը կը գայարէր կուրծքին մէջ, սա միակ գաղափարով թէ այդ մարդը անոր կը նայէր, ձայնը կը լըսէր, մօտէն անցած միջոցին անոր շրջազգեստին կը քսուէր, անոր քաղցրբարոյր շրթերէն դուրս ելած օդը կը շնչէր, սեղանին վրայ անոր դէմը կը նստէր, հետը կը խօսէր... եզակի, հրամաններ կուտար, կը հարցաքննէր,

իրեն հետ խօսելու կը բռնադատէր, ձեռքերնին թերեւս դիպուածով իրարու կը հանդիպէին... մինչ ինքն' անկէ հեռու մնալով, անոր վրայ կը մտածէր, զայն տեսնելու կը փափաքէր, զայն կ'երազէր. ինքը որ իւր կեանքին կէսը կուտար, որպէս զի մնացած միւս կէսն անոր քով անցունէր, ինքը որ մի՛ակ էր, իւր բոլոր ուրախութիւններէն, իւր բոլոր երջանկութիւններէն զրկուած:

Եւ ի՞նչ մարդ էր այդ ամուսինը:

Իւր սիրելիին միջոցով կը ճանչէր:

Գիտէր թէ անոր միակ խօսակցութիւնը միեւնոյն նիւթի վրայ կը դառնար... անպարկեշտութեան. դուրսէն ազտեղի պատմութիւններ կը ժողվէր, իւր լծակցին ականջները պղծելու համար, թէ հետն աւրուելէն առաջ վայրկեան մը հանգիստ չէր թողուր զայն, իւր հաճոյից ծառայեցնել կ'ուզէր, առանց հոգ րնելու թէ տրամադրութիւն ունէ՞ր թէ ոչ. որովհետեւ իւր սեփականութիւնն էր:

Այս ամէնը վերջացած էին:

Ֆէրնանտ ըսեր էր իրեն, ինքն ալ կը հաւատար:

Բայց և այնպէս սիրտը կը տրոփէր ու կը վշտակրէր, վախնալով որ ամուսնին թախանձանացը չի դիմանալով կը

զիջանէր ու անձնատուր կ'ըլլար անոր, և այսպէս վերստին առիթ կուտար այն անխիղճ և փափկութենէ զուրկ մարդուն, որ զինքը իբրև կրաւորական կենդանի կամ իբրև իւր հաճոյքին ծառայելու համար վճարուած աղջիկ մը կը նկատէր, միշտ պատրաստ իրեն հրնազանդելու:

— Եւ եթէ սուտ խօսած էր ինձի, կ'ըսէր Դանիէլ ինքնիրեն...: Եթէ զինքը քաջալերելու կամ ապահովելու համար սիրոյ կատակերգութիւն կը խաղար իրեն: Եթէ... եթէ...:

«Բայց ո՛չ, ո՛չ, Ֆէրնանտ կը սիրէ զիս, Ֆէրնանտ ընտիր հոգի մ'է, ազնիւ սիրտ մ'է, ուղիղ և անկեղծ միտք մ'է...: Եթէ ինքզինքն և իւր սէրը չի յարգէ, իւր սիրահարը կը յարգէ...: Ասկէց զատ, գիտնալով ինչ որ գիտէ... անհնարին է:»

Արդ, գիւրաւ կը հասկցուի թէ ի՞նչ ուրախութեամբ կ'արդաց Ֆէրնանտի նամակը:

Առանց վայրկեան մը կորսնցնելու, կառք մը նստաւ և Տուէ փողոցը գնաց, ժամը ինը քանի մը վայրկեան անցած:

Շամպէղի տեսաւ զայն որ 29 թիւ

տան առջև կառքէն իջաւ, դրան բոժոժն հնչեցուց և ներս մտաւ:

— Ա՞ն է արդեօք թէ ուրիշ վարձակալ մ'է, ըսաւ ինքնիրեն: Բայց ո՛չ, կառքը կեցաւ, այցելութիւն մը կրնայ ըլլալ: Չեմ ճանչեր այդ Դանիէլ տը Բէօրը: Վերջապէս սպասենք:

Եւ կ'սպասէր իւր կառքին ամէնէն մութ անկիւնը քաշուած, մինչ իւր կառապանը խղճի մտօք քուն կը քաշէր:

Ֆէրնանտ, հոն հասնելուն պէս, ուղղակի առաջին յարկը ելեր էր ծծմարին սենեակը, իւր որդւոյն քով:

Դանիէլ տը Բէօր ալ հոն ուղղուեցաւ նախ, մտածելով թէ մայրը զաւկին քովն եղած կ'ըլլար:

Մեք զանոնք հոն թողունք և ժիւլ Շամպէղիի քովն երթանք:

Այս վերջինը չէր ձանձրանար սպասելով և չէր ալ քնանար:

Աչերը չէին բնաւ դադարեր 29 թիւ կառադուռը և փողոցէն անցնողները դիտելէ:

Յանկարծ ցնցուեցաւ:

Մարդ մը տեսեր էր որուն երևոյթն ու դէմքը քիչ մնաց որ զարմանքի ազդակ մը պիտի կորզէին իրմէ:

Չուանավաճառին խանութը տեսած մարդն էր որ Անթօան Գօսատի նկարագիրն առած էր խանութպանին կընողմէն, և զոր անգամ մը տեսնողը ոչ ևս կրնար մոռնալ:

Բրէնպորն էր, որ նոյնպէս 29 թիւ տան մուտքը դիտելու երևոյթն ունէր:

Կ'երթար, կուգար և կեցած կառքերը կը դիտէր հետաքրքրութեամբ:

Պահ մը խճուղիէն անցնելով Շամպէզլիի նստած կառքին քովէն անցաւ:

Այս վերջինը, անոր մօտենալը տեսնելուն պէս՝ կծկտեցաւ կառքին մէջ և կրցածին չափ ծածկեց ինքզինքը:

Բրէնպորն երկու անգամ անցաւ կառքին առջևէն, յետոյ նորէն դիմացի կողմն անցնելով գնաց 29 թիւ տանը քով, որ Դանիէլ տը Քէօրի ժամադրութիւնը կը պատասպարէր:

Նոյն միջոցին տանը վարձակալներէն մին դրանը բոժոժն հնչեցուց:

Դուռը բացուեցաւ և մարդը ներս մտաւ, Բրէնպորն ալ սողոսկելով ներս սպրդեցաւ անոր ետևէն:

Դուռը վերստին գոցուեցաւ:

— Ի՞նչ գործ ունի այդ տան մէջ, հարցուց Շամպէզլի դարմանալով: Արդ-

եօք հո՞ն կը բնակի: Բայց ո՛չ. եթէ այդպէս ըլլար, չէր սպասեր որ ուրիշ մէկը բանալ տար դուռը, և ինքն ալ գաղտագողի ներս մտներ: Յայտնի է որ բանէ մը կը կասկածի... և մէկը դիտել կամ լրտեսել կ'ուզէ այդ տան մէջ:

«Այդ տան մէջ, այո՛, ուր տը Ռիչմօն դերկոմսուհին մտաւ քիչ մ'առաջ...: Արդեօք կասկած մ'ունի անոր վրայ: Չըլլայ թէ տը Ֆէրէիք կոմսուհին որ բայց ո՛չ տիկին տը Ռիչմօն ալ մա՛կաբարձուհիին տանը մէջ գտնուած և մանչ զաւակ մը ծնած է հոն...: Պոնֆօայի տումարը պատմած է: Օ՛ն, գործը քանի կ'երթայ կը կնճռոտի: Ի՞նչ լարիւրնութոսի մէջ մտեր եմ: Իբջ և է, զիս ոսկեհանքի մը կ'առաջնորդէ: Այս մասին տարակոյս չկայ...: Կարելորն այս է: Սպասենք»:

Նոյն միջոցին, Բրէնպորն, վարձակալին ետևէն ներս մտնելով, արագապէս անցեր էր դռնապանուհիին օթեակին առջևէն, որ ժամանակ չէր ունեցեր զայն ճանչելու, և կարծեր էր թէ ներս մտնող վարձակալին կ'ընկերակցէր:

Բրէնպորն, որ այս սխալման վստա-

հեր էր, անցաւ բակէն և գնաց կանգ առաւ Պ. Վառօայի դրանն առջեւ, որ ձախ կողմի առաջին դուռն էր՝ շէնքին երկրորդ յարկն ելնելու սանդուղին տակը:



ԳՈՂԷ ՄԸ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ՁՈՒՆԻ ԱՅՆ
ՈՐ ՁԱՆՈՆՔ ԳՏՆԵԼՈՒ ԿԱՄ
ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ՊԱՇՏՕՆՆ ՈՒՆԻ

Բրէնպորն տեսնելով որ մինակ էր, վրան կրած երկաթէ գործիքով մը բացաւ դուռը, ներս մտաւ, ետեւէն գոցեց, այնպիսի յանձնապատան վըստահութեամբ մը, որ հիացում կը պատճառէր այս վտանգաւոր գործողութեան ներկայ գտնուողին:

— Գէշ բան կ'ըլլայ, մրմռաց դեղին ախառներուն մէջէն, եթէ Պ. Վառօա այսօր հոս գայ...: Վերջապէս առ այժմ վտանգ մը չի կայ:

Կը յիշեն ընթերցողք թէ Դանիել տը Բէօրի այդ փոքրիկ բնակարանը կը բաղկանար նախասենեակէ մը, ճաշարանէ մ'և ննջասենեակէ մը, որուն մէջ

արդուզարդի փոքրիկ սենեակ մ'ալ կար:

Ասոնց ամէնն ալ վայելչապէս կահաւորուած ու պճնուած էին:

Բրէնպորն չուզելով մութին մէջ խարխափիլ, գրպանէն փոքրիկ լապտեր մը հանեց վառեց և անոր օգնութեամբ սկսաւ աչքէ անցունել: Նախասենեակն, որուն մէջ կը գտնուէր, արժանի չէրևցաւ իւր ուշադրութեան, անցաւ ճաշարանն, ուր իւր առաջին փոյթն եղաւ ստուգել թէ պատուհաններն հաստ վարագոյրներով ծածկուած և փեղկերով ալ գոցուած էին, որով լոյսի նշոյլ մը չէր կրնար դուրս ելնել:

Չայս ստուգելէ ետև, շուրջը գըտնուած բաներն աչքէ անցուց: Կարասիները յայտնեցին իրեն թէ հարուստ մարդու մը բնակարանին մէջ կը գըտնուէր:

— Շնորհքով մարդիկ, հարստութեան տէ՛ր, միտքէս կ'անցնէր, մրմռաց: Այս բնակարանը կին մ'ընդունելու սահմանուած է: Յայտնի կը տեսնուի...: Պատրաստուած բոյնին տեսքէն, կրնայ գուշակել մարդ մինչև իսկ աչուրներուն ու մազերուն գոյնը: Ի՞նչ կրնամ գըտ-

նել այս սենեակին մէջ, որ ճաշարան է. գրեթէ ոչինչ: Եւ մի առ մի աչքէ անցուց քանի մը կահերն ու որմադարանները:

Յետոյ մտաւ ննջարանը:

—Օ՛, ըրաւ լռին ծիծաղով մը, աւասիկ իրար պաշտող մարդիկ: Այս անկողինը համա՛յ քերթուած մ'է... և այս սենեակին մէջ տիրող անուշահոտութիւնը սիրելու փափաք կը ներշնչէ...: Եթէ թռչնիկն ալ կը պատասխանէ վանդակին, Պ. Վառօա դժբաղդ չէ:

«Ո՞վ դիտէ սակայն, աւելցուց կէս հառաչ մ'արձակելով: Ամեն բան կատում ունի երկուքին ալ անկեղծութենէն և մէկմէկու ներշնչած փոխադարձ վստահութենէն: Յաճախ տեսնուածը սիրոյ կատակերգութիւն է մ'այն, «երկու քմոյշի փոխանակութիւն, երկու վերնամորթի հպում» ինչպէս ըսած է Շամֆօռ: Առանց թաքուն մտքի, առանց հաշիւի, առանց ստախօսութեան, անխարդախ, ճշմարիտ և երկու կողմէ հաւասարապէս անկեղծ և անձնուէք սէրէ աւելի հազուադիւտ բան չի կայ:

«Կը նախանձիմ Պ. Վառօայի վրայ... բայց թերեւս պէտք է ցաւիմ, եթէ

իւր սիրուհին արժանի չէ իրեն... եթէ իրմէ ստորին է սիրտով, հոգիով ու միտքով, և եթէ դիպուածով կը սիրէ զայն, և կը հասկնայ կամ կը դատէ, աւելի գէշ տանջանք չի կրնար ունենալ:

«Սակայն Պ. Վառօայի սիրուհին բարձր դասակարգէ կին մը կ'երեւի և ոչ հասարակ ցոփուհի մը. ամէն բան նուրբ պչրանքի, կիրթ ճաշակի, ակնածու փութկոտութեան մ'երեւոյթ ունի: Չկայ բնաւ անպարկեշտ պատկեր մը, զեղծ կէտ կամ բիծ մը...: Եթէ անկեղծապէս սիրահարած կամ անկէ բարձր կին մը չէ... զարմանալով պիտի ծիծաղի այդ տարփածուին վրայ, որ զինքը թագուհիի կամ դիցուհիի մը տեղ դրած է, մինչ շատ ամուսիններ կը ճանչեմ, որոնք ցոփութիւնը կամ նօթութիւնը սիրոյ տեղ կ'առնեն, և կ'ինքնին զիրենք խաբելու կը վարժեցընեն...»

Եւ քերեց ճակատը:

—Ինձի այնպէս կուգայ թէ այս կինն ամուսին ունի...: Եթէ ասոնք Բիէռֆիթի գործին մէջ մատ ունին, պէտք է որ... բայց տեսնե՛նք:

Այսպէս իմաստասիրելով հանդերձ, Բրէնպորն ժամանակը պարապ չէր անցուներ. մանրամասնաբար կը գննէր կահերը, ննջասենեակին ամէն մանրամասնութիւնները, շնորհիւ կղպանք բանալու գործիքներու, որոնց կատարեալ հաւաքածոն ունէր:

Վերջապէս հասաւ կնոջական փոքրիկ պչրագեղ գրասեղանի մը քով, որ վառարանին և պատուհաններէ մէկուն մէջ տեղը դրուած էր:

— Օ՛, օ՛, ըրաւ, եթէ բան պիտի կրնամ գտնել, հոս է, վասն զի մինչև հիմա ձեռքս լուսանկարի մը վրան անգամ չի կրցի դնել: Այս տարփառութիւնը շատ խոհեմ են: Ամէն բան անանուն է հոս... կարծես թէ գուշակեր են իմ այցելութիւնս:

Գրասեղանը գոց էր: Բայց Բրէնպորն կղպանքները հարցաքննելու եղանակ մ'ունէր, որով առանց դժուարութեան կրնար բանալ:

Ուստի բացաւ և առաջին դարակը քաշելով տեսաւ որ մէջը կնոջ ձեռնոցներէ զատ բան չիկար:

— Չա՛ր սատանայ, ըսաւ գննած միջոցին, ոունգերը ձկտած, աչերը փայ-

լուն: Ի՛նչ գեղեցիկ ձեռք. ազնուակա- նի ձեռք:

Դարակը գոցեց, ուրիշ մը բացաւ: Մէջը թուղթեր կային:

Բրէնպորն խիոյն առաւ գննել սկը- սաւ:

Տան վարձի ստացագիրներ էին Պ. Վառօայի անուն:

Վերջապէս նամակներ: Ի սկզբան, չկրցաւ բան մը հասկնալ անոնցմէ: Քանի մը բառեր միայն կը պարունակէին:

«Սիրելիս:

«Վաղը, այս ինչ ժամուն...»

— Ժամադրութիւններ, ստիպողական ժամադրութիւններ ազատութիւն չունեցող կնոջ կողմէ...: Ազնուապետական գիր...: Բայց ինձի բան մը չեն իմացըներ իմ փնտռածէս. մինչ և իսկ ստորագրութիւն չունին...: Բայց ա- յո՛, Ծ... սկզբնատառ մը կայ:

— Ծ... կրկնեց: Օ՛ն Բրէնպորն, բարեկամս, գտար: Նոյն սկզբնատառն է որ Բիէոֆիթի լուացորարին քեզի յանձնած չապիկին վրայ բանուած էր, և ժիւսթին Պօնֆօայի գաղանի յաճախորդուհիւներէն մէկուն էր:

Գոհութեան հառաչ մը պոռթկաց
կուրծքէն :

— Սակայն չի բաւեր այս, մրմռաց
ինքնիրեն : Մէկէն աւելի աւանակ կայ որ
Մարթէն կը կոչուի, ինչպէս նաև մէ-
կէն աւելի կին, որուն անունը Ծով
կ'սկսի :

Վերստին սկսաւ քննութիւնն, աւելի
ուշադրութեամբ :

Յանկարծ վերջին նամակի մը վրայ
ձգելով աչերը, խեղդուկ աղաղակ
մ'արձակեց :

Աւասիկ պարունակութիւնը .

«Պաշտելի՛ս,

«Վերադարձաւ : Վայրկեան մ'իսկ մի
«կորսնցներ, վազէ հոն որ գիտես...
«և անյայտ ըրէ ապացոյցը...»

«Միշտ քուկդ և յաւիտեան :

«Ծ.»

— Վերջապէս, ըսաւ Բրէնպորն, ճո-
ճելով թուղթը, աւասիկ ապացոյցը :
Շատ պարզ է : Այս վառօսն տարփա-
ւորն է այն կնոջ, որ իւր զաւակը
մեռցնելէ ետև ժիւսթիւնն ալ սպաննել
տուաւ :

«Վերադարձաւ...» ամուսինն ան-
շուշտ... «Վազէ հոն որ գիտես...»

Բիէնֆիթ : «Եւ անյայտ ըրէ ապա-
ցոյցը...» : Այսինքն աղեկին մարմինը :
Շատ յստակ է : Միայն թէ, ոճիւրը
գործուելէ ետև, որ և է պատճառով,
փոքրիկ դիակը չի կրցին վերցնել... :
Բայց Պօնֆօսն սպաննուեցաւ, որպէս
զի չի կրնայ խօսիլ :

«Օ՛ն, վաղ առտու պաշտօնապէս կու-
գամ հ-ս նախաքննիչ դատաւորին, Պ.
Դանիէլ աը Բէօրի հետ : Պիտի տեսնէ
որ ժամանակս չեմ կորսնցուցած, և
երբ ուզէ մարդ և էշ չըլլայ, կրնայ միշտ
պարզել գործ մը :

Բայց յանկարծ յաղթական արտա-
յայտութիւնն անհետ եղաւ Բրէնպոր-
նի ճարպիտ երեսէն, և ախրոտ երե-
ւոյթ մ'առաւ :

— Ցաւալի՛ է, մրմնջեց : Այս սիրոյ
բոյնը խանդաղատեր էր զիս... Ա-
ւելի կ'ուզէի որ անմեղ ըլլային : Ես
համակիր եմ անձանց, որք կը սիրեն
զիրար, և իրենց սէրն ամէն բանէ ի
վեր կը բռնեն :

Այսու հանդերձ Բրէնպորն շարունա-
կեց իւր խուզարկութիւնը : Բայց աը-
խուր էր, և նոր բան մը չի գտաւ :

— Բաւական է գտածս, ըսաւ, ար-

դարացնելու համար այս վառօային և իւր տարփուհիին ձերբակալումը Բայց պէտք է օրինաւորապէս գործել: Ուստի ամէն բան իւր տեղը դնենք:

«Եւ այնպէս ըրաւ:

«Հիմայ կձկենք: Եթէ զիս հոս գըտնէին, ամէն բան կը կորսուէր»:

Երբ չուելու վրայ էր, Բրէնպորն արդուզարդի սենեկի դուռը տեսաւ, որուն ուշադրութիւն չէր ըրած տակաւին:

Եւ բացաւ:

Լայն հանդերձակալէ մը կնոջ հագուստներ կախուած էին:

—Օ՛, օ՛, ըրաւ դիտելով գանոնք: Ահա այս ալ բաւական է ինձի ճանչելու և գտնելու կիներ, եթէ չի կըրնամ ուրիշ կերպով ճշդել:


Եւ երբ կը պատրաստուէր ուշադրութեամբ քննել հանդերձակալէն կախուած շրջազգեստներն ու աւօտեայները, յանկարծ ցնցուեցաւ:

Բանլիք մը կը խօթէին, մուտքի դրանը մէջ:

—Չա՛ր սատանայ, ըսաւ, բռնուեցայ: Մարդ եկաւ:

Եւ հազիւ ժամանակ ունեցաւ լապ-

տերը մարելով՝ սենեկին մէջ ապաստանելու:



ՄԵԿ ԶՆՆԳՍԿ ՄԻԱՅՆ ԼՍՈՂԸ ՍՍԱԼ ԿԸ ՀԱՍԿՆՈՅ

Արդուզարդի սենեակը, ինչպէս որ ըսինք, հանդերձակալի պաշտօն ալ կը կատարէր:

Բրէնպորն հանդերձակալէն կախուած աւօտեայներէն մէկուն ետին մտնելով՝ կրցածին չափ ծածկեց ինքզինք անոր ծալքերուն մէջ, որ կարծես թէ ֆէրնանտի քնքոյշ մարմնոյն տարտամ անուշահոտութիւնը պահած կը թուէր:

Հոն բաւական լաւ ծածկուած էր Բրէնպորն, այնպէս որ հարեանցի նայող մը գրեթէ չէր կրնար տեսնել զինքը, բայց մեծապէս կը նեղուէր լսելու պաշտօն կատարելու մասին, որովհետեւ տարակոյս չի կար որ խօսակցութիւն պիտի ըլլար:

Ժամանակ ունեցեր էր ներս մտնող երկու հոգիի ոտնաձայն լսելու:

Անշարժ, շնչառութիւնը բռնած, ա-

կանջները անկամ մտիկ կ'ընէր հարցը-
ներով ինքնիրեն թէ ի՞նչ պիտի իմա-
նար՝ եթէ ձայները մինչև իրեն հասնէ-
ին։ Այս ալ հնար չէր մինչև որ ննջա-
սենեակը շի գային։

Փափաքը կատարուեցաւ։

Դանիէլ և Փէրնանտ, վերի յարկին
մէջ իրենց զաւակն համբուրելէ ետև
իրենց բնակարանն իջնելով, ննջասեն-
եակը մտեր էին։

Բրէնպորն խօսակցութեան ձայն մը
կը լսէր, բայց շատ տարտամ կերպով,
վասն զի առտեային ծալքերն և գոց
դուռը չէին թողուր։

Յանկարծ մտածութիւն մը ներկայա-
նալով՝ վրդովեց իւր սարսափախառն
ուրախութիւնը, եթէ վերցնէին այն
նամակը զոր առած տեղը դրած էր
նորէն։

Բայց քանի մը խօսք մինչեւ իւր ա-
կանջը հասնելով՝ փոխեցին գաղափա-
րը և մոռցոցին այս մտահոգութիւնը։

— Շուտով անդորրէ սիրտս...։ Հոս
կրնանք վերջապէս խօսակցիլ, կ'ըսէր
ձայն մը, որ կնոջ ձայն կը թուէր։ Ի՞նչ
վիճակի մէջ է Բիէնֆիթի սոսկալի
գործը։

Բրէնպորնի դէմքը զուարթացաւ, և
յաղթական ժպիտ մը ծալքըլեց իւր
շատ շրթուներ։

Բիէնֆիթի...։ Ի՞նչ պիտի իմանար։
չէր սխալած...։ Կին մ'էր Պ. Վա-
ռօայի հետ խօսողը, և ձայնին մասնա-
ւոր թրթռումէն կը հասկցուէր թէ՛
տարփուհի մ'էր որ կը խօսէր իւր տար-
փածուին հետ։

Վայրկեանի մը չափ Բրէնպորն ըս-
քանչացաւ իւր վրայ։

Շատ ճիշդ տեսած էր գործը։

Այս վառօան ոճրագործներէն մին
պէտք էր ըլլար, հաւանաբար մ'յկեր
հագնողը։

Դանիէլ պատասխանեց։

Բայց առնական ձայնը կնոջ ձայ-
նէն նուազ սուր ըլլալով՝ դժուար կը
հասնէր Բրէնպորնի ականջը, և սակայն
ցնցուեցաւ այն ձայնէն՝ առանց լաւ մը
լսելու։ Այնպէս եկաւ իրեն թէ ան-
ծանօթ չէր իրեն, բայց չիօթ և անո-
րոջ էր։

— Մինչեւ հիմա վախնալու բան մը
չունինք, կ'ըսէր Դանիէլ։

— Ըսել է թէ բան մը յայտնուած չէ։

— Բնա՛ւ սիրելիս։ Հարցաքննուած
վկաները բան մը չէին գիտեր։

—Ուրեմն ազատա՛ծ ենք:

Եւ իւր զեզեցիկ գլուխը տարփածուն ուսին վրայ դրաւ յուսոյ և վրասահութեան ժպիտով մը:

—Ազատա՛ծ... այո՛ ես ալ այնպէս կը կարծեմ, ըսաւ Դանիէլ, որ ամէն բանէ առաջ կ'ուզէր քաջալերել զայն, իրեն միայն պահելով ամէն մտահոգութիւն, վասն զի եթէ առայժմ, իւր գիտցածին նայելով, վախնալու բան մը չի կար իրենց համար, բայց արդարութեան բռնած ընթացքը կասկած կուտար իրեն թէ մտաւոր ապագայի մէջ սարսափելի յոտնութիւն մը կրնար զիրենք վտանգի մէջ ձգել:

—Ո՛հ, շատ ուրախ եմ, ըսաւ Ֆէրնանտ, ո՛րչափ վախցայ պահ մը... բաւական չէ՞ արդէն իրարմէ այսպէս բաժնուելիս, ամուսինիս վերադարձէն ի վեր... Անոր մօտ ըլլալու համար, քեզ թողլով տունս քաշուելու ստիպուիլս, քեզի քանի մը տենդոտ և մտահոգ ժամեր միայն նուիրելու հարկին մէջ գտնուիլս, մինչ ես կ'ուզէի բովանդակ կեանքս տալ քեզի, այս դժբաղդութիւնս, որ կը ստիպէ զիս թողալ քեզի հետ անցունելիք քաղցր

ժամերս, և երթալ նորէն մտնել բանտիս մէջ և ուրիշ կեանքով մ'ապրել, ուր չիկաս դուն, և ուր քու ոչ մէկ բանդ կը կենայ իմ քով... այս ամէնը շատ դժնդակ են...:

Դանիէլ սրտին վրայ սեղմեց զայն յուսահատ խանդով մը:

—Այո՛, ըսաւ, դժնդակ է, շատ դժնդակ: Այդ կերպով, սիրոյ մէկ կողմը կայ, երբեմն ամենէն քաղցրը, որ կ'արգիլուի մեզի: Մենք սիրոյ փայլակները միայն ունինք, այն սերտ մըտերմութիւնը, որ զիրար պաշտօններուն ամենէն սիրելի, ամենէն թանկագին բանն է, երբէք չի կրցինք ճաշակել:

«Պէտք կ'ըլլայ հիմա համբել վայրկեանները՝ որոնք կը սահին, կը թռչին, և որոնց ամէն մէկը ներկայէն բաժնուելով և անցեալին անդունդն իյնալով, քեզնէ բան մը կը խլեն ձեռքէս և կը գոչեն ինձի.—

«Պիտի մեկնի՛ հիմա:»
«Կը տեսնե՞ս, պաշտելիս, ճշդիւ ըզգացումն է մահուան դատապարտուած մարդու մ., որ իւր գլխատման ժամը գիտնալով, կը հասկնայ թէ ամէն մէկ

վայրկեան զինքը կը մօտեցնէ ազետաբեր դանակին :

«Երբէք չի կրցի վարժուիլ ասոր :

«Երբ կը հագնիս շրջազգեստդ, երբ փեղոյրդ կը դնես գլուխդ, երբ թիկնոցդ վրագ կ'առնես, ձեռնոցներդ կը դնես, այնպէս կը թուի ինձի թէ լոյսը կը սկսի պակսիլ բոլորտիքս, և հետըզհետէ մութը կը կոխէ վրաս : Այդ բոլոր արդուզարդի նիւթերը որ քեզ կը ծածկեն, մէկ մէկ տեսանելի նիւթական բաժանում են, որ մեր մէջտեղը կը տնկուին... : Եւ քեզ հեռոցհեռէ մաս առ մաս կը կորսնցընեմ :

«Ա՛հ, եթէ կարենայիր թեւս մանելով գուրս ելնել... անհուն ուրախութիւն մը կ'ըլլար ինձի համար, քու թաթպանուած ձեռքիդ իմ վրայ յենուլը զգալ... :

«Ո՛րչափ պիտի պանծայի քեզ ամէնուն ցուցնելով, և ըսելով :—

«Այո՛, այո՛, նայեցէք, աղէկ նայեցէք, իմս է, միայն ի՛մս է :»

«Լիսկ հիմա... քեզ մինչեւ դուռդ կը տանիմ, երկուքս ալ կառքի մը մէջ պահուրտած, զգալով անիւներուն ամէն մէկ գեղգեղէն թէ քեզ ամուսնիդ

կը մօտեցընեմ... թէ ես ինքս կը տանիմ քեզ անոր... թէ ես պիտի հեռանամ և դուն պիտի մնաս... :

— Ամուսինս... շէ՛ այլ եւս, պատասխանեց Ֆէրնանտ. և գիտես դուն թէ ի՛նչ վիհ բացած է իւր և իմ միջեւ :

— Բաւական է սակայն... մեզ իրարմէ բաժնելու... քեզ հարկադրելու որ վարպետութիւն, խարէութիւն բանեցընես, կատակերգութիւն խաղաս աշխարհի առջեւ, քեզ ճանչողներուն առջեւ : Բաւական է որ ամէն մարդ գիտնայ թէ անորն ես, և մեր ժամադրութիւններն ալ միշտ անհանգի՛ստ, կտրտա՛ծ, խռոված ըլլան բաժնուելու դաղափարէն, յաջորդելիք վայրկեանէն : Ասկէ զատ, քեզի հետ կ'ապրի, ի՛նչ պայմանի մէջ և ըլլայ, և կենացդ երեք քառորդն անորն է :

— Աւա՛ղ, հարկադրուած եմ տանս տիրուհին մնալ, երեկոյթի, պարահանդէսի երթալ, թատրոն երթալ հետը... : Այո՛, կը հասկնամ որչափ ցաւ կուտայ քեզի այս բանը, և երբ աշխարհ կը տեսնէ զիս անոր հետ, երբ կը խընդակցին իրեն իւր բարբաղդութեանն իմ գեղեցկութեանս համար, երբ շատեր նախանձելով կը նային անոր... :

այնպէս կ'ըլլամ երբեմն որ խենդի պէս
պօռալս կուգայ թէ:

«Ո՛չ, կը սիրալիք... ես անորը
չեմ... Դանիէլնն եմ: Ես չեմ սիրեր
դայն. իմ սիրածս ուրիշ մ'է գոր դուք
չէք տեսներ... վասն զի չէք կրնար
կարդալ սրտիս մէջ, գոր այն բացա-
կայ սիրելիս գրաւած է ամբողջովին:

«Այո՛, կը թուի ինձի թէ գողութիւն
մը կ'ընեմ քեզնէ: Եւ եթէ երբեմն իւր
չէկ աչերուն մէջ սնափառութեան
յաղթանակի մը ամսեղուկ փայլը
նշմարեն... վասն զի փառք կը
սեպէ իրեն զիս ցուցնել, որչափ
և կը ջանայ ծածկել իւր ինքնահա-
ւան անմտութիւնը, կ'զգամ որ արիւ-
նըս այտերուս մէջ կ'ելնէ, խուլ զայ-
րոյթ մ'ու դժնդակ նուաստութիւն մը
կը զգամ:

«Վասն զի այդ յաղթանակն անոր
համար է և ոչ ինձի, որ կը տառապիմ
սրտովս, որ կը բողբոջեմ ներսէս. յաղ-
թանակ մը, որ շատ քաղցր պիտի ըլ-
լար քու քովդ...: Պիտի պանծայի
քեզմով. ինչպէս դուն ինձմով:

Եւ ձեռքը ճակտին տարաւ:
— Բայց այսպէս է, յարեց: Եւ քեզնէ

հեռու եղած ժամանակս կ'անցունեմ
քեզի մօտենալու միջոցներ փնտռելով:
Տը Ռիչմօն դերկոմսուհին իւր կուրնէլ
փողոցի օթեանին մէջն է. բայց օտը-
նանտ չի դադարիր երբէք քու քովդ ըլ-
լալէ:

— Սիրելի՛ հրեշտակս մըմնջեց Դա-
նիէլ, ներէ ինձի որ կը թողում քեզի
մերթ ընդ մերթ տեսնել իմ վշտակրու-
թիւնս:

— Ներե՛մ քեզի: Ընդհակառակն կը
բարկանայի քեզի դէմ եթէ չի վշտա-
կրէիր, վասն զի այն ատեն զիս չէիր
սիրեր:

Բրէնպորն այս տարփական խորհր-
դակցութեան խօսքերն ամբողջապէս
չէր լսած, բայց օտընանք և ոչ Ռիչմօն
Դերկոմսուհի բառերն որոշապէս հասեր
էին իւր ուշադիր ականջին...:

- Օտընանտ յարեց:
- Լուր մ'ունիմ քեզի տալիք:
- Աղէ՞կ թէ գէշ:
- Աղէկ աւելի: Հայրս դուրս գնաց
երէկ:
- Պաշտօնով:
- Դեսպանութեան...:
- Այո՛, կարգացի անուանումը պաշ-

տօնական օրագրին մէջ...: Բայց
այդչափ շուտով երթալը չէի գիտեր:

—Պահ մը յուսացի թէ ամուսինս ալ
հետը կը տանէր...: Ո՛րչափ ուրախ
պիտի ըլլայի: Բայց դերկոմսը չուզեց
երթալ...: Կը հասկնամ պատճառը:

—Մա՞յրդ:

—Մայրս տակաւին մէկ կամ երկու
ամիս հոս պիտի կենայ...: Ատով հան-
դերձ, հօրս չուելը սա աղէկութիւնը ունի,
որ որ եթէ վտանգ մ'սպառնար մեզի,
չէր կրնար գիտնալ...: Խեղճ հայր...:
Ա՛հ, թող չի գիտնայ միշտ...: Վերջա-
պէս վախս փարատեցիր...: Բիէնֆիթի
ոճիւրն անպատիժ պիտի մնայ, որով-
հետեւ մէկու մը վրայ կասկած չի կայ...
և մեր գաղտնիքը մեր մէջ պիտի
թաղուի:

—Ես ամէն ջանք պիտի ընեմ աղոր
համար, պատասխանեց Դանիէլ:

Քանի մը վայրկեան ալ շարունակե-
ցին երկու տարփաւորներն իրենց խօ-
սակցութիւնը, բայց ցած ձայնով:

Յանկարծ Ֆէրնանտ գոչեց վշտակար
ձայնով մը:

—Ժամր տասնութեկուկէ՛ս եղեր է:
Պէտք է բաժնուինք իրարմէ:

—Նորէն ե՞րբ պիտի տեսնեմ քեզ,
հարցուց Դանիէլ տխրութեամբ:

—Ես կ'իմացընեմ քեզի, բայց դուն
ամէն օր եկուր սովորական ժամուն:
Կա՛մ զիս կը գտնես, կա՛մ ինձմէ տոմս
մը: Եթէ անձամբ չի կրնամ գալ և
քեզ տեսնել, երկու տող գրելն ալ քե-
զի բան մը շրկել է քու Ֆէրնանտէդ,
ցուցընել է քեզի թէ քու վրադ կը
մտածէ, և պահ մը չի դադրիր քեզի
հետ սրտով ապրելէ:

Բրէնպորն համբոյրներու շիրտուք
մը լսեց, ետքն ալ հեռանալու քայլա-
փոխներ, վերջն ալ դրան մը ճռինջը,
որ բացուեցաւ ու գոցուեցաւ:

Բրէնպորն իւր թաքստոցէն դուրս
ելնելու համար քառորդի մը շափ ըս-
պասեց:

Պ. Վառօս կրնար վերադառնալ:
Երբ ինքն ալ մեկնեցաւ, իւր յաղ-
թական դէմքը տխուր երևոյթ մ'ա-
ռած էր:

—Ցաւալի է, կ'ըսէր ինքնիրեն, որ
յանցաւոր են... վասն զի իսկապէս կը
սիրեն գիրար...: Եւ ես ալ շատ կը
համակրիմ անկեղծ սիրահարներու:

«Բայց ի՞նչ կրնամ ընել: Պարտակա-
նութիւնն ամէնէն առաջ է:

«Ամուսնացեալ կին մ'է . . . տարակոյս
չի կայ :

«Կը մնայ հիմայ պաշտօնապէս գալ
հոս նախաքննիչ դատաւորին՝ Պ. Դա-
նիէլ տը Գէօրի հետ :

«Բայց ո՞ւր լսած եմ այդ վառօային
ձայնը :»

— օ —

78

ՇԱՆԹՐ ԿԸ ՊԱՅԹԻ

Հետեւեալ օրը, առտուան ժամ ին-
նին միջոցները, Դանիէլ տը Գէօր,
իւր տան մէջ գրասեղանին առջև նըս-
տած կ'աշխատէր, սպասաւորը ներս
մտաւ :

— Ի՞նչ կ'ուզէք, հարցուց մէկէն Դա-
նիէլ :

— Մարդ մը եկեր է, ձեզ տեսնել
կ'ուզէ, պատասխանեց ծառան :

— Ի՞նչ մարդ. ես առտունները մարդ
չեմ ընդունիր, չէ՞ք գիտէր :

— Ես ալ այդպէս պատասխանեցի,
բայց կը պնդէ ըսելով թէ իւր այցե-
տումսն եթէ տեսնէք, կ'ընդունիք :

— Ո՞ւր է այցետումսը :

— Աւասիկ :

— Բրէնպո՛րն, կարդացրանիէլ զոր-
մանքով :

Մտան մեկնեցաւ :

— Բրէնպորն հոս, այս ժամնա, կ'ը-
սէր Դանիէլ ինքնիրեն : Մանր բան մը
պատահած պէտք է ըլլայ :

Եւ սիրտը սեղմուեցաւ կործքին մէջ,
գլխուն վրայ դժբաղդութեան մը նա-
խազգացումը կախուածի պէս :

Բրէնպորն ծառային առաջնորդու-
թեամբ Դանիէլի սենեակը մտաւ, և ճա-
ռան մեկնեցաւ :

— Ի՞նչ գործ ունիք հոս այս ժամուս,
հարցուց մէկէն Դանիէլ, նոր բա՞ն մը
կայ :

— Այո՛, պարոն նախաքննիչ դատա-
ւոր, նոր բան կայ և յոյժ կարեւոր :

— Բրէնպորնի դէմքը լուրջ էր, քիչ
մ'ալ խիստ, բայց աչերը կարմիր կայ-
ծերու պէս կը փայլէին :

— Ըսէք նայի՛մ ի՞նչ է :

— Քիչ մ'երկայն է ըսելիքս :

— Նստէք ուրեմն :

— Զարմանալի՛ բան, կ'ըսէր մտքէն
Բրէնպորն . . . ձայնը ճշդիւ վառօայի
ձայնին կը նմանի :

Եւ աթոռ մը մօտեցնելով իւր խօսակցին, հարցուց:

— Առանձին ենք հոս:

— Բացարձակապէս առանձին:

— Մարդ չի՞ կրնար մեզ լսել:

— Ոչ ոք:

— Ներեցէք ինձի սակայն որ ցած ձայնով խօսիմ, և հաճեցէք ուշադրութիւն չնորհել ինձի:

Դանիէլ աը ֆէօր այս նախազգուշական ձևերը տեսնելով, սիրտը կ'հռար ու կը վրդովէր անհամբերութեամբ:

— Օ՛ն, խօսեցէք, ըսաւ իսկոյն:

Բրէնպօրն նստաւ իւր աթոռին վրայ, և երկու արմուկը գրասեղանին վրայ դրաւ, որպէս զի մօտ ըլլայ խօսակցին, և սկսաւ այսպէս:

— Պ. նախաքննիչ դատաւոր, կը յիշէք անշուշտ թէ քանի մ'օր առաջ ինձի չուան մը յանձնեցիք: Որ փիւսթին Պօնֆօան կախելու ծառայած էր, ինչպէս նաև սարտէզին պատին տակէն գտնուած մոյկեր, և բահ ու բրիչ որոնցմով հողը փորեր էին...

— Այո՛, այո՛: Այդ նիւթերը գտնել տալին ոճրագործը:

Այս խօսքն արտասանած միջոցին Դանիէլ աը ֆէօր բնազդաբար ձայնը ցածցուցեր էր, որով բոլորովին վառօայի ձայնին կը նմանէր, զոր Բրէնպօրն առջի իր իկունը լսած էր:

— Ձարմանալի՛ բան, ըսաւ մտքէն:

— Պատասխան չէ՞ք տար հարցումիս, յարեց Դանիէլ:

— Ներեցէք: Կարգով կ'ուզեմ խօսիլ, կօչիկներն և փորելու գործիքներն արդիւնք մը չի տուին:

— Բայց չուանը:

— Չուանն ուրիշ: Ես գտայ այն խանութն, ուսկից գնուած էր, և հոն գնողին ալ կատարեալ նկարագիրը տրւին ինձի:

— Ա՛, արդարեւ կարելոյ է... և կ'արժէր անհանգիստ ըլլալս:

— Այս բան մը չէ սակայն:

— Ի՞նչ կ'ըսէք, այդ նկարագրին տէ՞րն ալ գտաք:

— Ո՛չ, մինչեւ իսկ զայն փնտռելու փոյթ չունեցայ:

— Ձեմ հասկնար ըսածնիդ, ընդմիջեց Դանիէլ:

— Ես ճամբայ ելայ սա գաղափարով, զոր դուք ալ մասամբ մ'ընդունած էք:

թէ ոճրագործը պարզ գործիք մ'էր...
և թէ ոճրին գաղափարն ու տնօրէ-
նութիւնն ուրիշ կողմէ... աւելի բարձ-
րէն եկած էր:

— Ենթադրութիւն մ'էր այդ...

— Իրականութիւն է, հիմա:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք:

— Ըսել կ'ուզեմ թէ կը ճանչեմ ոճ-
րին բուն հեղինակները, և թէ անոնց
միջոցով պիտի գտնենք նաեւ իրենց
գործիք եղողը, երբ ուզենք:

Դանիէլ ար ֆէօր ուշադրութեամբ
Բրէնպորնի նայեցաւ:

— Ա՛, ըսաւ, ո՞վ են:

Բրէնպորն կանգ առաւ, և ծանրու-
թեամբ գրպանէն ծրար մը հանեց
թուղթի մէջ գրուած:

— Պ. նախաքննիչ դատաւոր, ըսաւ,
կը յիշէք անշուշտ թէ դուք ինձի ար-
տօնութիւն տուիք որ սկսուած խու-
զարկութիւնը շարունակեմ ոճրին գոր-
ծուած տեղը, այսինքն Բիէնֆիթի
մէջ:

— Անշուշտ:

— Արդ, Բիէնֆիթի մէջ Ժիւսթին
Պօնֆօայի լուացարարուհին գտայ որուն
կը յանձնէր իւր և յաճախորդանիւնե-
րու հետախնդր:

Դանիէլ ցնցուեցաւ:

— Այն լուացարարուհին, յարեց Բը-
րէնպորն հանդարտ և գրեթէ անհոգ
կերպով. Պօնֆօայի լուալ տուած կտա-
ւեղէններուն տուժարը պահէր էր իւր
քով...:

— Ի՞նչ գտաք տնոր մէջ:

— Թուականներ միայն, որ նշանակու-
թիւն չունէին, եթէ բարի կիներ չպիկ
մ'այ տուած չըլլար:

— Շապիկ մ'ալ:

— Զոր Ժիւսթին Պօնֆօա հոն մոռցած
էր և իւր յաճախորդուհիներէն մէկունն
էր:

— Այն շապիկը ձեր քովն է, գոչեց
Դանիէլ ևս քան զևս դող ելնելով ճար-
պիկ ոստիկանին ըրած յայտնութիւն-
ներէն:

— Աւասիկ, ըսաւ Բրէնպորն քակելով
գրպանէն հանած փոքրիկ ծրարը, և
Դանիէլի աչքին առջև դնելով նուրբ
պաթիսթայէ շապիկ մը, վայելչապէս
բաց օձիքով և վալանսիէնէ շերտիկնե-
նեքով:

Դանիէլ գայն տեսնելուն պէս՝ երե-
սին գոյնը նետեց և դողալ սկսաւ երբ
ձեռքն առաւ գայն:

Այդ շապիկը ճշգիւ Ծէրնանտի շինել
տուածներուն կը նմանէր:

Վայրկեան մը շփոթեցաւ աչքին տեսութիւնը, բայց Բրէնպորնի նայուածքը զգալով, կամքի բուռն ճիգով մը զսպից զինքը խայթող սոսկալի սըրտայուզումը:

— Այս շապիկն անուն չունի վրան, ըսաւ կակազելով Ամէն դեռտաթի և վայելչասէր կին կրնայ այսպիսի շապիկ ունենալ . . . :

— Մանաւանդ եթէ տարփաւոր մունենայ, պատասխանեց Բրէնպորն իւր զգուշաւոր ժպիտովը:

— Ինչո՞ւ համար . . . տարփաւոր մը . . .

— Հարկաւ ամուսինի համար չեն բլլար այդ սնտաթ զարդերը: Եւ եթէ ամուսին մը օգուտ քաղէ ատոնցմէ, դիպուածով միայն կրնայ ըլլալ:

— Ամուսին մը, կրկնեց Դանիէլ վերջին ծայր յուզւած:

Այս ամէն բառերը, դարձաւոր, ամասին, որք ճշդիւ կը համաձայնէին իւր և Ֆէրնանտի վիճակին հետ, իւր շնչերակները կը բախէին և ձանր կը դողացրնէին:

— Բայց աւելին կայ, յարեց Բրէնպորն առանց անապարելու և առանց աչքը վատելու Դանիէլի երեսէն, որուն

չփոթութիւնը չէր վրիպեր իրմէ, Արդարեւ անուն չի կայ վրան, բայց անունի սկզբնատառ մ'է դերկոմսի թագ մը կայ:

Դանիէլի դէմքը կապարի գոյն առած էր:

— Ո՞ւր է, հարցուց մեքենարար:

— Բայց հող ձեր ձեռքին տակն է, պարոն նախաքննիչ դատաւոր, ազդեանքներ կտրուածքին ծայրը, ինչպէս որ սովորութիւն է: Նայեցէք, Ֆ. մը և թագ մը կայ:

Դանիէլ տեսաւ այն ատեն ինչ որ իւր շփոթութիւնը չէր թողուցէր նախ տեսնել:

Տարակոյս հնար չէր, շապիկը Ֆէրնանտինն էր:

Դանիէլ ինքզինք կորսուած զգաց:

Բայց վտ նգին ծանրութիւնը, ինչպէս որ կը պատահի երբեմն, տեսակ մը պաղարիւնութիւն տուաւ իրեն:

— Արդարեւ կան ձեր այդ բաճկները . . . բայց որոշ կերպով չի հասկցուիր ո՞վ ըլլալը, ըսաւ բնական կերպով մը, թէ և պաղ քրտինք մը կը թրջէր ձագատը:

«Այդ տեսակ բաներ կը ծախուին

պատրաստ հագուստի մեծ վաճառա-
նոցներուն մէջ, և ամէն մարդ կրնայ
գնել:

— Ճշմարիտ է, պարոն նախաքննիչ
դատաւոր, ես այլ այդ խորհրդածու-
թիւնն ըրեր էի արդէն . . . :

— Ատկէ զատ, Պօնֆօս անշուշտ շատ
կիներ ընդունած էր իր սոււնը: Ատկէ
սա կրնայ հասկցուիլ շատ շատ թէ՛
անուշը Ֆ.ով սկսող ազնուական կին
մը կեցեր է ժիւսթինի տանը մէջ, որ
և է ժամանակ մը . . . : Եւ այդ չի կրնար
ապացոյց ըլլալ թէ այդ կինը մատու-
նեցած է այդ սճիւրին մէջ, որուն հե-
ղինակները կը փնտռենք:

— Ի՞նչ ալ կարծիքս այդ է, պատաս-
խանեց Բրէնպորն հանդարտութեամբ:

Դանիէլ սփոփանքի հառաչ մ'արձա-
կելով՝ գրեթէ շնորհակալ ըլլալու նայ-
ուածք մ'ուղղեց անզգած ոստիկանին:

— Ասկայն, յարեց այս վերջինը,
լուսնայարարին տուժարը, այդ միակ
շապիկին զիմացը թուական մը դրած
էր, որ դիակը գանուած տղեկին մեռած
օրերուն կը պատասխանէր, այսինքն
ասկէց երկու ամիսի չափ առաջուան
թուական:

— Եւ կ'եզրակացընէք ադկէց . . . :

— Ո՛չ, բան մը չեմ եզրակացընէր,
պարոն նախաքննիչ դատաւոր:

— Ուրեմն:

— Անցնինք ուրիշ իրողութեան:

Դանիէլ տը Բէտրի դիրքն ունեցող
մարդ մ'երբէք այսպիսի դժնդակ փոր-
ձի մը չէր ենթարկուած:

Բրէնպորնի ներս մտնելէն և իւր
յայտնութիւններն սկսելէն ի վեր
Ֆէրնանտի տարփածուն վառած ածուխ-
ներու վրայ էր:

Ամէն մէկ խօսք, ամէն մէկ նոր ման-
րամասնութիւն լսած ժամանակ իւր
պաշտած սիրուհիին վտանգը կը տես-
նէր, իւր այն հոգւոյն հատորին, որուն
համար կեանքը տալու պատրաստ էր:

Ամպերը կը դիզուէին այն ամենա-
սիրելի գլխուն վրայ . . . :

Կը մոռնար բոլորովին ինքզինքը, իւր
սեպհական կացութիւնը, իւր ապագա-
յին կորուստը, եթէ ճշմարտութիւնն
երեւան ելնէր:

Անոր վրայ միայն կը մտածէր, զայն
իւր մարմնովը ծածկելու, սպառնացող
վտանգէն ազատելու հնարը կը փնտռէր
և չէր գտներ:

Իսկասցէս սիրահար մարդու մը համար, ինչպէս որ էր Դանիէլ, աւելի զառն վիճակ չէր կրնար ըլլալ:

Սակայն կը մաքառէր, ժամանակ չունենալով բաւական խորհելու, որպէս զի լաւ հասկընար վտանգին բացարձակ վերահասութիւնը. Յուսահատօրէն կը մաքառէր քայլ առ քայլ պաշտպանելով կոխած գետինը, տեսակ մը խօլ յոյսով թէ կրնար տակաւին վրիպեցընել իւր հոգեհատոր սիրելիին վրայ պայթող շանթը:

—Ուրիշ ի՞նչ իրողութեան վրայ կ'ուզէք խօսիլ, բնաւ աւելի բռնն սրտաւանջութեամբ:

—Ըսի ձեզի, պարո՛ն նախաքննիչ դատաւոր, թէ յանցաւորները գտեր էի, ոճիրին գլխաւոր հեղինակները:

—Ա՛, այո՛, ճշմարիտ է, ըսաւ Դանիէլ գրեթէ շունչ առնելով:

Արդարեւ, եթէ Բրէնպօրն գտեր էր յանցաւորները, այն ատեն ոչ իրեն վըրայ խնդիր կը մնար, ոչ ալ Ֆէրնանտօսի վրայ:

—Ի՞նչպէս գտաք, հարցուց:

—Պարզ դիպուածով մը:

—Ի՞նչ դիպուած է նայինք:

—Ժիւսթինի տանը մէջ հասցէ մը գրտայ...:

—Հասցէ՛ մը, ատոր խօսքը բնաւ չըրիք ինձի:

—Կ'ուզէի նախ ստուգել թէ ձեզի ձանձրութիւն տալ կ'արժէ՞ր:

—Ի՛նչ է ըրածնիդ: Նախ ես պէտք էր իմանայի:

—Բայց կը տեսնէք ահա թէ ատտուանց կանուխ հոս եկած եմ ըսելու թէ ուրիշ գործ չի մնար ձեզի՝ բայց եթէ ձերբակալութեան երկու հրամանագիր ստորագրել և տնայցի մը նախագահել:

—Որո՞ւ դէմ, և ո՞ւր, հարցուց մէկէն Դանիէլ ար Գէօր հետզհետէ քաջալերուելով:

—Այն մարդուն և կնոջ դէմ, որք ժիւսթին Պօնֆօան մեացընել տուին:

—Մարդ մ'ե կին մը...:

—Այո՛, տարիւածուն ու տարփուհին:

—Բնակարաննի՞ն:

—Տուէ փողոց, 29:

Եթէ շանթ իյնար Դանիէլի սաքին առջեւ, այնչափ չէր զարհուրեցընէ. դժբաղդ երիտասարդը:

Վայրկեան մը գունատ, լուռ և շուարած մնաց, մարելու մտ:

— Անուննին չէ՞ք հարցըներ ինձի, պարոն նախաքննիչ դատաւոր, յարեց Բրէնպորն, աչքը չի դատելով անկէ:

— Այո՛... գիտէ՞ք:

— Մարդը Պ. Վառօա կը կոչուի:

Դանիէլ մէկ ոստումով ցատկեց ոտքի վրայ ելաւ, դէմքը մեռեալէ մ'աւելի դ՛գոյն:

Բրէնպորն ալ խոյն ելաւ կանգնեցաւ, զարհուրելով իւր խօսակցին վիճակէն:

— Վառօա՛, Տուէ փողոց 29, կրկնեց Դանիէլ խեղդուկ ձայնով մը: Եւ այդ մա՞րդն է որ կ'ամբաստանէք:

— Այո՛:

— Բացարձակապէս կը սխալիք... Անհնարին է:

— Պարոն նախաքննիչ դատաւորը կը ճանչէ՞ զայն:

— Այո՛... ո՛չ... կակազեց խեղճ երիտասարդը: Ես գիտեմ որ անմեղ է:

— Բայց ես ապացոյցներ ունիմ:

— Ապացոյցներ... անո՞ր դէմ:

— Անոր... և «նի» դէմ:

Դանիէլ ձեռքը ճակտին տարաւ:

Կը վախնար որ խելքը թոցըներ:

— Ի՞նչ ապացոյց, ըսաւ ինքզինքը բռնելով:

— Նամակ մը, զոր տարփուհին գըրած է տարփաւորին, և զոր ես գտայ վառարանին մօտ դրուած փոքրիկ գըրասեղանի մը մէջէն:

— Ուրեմն, գոչեց Դանիէլ ոստիկանին վայ քալելով, որ իւր մեծին ահուելի դէմքէն վախնալով ետ քաշուեցաւ, դուք Պ. Վառօայի բնակարանը մտաք:

— Այո՛, պարոն:

— Ի՞նչպէս, ի՞նչ իրաւունքով, ի՞նչ հրամանով:

— Կեանքս ու պատիւս վտանգի մէջ դնելով, որպէս զի գտնեմ ճշմարտութիւնը, և զոհին մահուան վրէժն առնեմ: Դուռը գործիքով բացի պարզ գողի մը պէս:

— Թշուառակա՛ն, կակազեց նախաքննիչ դատաւորը:

— Գիտեմ որ ըրածս յանդուգն գործ մ'էր... բայց ուրիշ միջոց չի կար, և արդարութիւնը պէտք չէ անկարող և անզէն մնայ, երբ խնդիրը սոսկալի ոճրագործութեան մը վրայ է:

— Ի՞նչ գտաք այն գրասեղանին մէջէն, հարցուց Դանիէլ, որ կ'ուզէր հիմա ամբողջապէս իմանալ Յէրնանտն ու զինքը հարուածող աղէտին ծանրութիւնը:

—Նամակ մը, ըսի ձեզի...: Բայց կրնայի տակաւին երկբայի... եթէ նոյն իսկ տարփաւորները մէկտեղ հոն գալով...:

—Ե՞րբ:

—Երէկ իրիկուն:

—Դուք տեսա՞ք զանոնք, հարցուց Դանիէլ բարկացայտ:

—Ո՛չ, ես պահուրտած էի արդու-զարդի սենեակին մէջ...:

—Ուրեմն չէք ճանչեր կինը:

—Ներեցէք... թէև ոչ յստակ կերպով, բայց բաւական լսեցի խօսակցութիւննին...:

—Անուննին կրցի՞ք լսել:

—Այո՛, մարդը, որ ժիւսթին Պօնֆօան սպաննած կամ սպաննել տուած է, ինչպէս որ ըսի, Վառօա կը կոչուի...:

—Կի՞նը:

—Կինը, որ մեռցուց կամ մեռցրնել տուաւ իւր զաւակը, կը կոչուի, Ֆէրնանտ դերկոմսուհի Ռիչմօնի:

—Սուտ կը խօսիս, թշուառակա՞ն, գոչեց Դանիէլ տր Քէօր, կրակ կտրած, ոստիկանին կոկորդէն բռնելով: Սուտ է ըսածդ... և կ'արգիլեմ քեզի այդ-

պիսի ամբաստանութիւն մ'ընել անմեղ կնոջ մը դէմ, որուն անունը երբէք պէտք չէ ելնէ բերնէդ:

Բրէնպօրն անդիմադրելի ուժով մը կորզեց ինքզինք Դանիէլի ձեռքէն:

—Զգուշացէք, պարո՛ն, ըսաւ պաղութեամբ, երկրորդ սպանութիւն մ'ալ պիտի ընէք:

—Երկրորդ մ'ալ...:

Եւ դողալով ընկրկեցաւ Դանիէլ:

Բանավարտ թեան նշոյլ մը ծագեցաւ մտքին մէջ. իւր գաղանիքը... Ֆէրնանտի գաղանիքը մատներ էր:

—Այո՛, պարոն, կրկնեց Բրէնպօրն, զրեթէ զարհուրելով այն չարագոյծ յայտնութենէն որ կը լուսաւորէր զինքը, քառորդէ մ'աւելի է որ գիտեմ թէ Պ. Վառօա և Պ. Դանիէլ տը Քէօր միևնոյն անձն են: Եթէ ձեր ձայնէն չի ճանչէի, ձեր այդ յազումը բաւական էր ձեզ մատնելու:

Եւ պահ մը սոսկալի լռութիւն տիրեց երկու խօսակիցներուն միջև:

Բրէնպօրն նախաքննիչ դատաւորին կը նայէր, որուն անթարթ աչերը տարտամ նայուածք մ'ունէին:

—Իրաւունք ունիք պարոն, ըսաւ:

վերջապէս Դանիէլ ար Քէօր իւր դրժ-
գոյն զլուխը մէկէն ցնցելով: Պ, վա-
ռօսն ես եմ. բայց ինձի դէմ ըրած
ամբաստանութիւննիդ անիրաւ է: Թէ՛
ես և թէ՛ Ռիչմօնի ղերկոմսուհին անմեղ
ենք:

Բրէնպորն լռեց:

— Դուք կ'ըսէք թէ, շարունակեց Դա-
նիէլ, Պ. վառօս սպաննեց կամ սպան-
նել տուաւ Ժիւսթին Պօնֆօան, որպէս
զի չի կրնայ երեւան հանել Ռիչմօնի
ղերկոմսուհին որդեսպանութիւնը:

— Ես չեմ ըսողը, պարոն: Այդ կնոջ
գրած նամակն է, զոր կարդացի ես...
ինչպէս նաև երէկ իրիկուն ձեր և ա-
նոր մէջ փոխանակուած խօսքերը:

— Բաւական է, աւելի խօսք պէտք չէ:

Դանիէլ իւր մօտն աթոռի մը վրայ
կեցած փեղոյրն ու կրկնօցը հագնելով,
բռնեց ապշած ոտիկանին թեւէն:

— Եկէք ըսաւ կարուկ ձայնով մը,
որուն ազդուութիւնը՝ պատասխան կամ
վարանում չէր ընդուներ բնաւ:

Եւ երկուքը մէկէն վար իջան Սէն-
Ժէռմէն ծառուղիէն և հասան կառքե-
րուն կայարանը:

Դանիէլ կառք մը բռնելով՝ մէջը նետ-

ուեցաւ Բրէնպորնի հետ: «Տուէ փողոց
29» ըսաւ կառավարին:

Եւ համբայ ելան:



ՌԻՐ ՇԱՄՊԵՅԻ ՆՕՏԱՐԻ ՄԸ

ՅԱՃԱՒՈՐԻ ՎՐԼԼՍ

Մինչ Դանիէլ ար Քէօր Բրէնպորնը
Տուէ փողոց կը տանէր, սոսկալի սըբ-
տայուղութեամբ զոր կենացը մէջ ըզ-
գացած չէր, Ժիւլ Շամպէյի խաղաղու-
թեամբ կաւարտէր իւր նախածաշր-
գեղանի Սօֆիին հետ, որ, ինչպէս
կ'ըսեն, «բարի աղջիկ» մ'էր:

Այսինքն թէ բարեհամբոյր բնաւ-
բութիւն, գորովալի սիրտ, պարզ բոյց
գիւտայարմար միտք, և իւր սիրած ան-
ձին ալ մեծ հիւսթիւն ունէր:

Ժիւլ Շամպէյի ալ, բաւական յաջ-
ղած շարածձի, միւս կողմէ «բարի սը-
ղաց» մ'էր, երբ դիմացինը իրեն հա-
ճոյ կամ օգտակրա էր:

Հետեւապէս ամէն բան կարգին էջ
այդ երկու տարփաւորներուն մէջ, մա-
նաւանդ որ Սօֆի քիչ քիչ յարմարեց

էք ժիւլ Շամպէզիի ձեւերուն և ապ-
քելու ծածկախորհուրդ եղանակին :

Այս պատճառաւ Սօֆի բան մը չըսաւ
և չի հարցաքննեց, երբ Շամպէզի
սուրճը խմելէ և անոր հեշտասէր շուրթ-
ներուն վրայ համբոյր մը զետեղելէ ե-
տեւ, իւր սենեակը քաշուեցաւ յայտնե-
լով թէ դուրս պիտի ելնէր :

Սենեակին մէջ փակուելէ ետեւ՝ նըս-
տաւ իւր սեղանին առջեւ, թուղթի
կտոր մ'առաւ և հետեւեալ խօսքը գը-
րեց վրան .

«Տը Ֆէրնիք կոմսին պիտի տրուի՞
երբ այս աւանդն ստացող նօտարին
կողմէ տրուած ստացագիրը ներկայաց-
ուի :»

Այս ընելէն ետքը դարակ մը բա-
ցաւ, և կնքեալ ծրարիկ մը մէջէն հա-
նելով այս գրած թուղթը վրան փա-
կուց :

Յետոյ ինամով հաղուեցաւ և ծրա-
րիկը գրպանը յօթելով դուրս ելաւ,
և քիթը վեր տնկած քալել սկսաւ բան
մը փնտռող մարդու մը պէս :

Նօտար մը կը փնտռէր :
Այսպէս երթալով գետեզրն անցնելէ
ետեւ, Ռիվօլի փողոցը մտաւ և հոն տան

մը վրայ ազդագիր մը տեսաւ, որ Պ.
Վէրքիէ անուն նօտարի մը բնագալանն
ըլլալը կը ծանուցանէր :

Շամպէզի՝ առանց վարանելու ներ-
մտաւ, և երկրորդ յարկն ելնելով, ուր
նօտարին գրասենեակները կը գտնուե-
ին, զինքը տեսնել ուզեց :

Առաջին գրագիրը դէմն ելնելով
հարցուց թէ նոյն ինքն Պ. Վէրքիէ՞ն
տեսնել կ'ուզէք :

— Այո՛ :

— Զրաղած է հիմա :

— Կը սպասեմ :

Եւ արդարեւ սպասեց երեք քառոր-
դի չափ, որմէ ետքը իւր կարգը դա-
լով՝ ներս մտաւ նօտարին քով :

Պ. Վէրքիէ յիսուն տարեկանի մօտ
մարդ մ'էր առոյգ երեւոյթով, անուշ
լեզուով և հաճելի ձեւերով :

— Ի՞նչ հրաման ունիք, պարոն, հար-
ցուց Շամպէզիի, աթոռ մը ցուցնելով :

— Աւանդ մը ձեզի յանձնելու կուզամ :

— Արժեթուղթե՞ր թէ կտակագիր :

— Ո՛չ մէկը, պատասխանեց Շամպէ-
զի հանելով ծրարը գրպանէն և նօտա-
րին գրասենեակին վրայ դնելով : Ըն-
տանեկան թուղթեր են, որ չեմ ուզեր

քովս պահել, և կուգամ աղաչել ձեզ որ դուք հաճիք պահել:

Նոտարն առաւ ծրարը և կարգաց վրայի պիտակը, զոր Շամպէզի փակցուցած էր:

— Այս թուղթերը Պ. ար Ֆէրնիք կոմսի^ն ուղղուած են:

— Այո՛, պարոն:

— Որ հիմա ...ի դեսպան է:

— Ճշգիւ:

— Այս ծրարը որոշեալ ժամանակի կամ նախատեսուած պարագայի մը մէջ պիտի տրուի իրեն թէ ձեր մեռնելէն ետեւ, եթէ դուք անկէ առաջ մեռնիք:

— Թերեւս բնաւ չի տրուի իրեն: Ապագայ դէպքերէ կախում պիտի ունենայ, որոնք կրնան երբէք տեղի չունենալ:

— Այն ատե՞ն:

— Պիտի խնդրեմ որ եթէ օր մը կոմսը գայ և պահանջէ, իրեն տրուի:

— Ինչպէս որ գրուած է վրան:

— Այո՛, կրնա՞յ ըլլալ:

— Կատարելագէտ: Ձեզի պատճառաբանեալ ստացագիր մը կուտամ, և կոմսն այն ստացագիրս ներկայացնե-

լով՝ կրնայ այս աւանդն ստանալ:

— Ուրեմն, հաճեցէք, պարոն, գրեթէ ինձի այդ ստացագիրն ամենապարզ և ամենայտուակ կերպով, որպէս զի պէտք եղած ժամանակ կասկածի ու դժուարութեանց առիթ չտայ:

Նոտարը գրելու վրայ էր, Շամպէզի կեցուց գայն:

— Վերջին հարցում մը, պարոն, ըսաւ:

— Ըրէք:

— Ենթագրենք թէ ես այս ստացագիրն երբ և ըլլայ Պ. ար Ֆէրնիքի տամ, և թէ որ և է պատճառով միաքս փոխեմ, կրնամ ստանալ այս ծրարը:

— Եթէ դուք անկէ առաջ ներկայանաք անշուշտ կը ստանաք: Աւանդ մը միշտ և ամէնէն առաջ տիրոջը՝ այսինքն յանձնողին սեփականութիւնն է:

— Այդ կը փափաքէի գիտալ:

Պ. ար վերիէ վերստին ձեռքն առաւ գրիչը և հետեւեալը գրեց բարձրաձայն կարգալով.

«Ստորագրեալն ևն. ստացայ Պարոն Ժիւլ Շամպէզիէ, բնակեալ Տէօֆօն փողոց թիւ... այսօր 25 յուլիս 18... ծրար մը կապոյտ թուղթով փաթ-

թուած և ժ. Շ. սկզբնատառեր կրող ութ կարծիք մեզրամոէ կնիքներով փակուած, և երեսին վրայ ալ հեռեկայ ծանօթութիւնը գրուած:

(Ընթերցողներուն ծանօթ ըլլալով չենք կրկներ հոս):

Արարեալ ի Փարիզ, և ընգօրինակեալ աւանդներու տետրակին մէջ 25 յունիս 18...

«Ստորագրեալ ՎիթթոՐ Վիլվիէ»:

— Հաճեցէք անգամ մ'ալ կարդալ, ըսաւ նօտարր, ստացագիրն իւր յաճախորդին տալով:

— Ճիշդ է, ըսաւ Շամպէզի:

Նօտարն առաւ դրոշմաւոր թուղթը, և պարունակութիւնն յատուկ տետրակի մը մէջ անցուց:

— Հաճեցէք հիմա ձեր ստորագրութիւնը դնել այս տետրակին վրայ, ըսաւ դրիշը Շամպէզիի տալով:

Ան ալ ստորագրեց:

— Ահա լմնցաւ, ըսաւ նօտարը իր մընայ միայն այս թուղթը արձանագրել տալ:

— Ե՞րբ կրնամ ստանալ:

— Վաղը ցերեկ: Բայց մինչեւ այն ժամանակ զատ թուղթի մը վրայ առ-

ճամեայ ստացագիր մը պիտի տամ ձեզի:

— Ի՞նչ պիտի վճարեմ, հարցուց ժիւլ Շամպէզի, երբ վերջին թուղթն ստացաւ:

— Վաղը կը կարգադրենք արձանագրուելէն ետեւ, պատասխանեց Պ. Վէրվիէ ժպտելով:

Շամպէզի թղթապանակին մէջ դրաւ առճամեայ ստացագիրն և մեկնեցաւ: Փողոց ելնելուն պէս, անցնող պարագայ կառք մը կանչեց, և մէջը մտաւ հեռեկայ հասցէն տալով կառավարին. «Կարնէլ-Սեն-ժերմէն փողոց 97-ամ Ռիշմէն»:

ԱՆՆԿՆԿԱԼ ԵՒ ԱՆԿԵՂԾ ԱՐՏՍՈՒՔ

Սէն-ժերմէն ծառուղիէն մինչև Տուէ փողոց մեր երկու մարդիկը բնաւ չի խօսեցան իրարու հետ:

Իանիէլ դունատ, չրթունքը սեղմուած, նայուածքն անթարթ, կոկծագին, սրտայուզութեան վերին աստիճանին մէջ կ'երևար:

Բրէնպարն ալ իւր ընկերին չափ յուզուած էր գրեթէ:

Իրեն համար նախաքննիչ դատարան-
քին և առ Ռիչմոն դերկոմսուհիին յան-
ցապարտութիւնն անվիճելի էր... և
առաջին ո՛չ պարտուց կատարման ար-
ագհովութիւն, ո՛չ ալ ճշմարտութիւնը
գտած ըլլալու ուրախութիւնը չէր ըզ-
գար :

— Ինչո՞ւ կը տանի դիս Տուէ փողո-
ցը, կը հարցնէր ինքնիրեն : Արդեօք
դիս մէջտեղէն վերցնելու փո՞րձ մը ար-
տի ընէ... Օ՛, այն ժամանակ երկու
կըզանք խաղին մէջ :

Սև ձեռքովը կը գգուէր տափառին
նաեկի գրպանը դըրուած ատրճանակի
մը բունը :

Բայց մինակ իր ապահովութեանը հա-
մար մտայոյզ չէր, նկատողութիւն մը
որ չէր կրնար զինքը այնչափ վրդո-
վել : Սիրտը ճնշողը իւր կարծեցեալ
գիւտն էր. առանց վարանելու իւր
կեանքէն տասն տարի կուտար այդա-
յոյց մ'ունենալու համար այն անձին
անմեղութեանը, զոր իրողութիւններն
ամբաստանելու կը հարկադրէին զին-
քը :

Վերջապէս կառքը Տուէ փողոցին 29
թիւ տան առջև կեցաւ :

Դանիէլ աը Բէօր իսկոյն վար ցատ-
կեց մէջէն :

— Ի՞նչք, պարոն, ըսաւ ընկերին կարճ
ձայնով մը :

Բրէնպորն հնազանդեցաւ, սիրտը
ճմլած, չի հասկնալով Դանիէլ տը Բէօ-
րի մտքէն անցածը, բայց որոշած էր,
ինչ վտանգ ելնէր դէմը, հետևիլ ա-
նոր մինչև վերջը :

— Եկէք, յարեց երիտասարդը տու-
նէն ներս մտնելով և զայն բակէն ան-
ցունելով :

Երկուքն ալ կանգ առին այն բնա-
կարանին առջև ուր կ'ընդունէր Յէր-
նանտը, երբ զինքը տեսնելու գար :

— Հոս մտաք երէկ իրիկուն, այնպէս
չէ՞ :

— Այո՛, պարոն, պատասխանեց Բը-
րէնպորն :

Դանիէլ դուռը բացաւ և նախ ինքը
ներս մտաւ :

Բրէնպորն ալ ետեէն մտաւ՝ ձեռքն
ատրճանակին վրայ :

Գոցեցէք դուռը, ըսաւ Պ. տը Բէօր :
Բրէնպորն դարձեալ հնազանդեցաւ,
առանց ուշ դնելու վտանգի երկիրդին,
որ անշուշտ կ'արգիլէր նուազ քաջա-
սիրտ մարդ մը :

Մենեակը բոլորովին մութ էր. բայց Դանիէլ պատուհանին քով վազելով քացաւ, արտափեղկերը դուրս քշեց, և պայծառ լոյսը մէկէն ճառագայթեց սիրոյ քաղցրիկ բոյնին մէջ, ուր օղբ կարծես թէ կը շաչէր տակաւին տարփաւորին և տարփուհւոյն փոխանակած համբոյրներովը:

Ոստիկանն ու նախաքննիչ դատաւորը՝ առանց կանգ առնելու՝ ննջասենեակը գացին:

— Հոս մտանք մենք երէկ իրիկուն, այնպէս չէ՞, հարցուց Դանիէլ:

«Դուք ալ հոն պահուրտեր էիք, աւելցուց, արդուզարդի սենեակը ցուցնելով:

— Այո՛ պարոն:

— Եւ լսեցիք մեր խօսքերը:

— Ոչ ամէնր... բայց լսեցի որ Բիէնֆիթի ոճիւրիս վրայ կը խօսէիք այնպիսի կերպով մը...

— Որով դուք կ'ամբաստանէք զիս... և ինձի հետ եղող անձը:

Հակառակ այն դառնութեան որով այս խօսքերն արտասանուեցան, Դանիէլ գոհ եղաւ որ Բրէնպորն լսած խօսքերէն միմիայն անոնց ակնարկեց,

որք զինքը և իւր տարփուհին իբրև Բիէնֆիթի երկու ոճիւրներուն հեղինակ կը կարծեցընէին, և չի յիշեց այն խօսքերը, որ իրենց երկու սիրտերուն մտերմութենէն ու հնչուութենէն դուրս փախեր էին:

— Պարոն... ըսաւ Բրէնպորն ազդուած և շփոթած նախաքննիչ դատաւորին հրացայտ նայուածքէն և վիրաւորեալ արժանապատուութեան արտայայտութենէն:

— Լաւ, պարոն Բրէնպորն. բայց դուք ուրիշ ասպացոյցի մը խօսք ըրիք... ընկճող ասպացոյցի մը...:

— Ընկճող... այո՛, ըսաւ Բրէնպորն՝ երեսէն քրտինք վազելով:

— Ի՞նչ է:

— Նամակ մը...:

— Ա՛, այո, ճշմարիտ է:

— Եւ հո՞ն է, աւելցուց Բրէնպորն մատովը ցուցնելով այն կաշն, որուն մէջ դրեր էր զայն նորէն:

Դանիէլ վազեց բացաւ կահը, տենդահար ձեռքով մ'առաւ մէջը գտնուած քանի մը թուղթերը, և գաւա Ֆերնանտի շամառօտ տոմսակը, որուն գոյութիւնը մոռցեր էր իր շփոթութեան մէջ:

Եւ ցնցուեցաւ կարդալով հետեւեալ խօսքերը :

«Պաշտելի՛ս,

«Վերադարձաւ : Վայրկեան մ'իսկ մի «կորսնցներ : Վազէ հոն որ գիտես, և «անհետ ըրէ ապացոյցը :

«Միշտ քուկդ, և յաւիտեան : Յ .»

— Արդարեւ այս խօսքերն ընկճիչ են թէ՛ անոր և թէ՛ ինձի համար . . . :

«Եւ քու տեղդ ուրիշ ո՛վ ալ ըլլար, մեր յանցապարտութեան ապացոյց պիտի նկատէր զայս» :

Բրէնպորն գլուխը ծռեց :

Կ'սկսէր չհաւատալ այդ յանցապարտութեան, կամ գոնէ առաջուան չափ համոզում չունենալ :

— Հիմա, պարո՛ն, հասկցնեմ ձեզի տղ չարաշուք խօսքերը :

— Օ՛, պարո՛ն, գոչեց Բրէնպորն. կ'աղաչեմ շուտով ըրէք, եթէ կրնաք :

«Ապացուցէք ինձի թէ, կոյր յանձնապատանութեամբս խարուելով անմեղներ զրպարացի : Ձէք կրնար գիտնալ թէ ինչ կը քաշեմ ժամէ մ'ի վեր, և թէ ո՛րչափ ուրախ և երջանիկ պիտի ըլլամ, եթէ ապացուցանէք ինձի թէ պարզապէս ապուշ մ'եմ, երևոյթներէ

խարուող անմիտ մ'եմ, անփորձ և անպիտան համբակ մ'եմ :

— Մտիկ ըրէք զիս ուրեմն, ըսաւ Դանիէլ միշտ դժգոյն և պաղ, նոյն կարճ և իշխանական ձայնով : Արդարեւ ես սը Ռիչմօն դերկոմսուհիին սիրահարն եմ : Ծղմարիտ է նաև թէ տիկին սը Ռիչմօն արու գաւակ մը ծնաւ ասկէց երեք ամիսի չափ առաջ, և թէ իւր ծննադարերութիւնը ժիւսթին Պինֆօայի տանը մէջ կատարեց : Տղեկը մանկաբարձուհիին խնամոց յանձնուած էր . . . : Յանկարծ Պ. սը Ռիչմօն փութիվ վերադարձաւ առանց սպասուելու, առանց իւր կնոջն իմացնելու . . . : Կասկած ունէր արդեօք : Կրնար վախցուիլ : Տիկին սը Ռիչմօն վախնալով, գրեց ինձի :

«Վազէ հոն որ գիտես» այսինքն՝ «Ժիւսթին Պոնֆօայի տունը, և «անհետ ըրէ ապացոյցը», այսինքն՝ գնա՛ ա՛մեր դաւակն և ուրիշ տեղ տար պահէ :

— Եւ տղան . . . ո՞ղջ է, գոչեց Բրէնպորն, խուզարկու նայուածք մ'ուղղելով Դանիէլի վրայ :

Այս վերջինը պատասխան չի տուաւ :

Միայն գլխովը նշան ըրաւ Բրէնպոր-
նի որ ընկերանայ իրեն:

Երկուքն ալ դուրս ելան բնակարա-
նէն, սանդուղէն վեր ելան առաջին
յարկը, և Դանիէլ գրպանէն բանալի
մը հանելով բացաւ Գէորգիկին ծծմա-
րին բնակած սենեակին դուռը:

Վայրկեան մը չանցած՝ Բրէնպորն
տղեկին օրոցին առջևն էր:

Ստնտուն ապշելով Դանիէլին այս-
պէս յանկարծակի անծանօթի մը հեա-
ներս մտնելէն, խօսելու վրայ էր:

Դանիէլ նշանացի հրամայեց որ լռէ:

— Աւասիկ իմ և Օրիորդ Կարնիէի
որդին, ըսաւ:

Բրէնպորն զարմանալով Դանիէլի
նայեցաւ:

— Օրիորդ Կարնիէ մօրը անունն է, ըսաւ
Դանիէլ, ստնտուն ցուցնելով աննշմա-
րելի շարժումով մը:

Բրէնպորն հասկցաւ:

Շուեցաւ օրոցին վրայ և վայրկեան
մը դիտեց թարմ և կարմրուկ մանկի-
կ, որ կարծես կը ժպտէր իրեն:

— Ահ, մրմռաց բռունցքի ակազին
հարուած մը տալով իւր գլխին, եթէ
գիտնայիր իմ հոս գալուս պատճառը,
սիրուն գաւազ, փոխանակ ժպտելու

կը ճանկրտէիր զիս... և շատ իրաւունք
ունէիր:

Միանգամայն արտառքի խոշոր կայ-
լակ մը թրջեց իւր ծանր թարթիչ-
ները:

Դանիէլ համբոյր մը դրաւ իւր որ-
դեկին կլոր այտերուն վրայ, և Բրէն-
պորնի, դառնալով:

— Թողունք որ հանգչի, ըսաւ քաղց-
րութեամբ:

Յետոյ ստնտունն դառնալով:

— Ես կուգամ այս իրիկուն ըսաւ:

Եւ դուրս ելաւ:

Բրէնպորն ալ ետևէն ելաւ գլուխը
կախած:

Եւ վար իջնելով նորէն գետնայարկի
բնակարանը մտան երկուքն ալ:

ԲՐԷՆՊՈՐՆ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐ

Երբ երկուքը մինակ գտնուեցան ի-
րարու դիմաց, Բրէնպորն Դանիէլ ար-
ժէօրի մօտեցաւ, և խոնարհելով ըսաւ:

— Ներեցէք, պարոն, ձեզի ըրած
գէշութիւնս. այն յայտնութիւնները,
չորս ընելու հարկագրեցի ձեզ, և այն

վատ կասկածները, որոնցով աղտոտեցի պարկեշտ մարդու մ'ե անմեղ կնոջ մը պատիւը... կոպիտ մ'եմ ես... աշխարհի ամէնէն անմիտ մարդը, տխմար մը, անխելք մեծամիտ մը, կոյր յանձնապաստան մը, ինքզինքը մեծ հանճար մը կարծող, մինչ դըպրոցի աշակերտ մ'իսկ չէ...

«Այո՛, այո՛, ճարպիկութիւն մը ցոյց տալ ուղեցի... սկսնակի մը պէս, և մոռնալով իմ հին փորձառութիւնս, ինքզինքը արտաքին երեոյթներու մէջ նետեցի կուրաբար: Ամօթալի բան է, գարշելի բան է ըրածս, և երբէք, բնաւ երբէք չի պիտի ներեմ ինձի...»

«Պէտք չէ՞ր գիտնայի շատոնց ի վեր թէ երեւոյթներէ խարուելու չէ... թէ ճշմարտութիւնը գրեթէ միշտ հոն չէ, ուր գտնուելու երեոյթ ունի, և թէ ճշմարտանմանը տասնէն ինն անգամ հակառակն է ճշմարիտին»:

«Ձիտ այս տխուր վիճակին մէջ ձգողը, պարոն տը Բէօր, այն կասկածն եղաւ, զոր ձեր վարմունքն ազդեց ինձի առաջին վայրկեանէն»:

«Ժիւսթ ինի տունը գացած ժամանակնիս անսայ որ դուք տատամստ ձեւ մը, մտմտուք մը, վախ մը ունէիք...»

աւելի բաներ մը գիտէիք, բայց չէիք ուզեր ցուցնել... այն ժամանակ ես ալ իմ անիծած երեւակայութեամբս և հետեւութենէ հետեւութիւն դիմելով վէպեր շինելու տխմար սովորութեամբս գացի ծուղակը ինկայ...»

«Ձեզ գիտեր թէ երբէք պիտի ներէ՞ք ձեր վրայ կասկածիլս, ձեզ հարկադրելս որ ձեր առանձնական կենաց գաղտնիքն ինձի խոստովանիք... բայց ես ինձի համար, իմ աչքիս առջեւ մեծ յանցաւոր մ'եմ և պիտի մնամ...»:

«Հաւատացէք, մեծ է ցաւս... չեմ կարծեր որ կենացս մէջ երբէք այսչափ վշտագնած ըլլամ»:

— Այո՛, պարոն, պատասխանեց Դանիէլ՝ այնպիսի քաղցրութեամբ մը որ զարմացուց ոստիկանը, յանցաւոր էք, շատ յանցաւոր... նախ առանց իմ գիտութեանս, առանց ինձմէ հրաման ստանալու, առանց ձեր ըրած գիւտերն ինձի ներկայացնելու դուք ինքնագրելուիս գործելով: Յանցաւոր էք ճշմարտութիւնը փնտուելու համար անխոստովանելի միջոցներ գործածելով, գողի պէս այս յարկը մտնելով, բնակարան մը պղծելով, զոր իրաւունք չու-

նէիք խուզարկելու : Ապօրէն միջոցնե-
րը դէշ արդիւնք կուտան միշտ :

«Եթէ դուք ձեր ճշգրիտ պարասեցա-
նութեան և ձեր օրինաւոր ու իսկա-
կան իրաւանց սահմանին մէջ կեցած
ըլլայիք, ասոնց մէկն ալ չէր ըլլար :

— Կը ճանչեմ գործած մեծ յանցան-
քըս, պարոն, ըսաւ Բրէնպորն, և
կ'երդնում ձեզի՝ որ այս դասը օգտա-
կար պիտի ըլլայ ինձի... Եթէ սակայն
տակաւին արժանի եմ վարելու արդա-
րեւ արժէք չունեցող բայց օգտակար
պաշտօն մը դոր վարեցի մինչև ցարդ... :
Այս մասին տարակուս ունիմ... վասն
զի սաստիկ փափաք կը զգամ հրաժա-
րակունս տալու... :

«Ա՛հ, եթէ ասպարէզիս կորուստովք
կրնամ գնել ձեզի առած փլասս, բնա-
չեմ վարանիլ :»

Չայս ըսելով Բրէնպորն աթոռի մը
վրայ ինկաւ ցաւի ու լրեն դէմ անզոր
կատաղութեան շարժումով մը, որ Դա-
նիէլի սիրտը շարժեց :

— Հանդարտեցէք, պարոն Բրէն-
պորն, ըսաւ քաղցրութեամբ. ևս ձեզ
պարկեշտ կը կարծեմ... և պէտք ու-
նիմ այնպէս համարելու, վասն զի ձեր

ձեռքին մէջն է, չեմ ըսեր իմ ասպա-
րէզս և դատական պաշտօնեայի ասպա-
գաս, որ այնչափ մեծ նշանակութիւն
չունի ինձի համար... այլ ամէն յար-
գանաց արժանի կնոջ մը պատիւը,
համբաւը, կեանքը... : Տը Ռիչմօն
գերկոմսուհիին համար ըսել կ'ուզեմ :
— Պարոն, կ'երդնում ձեզ, կակա-
զեց Բրէնպորն, չեմ գիտեր որո՛ւ հա-
մար է ձեր խօսքը : Չեմ գիտեր այդ
անունը... մոռցայ զայն արդէն :

— Կը հասկնամ ձեր փափկանկատու-
թիւնը, պարոն, բայց դուք պէտք ե-
ղածէն աւելին գիտէք հիմայ... Ես
այլ ևս բան մը չունիմ ձեզնէ պահե-
լիք... ուստի մտիկ ըրէք ըսելիքս :»

Կարճ լուծիւն մը ակրեց :

Դանիէլ կ'ամփոփէր ինքզինքը :

Բրէնպորն, գլուխը կախած, կը
հասկնար որ իւր պարտքն էր հիմայ
մինչև վերջը մտիկ ընել զայն, որուն
ներքին կեանքը բռնաբարեր էր այն-
չափ բիրտ կերպով :

— Պարոն, ըսաւ վերջապէս Դանիէլ
առ Քէօր, քիչ մ'առաջ իմ ներողա-
մատութիւնս կը խնդրէիք : Ամէն մարդ
իրաւունք ունի ամէն մարդու ներողա-

մտութեան վրայ. վասն զի ամէն մարդ պէտք ունի այդ ներողամտութեան. և եթէ կը ճանչէ ինքզինքը, կը ճանչէ կեանքը, չկրնար զլանալ զայն ուրիշի:

«Մանաւանդ ես պէտք ունիմ այդ ներողամտութեան, վասն զի քաջ գիտեմ թէ՛ օրէնքին և ընկերական նախապաշարունակներուն առջև յանցաւոր եմ ես... քաջ գիտեմ թէ՛ այն կիներ որ կը սիրեմ և վերջին ծայր կը յարգեմ, հանքային կարծեաց խստութեանը կ'ենթարկուի, եթէ իմացուի թէ Պ. Դանիէլ տը Գէօրի սիրուհին է: Դուք առաջինն էք, մինակ դուք էք որ գիտէք անոր յանցանքը: Չեմ ուզեր որ դատէք զայն, մինչեւ իսկ լռելեայն, մինչեւ իսկ ձեր խղճմտանքին խորերուն մէջ, առանց զիս լսելու:

«Տիկին Ֆէրնանտ տը Ռիչմօն դերկոմսուհին ամուսնացած է, և տարփաւոր մ'ունի, որ ես եմ: Կը խաբէ իւր ամուսինը, հետեւապէս շնացեալ մ'է:

«Ահա այս է իրողութիւնն իւր պարզութեան մէջ:

«Աշխարհի առջեւ տիկին տը Ռիչմօն օրինաւոր կիներն է դեղեցիկ անուն մ'ը. փայլուն դիրք ունեցող հարուստ մարդու մը:

«Այդ մարդուն վրայ ծանօթ պահասութիւն մը չկայ, որ կարենայ կնոջը յանցանքը արդարացրնել կամ անոր ծանրութիւնը թեթեւցնել:

«Պարկեշտ մարդ մ'է, որովհետեւ յարգ ու պատիւ ունի ապրած ընկերութեան մէջ:

«Գողութիւն կամ մարդասպանութիւն բրած չէ: Կնոջը հետ չարաչար չի վարուիր, չի նեղէ, չի խոշաւնգեր զայն...:

«Ես իրերն այնպէս կ'ըմբռնեմ ինչպէս որ կը ներկայանան: Լաւագոյն կը նկատեմ խաբուած ամուսնին համար, և չարագոյն կը նկատեմ անհաւատարիմ կնոջը համար:

«Աւասիկ արտաքին երեւոյթր: Իսկ իրականութեան գալով, աշխարհի աչքին պարկեշտ երեցող այդ մարդը թշուառական մ'է, և անհաւատարիմ կիներն ալ աշխարհի ամէնէն պարկեշտ կիներն է:»

— Պարոն, բոաւ Բրէնպօրն, ես չեմ ուզեր աւելի գիտնալ: Որպէս զի դուք դայն այդչափ սիրէք, և ան ալ ձեզ նոյնչափ սիրէ, պէտք է որ այդպէս ըլլայ: Սէրն այն արժէքն ունի ինչ որ ունին սիրողները:

«Ի՞մ միտքէս անցեր էր հոս մտած
ատենս . ուր ամէն բան սէր կը շնչէ ,
ճշմարիտ և ճշ սերը : Այս պատճառաւ ,
դուք ըլլալնիդ գիտնալէս առաջ կը
ցաւելի որ ստորին կարգի յանցաւորներ
չէին գտածներս . . . և կը զարմանայի :
Սիրելու կարող մարդիկ սովորաբար
անզգամ և անմիտ չեն ըլլար :

— Այս կնոջ պատիւը ձեր ձեռքին
մէջն է . րաւ Դանիէլ ընկերական ի-
րողութեանց իսկութիւնն աչքին առջև
բերելով :

— Իմ բովանդակ կեանքս կը զոհեմ ,
որպէս զի որ և է կասկած մը չի քրս-
ուի ո՛չ ձեզի ոչ անոր : Ա՛հ , եթէ այս
գործին սկիզբէն իմ վրայ վստահու-
թիւն ունենայիք . . . այս սոսկալի ցա-
ւէն զերծ կը պահէի ձեզ . . . և կ'ըզ-
դուշանայի այս վատ գործէն : Վասն
զի ես ալ պարկեշտ մարդ մ'եմ , պա-
րո՛ն :

— Կը հաւատամ . . . : Աներկբայ եմ :

— Ես գիտեմ գաղտնիք պահել :

— Այդ իմ դործս չէր : Ես չէի կըր-
նար խօսիլ . . . : Պարագաներն յայտնե-
ցին ամէն բան : Եթէ դուք այն մարդն
էք , ինչպէս որ կ'ենթադրեմ , աւելի

լաւ է այսպէս : Անք երկուքս կրնանք
աղաւտել ար Ռիչմոն դերկոմսուհին :

— Էստա՛ն եղիք այդ մասին :

— Ենորհակալ եմ :

Եւ երկուքն ալ ձեռուրնին իրարու
երկնցընելով՝ իրենց անկեղծութիւնն
զգացին այս եղբայրական ձեռնասեղ-
մութիւն մէջ :

— Բայց դուք նկարագրի մը խօսք
ըրե՛ք էիք ինձի . . . :

— Զոր մանկաբարձուհիին վզին վրայ
գտնուած չուանը ծախող խանութպա-
նը առած էր ինձի :

— Ունի՞ք քովերնիդ :

— Աւասիկ , պարսն , պատասխանեց
Բրէնալորն թղթապանակէն թուղթ մը
հանելով և Դանիէլի երկնցընելով :

— Լաւ , գրասենեակիս մէջ կը կար-
գամ : Ապահովութեան պետը գիտե՞
՞ք Վաստայի բնակարանին մէջ ըրած
խաղարկութիւննիդ :

— Ընելիքս իմացուցեր էի , բայց ար-
դինքը չի գիտեր , դիւրին է ըսել իրեն
թէ պարապ ելայ :

— Կրպասեմ զայդ : Հիմայ բաժնուինք
Բրաբըմէ , պարոն Բրէնպորն : Ես պէտք
ունիմ գազափարներս ամփոփելու ; նոր

կացութիւնը տեսնելու... վասն զի պէտք է գտնել յանցաւորները... և պիտի գտնենք, տարակոյս չունիմ: Առ այժմ չնորհակալ եմ վերջին անգամ, և վստահութեամբ կ'սպասեմ ձեր աշակցութեան:

— Ես ձերն եմ հոգւով մարմնով, պատասխանեց Բրէնպորն յուզուած ձայնով մը և պիտի ցուցնեմ: Դուք ներեցիք ինձի... բայց չեմ գիտեր թէ ես ալ պիտի ներեմ... սակայն տարակոյս չունիմ որ չպիտի մոռնամ այս դասը, և օգուտ պիտի քաղեմ:

Եւ ողջունելով դուրս ելաւ:

— Երևոյթներու պէտք չէ վստահիլ, կը մըմռար ինքնիրեն՝ հեռացած միջոցին:

Քանի մը վայրկեան ետքն ալ Դանիէլ մեկնեցաւ և կառքը նստելով իր սուներ գնաց:

ԻՍԱԿԻ ԿԼՄ ԿԵՆՆԻՐ

Խեղճ Յէրնանտի մտքէն չէր անցնէր բնաւ այն սոսկալի տագնապը զոր իրեն համար կրեր էր Դանիէլ, որուն

հոգւով մարմնով անձնատուր եղած էր անդարձապէս:

Փոքրիկ սենեակ մը քաշուած, որ իրեն պէս պչրագեղ ու սիրուն էր, ծաղկատի կիներ կը մտածէր Դանիէլ արՔէօրի վրայ, իւր վիճակին, զինքը չըջապատող ամէն տեսակ վտանգներուն վրայ, Դանիէլի հետ ամբողջովին միանալու մշտնջենաւոր բաղձանքէն լավուելով, ինչպէս ամէն ճշմարիտ սիրահարներ:

Իւր ուղիղ և անկեղծ բնաւորութիւթիւնը կը տառապէր փորձանքի դատապարտուած վիճակէն. և թէպէտ իր վիճակին մէջ գտնուող ամուսնացեալ կանանց շատերէն երջանիկ էր, մանաւանդ այն կիներէն, որք ինքզինքնին փրկելու համար հարկադրուած են սիրոյ կատակերգութիւն խաղալ իրենց ամուսնին քով, զոր դադրած են սիրելէ, և որոց բնտանութիւնն և գորովի ցոյցերը անտանելի տանջանք մ'են իրենց համար, բայց և այնպէս Յէրնանտ չէր կրնար առանց անհամբերութեան և բուռն դժգոհութեան ինքզինք վարժեցնել այն դերին, զոր կը հարկադրուէր խաղալ:

աշխարհի առջև, երբ զինքը դերկում-
սին հետս քը տեսնէին:

Ստուծիւն մը, կեզծաւորութիւն մը,
խաբերայութիւն մը կար այդ դերին
մէջ, որ զինքը կը պգտիկցնէր իւր իսկ
աչքին առջև, և որմէ շատ անգամ
դառն ձանձրոյթ մը, խորին զգուանք
մը կ'զգար, զոր չէր կրնար խոստովա-
նիլ մինչև իսկ Դանիէլի:

Ասով հանդերձ պիտի բռնէր ամուս-
նին տուած խոստումը, գլխաւորապէս
իւր հօրը՝ Տր Ֆէրնիք կոմսին պատ-
ճառաւ, որմէ գազտնի պահել կ'ուզէր
այն վատ խտրկանքն և պժգալի դա-
ւաճանութիւնը, որուն գոհ եղած էր:

Վերջապէս այն վիճակին մէջ էր,
որ իւր այդ պաշտած հայրը՝ տխուր
իրականութեան կասկածէն զերծ պա-
հելու համար՝ հարկ էր որ Ֆէրնանա
ինքզինք հնար եղածին չափ սիրով
ցոյց տար Պ. տր Ռիչմօնի հետ:

Այս պատճառաւ էր որ, հակառակ
Դանիէլի դժգոհութեան, երեկոյթներ-
ընէր, պարահանդէսներու, թատերա-
կան ներկայացումներու կ'երթար իւր
ամուսնին հետ, զուարճանք, որք սի-
րող սիրտերու և գորովող հոգիներու

հաճելի կրնան ըլլալ, միայն այն պայ-
մանաւ որ իրենց սիրած էակին ներ-
կայութեամբն ու մասնակցութեամբը
կատարուին, ապա թէ ոչ, անսխա-
րինելի յոգնութիւն մ'էր իրեն այդ
զրօսավայրներն երթալ չինձու դէմ-
քով, ամուսնին թեւը մտած, որուն
առջեւ ամէն անկեզծութիւն և բնա-
կանութիւն արգիլուած էր:

Բայց կոմսը մեկնած ըլլալով Փարի-
զէն, Ֆէրնանտ կ'ըսէր ինքնիրեն թէ
իւր այդ հպատակութենէն կրնար մա-
սամբ մ'ազատիլ:

Այլ ևս պէտք չունենալով իւր կար-
ծեցեալ ամուսնական երջանկութեան
արտաքին երեւոյթովը զայն ապահով-
ցընելու, իւր գործելու ազատութիւնը
ձեռք կ'առնէր, և նոյն առաւօտուն
իսկ յանձն չէր առնէր ամուսնին հետ
պաշտօնական մեծ հացկերոյթի մ'եր-
թալ, որուն հրաւիրուած էին:

— Բայց աչքի պիտի գարնէ ձեր բա-
ցակայութիւնը, դիտել տուեր էր կոմ-
սը, մանաւանդ քանի մ'անձեր պիտի
գտնուին հոն, որոնք ձեզ չեն ճան-
չեր, և ես ալ կ'ուզէի ներկայացընել
ձեզ. . . կ'սպասեն. . . մեծ յուսախաբու-

թիւն մը պիտի ըլլայ այն անձերուն համար, որք ձեր գեղեցկութեան համբաւը լրած են...

— Եւ դուք ալ ուրախ պիտի ըլլայիք ճաշակելով այդ փոքրիկ յաղթանակը, որ ժամանակաւ շատ կը շողոքորթէր ձեր սնտափառութիւնը, երբ զիս ջախջախելէ ու մարելէ... կամ առանձնութեան մէջ ամէն կերպով ձեր հաճոյքին ծառայեցընելէ ետեւ, դումարուններու կը տանէիք և իմ յաջողութեանէն հաճոյք կ'զգայիք՝ արհամարհոտ դէմք մը կեղծելով, իբրեւ մարդ մը, որուն սեփական իրաւունքն է և զոր նշմարելու անգամ չի գիշանիր...

«Անցաւ այն ժամանակը: Ես չեմ ուզեր ցոյց ընել, ո՛չ ձեզի, ո՛չ ինձի, ոչ ալ մանաւանդ ուրիշներուն համար: Զեր սնտափառութիւնը շողոքորթելու ո՛չ բաղձանք ունիմ, ոչ ալ պարտք:

«Ես միտքս դրած եմ այսուհետեւ չի յաճախել ընկերութեան մէջ, որ ինձի բան մը չըսեր, ուր հաճոյք չեմ գտներ այն պայմաններուն մէջ ուր պէտք պիտի ըլլայ ընկերանալ ձեզի:

— Բայց ի՞նչ պիտի ըսեն:

— Բան մը չեն ըսեր... Եթէ տկար է

ըսէք ինձի համար. դուք դիւանագէտ էք, և ձեր կեանքը գրեթէ միշտ դժուարութիւններէ կը բաղկանայ:

Բոլ տը Ռիչմօն չէր համարձակած պնդելու, և իւր սրտնեղութիւնն ու կատաղութիւնը զսպելով՝ մեկներ էր:

Այն երեկոյթը որուն Փէրնանտ ախրացեր էր, Դոնիէլի և իրենց զաւկին պիտի նուիրէր:

Ի՛նչ մեծ ուրախութիւն էր իրեն, ըսել իւր տարփաւորին.

«Այլ ևս չի պիտի երթամ երեկոյթներու, ո՛չ ալ այցելութիւններու իմ ամուսինիս հետ: Դուն չէիր համարձակեր այս գոհողութիւնն ինձմէ ուզելու. բայց կը ցանկայիր, դուն ինքզ ընելով ինձի երկար ժամանակէ ի վեր... վասն զի գիտեմ որ իրիկունները դուրս չես ելներ, մինչև իսկ շահերուդ նշասն աչքդ առնելով. վասն զի չէիր կրնար ինձի հետ ելնել...»

«Արդ՝ կը տեսնես թէ իմ սէրս ալ քու կիներդ վար չի մնար, և թէ ես ալ կ'զգամ ինչ որ դուն կ'զգաս, և թէ ես ալ նոյնը կ'ընեմ քեզի համար, ի՛նչ որ դուն կ'ընես ինձի համար:»

Կը տեսնէր որ ուրախութեամբ և

չնորհակալալու թեամբ կը լցուէին Դանիէլի գորովալից և խանդավառ աչերը. կը գուշակէր անոր դժնդակ հընհնուքներն ու ցաւագին տխրութիւններն երբ գինքը հեռու կ'զգար իրմէ, պարահանդէսի մը կամ փայլուն գումարումի մը մէջ, ուր այրեր կը շրջապատէին զինքը՝ զգուշաւոր քծնութեամբ:

Յանկարծ թեթեւ ձայն մը կորզեց զինքը իւր այս անուշիկ մտածութիւններէն:

Սենեակին դուռը կը բախէին կամաջուկ մը: Սենեկապանուհին էր:

— Ի՞նչ կ'ուզէք, հարցուց տիրուհին:

— Պարոն մը եկած է և կը փափաքի խօսիլ տիկին դերկոմսուհիին հետ:

— Ո՞վ է:

— Չեմ ճանչեր:

— Այցաքարտը տուա՞ւ:

— Կ'ըսէ թէ պէտք չիկայ, որովհետև տիկինը չի գիտեր իւր անունը:

— Ընդունելութեան օրս չէ այսօր... ասկէց զատ ես չեմ ընդունիր այնպիսի մարդիկ, որք իրենց անունը չեն իմացըներ:

Սենեկապանուհին դուրս ելաւ, և Ֆէր-

նանտ նորէն իւր մտածումներուն վերադարձաւ:

Քայց շատ չանցած՝ Մարի նորէն դուռը բախելով ներս մտաւ:

— Ի՞նչ կայ նորէն, հարցուց Ֆէրնանտ նեղանալով:

— Պարոնը կը պնդէ թէ անպատճառ ձեզ տեսնել կ'ուզէ, կ'ըսէ թէ տիկին դերկոմսուհին պիտի հաճի ընդունիլ զինքը երբ գիտնայ թէ Տուէ փողոցը բնակող անձի մը կողմէ կուգայ:

Ֆէրնանտ այս խօսքը լսելուն պէս ցնցուեցաւ, և երեսին գոյնը նետեց:

— Դանիէլին կողմէ կուգայ, ըսաւ ինքնիրեն, ծանր բան մը պատահած պէտք է ըլլայ, որպէս զի Դանիէլ այսչափ մեծ անխոհեմութիւն մ'ընէ:

Վարանիլ կարելի չէր:

— Դահլիճը մտցուցէք, ըսաւ, հիմա ես ալ կուգամ:

Երկու վայրկեան ետքը, լաւ հագուած, ձեռնոցաւոր, փեղոյրը ձեռքը և քիչ մ'ալ գունատ մարդու մը դէմը կը գտնուէր, որ ժիւլ Շամպէզին էր:

Քաղաքավար ձևով մը ողջունեց դերկոմսուհին:

Ֆէրնանտ ալ թեթև մը խոնարհեցուց գլուխը՝ արագ նայուածք մը նետելով անձանօթին վրայ:

Շամպէզիի երևոյթը գէշ չէ՛ր, երբ լուհագուած ըլլար, ժամանակաւ պատուաւոր ընկերութեանց մէջ մտածելած էր:

Սակայն Ֆէրնանտ, իւր կնոջական բնազդումով քիչ մը կասկած և շատ ալ մտահոգութիւն զգաց:

Անհնար էր որ Դանիէլ իրենց գաղտնիքէն որ և իցէ բան մը հաւտար այդ անձանօթ և օտար մարդուն:

Ի՞նչ կը նշանակէր ուրեմն իւր ներկայութիւնը, ի՞նչ կը նշանակէին մանաւանդ այն խօսքերն որք տր Ռիչմօնի օթեանին դուռները բանալ տուեր էին իրեն:

Շամպէզի լուռ կը կենար անշարժ և պիրկ:

—Ձիս տեսնել ուզեր էք, պարո՛ն, ըսաւ Ֆէրնանտ: Ես պատիւ չունիմ ձեզ ճանչելու:

—Արդարև, տիկի՛ն, բայց եթէ դուք զիս տակաւին չէք ճանչեր, ես բաւական երկար ժամանակէ ի վեր կը ճանչեմ ձեզ:

—Ի՞նչ է ձեր անունը, պարո՛ն, հարցուց Ֆէրնանտ զարմանալով այս տարօրինակ պատասխանին վրայ, որուն ետին սպառնալիք մը կը զգար, և քաջաբար իւր սև աչերը սեւեւելով խօսակցին գորշ աչերուն վրայ:

—Անունս, տիկի՛ն, չի կրնար բացատրել ձեզ իմ հոս գալուս պատճառը, ուստի ներեցէք որ չի յայտնեմ... առ այժմ: Իմ ո՛վ ըլլալս շատ կարեւորութիւն չունի... Այն խօսքը որ ձեր դուռը բանալ տուաւ ինձի... զիս մտիկ ընել կուտան ձեզի, և այս է պէտք եղածը:

Ֆէրնանտ սրտի սեղմում մ'զգաց, բայց իւր յուզումը ծածկելու կարող մէկն էր:

—Պարո՛ն, ըսաւ պաղ և խրոխտ կերպով, չեմ հասկնար ի՞նչ ըսել կ'ուզէք: Ես ձեզ ընդունեցի, վասն զի ձեր պնդելէն ենթադրեցի թէ խնդրարկու մ'էիք, առատաստութեանս կամ ազդեցութեանս կը դիմէիք: Եթէ սխալ է կարծիքս, խօսակցութիւնն իսաւարտած է:

—Արդարև սխալած էք, տիկի՛ն դերկումուհի: Ես իբրև խնդրարկու եկած

չեմ, ձեզնէ պաշտպանութիւն կամ օգնութիւն հայցելու համար: Այլ իմ օգնութիւնս կը բերէի ձեզ... պայմանով:

— Զեր օգնութիւնը, պատասխանեց Ֆէրնանտ, իւր սարսափը աշխարհիկ կնոջ մը հեզութեան տակ ծածկելով:

— Եթէ հաճիք...: Բայց պիտի հաճիք:

— Բաւական է, պարոն, ըսաւ Ֆէրնանտ խորխտաբար: Ես սխալ գործեցի ձեզ առանց ճանչելու ընդունելով... և կը մեկնիմ:

— Ետքը շատ կը զղջաք, տիկին, վասն զի ես այն ատեն կը հարկադրիմ երկրորդ անգամ տեսուցիլ ձեզի հետ, Տուէ փողոցի թիւ 29 տա՛ն մէջ:

Ֆէրնանտ որ դէպի դուռը շտկուած էր, կանգ առաւ մէկէն, երեսին գոյնը մոխիր կտրած:

— Կը տեսնէք, տիկին, թէ իրաւունք ունէի, յարեց Շամպէզի կեղծանոյշ սպառնալիքով մը:

Ֆէրնանտ վարանեցաւ վայրկեան մը զինքը հարուածող ցնցման տակ:

— Բայց վտանգին վերահասութեան անօղև անկուեցաւ:

— Եթէ վախ ցուցնեմ, կորսուած եմ, ըսաւ մտքէն:

Ուստի գոռոզ դէմք մ'առնելով՝ պատասխանեց:

— Ես նախ մուրացկան մը կարծեցի ձեզ, պարոն, բայց հիմայ կը տեսնեմ որ խելագարի մը հետ է գործս: Դուրս ելէք, ապա թէ ո՛չ մարդ կը կանչեմ:

Եւ վազեց վառարանին քով, ուր բոժոժի լար մը կախուած էր:

— Զիս կը վռնտէ՛ք, ըսաւ Շամպէզի գրգռուելով Ֆէրնանտի սպառնալիքէն, և ինքզինք նւաստացած զգալով անոր գոռոզ երևոյթէն: Զգուշացէք, տիկին: Ըսի ձեզ թէ Տուէ փողոցէն կուգայի: Կրնայի ըսել նաև թէ Բիէռֆիթէն կուգայի:

Ֆէրնանտ դողդոջնելով վառարանին կրթնեցաւ:

— Բիէռֆիթէն, կրկնեց:

— Այո՛, Բիէռֆիթէն... ուր թիւս-թիւն Պօնֆօս սպաննուեցաւ...: Եւ ես գիտեմ այն դժբաղդ մանկաբարձուհիին ամէն գաղտնիքը:

Ֆէրնանտ չէր կրնար սյլ ևս ծածկել իւր ապշութիւնն ու սարսափը:

Ո՞վ էր այս մարդը, որ իւր կենաց ամէնէն մթին կէտերը գիտնալու երե-

ւոյթ ունէր: Ուսկի՞ց կուգար: Ի՞նչ կ'ուզէր իրմէ:

Հիմա ժպտելու և հեզնտ ձայնով խօսելու կարգը Շամպէզիին էր:

— Կը տեսնէք ահա, տիկին, թէ խօսակցելու պէտք ունինք... և թէ դուք գէշ պիտի ընէիք ձեր մարդիկը կանչելով, և դորտէն ո և է մարդիկ մտցընելով այն կարճ խօսակցութեան մէջ զոր պատիւ ունեցայ խնդրելու տիկին տը Ռիչմօն դերկոմսուհիէն, որուն ամուսինը բացակայ է... այս վայրկենիս:

Ֆէրնանտ, ինչպէս որ արդէն ըսինք և ապացուցինք, քաջարի կին մ էր, ոչ այն կիներէն, որք իրենց հաճոյքը գոհացընելու համար տնխոհեմութիւններ և մինչեւ իսկ յանդգնութիւններ ընելէ ետեւ, երբ վտանգ մ'սպառնայ իրենց ապահովութեան կամ ընկերութեան մէջ ունեցած դիրքին, կը տկարանան, և համօրէն աշխարհը անխղճարար կը մատնեն ու կը դաւաճանեն:

Եթէ իւր անձին միայն վերաբերէր, թերեւս շփոթէր և ինչ ընելիքը կորսնցընէր, բայց որովհետեւ սպառնացող վտանգը մինակ զինքը չէր հարուածեր:

զաւակն ու տարփաւորն ալ կը հարուածէր, անոնց համար, զանոնք պահելու համար, մինչև իսկ մահուան դէմ կը խիզախէր:

— Բայց, մի' վախնաք, տիկին, յարեց Շամպէզի, ես կուգամ նախ իբրև բարեկամ. ձեզնէ կախում ունի իբրև թշնամի դուրս չելնելս:

— Ես չեմ' մ'վախնար, պարո՛ն, պատասխանեց խրոխտարար, և չեմ' հասկընար թէ ձեր բարեկամութիւնը կամ թշնամութիւնը ի՞նչպէս կրնայ զիս շահագրգռել որ և իցէ կերպով:

— Դուք հիմա կը փոխէք ձեր կարծիքը, վասն զի Տը Ֆէրնիք կոմսին աղջիկը գիտէ թէ իւր հայրը մինչեւ ո՛ւր կը մղէ ընտանեկան պատուոյ և անուան կրօնին նախանձայուզութիւնը:

Ֆէրնանտ կծու սարսուռ մ'զգաց հօրը պատկերին այսպէս իւր դէմը հանուելէն:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, պարո՛ն, ըսաւ սակայն, առանց իւր սրտին տազնապը ցոյց տալ ուզելու:

— Ըսել կ'ուզեմ, տիկին, թէ երբ տը Ֆէրնիք կոմսն և սր Ռիչմօն դերկոմսը իմանան, առաջինը՝ թէ իւր աղջիկը:

միւսն ալ՝ թէ իւր կիներ, ասկէց երեք
ամիսի չափ առաջ գաղտնի ծննդարե-
րութիւն ունեցաւ ժիւսթիւն Պօնֆօայի
տանը մէջ, և թէ այդ մանկաբարձու-
հին սպաննողները կը փնտռուին, ի՞նչ
հետեւանք կը կարծէք որ ո՛նենայ,

Ֆէրնանտի աչերը շմորեցան և կար-
ծեց թէ պիտի նուազէր, բայց փայլակ
մը միայն եղաւ:

Վիհը աչքին առջևն էր, ոտքին տա-
կը բացուած: Պէտք չէր գլխագարու-
թեան տեղի տալ:

— Եւ ո՞վ պիտի երթայ այդ սուսերն
անոնց կրնեցընէ, հարցուց զսպելով իւր
ջղային սարսուռը:

— Ե՛ս: Եւ որովհետեւ ապացոյցներ
ունիմ՝ ձեռքիս մէջ, ձեր հայրն ու ա-
մուսինը չեն կրնար զիս ստախօս կար-
ծել:

— Ապացոյցներ՞:

— Այո՛, տիկին: Բայց ես չար մարդ
չեմ, ծանր կուգայ սրտիս՝ առանց ըս-
տիպուելու հարուածել անգթաբար ձե-
զի պէս կին մը, որուն դէմ բնաւ ո՛ր
մը կամ ատելութիւն մը չունիմ:

— Ի՞նչ է ուրեմն ձեր միտքը:

— Աւասիկ: Այն մարդը որ ձեր առ-

ջեւ կը տեսնէք, որ ձեր գաղտնիքը,
Բուր Գաղտնիք գիտէ, յուսահատ մ'է:
Իւր ծնունդովն և առած կրթութեամբ
ընկերական բարձր դասակարգի կը վե-
րաբերի, բայց իւր մոլութիւնները կոր-
ծանեցին, յետին թշուառութեան մատ-
նեցին զինքը: Ասկէց քանի մ'որ առաջ
այդ մարդը, նօթութենէ մեռնելու վի-
ճակի մէջ ըլլալով, յուսահատութենէն
անձնասպան պիտի ըլլար, որպէս զի
վերջ տար այս թշուառ և ամօթալի
կեանքին, որ բեռ մ'եղած էր իրեն:
Բայց դիպուածը գաղտնիք մը տուաւ
իւր ձեռքը, որ հարստութեան մը
դուռ է իրեն համար: Կ'ուզէ նորէն
աշխարհի ընկերութեան մէջ մտնել
այդ դռնէն: Անձնասպանութեան...
և այսօր ձեր մօտ ըրածին միջև ընտ-
րեց... որովհետեւ հոս է: Աւանակու-
թիւն չէ՞ ինքզինք սպաննել կամ նօթու-
թենէ ու ցուրտէ մեռնիլ, երբ միլիո-
նատէրներու քսակներ կան իւր առ-
ջև, որոնցմէ կրնայ քաղել: Դուք
հարուստ էք, ձեր պատիւն ու կեան-
քը ձեռքիս մէջն են: Տուէք ինձի եր-
կու հարիւր յիսուն հազար ֆրանք...
և մէկ մ'ալ ոչ երեսու կը տեսնէք, ոչ
ալ անունս կը լսէք:

— Պժգալի՛ բան, մրմռաց Ֆէր-
նանա :

— Օ՞, աիկի՛ն, ինչ որ կ'ուզէք, ըսէք
ինձի համար, բայց լաւ հասկցէք ի-
րականութեան վիճակը : Ժիւսթին Պօն-
ֆօա սպաննուեցաւ :

— Ի՞նչ վերաբերութիւն ունի ինձի
այդ սպանութիւնը :

— Սրդարութիւնը կը փնտռէ սպան-
նողները :

— Որոց մէկն ալ դուք էք թերևս :
Շամպէզի ուտերը ցնցեց :

— Եւ մինչև հիմայ չի կրցաւ բան
մը գտնել, ըսաւ, բայց կը գտնէ ան-
շուշտ՝ եթէ սա կերպ ծանօթութիւն
մը ղրկուի իրեն :

« Հարցաքննեցէք մանկաբարձուհիին
տունն ընդունուած վերջին թոշակաւո-
րուհին, որ դաղտնաբար արու գաւակ
մը ծնաւ հոն : »

— Սրու գաւա՛կ, կրկնեց Ֆէրնանա,
որուն սիրան երկրորդ անգամ դադրե-
ցաւ բարասելէ :

— Սյս ծանօթութեան վրայ կրնայ
աւելցուիլ, շարունակեց Շամպէզի, կըշ-
ռելով իւր խօսքերն և ընելիք ազդե-
ցութիւնը հաշուելով :

« Մեռած տղեկ մը գտնուեցաւ Ժիւս-
թին Պօնֆօայի պարտէզին մէջ : Սյս
ալ հարցուցէք անոր վերջին թոշակա-
ւորուհիին թէ ի՛նչ ըրաւ իւր ծնած գա-
ւակը : Հարցուցէք անոր թէ ո՛վ շահ
ունէր Ժիւսթին Պօնֆօան անհետացր-
նելու գործին մէջ : Օրբորդ Կառնիէն
փնտռեցէք, ան միայն կրնայ տեղե-
կութիւն տալ, բացատրել ձեզի այդ
գաղտնիքը : »

Ֆէրնանտի բարոյական կորովը պէտք
էր որպէս զի չիյնար շանթահար, բայց
այս երկու սուտ ամբաստանութեանց
ստսկումին առջև դայրոյթը վրայ ելաւ :

— Պարո՛ն, գոչեց հեւալով և կտրուկ
ձայնով, դուք թշուառական մ'էք վասն
զի քաջ գիտէք թէ ես գործած չեմ
այդ ոճիրները, ոչ ալ գիտեմ այդ օրի-
որդ Կառնիէին ո՛վ ըլլալը :

— Ոճիրներուն համար ապացոյցներ
չունիմ ձեզի դէմ, արդարութեան
գործն է փնտռել ոճրագործները : Բայց
պոռնկութիւնն ու ծննդաբերութիւնն
ապացուցուելէ ետեւ, մնացեալին ալ
բացատրութիւնը կուտաք ինչպէս որ
կ'ուզէք կամ գիտէք :

Ֆէրնանտ ձեռքերն սկսաւ գալարել
յուսահատօրէն :

— Լուռ կենալու համար, նորէն կը-
սեմ, երկու հարիւր յիսուն հազար Փը-
րանք միայն կը խնդրեմ, որպէս զի
համեստ և պարկեշտ կեանքով ապրիմ:

— Բայց ես չունիմ այդ ստակը, կա-
կազեց դժբաղդ կի՞նը:

— Ձեզի կ'իյնայ գտնել: Ապա թէ ոչ,
ձեր պարոն ամուսինը կամ պարոն հայրն,
իրենց անուան պատիւը փրկելու են և
մանաւանդ տը Ռիչման դերկոմսուհիին
եղեռնադատ ատեանն ելնելը չի տես-
նելու համար, երկուքն ալ զատ զատ
այդ ստակը կուտան ինձի:

Ֆէրնանտ ուժաբեկ՝ չորս կողմը կը
նայէր խղուռ աչերով:

Շամպէզի վախցաւ որ խելքին կու-
գար:

Աւելի զարնել՝ նոյն վայրկենին՝ ան-
օգուտ էր, վասնզի խորհրդածելու, որո-
շում մ'ընելու, պատասխանելու կարո-
ղութիւն չունէր:

Այսչափը բաւական կը համարէր ա-
ռաջին տեսակցութեան մը համար:

Հարուածն ըրեր էր իւր ազդեցու-
թիւնը:

Թող տալու էր որ սարսափն ընէր
մնացածը:

— Կը տեսնեմ, տիկին, թէ դուք միտ-
քերնիդ ամիոփելու պէտք ունիք, որ-
պէս զի առաջարկութիւնս կատարելու
միջոցը գտնէք, յարեց ակնածաւոր
ձայնով մը: Ձեզ կը թողում մինչեւ
ժամն երեք կէս օրէն ետեւ: Աւասիկ
իմ այցաքարտս և հասցէս:

Այցաքարտը վառարանին վրայ դը-
բաւ Ֆէրնանտի մօտը:

— Պիտի սպասեմ ձեր պատասխանին,
մինչեւ ժամն երեք:

Եթէ անցնի այս պայմանաժամը...
ուրիշ տեղ պիտի դիմեմ: Ուստի կը
մեկնիմ՝ յարգական ողջոյնս մատու-
ցանելով ձեզ:

Եւ մեկնեցաւ Շամպէզի:

Ֆէրնանտ ոչ շարժում մ'ըրաւ, ոչ
ալ խօսք մ'արտասանեց:

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻՆ

The following is a list of the
 names of the persons who
 were present at the meeting
 held on the 1st day of
 the month of
 at the residence of
 the Secretary of the
 Association.

THE ASSOCIATION

5p

1671

207

« Ազգային գրադարան



NL0312195

6577